» զոր չինեալ առ նոյն մատենագիր՝ վիմարկեան կոփա֊ » ծոյիւք, հաստահղոյս արձանաք, գմբեթարդ խորան » երկնանման, հիւսիսային սրմոյն եւեթ հանդերձ կիսա֊ » մասամբ արևմտեան կողմանն կանգուն կացեալ, բա֊ » ւական լինի զարթուցանել զհնադեպան սնորժակ » հնասիրին՝ ընդ վսեմութիւն ձևոյն, և անմահ կարդալ » զձեռն ճարտարապետին իւրոյ Տրդատայ, որ նախ հիմն » արկ սմին, և յետ այնորիկ կաթողիկէին Աշուց: Տա֊ » բած թեամբ շատ փոքր է սա քան զնա, այլ հոյակա֊ » պութեամբն ոչ այնպէս: Արձանագրին՝ որ ՚ի վերոյ » արևմտեան գրանն՝ խոպան խանգարեալ, Թուական » մի եւեթ նշմարի ՚ի նմա ՆԿԱ. (1012): Կայր և այլ » տող մի արձանագիր յորմն անդ հիւսիսոյ ՚ի ներքին » կողմն, այլ առ տեղւոյն բարձրութեան անվերծանելի » միայց: Կաթողիկոսանք երկու Աշանիա և Խաչիկ ա֊ » տանօր Թադեցան, որոց ցանկալի էր արդեօք չիր֊ » մացն անորատ կալ ցոյսօր, այլ ոչ գիտեմ որ կատա֊ » րած եհան նոցա: ի կողմն արևմտից ՚ի մէջ ձորոյն » երևին և այլ ևս քարակոյտք աւերակաց. և առ ա֊ » փամբ սեպագիր բլրոցն աւերակ ամրոցի: Իակ հայ֊ » բապետանոցին՝ և ոչ հետք նշմարին »:

9. Իրրև ժամաւ ՚ի Էր. Արգինայ առ նովին գետ֊ եզերբ կայ փիրակի կամ փիրփալի գիւղ հայագնակ և հին բերդ, առ որով և հատն անցի գետոյն. իակ անտի ՚ի վայր գետառերդս նորին ընդ Ախուրենոյ և հուպ ան֊ կեան կցառաջոյն կայ Ազատաւանէ, փոքրիկ բերդաւ, որ ըստ գրիոյն Թուի ոչ անկաս լինել տեղի ՚ի հնումն, և յար֊ ձանագիրս կոչի Ազատեղանի (18):

Ցաջմէ Ախուրենի (Կարուց գետոյն) սկսեալ յարև֊ մտից կուսէ ՚ի սահմանակցութենէ վանանդայ և Զարի֊ չատ, հասս ՚ի Մէչիտի և ՚ի Մուրատպէկ գեօղս եր֊ կրտրվին, առ գետեզերբն կան երկոքին գեօղք Շիրակայ Փերկիա Մեծ և փոքր, սակաւուք հեռիք յիրերաց. ՚ի Մեծն՝ կայ չինուած մի բերդանման կամ իջևան, 25 Զ. յերկայնն և 21 ՚ի լայն, վեցեքսուք բոլորշի կամարա֊ կապ ցածուն ալաարակօք, չորք յանկիւնս և երկու ՚ի կողմանն, ունելով և դուռն ՚ի միում կողմանցն, և առ երի յորմն խաչքանդակ. այլ մեծ մասն պարսպին խանգարեալ անկեալ է ՚ի վաղուց հետէ, զի և 180 ա֊ մաք յառաջ կիսաւեր եզիտ զայն Դուռնեփոր (14 յու֊ լ. 1701), որ Պարսիկ կոչէ զտեղին և գեօղ մեծ, և վկայէ վաղուչ լինել չինուածոյն մինչ կանգուն կայր [1]: Ոմանք յայժմեայցս ասանդեն զայն լինել եկեղեցի հոյակապ Ամենափրկիչ անուն: Են ՚ի փերկիա և քարալեն աղբերք կամարակապք: Զվայրաքս դաղարեցաւ ՚ի միջօրէի, վե֊ բոյիչեալ լուսաքնին ուղևորն փառանի, ՚ի գեղեցիկ հով֊ ս միամ կիսով փարատեաւ ՚ի սորս փերկիայայ, որպէս ասէն, ուր ՚ի միջի այլոց ոմանց սակաւագիւտ բուսոց եզիտ և տեսակ մի նոր փինանեա ծաղկան (Betonica Orientalis), զորոյ և զտերեն տարեալ ասեցոյց յարքունական դրախտին Բարիզու. և նշանաւոր հա֊ մարէր վասն կէս ոսկաչափ երկայնութեան, այլ բիա֊ չատ նեղութեան տեղւոյն. զորոյ և զնկար գծագրէ:

1 On campa . . . auprès de Barguet, gros village, dont le château à moitié démoli paroit avoir été bien bâti dans son temps. — Tournef. XVIII.

միւն Սաորին՝ բնակեալ ՚ի Թուրքաց. և ՚ի հարաւոյ նորա, կիսով վարսախաւ հեռի ՚ի գետոյն և հանդէպ Աստեղանց՝ Եղղանդը (Օձուտ) Թուրքմանակ: Ի վերջոյ երկուցն սոցա իբր կիսաժամու գնացից տարածութեամբ տեղւոյ՝ երեսին գերեզմանք բազումք գեռնաթաղք և անգիրք. և համօրէն անշէն ամայութիւն վայրացն ընդ բազում տապարէզս՝ արդարև գերեզմանական լինն տայ երևոյթ և զգացումն:

10. Հեռանալով ՚ի գետոյն՝ ՚ի հարաւոյ փերիկա գիւղից, ժամու ՚ի բացեայ կոյ լճակ մի՝ որպ ոչ նշանակի անուն. ընդ մէջ սորա յելից կուսէ, և Գարագափուլու լեռնաբլրոյ՝ կայ Պալտրըխան կամ Նազտխման գիւղ հայաբնակ 30 տամբք. և յարևելից նորին ամայի գեօղատեղի՝ Հին Պալտրըխան կոչեցեալ, աւերակ մնատրամբք և գերեզմանօք, և ՚ի մերձակայ ձորակի այլ գիւղատեղի ամայի, Միհատռէն անուն: Ի հարաւոյ սորա լեռնակն Գաղագուզու 1820 Զ. բարձր. յորոյ արևմտեան սոտրոտս փոքր գիւղն Իճէտէրէ: — Իբր մղոնաւ և կիսով հեռի յաբևմտից սորա և մղոնաւ ՚ի հարաւոյ Պալտրըխանայ և երկու մղոնաւ ՚ի Հր. Ելից լճակին՝ կայ Քիւրդկ-տէրէ կամ Քիւրքիւք-տէրէ գեղ. երբեմն խառն բնակութեամբ ՚ի Հայոց և Թուրքաց. նշանաւոր վասն մեծի հակառամարտի յեռանցս ընդ Ռուսաց՝ ՚ի ժամանակի Ղրիմական մարտից (՚ի 6 օգոստ. 1854). յորում ապարապետ ռուսական բանակին էր հայազգին Բեհբուդով, որ և ՚ի նոյն տահմանս իբր 666 ամաք գնդի Զաքարեանց՝ զօրավարեալ տապաւ զյաղթանակն [1]: Զայս տեղի ընտրեաց իւր բանն բանակի և Լօրա Մելիքով, միւս ևս հայազգի զօրավար, ՚ի մարտս 1877 ամաց, յամենայն յուլիսի, յետ առ ժամ մի բառնալոյ զպաշարումն Կարուց, ախռեալ գինեան ՚ի լեռնաբլրս որք երկուստեք գետոյն Մաւրիկայ:

11. Գետակս այս որ յամանց Մէգրի գրի՝ լինեալ ՚ի լեռնակաց անջրպետաց Վանանդայ և Շերակայ, հանդամանի ձևոյ մեծի գետոյն Կարուց և զուգահեռական, ըստ նըմին յարևմտից յարևելս գիմելով՝ ողողնաձև պատեալ գհիւսիսս, իբր չորիւք մղոնօք ՚ի հարաւոյ խառնըւոյ Ախուրենի ընդ Աքսայի՝ Թախի և ինքն յԱխուրեան, քերեալ զՄաւրիկաւ՝ զորոյ կրճ զանուն. ուր ամբառնայ լեռնաբլուր գիւաւոր ՚ի հիւսիսակողմանն՝ որ է յահեկէ՝ Գաղագայ. իսկ ՚ի հարաւոյ՝ (յաջմէն) Գղզլ-թէփէ (Կարմիր սար) և Իչէ-թէփէ (Եղուզագաթն), յորս ՚ի յետին մասն ամրացան Ռուսք, որպէս և յոր ՚ի հարաւոյ նոցին՝ յոստս անջատս Աչամա լերանց՝ ՚ի Նաղ կամ Նաղպանտ-թէփէ և ՚ի Մաղարաձղլ-թէփէ: Թուրքք, առաջնորդուս Թեամբ սպարապետին՝ Մուխթար Փաշայի: «Անկիւնս » այս երկրին Հայոց (գրէ ան ՚ի պատմչայ յետին պատե» րազմից) անհնարին ցամաքատ է, գրեթէ խապտ » անկրճի, անբոյս՝ անդալար. լերինքն ՚ի հազարաւոր ա» մաց հետէ չնչելոյք յանձրևաց, գիծս համանմանս ընդ » ծայնն աչաց՝ գոգիւր երկրաչափական ճշդութեամբ, » զոր ոչ ուրեք հատանէ բոլորաձև գագաթն ծառոյ. և » գաչաք՝ յորոց լերինքն վերամբառնան, որպէս կղզիք ՚ի » ծովէ, բազում այն է՝ զի միապաղաղ երևութիանն » աչաց, որպէս չորք ծառատեալք»: Թափ ՚ի վաղուց ժամանակաց, նախ բնութեան և ապա բռնութեան մարդկան՝ անայացուցեալ զվայրս, զոր առաւել ևս տրխուցին ատեպ պատերազմանք Ռուսաց և Թուրքաց ՚ի մեր ժամանակս. և ՚ի յետնում նուագի՝ զամիս երիս, ՚ի կիսոյ յուլիս ամսոյ ցկէս հոկտեմբերի, որպէս միշեցաք ուրեք և միշեացաք ՚ի ստորև, յետ նշանակելոյ զդիրս գիւղորայից հովտիս և գապատ յիշատակս նախնեաց:

Յարևմտեան հարաւակողմն Գարագայ լեռնաբլրոյ և յարևելից Եղանի լերանց՝ կայ փոքր գեօղն Ձաճուշպօղան (Գամխախեղդ). իսկ յելից հարաւոյ լեռնակին փարախաւ հեռի և առ ակամբք վտակի փոքրոյ՝ որ Թափի ՚ի գետոյն Մաւրիկայ, Ռոդուզոյ գեօղ, նշանաւոր հին չինուածով մեծի և հզակաց եկեղեցւոյ, որոյ գմբեթ ամբառնայ ՚ի վերայ բոլորապտոյտ թևոց կամարաց, արտաքուստ քառակուսի երևելով. և առ երի խորանին ունի երկուստեք մատրունս կամ առանդատունս կրկնայարիս. ունի և կըրկին արձանագիրս արտաքոյ ՚ի հարաւակողմանն, յորս ոչ հին անուն գեղջն յայտնի և ոչ ստոյգ թուական շինութեան, այլ չինողն՝ Հասան Գնթունի որդի Խակոնայ, և Թուի Հասանն յիշատակել յաւուրս Սմբատայ Ա, յելս Թ դարու, և ասէ այսպէս.

Ես Հասան որդի Խականայ գնթունո յաւէժաբար ըղճացեալ վաստմամբ յաւրինել տեղի ապաւինի ի հանդերձեալն վասն յաւգնահամբար ու բազմամեղ անձին իմո յաւժարութեամբ սրտի իմոյ խորհեցա չինել զեկեղեցիս զայս նախաւրինակ վերին Երուսաղեմի ողորմութեան:

Երկրորդ արձանն յայտնէ զժամանակ նորոգութեան եկե- ղեցւոյն յամի նոր հազարեւին, 1001, և զնորոգողն.

Ես Աչոտ իշխանաց իշխան որդի Գէորի(գայ)... առն քաջի եւ պատեբազմողի հաւատարիմ եղեալ տանս հայոց առի բարձ եւ պատիւ ի Աչոտոյ շահնշանէ եւ ի յորդոյ Լիպոյ Սմբատ եւ Գագիկ եւ յամենայն թագաւորաց. տեսի զմայր քաղաքիս եւ... արի Աչոտոյ զապականումն նորոգեցի ՆԺ ամի պարթեւիս. ի գալ միւս ամի եհաս ինձ հրաւէր ի վերին արքունի կա մեղս լինձ խաչ:

Մայրաքաղաքդ յիշեալ՝ զմայր եկեղեցին նշանակել Թուի ըստ երկրորդ և խանգարեալ բառին՝ տաձարի, յայս է թէ վերջին բանն յաւելեալ է յետ մահուան նորոգողին, առ որոյ յիշատակ և խաչվէմ կանգնեալ: Մի ՚ի հնագոյն և ՚ի կանգուն գեղեցկաշէն եկեղեցեացն է սա, եթէ յետին պատերազմունքն խնայեցին, և արժանի մանր քննութեան ըստ ճարտարապետական մասանց: — Իբրև երկու մղոնաւ յարևելից գեղջ՝ առ նովին վտակաւ յամին՝ կայ Հաւկաբիւրեկ կամ Հաւկաբէրէկ գիւղ, որոյ բնակիչք խառն էին, իսկ առաջնոյն՝ Հայք միայն:

Ի գլուխ գեօհովանոյն Մաւրիկայ որ ՚ի Հ. ստորոտս Աչամա լերին (63) կայ Պռշաւինգ գեօղ փոքր. յորմէ իբր երկու փարսախաւ հեռի առ գետեզերբն՝ Հաճի-վիլի, և ՚ի սմանէ իբր երկու մղոնաւ՝ նոյնպէս ընդ գետեզրն ինքնահոլով Սուտրոպաճ, երկոքին ևս վիպք անցից յետին պատերազմից. և առաւել քան զնոսին որ ՚ի Հ.Ե. Սոպոմանց և ՚ի Հր. Ռոդուզեայ ՚ի միջավայր արևելագիմ ընթացից գետակին, եռասան գեօղն կամ երեք գեօղք Պաչ, Օրրա և Օձաղ (վերին, Մէջին և Ստորին) քիւրդ անասնակեալ, երկոքք յահեկէ և մին յամէմ կողմն. որք եթէ արդ սակս պատերազմից Ռուսաց և Թուրքաց անասնի եղեն, թուի թէ և իբր 1300 ամաք յառաջ նոյնպիսի անցս կրեալ էին, տեղի կուսոյ միջի եղեալ Պարսից և Ձուանց. զի իբրև սոքա յետինքս՝ յամի 603 խոյս տային ՚ի Շերակաւանէ (6) անցեալք ընդ գետն, զհետ նոցա անցին և Պարսք ընդ Ա.րգինա (8), և պատահեցան միմեանց ՚ի Գետիկ գիւղ. ուր «բազմեալ պատերազ» մաւ՝ փախատական լինէր զօրն Ձաճուաց առաջի նոցա. » իսկ նոցա զհետ մտեալ կոտորէցին զբազումս ՚ի գաշտսն » և ՚ի ճանապարհսն ցիր և ցան լեալ կացուցանէին. և » սակաւ միայնեալք փախստեայ գնացին. իսկ նոցա ժո» ղովեալ զառ և զաւար՝ գնացին ՚ի բանակն խրենց[1]»:

12. Փարախաւ ՚ի ստորև յամէմ գետակին կայ Պայրախտար գիւղ, հայ և Թուրք բնակչօք, և բերդ փոքր առ նմին. սուղ ինչ ՚ի բացեայ կոյ սա և ՚ի Մ. կուսէ խառնըղոյց վտակին Ռոդուզեայ ՚ի Մաւրիկ: Իսկ առ խառնըղոյնն և արտաքոյ անկեան նոցին ՚ի Հր. որ է յամէմ, կայ կարմիր-վանք գիւղ, զոր Թուրքք Գղզլ-գիլիսէ կոչեն. ուր կանգուն կոյ գեղեցիկ գմբեթաւոր եկեղեցի և անխանգար յաւուղ քան զպատերազմունս, չգիտեմ գիարդ այժմ. զոյգ առանդատունս կամ մատրունս ունելոյ ոչ միայն առ խորանաւն, այլ և ՚ի հանդիպայ յարևմտից կուսէ՝ առ գրանն, առ որով ՚ի վերայ գրան միոյն կայ արձանագրեալ յամի 1228.

ՈՀԷ· Շնորհիւն Քրիստոսի ես Տալիթա ձեռն եառ մատռանս. ըսպասաւորք....

1 Սերէոս:

11 | | |

Քանզի անսովոր է չինաթիւն մատանց յարևմտակողմն և առ դրան եկեղեցւոյն, մարթ է համարել յետոյ յաւելեալ, և զրան չինուածն՝ վաղագոյն քան զայն թուական: Եւ արդարև՝ ի վերոյ դրան միոյ յատանդատանցն կայ խանգարեալ արձանագիր, յորում վերծանի անուն Բարսղի Ձոնի, յորոյ անուն և վանքն կոչի՝ ի տեղացեաց: Ձոնդ այդ՝ որ ընտրութիւն արար Շարականաց հրամանաւ Ներսեսի Գ., էր՝ ի կէս Ի դարու, և ըստ Վարդանայ (1,2) « առաքնորդ Սարբ ուխտին՝ որ Գալրեվանքն կոչեցաւ ». այս ուրեմն է հռչակեալն այն վենաստան, որ ընդ Հռոմոսին վիպի լինել՝ ի Շիրակ, և զոյգ նմին և Կամրջաձորոյ և այլոց՝ չինեալ յատանէին կէս Ժ դարու, առ Աբաս թագաւորաւ, որպէս վկայեն ամենայն պատմիչք և ժամանակագիրք, սկսեալ Յովղկից, և Դիւանք Սահ-

նահնի վանից, և նոյն ինքն վարդան. ապա յայտ է թէ անդատին յ՝Ի դարէ կայր վենաստանն և նորոգ հաստատեցաւ՝ ի Ժ՝, և թէ յայնժամ կոչեցաւ այսպէս թէ յառանէն՝ ոչ է յայտ: Յարձանս Յովհաննավանից գրեն վահրամ և Թայիկ ամուսին իւր՝ յամի 1218 ընծայեալ նմին « զԹարաւանաց այգին »:

Իբր կիսով մնրնաւ՝ ի բացակ յելից Կարմիր վանացս և գետակին, յահեկէն, կայ անուանաւոր նորին փոքրիկ գետնի Մաւրիկ, Մուրիկ ըստ Թուքքաց կամ ընակելոյն՝ ի նմա Պարսից և Հայոց, ի զոգս քարաքարոց. յորոց ի միումն կայ կիսավաղ եկեղեցի չափաւոր մեծութեամբ, և սիւն մի միայն կանգուն մնացեալ և բառք ինչ արձանագրին...

Հասարակացն ի սմա ... մի:

Ցետին տառգ մի եթէ թուական խլեն՝ ցուցանեն զ՝ 771 ամ Քրիստոսի: Կայ և այլ Թերատ և անթուա-

կան արձան, որ և նորագոյն թուի, այսպէս.

Շնորհիւն Աստուծոյ եւ ողորմութեամբ նորին չինեցաւ, բաժանեալ յերկուս ... արդեամբ եւ շնորհիւ .... աւգուստ հայկազեան տոհմին:

ի տառև գոյ և մատուռն փոքրիկ, այսու արձանաւ.

Շնորհիւն Քրիստոսի ես Յոհաննէս երէց որդի Հայրապետ քեհլին եւ կենակից իմ Բախտաղէկ չինեցաք զեկեղեցիս ի վերա սուրբ Աստուածածնին. աղաչեմ յիշեալք ի Տէր Յիսուս.

Ոչ բանիցս ցուցանէ Ժե կամ Ժզ դարու գործ: Ի քաթաշման գոն անճառակերպ փապարք և ձիթհանք՝ ի նոսին յարդարեալք, և ուրեք գոլք կամ չուեմարանք, յորս գուռ և ցորեան ածղացեալ, յամի 1867, և Թոնիր կամ փուռն առ եկեղեցեաւն: Ի ներքոյ վանացն կան և հին գերեզմանք, յորմն միոյն՝ որ մատրանաձև է՝ գրեալ.

զակք՝ Կիւղիձէ և Շաճի. ընդ միջ սորա և Հաճիվէլեայ՝ Քերխաւա. յելից սորա առ վտակաւն Տայնալդ՝ ի սորա Եէր. Հր. ձ՝ապա հայաբնակ. զոյգ գետնափոր տունս յիշէ ձեմելի խաղացի ուղևոր, որ անդ ագաս (՝ի 25 մայիսի 1694), և Chialà կոչի զգիւղն[1]: Ցելից սորա Ախազ-օղլու: Ընդ միջ սորա և Ախուրեան գետոյ տանյի վայրք են, յորս հարկ էր լինել գիւղորայից, որպիսի է տանյացեալն Զօղլու:

13. Զոր մինչև ցայս վայր տեղագրեցաք՝ մարթ է կոչել Հիւսիսային Շիրակ (արևմտեան մասին), և որ ինչ ասացի՝ ի խոնարհ մինչև Յերասխ Հարաւային, ուր թագաւորանակ տեղիքն և հանդատարանքն են. առ որս մատիցաք ընդ հուսյ, անյն արկեալ միտանգամ ևս՝ ի վերինն տեղագրեալ վայրան, որ արիւնրուղտ թաղ կոչեն յետ առաջնոյն՝ և նորոյ պատերազմից, երկոցուն ինքնակալութեանցն սկրտից երկրիս մերոյ և ազգիս: — Ի 14 յունիսի (1877) բազմեցան զառաջինն հակառակամարտն՝ ի Քիւրեկ-տէրէ (10), և յ՝18 ամսոյն՝ ի Պաշ-Քէօփիկլէր (11), ուր եգերացիք և Քարուք յետ հզօր դիմակալութեան՝ յետս նահանջեցան. Ռուսք սերեցին Աուսլօղան գեղ, և մերձեցան՝ ի Հաճի-վիլի. այլ՝ ի մուտս գիշերոյն զարձան՝ ի բանակ իւրեանց առաջնորդութեամբ Լօռիս Մելիքովի, կորուսեալ երկոցուն ևս կողմանցն մէն իրրև արս 100: Ի 25 նորին ամսոյ Մուսուրմա փաշա հրամանաւ Մահթարայ էանց ընդ Ախուրեան՝ ի սահման Ռուսաց, ի կողմանս Պայանդուր գեղի, որք առ արդելուլ զդարձ նորա՝ դիմեցին՝ ի կողմանս Աստղանոյ (9) և Ախուզալ. դիմեաց անդր և Մահթար՝ անցեալ ընդ Ձալա, և գերծոյց զնրան: Իսկ որ յետ այսոցիկ եղեն մարաք պատերազմից ցառաւմն Ղարսայ՝ Վանանդայ գառաւի վճռակին, և անդ են յիշելիք:

14. Ոչինչ ընդհատ՝ ի հովտաց վերջին յիշեալ գետակաց՝ ամայի և սակաւարնակ է համարէն որ՝ ի հարաւոյ նոցին մասն արևմտեան Շիրակայ, այն՝ որում հարկ էր բարգաւաճագոյն յոյժ լինել. և էր իսկ աներկրայապէս՝ ի միջին դարս, վասն շուրջ պատելոյ զաթոռանիստն Բագրատունի թագաւորաց մերոց և զհայրապետական աթոռն. այլ յետ վերանալոյ անտի երկոցուն գահոյիցն՝ ի ԺԱ. դարս, և մանաւանդ յետ սերտագործութեան ասերաժ թաթարաց՝ յ՝ԺԳ՝, տակաւ անչքեցեալ, և որպէս զարդիս և՝ի նախնեացդն զարս կրկան ոտից լեալ պատեբազմից և աւարառուից, այնքան նուազեալ է՝ ի չնաթենէ, զի հազիւ քանեակ մի գեօղից նշանակին՝ ի լայնատարած սահմանի անդ՝ որ ընդ միջ տեղագրեալ վայրացս, և ընդ միջ վանանդայ, երասխաձորոյ և Ախուրենոյ յարեւելից: — Ցետ ասպատակութեան Թաթարաց և Թուքմանաց, Պարսից և Թուքաց, ընդ սոցա իշխանութեամբ Քաւդ ազգատոհմ մի Խարոեւ-օղլի կոչեցեալ՝ յերկուց և կէս դարուց հետէ իրրև ստացաւած ուՆեր զՊնի և զսահմանս նորին պայազատական ժառանգութեամբ առեալ՝ ի պարգևի յՕսմանեան սուլտանէն: Իսկ յայժմս՝ ի Նուաճման Ռուսաց՝ յուսալի է չինութիւն առնուլ երկրին, և յայտնել մանաւանդ փափագաւէն սիացորդաց չինուածոց նախնեաց հողաթաւալ ծածկեցելոց՝ ի սիփուռս տիրորակ դաշտին, զոր ոչ առնեն ուրախ և գնացք գետոց. քանզի պրեաթէ՝ ի Մաւրիկայ գետակէն մինչև՝ ի Տիվորն, բաց՝ ի փոքրէ վրատակէ Հռոմոսին՝ այլ ոչ նշանակի յամենայն սահմանին, զոր խուզ և խորախազաց կարկաղանքն կարէ Ախուբեան՝ յարևելեանն Շիրակայ. և այն ևս մասն ոչ աւելի քինչ քան զայս ունի չինութիւն:

Գետս այս երկակի ընդդիմակ յիշատակաց՝ թէպէտ՝ի սկզբանէն իսկ միշտ խոստովանութեամբ ընթանայ ևնանէ՝ ի հարաւ, այլ ևս աւելի՝ ի վայրաց անտի ուր գազարեաց տեզազրութենա և՝ի վայր, մերթ գոգանալով ընդ արևելս և ցանաքակղզեակս գործելով, և մերթ ընդ արևմուտս՝ յատակել և անդրէն ընդարկեալ, արմկունս և լերուս ցանաքի երևեցուցանելով: Այսպիսի իմն փոքր ցանաքակղզեակ ձևացուցանէ սուղ քինչ՝ ի Հ. խառնրդոց վրատակին, առ որով են Ձալա, Աբազօղլի և այլք, և խոշանվանից, հանդէպ Գազլգիլիսէ գեղ արևելեան Շիրակայ. զոր և խալաս կղզիացուցեալ է ձեռն մարդկան՝ քաղաքօրմով և զրամբ պարսպեալ զբովանդակ ցանաքաքերանն, որ է հիւսիսային կողմն, յանդրդրութիւն չինին պարփակելոց՝ ի նմին, որ արդ կոչի Ցայդար, և հարկ է թէ կարևոր և ամուր իմն տեղի էր յատաչագոյն. որոյ միակ նշանակ մնաց եկեղեցին հնագէն միջակ մեծութեամբ, ըստ սովորական ձևոյ, կամարակիւթ և կրկնայարկ ատանդատամբք առ խորանան երկատակք. իսկ՝ի վերոյ զրանն՝ որ է՝ի հարաւոյ, կայ քանդակ երկուց առիւծուց, և՝ի միջի նոցա նապատակք կամ եղջերուք երկու[2]: Բայց տեղին ամայի է, լքեալ՝ի բնակչաց, որք՝ի սկզբան գարուս՝ զղջեալք յատպատակէ Ալկաց՝ չուեցին գնացին՝ ի սահմանս Երևանայ և Գեղաբունոյ. և արգ կարուած է խոշանվանից, խոտաձորգ և անդաստան: Ցայս եկեղեցի՝ հօթնախորան կոչ Սարգիս Վ. Ջալալեան[3]. գուցէ խլեն երկու երկու ևս մատրունք առ զրանն. և՝ի վերոյ հիւսիսային որմոյն նշանակի զարձանս կամ զման արձանի զրեալ՝ ի սկիզբն ԺԳ. զարու.

Եղեւ այս ի հայրապետութեան տեառն Բարսղի եւ ի տէրութեան վանայս քրիստոսասէր պարոնացս Գրիգորի հէճալին եւ Սմբատայ եւ եղբարց նորա եւ ի տէրութեան քաղաքիս եւ բոլոր երկրիս մեծ Հայոց Քրիստոսի մեծ զաւրականացս Զաքարի եւ Իւանէի, որոց հովանի լեալ սուրբ Երորդութիւնն:


1 Pernotammo nel casale di Chialà, composto di poche grotte. — Gemelli, Giro del Mondo, II. 6.

2 Այսպէս կարծէ Եւգինիա Պռոէ Փռանկ:

3 Ջալալեան, ե. 26:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Гос. Библиотека

Իբր մղոնաւ ’ի Հր. Տայլարայ և « քառորդաւ հեռի ’ի
» Հռոմոսի վանաց, ’ի վերայ արահետ ճանապարհին են
» կրկին աշտարակք առընթեր միմեանց, քառակուսի
» ձևովք, և ’ի գագաթունսն բոլորաձև գմբէթիւ ատա-
» տեալ. ’ի մէջ նոցա սենեակք կան, և քարեղէն սանի-
» ճանք անցանելոյ ’ի ստորնոյն ’ի վերինն, և ’ի վերնոյն՝
» յատարակէ յատարակ, կամարաձև քարակերտ ան-
» ցիւք, որ արդ քայքայեալ է: Պէսպէս զրոյցք են և զոսցա-



4. Խօշռեն:


» նէ, ոմանց ասելով եթէ զանգակատունք էին հրաւի-
» բելոյ զաւազանին ’ի խորհուրդ. յայս կարծիս են որ
» վկնչխարատուն վանացն՝ Գառատաստանարան ասեն. և
» այլոց՝ թէ զբօսարանք էին թագաւորին, որ նստեալ ’ի
» վերին կողմն՝ կայր ’ի զնին պնդուորական գնդիցն, որք
» ի առ ի անցանէին ընդ կամարան: Արձանագիր
» կայր յարևմտից կոյսք միայն, այլ եղծեալ իսպառ: Խո-
» շոն զան կոչեն, որ զոգ նշանակէ ’ի վրացի լեզու. և
» ատեն Խօշռավանք զՀռոմոսի վանն[1]»: Ի հարաւոյ
կուսէ միոյ յատարակացն է գռնակն 12 աստիճանօք
երանելի ’ի սենեակն. և ’ի հիւսիսային որմն յիշատակա-
րան թուականաւ 1102 ամին.

ՇՕԱ. ևս Խաչատուրա գրեցի:

15. ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔ կամ ԽՕՇԱՎԱՆՔ. կիսաժամաւ հեռի կայ ’ի Հ. Մ. Տայլարայ և ժամաւ յՀ. Աղոց, յընդարձակադոյն բլրաձև բարձրաւիր ցամաքակղզւոջ Ախուրենի, որոյ երես ընդ Հ. Մ. բացեալ է ’ի դաշտս վայրն, յորմէ գայր վտակն Հռոմոսի գետ կոչեցեալ ’ի հնումն՝ Թաւիթ յԱխուրեան[2], և յիշի գժգոհի գրաւոր առանդութեամբ. եթէ, յաւուրս Աշոտ ’ի Սկլռոս կեան Թուրքաց՝ յամի 1064, այնպան սաստիկ եղև կոտորածն, զի «արիւն՝ գերեաց տարեկան տղայն տարաւ » ’ի Հռոմոսի գետն ձգեց[3]»: Զայս անուն ընկալաւ վանքս ’ի սակս կրօնաւորացն Հայոց՝ ’ի Հռոմոց[4] տանէն գերծելոց այսր, յաւաղին կէս ժ. դարու, որոց առաջնորդ գոլով Յովհաննէս ոմն վարդապետ չինեաց ’ի դիսպան տեղւոջս զմենաստանն, յաւուրս Աբասեան թագաւորի, իբր յամն 935–40, վասն որոյ և ոմանք նմին թագաւորի ընծայեն գշինութիւնն. այլ մերձաւորն ժամանակաւ պատմիչ, Այծոլիկն, առ յայտնապէս, թէ « ի դաւառին Շիրակայ՝ Հռոմոսին կոչեցեալ » վանք՝ չինեցաւ ’ի ձեռն Յովհաննէսի, որ էր զարդա-
» րեալ յամենայն առաքինութիւնս, և առաւել յողոր-
» մածութեան զարդս. վասն զի ողորմածութեամբ և
» առաքինութեամբ բաշխէր, մինչև ’ի զգետսըն իւ-
» րոց մերկանայր զամենայն ’ի բաց, յորժամ ագքատաց
» հանդիպէր. և անցաւորաց և ձանապարհորդաց հանգրս-
» տարան պատրաստէր զտեղին, մինչև հանդչել իբր
» յիւրեանց տան՝ ամենայն օտարաց, որ մինչև ցայսօր
» երևի նոյն ողորմածութիւնն ’ի տանն յայնմ»: Կարևոր նշանակի արժանի համարիմ ’ի բանի պատմիչդ՝ զնաև զբառարանն ճանապարհորդաց, որք ոչ միայն ցաւրս նորա յետ կէս դարու տապնղականէին զօտարս, այլ և ցարդ նշանարին յետ իրր հազարամեան դարու. և զի առ այս հարկ էր զատուցանել տեղի և կամ իմևմնա առանձինն, կրկին պարապօք պատեալ են վանքն. արտաքինն՝ ըստ օրինակին Տայլարայ՝ խապան զատուցանէ զպն ’ի գաշտէն և կղզիացուցանէ, մեծաչէն գրամբ հաղորդելով ընդ ներքս և ընդ դուրս, զեղնագոյն կոփածոյ քարամբք կերտեալ. ’ի գրանէ անտի այլ քաղաքային ձգեալ է ընդ հարաւ, և ’ի նմին է ներքին դուռն բուն վենաստանին. ’ի միջոցի կրկին պարսպացդ՝ յարևմտակողմն է վայելչաչէն Հաւգատարանն այն անցաւորաց, որ և յարձանագրի ուրեմն ասպրնջականց կոչի, և այժմիկ Թաւքարէն քրիստոնեայ. առ որով ’ի յետին ժամանակս տունս բնակութեան հաստատեալ էր գեղկաց. այլ յետ գաղթելոց նոցին ’ի Ռուս՝ այժմ միայն տունք սակաւաւոր, իբրև հնդետասան: Երկուտունք (’ի Հ. և ’ի Հր.) յորմունս անդ իմևնաստանն՝ աշտարակաձև բոլորակ տեղիք են վառարանաց կամ մարց՝ որպէս կարծեմ, և կցին ընդ իրեար կամարօք, ընդ որովք անհնկաձև կայսրանք, այլ արդ կիսակործան կան. և ոչ միայն ’ի հնումն, այլ և ’ի յետին դարս ապաւէնք էին կարաւանաց ’ի Պարսս երթևեկից, և առ վանիւքն անցանէին ընդ կամուրջ քարաշէն՝ այժմ կործանեալ, և կամաւ. սակաւուք ’ի

1 Հ. Ղևրսէս Ալիշան, Տեղագր. 168:
2 Թաւ Թէ այժմ ոչ ժամանէ վանկն յԱխուրեան, զի ոչ յաշխարհացոյցս նշանակի և ոչ յայլոց յիշի:
3 Դիւանք Աղթամարայ:
4 Ցարձանագրի ուրեք (ՈՂՋ), կոշի և Հռոմոփ Վանս, եթէ չիցէ պակաս գրուածն:

բացեալ՝ հաստատելով Ռուսաց զգուշարան և նոր հուն անցից: Ըստ ամին օրինակի անչքեցեալ էր և մենաստանն, որոյ վայել էր ոչ նուազ քան զիվանատունն հոյակապ վինել, այլ ոչ ժուժկալեաց բռնութեանն՝ որ զքաղաքն իսկ մատակարարէ անբնակ արար. ապայն և ’ի վերջ կոյս երկոցուն յետին դարուց նորոգեալ եղև ’ի բնակութիւն միանձանց. և ’ի սակս գաղթին ’ի Ռուս դարձեալ ամայացեալ, վիւսանգամ յետ վերջին պատերազմաց (1877–8) վերանորոգեալ հաստատի ’ի բնակութիւն թեմական հոգևոր տեսչի Կարուց: Բայց ’ի վաղեմի



5. Հռոմոսի վանք:

հանուս նուիրեալ: Ի դէպ է կարծել եթէ նախաշէնն այն եկեղեցի խանդարեալ ի յամի 982 Ա.Պ.ՀՀ.ԱՅ Դավթաստիկ Պարսից ամիրայէ, սաղրանօք Մուշեղի թագաւորեցելոյն ’ի Կարս, առ քինաւ եղբօր իւրոյ Սմբատայ Բ. որ, « եկեալ զՀռոմոսի վանքն այրեաց, և զերկրա-
» կան նշանն որ ’ի վերայ սրբոյ Շողակաթի գմբէթին
» կանգնեալ էր, ճոպանօք ’ի վայր բերէր... և ’ի վերայ
» նորա չարժեալ ցաւումն Աստուծոյ՝ զիւարախ լինէր.
» և... (յետոյ) յիւրոց ծառայիցն խեղդամահ լինէր ’ի
» քաղաքին Ուխթեաց[1]»: Ահա նշանակէ բանս և զանուն հնոյ եկեղեցւոյն այնորիկ լինել Շողակաթ: Այժմեան թագաւորաշէն եկեղեցին յերկուս արտեալ է, ’ի գաւիթ և ’ի տաճար. գաւիթն կամ ժամատունն փոքր ինչ ընդարձակ է քան զտաճարն և յոյժ հրաշակերտ. երկատասան սիւնք որմայեզք և չորք ’ի միջի ամրառնան գմբէթ մեծ և սիւնազարդ, յորում է և զանգակատունն. և բոլորակ մանն նորա ’ի վերոյ ինանց ներքին սեանց, և զանգակաց տեղիք ’ի նմա: Կամարք չորից սեանցն որ

1 Ասողիկ, Գ. ծԲ:

ցիրուցան եղեալ ի ծովս եւ ի ցամաքս, ի ձորս եւ ի լերինս, ի ծովս եւ ի գետս, ի ձորս եւ ի ձիս, ի ձորս եւ ի ձիս, ի ձորս եւ ի ձի

Ի ՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ի ՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

երբորդն՝ երդմանց. բայց որպէս յարձանագրութեանցն գուշակի՛ էին սոքա պահպանք նշխարաց սրբոց, սպա- սուց եկեղեցւոյ և գրենից. ՚ի յետին ժամանակս, աւաղ, ՚ի զմայ խաչանց կարգեալ: Վաչէ և Մամա խաթուն կին նորա կանգնեալ են զառաջին սենեակն յամի 1229, որ- պէս ցուցանէ արձանագիրս որ ՚ի վերայ դրանն.

ՈՀԸ ✠ Շնորհիւն Քրիստոսի ես Վաչէ որդի Սարգսի եւ ամուսնին իմ Մամա խաթուն դուստր Աղուսերհին չինեցաք զնշխարատունս ի վանքս Հոռոմոսի յառաջնորդութեան տեառն Բարսղի որդւոյ Ամիր Երկաթայ եւ տաւաք ընձա գրատա... զմեր գանձագին այգին ի յԱչական ժամն համար եւ նշխարի եւ այ... տուաք եկեղեցոյս (սպ)ասք եւ երկու քշոց արծաթի. եւ փոխարէն հատուցին մեզ միաբանքս յամէն ամի յամենայն եկեղեցիքս ի նոր կիւրակէին պատարագել զՔրիստոս. զայգին վաճառա(ք)ն հոգա և գինոյն իշխանութիւն ունի որ ի մեր պատարագի յաւրն հասարակաց սէր առնէ. արդ կատարիչք գրիս ա(ւր)հնին ի Քրիստոսէ. իսկ եթէ ի մերոց կամ յաւտար(աց ոք զ) կտակս մեր խափանէ մեղաց մերոց պարտական լիցի առաջի Աստուծոյ:

Թվ ՈԶԹ շնորհիւն Քրիստոսի ես Զմրուխտ խա- թունս աղախին Քրիստոսի յուսալով յողորմութիւնն Աստուծոյ ետու ի սուրբ ուխտս ի վանքս Հոռոմոսի ի սուրբ Յովանէս ակն ի մին ջաղաց բոլոր ի կար- մնջին ծորին որ Աբելանց կոչի զոր այրն իմ աս- տուածասէրն Սմբատ յիւր կենդանութեանն ինձ հայրենիք էր տուեալ ես յիմ կենդանութեանս սուրբ ուխտիս հայրենիք հաստատեցի յառաջնորդութեան տեառն Բարսղի որդւոյ Երկաթայ եւ սպասաւորք սուրբ ուխտիս փոխարէն հատուցին մեզ յամենայն ամի պատարագել զՔրիստոս աւր. ԺԵ. ինձ խա- թունիս. ԺԵ. առն իմոյ Սմբատայ. Ժ. աւր մաւրն խոջիշաճի եւ. ե. իւր հաւրն Քրդին. արդ եթէ ոք ի մեծամեծաց կամ ի փոքունց զմեր նուէրս հանէ ի սուրբ ուխտէս կամ ծախելով կամ գրաւական դնելով կամ զմերս ամն? պակասեցուցանեն: յԺը հայրապետացն նզովեալ եղիցի մանով եւ կենաւք իսկ որք հաստատուն պահեն աւրինին յԱստուծոյ ամէն.

ՈՂԵ կամաւ բարերարին Աստուծոյ ի թագաւո- րութեանս Հայոց եւ վրաց Դաւթի եւ ի սպասաւա- րութեան Շահնշահի որդւո մեծին Զաքարի եւ յա- ռաջնորդութեան տեառն Բարսղի արքեպիսկոպոսի որդւո Ամիր Երկաթա ես Աշոտ դպեղեցի որդի Գաւր- գէ Թոռն Աշոտո միաբանեցա սուրբ Յովանիսի ինեղ եւ ի չար ժամանակիս յետ կործանման Տաճարին մինչ էր վանքս ի նեղութեան ետու զամենագով աւետարան եւ: դ: եզն: գ: կով: դ: էշ: ե: ձի եւ այլ զինչ Աստուած պատրաստէ. ես տէր Բարսեղ եւ Սարգիս վարդապետս եւ այլ եղբարքս ընգալաք զնա իբրեւ զմի ի պատրոնաց մերոց եւ փոխարէն հատուցաք յամէն ամի զկնի նոր կիրակէին աւր պատարագեալ զՔրիստոս յանուն Աշոտո որչափ կենդանի է իւր ծնողացն յետ ելից յաշխարհէս Աշոտո կատարենք. որ հաստատուն պահեն աւր- հնին յԱստուծոյ եւ որք խափանեն զՁուդաի առցէ եւ զկաէնի յիր հայրապետացն որոշեալ եղիցի մա- հումն եւ կենաւք. ես կիբա հետ իմ պարոնին Աշոտո միաբանեցա սուրբ ուխտիս յանուն իմ պատարագի Քրիստոս ի տարին աւր մի.

Ի Թ. ՈՂԹ կամաւն Աստուծոյ ես Աբէտիս վար- դապետ առաջնորդ սուրբ ուխտին Սանահնին ազ- գապետ մայրաքաղաքէս Անւոյ միաբանեցայ սուրբ ուխ- տիս Հոռոմոսի վանաց սուրբ Յովանիսի եւ ետու ընձա յառաջնորդութեան տեառն Բարսղի արիէ- պիսկոպոսի որդւոյ Ամիր Երկաթա. փոխարէն հա- տուցին ինձ տէր Բարսեղ եւ այլ միաբանքս կատա- րեն ի տաւնի սուրբ խաչին: գ: աւր ժամ: ե: աւրն Աբէտիս վարդապետին: ա: Ոտնամուրին. կատա- րիչքն աւրինին յԱստուծոյ ամէն.

Զաւրութեամբն Աստուծոյ ես Շերաճիկս զաւրացա ի զինուորութեան եւ արդ անկեալ կամ ի վանքս առաջի սուրբ խաչիս Քրիստոսի զի ողորմեացի ինձ Քրիստոս Աստուած. ետու զիմ գանձագին այգին ի Ծմակին յանուն իմ պատարագի Քրիստոս զ ի տաւնի խաչգիւտին: ես Մարիամ զուգակից Շերանկանն ետու ի սուրբ Յովաննէս զԱվնաց կէս դանգն իմ գանձով գնած. յանուն իմ պատարագի Քրիստոս: զ.

Շնորհիւն Աստուծոյ ես Աբիւծս որդի Աստուա- ծատրո միաբանեցա սուրբ ուխտիս եւ ետու ի յԱյնո քուն փողոցին զիմ գանձագին կուղպակն որ շի- նեցի: ներքի դեռն քանակից է Աբետացւոյ: բ: կուղ- պակի կտերն մէկն ի վերա կուղպակին է եւ մէկն իւրենն դիմաց որ դաղլայն է ներքեւ. վասն յիշա-

Չերկրորդն չինէ Աբիւծ Հոգևորեանց յամի 1277 ՚ի ձեռն կարնեցի Ֆրեր վարպետի, որպէս և արձանագրէն.

Թվ ՉԻԶ ✠ կամաւն Աստուծոյ ես Աբիւծս հոգեւ... Սարգսի որդիս եւ կենակից իմ Սէդա չինեցաք ի մեր հալալ արդեանց զնշխա(րա)տունս ի մեր ժամատան դուռս յիշատակ ծնողաց մերոց եւ ս.. զոր ի կա.. Աս- տուծոյ կարողութեամբ վարպետ Ֆրերս Կարնոյ քաղաքացի [1]:

16. Բազմաթիւ արձանագիրքդ և սակաւ ինչ յիշա- տակք մատենագրաց, զսա ՚ի նշանակել հասից, կա- լաւածոյ և պարտաւ պատարագաց հոչակաւոր վանացս Հոռոմոսի, զորս բանասէր վերծանողին Թողամք քննել, ցուցանեն և զի տեղին երբեմն ընդ արքունական հո- վանաւորութեամբ գոլով՝ էանց ՚ի ժառանգութիւն այլոց իշխանաց. կամ զի շուրջ սահմանքն գնեալ էր նոցա, և կամ զի տապանատուն էր տոհմի նոցին. և գլխաւոր տեարք՝ որ և պատուիր կոչին տեղւոյն, են ՚ի զարմ իշխանաց Խաչենոյ կամ ՚ի տոհմէ Քուրդ իշխանի, յետ ԺԲ և ցկէս ԺԳ դարու, որպէս Հեթում Պրիգոր, Սմբատ և Իշխան, եղբարք և եղբօրորդիք նորին, որոց բազում արձանք են տրեալ և վճռոյ. երբեմն արգելուն ազատ գոնձ ՚ի վանս. երբեմն (՚ի 1228) նզովս դնեն տերանց տեղւոյն եթէ կաշառօք կարգեցեալ վանահայր. ուր նշա- նակի և այն՝ զի և կանանց օրէն էր ժառանգութեամբ առանձնակ զտէրութիւնն կամ զպատրոնութիւն. առ որովք և վանահայրն Պետրոս (1195) միաբան հաւանութեամբ ուխտին՝ հաստատէր սահմանս պատարագաց վասն հօր և միաբանից վանացն վախճանելոց: Ի սկիզբն ԺԳ դա- տակի զուգակցին իմո Համաւորին յանուն մեր պա- տարագի Քրիստոս: բ: Աստուածատրո: բ: Վահրը- մա... բ: Համաւորին՝ կատարիչքն աւրինեալ եղիցին յԱստուծոյ.

Ի յԱրուճ փոքր այգիք են վանացս եկեղեցպանին: Բաւշուտին Լապաստակայն Հանկանն Աբեւծկանն Աղպետեանցն Թուխայրեանցն Խաչեղբաւրն. եւ պա- սարագի Քրիստոս յանուն սոցա ի խաչին ունեաւ- րէքն ի. ես Աբշաւիր աշտակեցի ետու զիմ հայրե- նի. ես Աբշաւիր աշտակեցի ետու զիմ հայրե- նի... զՈւռուան զի յիշեսցեն զիս առաջի զենմանն Քրիստոսի: ես Բաւշատս ետու զիմ ծաղկոցի կէսն զխոսրովանցն զ: ես Խաչիկ երէց միաբանեցա եւ ետու զծաղկոցին...

Հոռովմոսին վանացս հայրենիք որ ի քաղաքին այս են Գեորգ ծեր երէց վանացս ետ հայրենի տներն մաւտ ի կարուց դուռն սուրբ Ստեփանոս ընդդէմ եւ այլ արդիւնք ետ եւ առ զիւր տաւնին պատա- րագն զ: Գիւտիկ կրաւնաւոր ետ զիւր հայրենի տունն ի Քարավնն եւ առ զխաչգիւտին պատա- րագն զ: Վարիամ ետ կուղպակ ի դարբնո փողո- ցին մաւտ ի սուրբ Գրիգորն եւ պատարագ մատչի յանուն նորա բ: Աբրահամ ետ պարտէզ բերդին առաջի հայրենիք է անուն... պատարագ զ: ես Սապիս ետու զիմ հայրենիք տներն... իգածորին դրան վանացս ասպնջականոց... պատարագն զՔրիստոս գ:


Ես Սարգիս էրէց որդի Պետրոսի փարպեցի ետու զիմ գանձագին այգին ի վանս Հոռոմոսին սպասա- ւորք սրբոց կատարեն յամեն ամի զտաւն սուրբ Սարգսին պատարագել զՔրիստոս: բ: ժամ: ա: ինձ եւ: ա: կենակցի իմոյ Քէմէի.

....ս ծեր երէց շինեցի զսուրբ եկե....սցի ի նմա Քրիստոս յանուն միաբա....ենի տներս եւ զծիծաւանքն.... պատարագեսցեն զՔրիստոս ծ.... ծնողացս.. մ եղբաւրն Շնաւորին..... ես Շահ... իմ հայրենիք կուղպակն եւ զսրահն.... եւ մտից կուսէ պատարագեսցեն զՔրիստոս.... եւ ա իմ եղբարցն Կարապետին պարկա.... սուրբ Գեորգա ի հարաւո կուսէ... ընկերին...

Թվիս Զ կամաւն Աստուծոյ ես Աբիւծս հոգեւո- րեանց եւ ամուսնի իմ Սեդա միաբանեցաք սուրբ Յովանիսի յառաջնորդութեան տէր Բարսղի քերի զգուս զոր Տաճարով խուսպանեալ էր եւ տվի ընձա զհայրենի զիմ կուղպակն որ ի կաշկակարոցին քա- նակից է վերի դեռն Տիգրանա ներքին սլքերոյն եւ զպահէզն ի Քեղուտի՛նորիցիս կանգնեցի. եւ փոխա- րէն հատուցին մեզ սպասաւորք սուրբ ուխտիս յա- մէն ամի ի խաչին ունեաւրացս: ժբ: աւր ժամ: դ: աւրն ինձ: բ: Սեդաի: բ: իմ հաւրն Սարգսի: բ: իմ մաւրն Հռիփսիմի: ա: Նուրսաթէ: ա: Գրիգորոյ. Եթէ ոք զմեր յիշատակս խափանէ դատի յԱստու- ծոյ եւ որք հաստատ պահեն աւրինին ի Քրիստոսէ ամէն.

Զ. կամաւն Աստուծոյ ես Յովանէս մականուն Ջիւրկ միաբանեցա սուրբ ուխտիս յետ աւիրման Տաճա- րիս վանացս ջաղացնիս աւեր եւ գրաւական էր: խս:

1 Աբէտ վարդապետ՝ քննող վանացս յամի 1851, յիշէ և հին եկեղեցի մի իրեն ՚ի Մխ (791 թուին Քրիստոսի) կանգնեալ, քա- ռակուսի և անգմբէթ, բոլորըն ունելով յատանցոյց ՚ի ձեղունն ամփարձեալ ՚ի վերոյ չորից միաւսանի սեանց. և ժամատուն քա- ռակուսի կամարակալ անսիւն ՚ի թուին ՉԻԶ (1277) առ. նմին: կարծէմ թէ եկեղեցիս այս է մատուռն յիշեալ ՚ի մեր Սարգիսեան վարդապետէ առ տապանատաւին. իսկ ՉԻԶ թուականաւ արձան դառնի ՚ի վերայ միւին սենեկի նշխարատանն:



ԱՐՇԱԼՈՒՅՍ ԵՒ ՍԻՐՈ

Արշալոյս ելանէ ի լերանց Մասեաց,
Ծագի ի ծոցոյ ծովուն Կասպից,
Ծաղկանց ի վերայ ցօղ կաթի,
Ծիծեռնակ ի բոյն իւր ճռուողի,
Ոչխարք ի գոմ կանչեն զգառունս,
Հովիւք ի խրոխտ փող հնչեն,
Ի ծառ ի ծառ ծլուի թռչունք,
Ի ձոր ի ձոր հնչէ արձագանգ,
Ի գիւղ ի գիւղ կանչեն աքաղաղք,
Ի դուռն ի դուռն հաւք կանչեն,
Ի ջուր ի ջուր ձայնեն ձկունք,
Ի ձեռն ի ձեռն ելանեն գործք,
Ի գործ ի գործ երթան մարդիկ,
Ի հանդ ի հանդ երթան եզունք,
Ի ձեռն ի ձեռն ելանեն ցանք,
Ի ցանք ի ցանք ելանեն ցօղունք,
Ի ցօղ ի ցօղ ելանեն ծաղկունք,
Ի ծաղկանց ելանեն պտուղք,
Ի պտղոց ելանեն հունդք,
Ի հունդ ի հունդ ելանեն ցորեանք,
Ի ցորեան ելանեն հասկք,
Ի հասկ ի հասկ ելանեն հատիկք,
Ի հատիկ ի հատիկ ելանեն ալիւրք,
Ի ալիւր ի ալիւր ելանեն հացք,
Ի հաց ի հաց ելանեն փշրանք,
Ի փշրանս ի փշրանս ելանեն մանր փշրանք,
Ի մանր փշրանս ի մանր փշրանս ելանեն ոչինչ,
Ի ոչինչ ի ոչինչ ելանեն ոչինչք


Ի վանահարց հուչակապանծ վանացս յարձանաց և այլոստ ծանօթք են ինձ [1] ատորագրեալքս, յորս յիշեալն առաջնորդք էին և վիճակին Կարուց.

936	Յովհաննէս հիմնադիր վանացն.
972	Սարգիս (Թուխ Կաթողիկոսն).
986	Սոդոմին.
1013	Աննահա [2].
1036	Սարգիս և Գէորգ.
1038	Յովհաննէս.
1174–81	Խաչատուր.
1195	Պետրոս.
1198–1201	Մխիթար.
1229–53	Տէր Բարսեղ [3].
1218	Գրիգորիս.
1222	Աղբէսա.
1246	Սարգիս.
1269	Յովսէփ.
1336	Ստեփանոս.
1685	Դանիէլ Տիգրանակերտցի.
1751–5	Եղիա վարդապետ Ալաչկերտցի [4].
1788	Յովհաննէս Շամքեցի եպիսկոպոս.
. . .	Աւետիք եպիսկոպոս.
1829 ?	Ստեփանոս եպիսկոպոս Զախալեան.

Ի միջոց ժամանակին որ ՚ի կէսոյ ԺՍ. դարու ցչորրորդ քառորդ ԺԲ[ին], յորում ոչ առաջնորդք յիշին վանացն և ոչ մի արձան յիշատակի գրեալ, հանդիպեալ են հրաշալի այլայլութիւնք ահմանաց գրից վանացն և պատոդին զնուաս Ախուրեան գետոյ, կարևոր տեղագրութեամբ, ըստ պատմութեան Գևտարգել խաչին՝ զոր պահէր Հայրն Աստ ՚ի խաւարաձոր Աբրարունեաց, ուստի անցեալ ՚ի Շիրակ, յԱնի, ապա եկն այսր « ի Հռոմոնց » վանքն. և էր վանքն այն, ասէ (պատմիչն), ՚ի թորուձոր » ՚ի վերոյ բերի միւսմ, զորով շուրջ բակ առեալ պատէր » մեծ գետն Ախուրեան. և գետն այն բաղում ցաւս և » վտանգս հասուցանէր վանացն. զի յորժամ արեգակին » յամառային տեղին հասանէր՝ շոգեալ շղանայր վանքն » ՚ի տապոյ արևուն. իջանէր ՚ի քարանձաւան, և օդք » խորշակայինք և զաղրահոտք և ցաւաբերք ՚ի գետոյ » անտի վչէր ընդդէմ վանացն՝ ՚ի չորից կողմանց: Զոր » տեսեալ երանելոյն Աստմայ՝ զվտանգ վանացն և զնե- » զութիւնն, առեալ զսուրբ Նշանն և էլ ՚ի բարձր ՚ի » տեղի մի ՚ի վերոյ վանացն. և կացեալ յաղօթս՝ տա- » բածեաց զԳևտարգել սուրբ Նշանն ընդդէմ լերինն, և » ասաց. Տէր Աստուած զօրութեանց, ազատեմ զքեզ, » արա զօրութեամբ Գևտարգել սուրբ Նշանիս, պա- » տառել լերինս այսմիկ, և գնասցէ ջուր գետոյս այս- » րիկ՝ ՚ի մէջ լերինս, զառ ՚ի վայր հոսելով. և դուս այս » որ գնայ ընդ հիւսիսի, դառնայ անդրէն թափընթաց » ընդ հարաւ: Եւ իրրև կատարեաց զբանս աղօթիցն, » յանկարծակի մեծագոչ որոտմամբ պատառեցաւ վէմն, » և լեառնն ընդ մէջ բաժանեցաւ յայսկոյս և յայնկոյս » կանգնեաց վանքառն. և էանց գետն ընդ մէջ լերինն՝ » զառ ՚ի վայր կոյս, առատիկ թափընթաց: Իսկ բնա- » կիչքն վանացն իրրև տեսին զբանչելին, մեծաւ զո- » հութեամբ փառաւորելով զԳևրհատոս Աստուած, և » երկիր պագին Գևտարգել սուրբ Նշանին: Եւ յետ այս » առկալի զբանչելեացս՝ առեալ սուրբ հայրն Աստ » զսուրբ Նշանն Գևտարգել, և զնաց դարձեալ ՚ի վանքն » խաւարաձոր »:

17. Ախտագոյ վանացս քարընկեցիկ հեռի յարևելից՝ կայ մատուռն, և առ նմա դամբարան կիսաւեր. ոչ զի-

տեմ սա՛ թէ այլ չերիմ է զոր առեն Ամիատոյ թագաւորի վինել. կայ անդ միւս ևս չերիմ ՚ի վերոյ երեցոյն Թանձր մեծամեծ վիմօք ամբարձեալ արկղաձև, կողմունք նորա միաստանի քարամբք, այլ այժմ լցեալ խըճով, ՚ի վերոյ քարանցն քանդակեալ են կամարաձև սրընդարդ խորշք, յորոց մի մասն միայն կանգուն կայ, և զայս միայն գրուած ունի. Եղբայրիկն կաղող խաչիս, որպէս է տեսանել յայսմ պատկերի [1]: — Այդր քան զաս մեծ ՅԱխտբեան ձոր կան կրկին սենեակք, մեծ նաւորի բնակարան: — Այ երի վանացս առանդնն առնել զՀանդիպ զորաց մերոց թագաւորաց:



6. Մահարձան ՚ի Հռոմոսի վանս:

Ի հիւսիսոյ Հռոմոսի վանաց, հարաւ քառորդաւ ժամս հեռի, ՚ի ձորագաշտակի ուրեմն կայ Հանգստատուն Բագրատունի թագաւորաց. երկու եկեղեցիք են անդ գեղեցկաչէնք, փոքու խիք զանազանեալ մեծութեամբ, յորոց մեծն կոչի Սուրբ Գէորգ, իսկ փոքրն կարծի Ս. Միհրան, երկոքին ևս մասն համարին Հռոմոսի վանացս: Ընդհան են եկեղեցիքն, այլ ունին գեղեցիկ [2] գմբէթս ՚ի վերայ կամարաց չորեցուն կողմանցն: — Այս անկեամբ արևելից հարաւոյ եկեղեցւոյ Ս. Գէորգայ իբր երկու Զ. տարակաց կայ յիշատակարան վանականն և սրատուչ. երեք տախտակաձև վէմք ՚ի վերոյ խրիթոյ աստիճան գործեն. և ՚ի վերոյ նոցա չերիմ որոշաձև, և ՚ի հարաւոյ կողմանէ փորագրեալ [3], Աշոտ Թագաւոր Հայոց: Զկք ոչ մատուռն և ոչ գմբէթք ՚ի վերայն, այլ հաղիւ հետք

1 Թուի պակասել Զ տառի բառիդ (Խաչողղ). և խաչն բարձեալ է:

2 Ոչ միայն գեղեցկութեամբ ձևոցն զարմանալիս ասէ Դէսխէ Փռանկ զմբէթս եկեղեցեացն, այլ և ճարտարութեամբ կերտուածոյն, զի չէ գործ դիւրին ՚ի միում անգ գմբէթի գերիս տարբական ձևս երկրաչափութեան զուգաւորել գկոն, զգլան և բզդունս. Le style original de ce monument, sa conservation parfaite, au milieu de tant de ruines, en font une des plus grandes curiosités de la ville d' Ani. Ce n' est pas seulement l' élégance des formes qu' il faut admirer, mais l' habilité avec laquelle l' appareil a été tracé. Les architectes comprendront la difficulté de couvrir chaque chapelle par un cône oblique pénétrant un cylindre, et formant dans l' interieur une voûte sphérique; c' est-à-dire, que les trois formes élémentaires de la géométrie, le cône, le cylindre et la sphère, concourent au tracé de l' appareil ». — Texier, l' Arménie, I. 150.

3 Բազմաց յայց եղեալ սերալի յիշատակարանիս՝ պէսպէս ընդօրինակել են զարձան. ոմն լուկ Աստ Խաչաւոր, ոմն Մեծն Աստ Խաչաւոր Հայոց. ոմն Թուխանաս Նկղ Աստ Խաչաւոր Հայոց. ոմն Աստ Ողորմած Խաչաւոր Հայոց. իսկ զպատկերս այս (որ յէջ 31) գծագրեալ յօտարազգւոյ՝ հաւատարմագոյն համարիմ, Թողեալ զպէս գծեալ էին՝ զառաջին եղեալ տաման, որք Թուին Նկղ. Թ. այսինքն 977 ամ մահմուտեան: Յատկացեալ լուսագիր պատկերս:

ԶԺԸ ողորմութեամբն Աստուծոյ ես Թաթիկ Թագոհի դուստր Շարապշահին ետու ի Հոռոմոսի վանքըս զԱբէլի ակն որ ի Դվինա դուսանն զոր իմ որդին Հազրպէկն ի Գարեգոյնէն գրաւնկեց: է: ճ: սպիտակ: ը: ճ: սպ: ի վերա խարճ արար որ եղաւ: ռ: շ: սպ: եւ սպասաւորք սուրբ ուխտիս հայր Յուսէփ Սիմէոն փակակալ եւ այլ միաբանքս փոխարէն հատուցին: բ: աւր պատարագ զՀոգոյն գալըստեան: ա: Թաթիկանն: ա: Հազրպէկին. կատարիչք գրիս աւրինին ի Քրիստոսէ եւ որ խափանեն դատին ի Քրիստոսէ.

ԶԻԹ կամաւն Աստուծոյ ես Մասքաս դուստր Աղաւնին եւ Թոռն Տիգրանայ ետու զիմ հայրենի բաժինք գեղն զՃոխքագոն ի սուրբ Յովանէս ի յիշատակ ինձ եւ որդոյ իմոյ Սարգսի եւ սպասաւորքս հատուցին տարին: ե: պատարագ: բ: ինձ: գ: Սարգսի. եթէ ոք զնուէրքս մեր հանէ ի վանացս յԺը հայրապետացն նզոված է.

Ի մէջ տաճարին ՚ի վերոյ որմասեանն հիւսիսոյ.

ՁՁԵ շնորհիւ Աստուծոյ եւ ողորմութեամբ ես Վարիամ աճապակ պարոնաց պատրոն որդի Իւանի Թոռն մեծին Շահնշայի որդի ամիր սպասալար Զաքարիայի վասն արեւշատութեան իմոյ հայրապատ եղբարց կենդանեաց եւ հանգուցելոց պարոն Շայինշի Աղբուղին եւ Աբտայշիրին Զազին եւ սիրեցել եղբարցս Պիմին Աղբուղին Աւագ Սարգսի Իմնայի Պանուսի մեծի եւ փոքու վասն յուսուն իմոյ առ Քրիստոս տվի սուրբ Յովանէս ոխմ յիշատակ հոգոյ իմոյ զոր յառաջն մեր նախնիքն եւ էլ պարոնայքն տվել էին եւ գրով հաստատել ես վերստին հաստատեցի զՄերանց . . . ու զԳանձայիանքն ու զՁողքայգումն իրենց հանդայվարաւքն հողով եւ ջրով ու: դ: կոքարովն. արեւելից դենն մեծ շաիրէն Մասեաց. արեւմտից դենն ջրհորն. հիւսոյ դենն խայչով փարախն. հարաւոյ դենն Աբեղին ջրդիքն. ոչ ոք կայ հակառակ կամաւս գրուս ոչ ավագաց ոչ յազատաց ոչ ի քրիստոնէից եւ ոչ յայլ ազգեց. ով որ զմեր հրա(մա)նս խափանել ջանայ ամենայն հաւատ նալած է մեր մեղացն եւ մեր ազգին առաջի Աստուծոյ պարտական է. եւ սպասաւորք սուրբ Յովանիսի հատուցին ամէն ամի Ֆ աւր պատարագ: ե: ինձ: ե: իմ նախնեցն. ի տէրութեան վարիամա... յառաջնորդութեան հաւր Ստեփանոսի.

Յայս վայր են արձանք եկեղեցւոյ Հռոմոսի վանացս:

« Լեզուաց հրացանիւ հարեալ վախճանեցաւ ՚ի մօտակայս, ՌՄԳ » (1733) Թուին. զի էր այր ձիավարժ և տիգաւոր, որ զերկաք հա- » րիւրս ՚ի նոցանէ միով մղտախիւ խաղ ջոռն արարեալ էր, և նոքա » Թիւիքենկի բերեալ սպանեալ էին. և յետոյ զղջացեալ վասն » անգիտութեամբ հարկանելոյն, զի շատ հայ կերեալ էին ՚ի ձե- » ռացն. զի էր այր հիւրընկալ քաղցրաբան, ջախճիճ »:

1 Ցիշատակարանք գրոց և արձանագրութիւնք:


2 Որ և եպիսկոպոս Արշարունեաց և Ճակատուց:

3 Սա Թուի միանգամայն արքեպիսկոպոս Անոյ և տէր վանացս Հռոմոսի:


4 Գրէ զսմանէ Ցակոբ Նալեան. « Լուսաւորեալ Հոգի Եղիա » վարդապետն Ալաչկերացի՝ լաւապէս նորոգեաց. բայց անդաղն ՚ի

կամարի միոյ նշմարին. որպէս զի մնայ արդ 'ի սպառ 'ի բացօթեայ վայրի, կախարչան ևեթ հովանացեալ, յա- մենավեմ պարզութեան, մի 'ի փարազանցն Բագրա- տունեաց, և որպէս համարի սիրելագոյնն Թագաւորաց Անոյ, Աղթամածն Աշոտ: Ի մնաս նորին կայ այլ չիրիմ փոքր արկղաձև, թերևս զուգակից նորին Թոսրովանոյշ

դշխոյի: Բազում եկեղեցեաց և մատրանց աւերակք են և հիմունք առ սոքօք և առ եկեղեցեօքն: Արձանագիրքն ցուցանեն զի զեկեղեցիս այս Ս. Գէորգայ չինեաց Գա- գիկ Ա. յետ ժ կամ 'ի սկիզբն ԺԱ դարուն. և է ար- ձանագիր նորա արդարև արքայատիպ թեղադրութիւն՝ վեմական և մաղթողական, այսպէս.



7. Ս. Գէորգ. — Հանգստարան Գագիկ Ա:




8. Յատակագիծ Ս. Գէորգայ:

Ով հռչակաւոր դու եւ մեծանուն ի վկայս Սուրբ Գէորգիոս աւգնեա բարեխաւսութեամբ Գագիկ Շահայնշահի չինողի զվկայարանս զայս քոյով անուանակոչութեամբ ի քոյդ յուսակնեալ բարեխաւսութիւն. զի ընկալցի զողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ յանվախճան արքայութեանն ընդ ամենայն արդարացեալսն ապաշաւանաւք հասանել լուսոյ փառաց որդւոյն Աստուծոյ ի վերջնում դիչերին ի ծագել մեծի եւ աներեկ առաւաւտին այցելութիւն գտանել առաջի բեմին եւ անաչառ դատաւորին. աղաչեմք:

Արժանի յիշատակաց է և արձան որդւոյն Գագկայ՝ Յովհաննու Սմբատայ՝ հռչակելոյն խնամատարութեամբ քան թէ քաջութեամբ, յամի 1036, փոխագրեալ 'ի հա- կատ եկեղեցւոյն, յարևմտից կուսէ. որ է այս.

Ի ՌՈԶԺ արքմպիադի[1] լինելութեան արարածոց ՄԿ արքպիադի Աստուծոյ մարմնանալո եւ ի ՆՋԵ ԹԱՀ ես Սմպատ շահանշահ որդի Գագկա շա- հանշահի ետու զիմ գեղս զԱահատունիս ի մեր հանգստարանս թագաւորաց ի տիեզերահռչակ վանսս Հոռոմոսի վանն մեր մեղաց թողութեան եւ գրեցի ի սուրբ Գորգ յամենայն տարի զ քառասունք Գագկա եւ ի վախճանիլն իմ ը լինճ եւ ը Գագկա մինչ ի գալուստ Տեառն վկայութեամբ Տեառն Պետ- րոսի Հայոց կաթողիկոսի եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս հայր Սարգսի եւ Գէորգա. արդ եթէ յառաջնորդաց եւ ի սպասաւորաց սուրբ եկեղեցոյս յայս յիշատակէս խափանէ մեղաց մերոց պարտական է առաջի Քրիստոսի. արդ թէ ոք ի մեծաց կամ ի փոքունց ի մերոց կամ յոտարաց հակառակ կա եւ յապշտակէ զգեղն կամարաւն եւ վնդկան զրկեալ լիցի նա ի Քրիստոսէ որպէս զուդա աստուածասպան որոշիցի ի սուրբ Երրորդութենանէն եւ ի Քրիս- տոսի սուրբ նշանէն կապեալ եղիցի կենաւք եւ մահուամբ եւ ամենայն մեղք եւ անէծք յաղամա մինչ ի գալուստն Քրիստոսի ի նմանէ խնդրէսցի. հաս- տատուն է թէ Աստուած կամի: ✠ Թովմայ է գ.



9. Գերեզման թագաւորին Աշոտոյ Ողորմածի († 977):

Գեղեցիկ է դարձեալ և արձանագիր տեառն Աստ- ծոյ եպիսկոպոսի Աղբարունեաց և երբեմն առաջնորդի վանացս Հոռոմոսի, և է գրեալ 'ի վերայ գրան ագաւոզ- մեան աւանդատանն, այսու օրինակաւ.

Աստուած է ի սմա. Շնորհիւն Աստուծոյ ես Տէր Անանիա շնորհիւն Աստուծոյ Աղբարունեաց եւ ձակատոյ այրարատեան գաւառի եպիսկոպոս զմտաւ ածեալ հանապազ զվանս սրբոյն Յոհաննու թէ մեծ չահ է յաս-

1 Ընդհանրապէս 1616 (քառիցս կրկնութեամբ թուականին) ընծայեն զ6466 ամ արարչութեան աշխարհի, ըստ Աղեքսեայ ժամանակագրութեան. իսկ 260 քառապատկեալ արտադրէ զ1040 ամ Քրիստոսի, որ ըստ դիոնիսեան հաւարակ այժմու համարողութեան՝ լինի 1036-7 ամն, հաճելատ հայ թուականին նշանակելոյ, ՆՋԵ:

տուածայնն խորհուրդն յիշել զընծայեալն կարգեցի ամ ըստ ամէ անխա-
վան զզատիկ մեռելոց աւուրս (ժ)ամն յամենայն եկեղեցիս յանուն առաջնոր-
դաց հարցն սրբոց եկեղեցւոյս կատարել եւ զայլ աւուրսն մինչեւ ցնոր կիւ-
րակէն ամենայն հանգուցելոց որ են ի սուրբ ուխտիս յանուն նոցա. զի մեր
միշտ զյիշատակս նոցա ի մտի ունելով եւ կատարելով առաջի զենլոյն Քրիս-
տոսի նոքա ի մեզ հայեսցին .... ունելով բարեխաւսութեամբ աղաւթից
իւրեանց որ զկեանս մեր խաղաղացուսցեն քաղաքավա .... ի հաճոյսն Աս-
տուծոյ հայեցեալք յեղս գնացից նոցա նմանողս լինել հաւատոյ նոցա. արդ
ես չնորհելոմն Աստուծոյ ի ժամանակս իմոյ առաջնորդութեանս կա(րգե)ցի
զուք որ զկնի մեր յաջորդէք զպաշտաւնս ...

Գոյ և արձանագիր Մարտիրոսի ուրումն որ պատա- բազս կարգէ վանն հոգւոյ որդւոյ իւրոյ Գէորգայ, այսպէս.

Շնորհիւն Աստուծոյ ես Մարտիրոս եռաւ զիմ կուղպակն ի տիեզերա-
հռչակ վանս Հոռոմոսի վանն հոգւոյն Գէորգի որդւս իմոյ եւ արձանագրեցի
ի սուրբ Գէորգ յամենայն ամի: գ: աւր ժամ Գէորգա զվարդեւարին
հինգշաբաթի ուրբաթ եւ զշաբաթ եւ յետ փոխելոյն իմ առ Քրիստոս լինձ
առնեն. արդ եթէ ոք զընծայեալս որոշէ կամ զգրեալս ոչ առնէ որոշեսցի
ի փառացն Աստուծոյ.

Ի վերայ վոքրագոյն եկեղեցւոյն (Ս. Մինասայ) հնա- բուսն. որ զհայրենի այգի իւր նուիրէ վանացս, վանն
գոյն ևս թուականաւ արձանք գրեալ կան. մին արտա- հոգւոյ ծնողաց իւրոց, և վանահայրն Սողոմոն կարգէ
քսատ ի հարաւոյ կուսէ, յամին 986, Զուտասայ ու- նմա քառասունս պատարագաց, այսպէս.

Յանուն Աստուծոյ. Ի ՆԼԵ թուականիս Հայոց ետու ես Զուտաս զիմ
հայրենի այգին զՀոռոմդևան որ ի Մրեան ի Հոռոմոսի վանս ի հայր Սողո-
մոն վանն իմ ծնողաց հոգեւոյ. որ հակառակի նզովեալ լիցի յԱստուծոյ
կենդանւոյ. եւ ես հայր Սողոմոն պարտական եմ յիմ ժամանակս ի տարին
ա ֆ: ունել Զուտասին ծնողացն իսկ յետ իմ ելիցն խափանել մի ոք
իշխեսցէ ի բանէն Աստուծոյ եւ մի ոք վայրապար համարիցի զգրեալս զի
բազում բարութիւնս չնորհէր եկեղեցւս առատաձեռն:

Միսան կարևոր յիշատակօք ՚ի ներքս ՚ի հիւսիսոյ կողմն գրեալ է յամի 1013 ՚ի վերոյիշեալ Աննիայէ.

Յանուն Աստուծոյ. Ի ՆԿԲ թուականիս ես Տէր Անանիա նուաստ եւ
յետին ի վերակացուս եկեղեցւո առաջնորդ գտայ սուրբ ուխտիս ոչ ըստ ար-
ժանաւորութեան իմոյ կենացս կամ վարուց ինչ առաքինութեան այլ ի
ներելն Աստուծոյ ապաւինելով ազատեցի մեծաւ չանիւ զհարկ եւ զթաս-
տակ առի եւ զՔեղարտագոմն իւր ամենայն գոյիւ ի սուրբ ուխտս վանն

ապաւինի տեղի լինելոյ ի վախճանեան ժամանակի եւ այլ բազում ինչ աւգտի
վայել եւ խոտի. արդ զուք սուրբ հարք եւ եղբարք որք յաջորդէք զկնի մեր
յիշատակի արժանիս արարէք զմեզ սուրբ պատարագաւն եւ այլ աղաւթից
հանդիսիս. եւ որք յիշէք յիշեալ լիցիք ի մեծ ատենին առաջի Քրիստոսի եւ
որք զկնի ձեր գան զձեզ յիշիցեն. զոր եւ իմ անխափան եմ պահեալ զա-
ռաջնոցն յիշատակն. եւ տուող այդմ պարգեւի Գագիկ էր աւրհնեալ յԱս-
տուծոյ եւ որդեակք իւր Սմպատ եւ Աբաս եւ Աչոտ վկայութեամբ ամե-
նայն Հայոց ազատացս. արդ յամենայնի աւրհնեալ է սուրբ Երրորդութիւնն
տուիչն ամենայն բարեաց ամէն:

Ի ներքոյ երեցուն լուսամուխց արեւելակողման եկե- ընդ որ գետ անցանէր. վաղաւար, որ թուի ՚ի սահմանս
ղեցւոյս այսորիկ՝ արձանագրեալ են համառօտ բանք, Անոյ լինել: — Այսրմէոյ ձոր, Բովաձոր կամ Բովայոր
աներկբայապար յայտարարեալ պատկերաց որ ՚ի վերոյ յորում Եղանց մարգն, և է անչուշտ գիւղն Բաւագձոր
նոցին կամ առընթեր ձեւակերպեալք էին.

Ա.յս է սուրբ Աստուածածին.
Ա.յս է սուրբ Յարութիւն.
Ա.յս է սուրբ Գրիգոր:

կոչեցեալ յԱղուվոյ, ուր գումարեցան զօրաք՝ Դաւիթ
կիւրապաղատ և Մուշեղ սպզպյ Կարուց՝ ՚ի վերոյ Սմբատայ Բ Շահանշահի, վասն յաղխտակելոյ սպա ՚ի
բաժնել հօրեղբօր իւրոյ (Մուշեղի) զՇաւիկ գեօղ ձա-
կատուց. վասն որոյ յետս գարձոյց զգեօղն, ընդ նմին
և զզօրան: — Քարնատ. Ջուռ. Թերևս Ջունի կամ Ջիվ-
նի, զոր յիշելոյ եմք յետոյ: Իսկ յաճախ յիշեալն և
մասն առ մասն Նահրեանն վանացս՝ Մարանց-մարգ
կամ մարգին, է անչուշտ հին և նշանաւոր տեղին Մա-
րաց մարգ, իբր 300 ասպարէզ ՚ի վերոյ Երուանդաշատ
քաղաքի առ Ախուրեան գետով, ըստ Խորենացւոյ [1],
որ ՚ի ձախ գոյ սահմանաց Գարագաղէյի, ՚ի միջոցի անդ
Մարիիկայ գետոյն և Ախուրենայ. ուր մնեցաւ մեծ և
բազդավէիճ պատերազմն Երուանդայ ընդ Աբրաշէսի Բ,
մանաւանդ թէ ընդ Աղբաքունեաց Սմբատայ, որ «Հրա-
» մայէր զժողն պղնձիս հնչեցուցանել. և յառաջեալ
» զբանակն իւր՝ իբրև զարծուի յերամս կաքաւաց խոյա-
» նայր». և հարեալ վարեալ զգունդս Երուանդայ հա-
լածական տանէր մինչև ՚ի քաղաք անդր նորին: Ի մարտի
առն՝ քաջին Գիսակայ որդւոյ առնատուին Աբրաշէսի առ-
սերմհար կորուսեալ զկնս գիմացն և զկեանն՝ առնին
նորին կոչեցաւ Դխնակիսական, և յեղմամբ Դխնաքսեան:
Եւ զի գունդն Աբգամայ՝ որ ՚ի Մարաց՝ յառաջագէմ գը-
նաւ առն, Աբրաշէս «անուանեալ գնովիան՝ ուր ՚ի վե-
» բայ գիսականցն բանակեցաւ՝ Մարաց Մարգ, և գտեղի
» ճակատուն՝ Երուանդակաս, որ կոչի մինչև ցայսօր ժա-
» մանակի. այսինքն, թէ յայսմ տեղւոջ վանեաց զե-
» բռանդ»: — Ծանօթք են հեռաւոր գեօղք Աբագած-
ոտան՝ Թալին, Աբուճ, և հեռագոյնք Փարպի, Օշա-
կան, և այլն, յորս այդիք և հնձանք նուիրին վանացս
Հոռոմոսի, որպես և մերձաւորն Մրեան [2]: Այլ զայս
ամենայն և զայլ պէսպէս քննութեան արժանի յիշա-
տակս տեղեաց, անձանց, չինից, հարկաց և բաժից, և
այլոց նմանեաց՝ որք ՚ի յաջորդիս արձանս նշանակին,

1 Խորենացի Բ. Խգ:
2 Գտնելի է ևս յարձանագիրս ամաց ՉԻԳ և ՉԼԲ կիսատ բառն ՈՎՀԲ և ՊՈ-ԱՀ, որք Թուին յատկանիշ ինն ընական կամ ձեռակերտ տեղոյ:

'ի յաջողագոյն բանտարկութ թողեալ, մասիցուք յետս սա-
ժանաւոր սահմանս բազմադէմ յիշատակաց:

19. Յարեւմտակողմն Թօշավանից իբր չորիւք մղոնաք հեռի, և իբր կիսով մղոնաւ ևեթ տարակաց 'ի հիւսիսոյ արեւմտից քաղաքին Աչուց, կայ համանուն նորին փոքրիկ գիւղն Աճի, Թուրքաբնակ, իբրու յառաջադէմ պահնակ և նշանակ յաւերժայիշատակ քաղաքամօրն. չիք 'ի նմա չինուած հին, այլ միայն մերձ նմին և քաղաքին երկու հանգստարանք կամ գերեզմանք նահատակաց ԺԴ. դարու. մին կիսաւեր մատուռն իմն ամբարձեալ 'ի վերայ կամրջանման կամարի, յորմոյ ձգելոյ ընդ հիւսիս և ընդ հարաւ, և 'ի ներքոյ նորին անցք են. 'ի հարաւային կողմանն արձանագրեալ կայ յամի 1348.

Ա յս է հանգիստ Կիրակոս վարդապետին, որ նահատակեցաւ յանօրինաց. Յիշեցէք ի Քրիստոս. Թվ. ՉՂԷ: գրեց:

Սակաւուք հեռի է միւսն, որմանէ կերտուած կամ խա-
րիսխ. նշմարի իսկ և խաչվէմ մեծ ագուցեալ 'ի նմա, երկաստեք այլ ևս խաչվէմք գեղաքանդակք 'ի կարմիր քարանց. յորոց սակս և խոյի ձոր կոչի տեղին. 'ի ներքոյ մեծի խաչ-վիմին գրեալ է արձանս այս արատառուչ, յիշատակ եղբօր սիրելոյ 'ի վերայ եղբօր սպանելոյ.

*Զսուրբ եւ զանարատ վհատչս աստուածընդալ որ բեւեռեալ ի սմա անմահ մեռեալ տէրն մեր Քրիստոս որ մահուամբն իւրով անմահացոյց զմահացեալքս. արդ ես Կաղերս որդի Մեւունի կանգնեցի զսա կարողութեամբ բեւռին սորա յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւս առաւել արեւնա(թա)թաւ...: ա Սարգսի որ յանապրէն Թուրքաց նահատակ եղեւ յանմարդաճաշն տեղիս զոր ընդ ոտիւք դիւզաչխարհաւն (?) դրելով զարեգակնանման եղբայրն իմ զոր գտի ի խորագու(ն) հորի քարաթաղ արարած. ի մաղորտան արենաթա-
թախ մարմնոյն ոչ կարելի ծանել զնա. բազում աշխատութեամբ բերել եդի յայսմ տեղի. աղաչեմ յիշել:*

Փոքրս այս յիշատակարան 'ի մեծագոյնն արդ առա-
ջնորդէ մեզ 'ի հանդիսարան սիրոյ և ազգ, 'ի քաղաքն

20. Ա՛նի. — Ի բազմադարեան հարստութեան մերոց Հայկազանց և Աւրշակունեաց՝ մի ըստ միոջէ ամբարձան փայլեցին փառօք և ճոխութեամբ արքայանիստ մայրա-
քաղաքք յԱյրարատեան աշխարհս, Արմաւիր, Արտա-
շատ, Երուանդաշատ, Վաղարշապատ և Դաւին. Թող զոր 'ի սահմանածայրս տէրութեան Հայոց՝ Մծբին և Տիգրանակերտ, կամ որ մնացորդք և դեռ տեղապրեալք առ գետովս Ախուրեան՝ յԱ՛ն դարս, նախկին գահն Բագրատունեաց, Բագարան և Երազգաւորս. այլ ամե-
նեքին նոքա դրեթէ հաւասար գեղոյ հիմնայատակ և ընդ հողով ծածկեալք, աներեւոյթք և անծանօթք մնան, որպէս մեռեալք յաւիտենից, և յիշատակ նոցա աշխա-
տութիւն կրէ 'ի դրդել զսերս: Ոչ այսպէս յետինն մայ-
րաքաղաքաց Հայոց՝ 'ի բնիկ երկրի նոցին և 'ի սեփական աշխարհին Աւրարատայ, յինն հարիւր ամաց հետէ հան-
դիսացեալ, և 'ի հինգ հարիւր ամաց ամայացեալ, այլ միշտ և յամենայն դէպս և 'ի պայմանի՝ պատառուչ. որոյ անուն անգամ իրրև անմոռաց կոչնակ ազգային պոչ՝ ճմլեցուցանէ զամենայն զգայուն սիրտ հայկազնեայ, և տեսիլ՝ պատկառանաւք դրաւէ զամենայն կիրթ օտարազ-
գի. և զոր օրինակ այրաբատեանն Մասեաց՝ աննման նմին վեհական են կերպարանք, նաև 'ի նկատի բարձրագու-
նից քան զինքն լերանց (որպէս խոստովանին աչխարհա-
տես զգօն ճանապարհորդք), գորովաշարժ գոգիր հա-
նելոց և Անի քան զամենայն քաղաք աւերեալս և լը-
քեալս երևի. և այս՝ վասն կիսականգնած և կիսակենդան իմն կալոց, ընդ յատակելոյն և անհետացեալ չինուածոց ունելով և այնքան անաղարտ մնացեալս յետին և յոյժ դարուց հետէ, որպէս թէ յերիկէ չինեալս. և յաւէտ ևս, վասն քրիստոնէական մեծամեծ և անթիւ նշանակացն, որք 'ի միջոց գերկուց վերամբառնան սրագագաթին գըմ-
բեթաքն. իբրև մարմարիոք անմահունակք ունելով խիտ առ խիտ նուիրական արձանագիրս, որպէս և պարիսպքն և աշտարակք. և սովին այսու գրէ Անի քան զամենայն տիեզերահռչակ քաղաքաք Եգիպտոսի, Ելլադայ, Աս-
իատանեայց և Պարսից. Նա և 'ի քրիստոնէական դա-
դարեալ քաղաքաց՝ ոչ մի չկարէ 'ի կրկին գալ մերոյս այսմ դէպոյիս Շիրակայ, համանգամայն սարօքն և սե-
թևեթիւք: Ամենայն ինչ առաւեր, ամենայն լոյս է յԱնի. աւերակքն և չէնք, կենդանութիւն և մահ, հնութիւն և նորութիւն, յայտնութիւնն 'ի մեռացուածոցն և յարձա-
նագրաց և 'ի պատմութեանց, և թաքնութիւնն յետին արկածիւ՝ որոյ լքան 'ի սպառ 'ի բնակչացն. զարմա-
նալի իմն առակ նշանակի աչխարհս. գաղտնիք հնգապա-

Ստեփաննոս Օրբելեան
ՍԻՒՆԻՔԻ ԱՐՔԱՅ

Կարտոգրաֆ Ջոզեֆ Վեհուհա

1880 թ. Գարնան

Մ. 1:2500000

0 50 100 200 300 400 500 գ.

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ճանապարհ սայլերու

Ճանապարհ ձիերու

Ճանապարհ հետիոտներու

Ջրհոր

Ջրհորներ

Ջրվէժ

Ջրանցք

Ճահիճ

Ձորակ

Ձորեր

Ձիւնակոյտ

Ձիւնածածկ լեռնանցք

Ձիւնածածկ լեռներ

Ձիւնածածկ գագաթներ

Ձիւնածածկ սարեր

Ձիւնածածկ սարահարթ

Ձիւնածածկ սարահարթներ

Ձիւնածածկ սարալանջ

Ձիւնածածկ սարալանջներ

Ձիւնածածկ սարեր

Ձիւնածածկ սարերու շղթայ

Ձիւնածածկ սարերու շղթաներ

Ձիւնածածկ սարերու լանջ

Ձիւնածածկ սարերու լանջեր

Ձիւնածածկ սարերու գագաթ

Ձիւնածածկ սարերու գագաթներ

Ձիւնածածկ սարերու գագաթներու շղթայ

Ձիւնածածկ սարերու գագաթներու շղթաներ


Ձիւնածածկ սարերու գագաթներու լանջ

Ձիւնածածկ սարերու գագաթներու լանջեր

Ձիւնածածկ սարերու գագաթներու գագաթ

Ձիւնածածկ սարերու գագաթներ

» և վհատչեն քանզակեալս ի վերայ միոյ միոյ ի քարանց
» քաղաքիս՝ մի ըստ միոջէ ընկղել անհետանալ. յ՛ածելն
» զնոսա՝ եթէ չորք դարք միայն ժամանակի բաւական
» եղեն զնոյր մի քաղաքաց՝ զոյգքան խնամով պերճու-
» թեամբ և սիրով կառուցեալ՝ զարճուցանել ի կայտ մի
» դերբկաց, և ի համր վկայ անցելոց, յայնժամ տեսա-
» րանն որ այգքան ի մտաց ազդէ, կենդանագոյնս յայժ
» տապարոյ ի նմա. քանզի յարկածս նորին ընթեռնու-
» զատամոթիւն իւրոց ժամանակին և զբռիատունեաւս-
» թեան: Աւանդոթիւնք որ յայլս ի տեղեաց այգքան
» թիւնք երկրի տապալեալ կործանեցին զչինուածսն, և
» մանաւանդ զբնակարանսն, որք՝ գի ոչ հաստակառոյցք
» էին՝ գրեթէ բնաջինջ եղեալ են »: Սմին նման ամե-
նայն եւրոպէացի համապարհագիրք խորին զգայմանիք




10. Տեսիլ Անւոյ յարեւմտից հայելով.

1. Դղեակն. — 2. Ս. Գրիգոր Աստուածածնից. — 3. Աւազ դուռն. — 4. Մեծ Աշտարակ. — 5. Մզկիթ.
6. Կաթողիկէն. — 7. Ս. Փրկիչ. — 8. Նախարաժի եկեղեցին արտաքոյ քաղաքին:

» փախստեայք և անկատարք են, յերկրի տան պահել
» ունին սխրալի վիշտակս պատմութեան, զքաղաքիս
» այսորիկ և զթագաւորաց՝ ի նմա բնակելոց: Զկնի պա-
» տերազմաց զոր սպառեցին զժոզովուրդն, տասանա-

1 « Qu' un voyageur aille sur le bord du Nil rechercher les vestiges d' une civilisation perdue, il comprendra sans effort que tant de siècles accumulés aient pu réduire en poudre les cités et temples; mais quand il verra la dévastation assise dans l' enceinte d' une ville chrétienne, les églises et les baptistères servis de retraites aux animaux sauvages, et la croix tracée sur chacune des pierres de cette ville s'effacer peu à peu pour disparaître à jamais; s' il songe qu' il n' a pas fallu quatre siècles pour qu' une capitale, bâtie avec tant de soins, de luxe et d' amour, ne fût plus qu' un monceau de décombres et un muet témoin du passé, alors ce tableau, qui se touche de si près, fera sur lui une impression bien plus vive, car il lit dans ces désastres l' histoire de son temps et celle du christianisme. Les traditions, qui, en d' autres lieux, sont si fugitives et si incomplètes, ont conservé dans ce pays des souvenirs bien curieux de l' histoire de cette ville et des monarques qui y sont séjourné. Après la guerre, qui a détruit la population, sont venus des tremblements de terre qui ont renversé les édifices: les habitations surtout qui offraient moins de solidité, ont été presque entièrement anéanties ». — Texier, L' Arménie, T. I. 95.

սերանան, կարեկցին, ղրուատեն, և ոչ մի ոք առանց
» սիրելու ինչ բանի բացատրութեան չկարէ չլինել գնա. իր-
» ամենին ինչ բանի բացատրութեան չկարէ չլինել գնա. իր-
րու այն, թէ որ ՚ի փառս խրատ երբեմն Հայոց ևեթ
էր սեփական, արդ ՚ի սերսերան ատեան՝ ամենայն
բարեկիրթ մարդկութեան իցէ բաժին. և « զանչափեալ
» նկատեն ՚ի նմա, ասէ նոր ումն գրիչ փառանց, Պամպէա
» մի մեռեալ ՚ի գարուց հետէ, զոր՝ աղէտքն որ կորու-



11. Արտաքին դուռն Անւոյ հանդէպ ասագ դրան։

» սին՝ ոչ ծածկեցին միանգամայն ընդ հողով կենդա-
» նեաց »։ Ա.յսքան հզօր գոլով ազգման Անոյ ՚ի վերոյ
օտարաց՝ անմարթ է ազգայնոյ միննչև իսկ ՚ի քնին ասե-
րակայն կամ միացորդաց չինիցն մատուցեալ՝ չկորհրդա-
ածել զայսպիսիս. համառ կանխահաս այսպատուց տե-
ղոյ խնդրէ և կանուխ ճարակ սրտի՝ նախ քան զմտացն
և զաչաց հետաքննութիւն։

Յարևմտից հարաւոյ Հառոմոսի վանից իբր փարախառ և կիսով հեռի ՚ի նմանէ, յեզր Ախուրեան գետոյ դնի ՍՆԻ ՚ի քարակուռ իմն վայրի, որ հաւասար գաշտին ՚ի հիւսիսոյ կողմանէ՝ տակաւ ամբառնայ ընդ հարաւ. ուր գեան՝ որ օձապտոյտ քերէ զարևելեան կողմանէն, անդաստան արմտեաց գործեալ անձկագոյնս պատի, չուրջ պղեղուաձև սարաւանդեալ քարաժայռիւ, զոր պատի ՚ի հանդիպոյն՝ յարևմտից՝ վտակ մի փոքրիկ, եկեալ ընդ ձոր խորանիստ և լայնատաց, որ կոչի Ծաղկոցաձոր կամ Ծաղիկձոր ըստ արդեացս, և Ալաձա–չայ ըստ Թուրքաց, և յանուանէն յայսմանի գալ յարևմտից հարաւոյ՝ ՀԱլաճա լեռնէ, մանուածով փարի զրահանգակ զարևմտակող-մամբ քաղաքին և զարևմտեան հիւսիսից. վասն այսորիկ Պարսիկ պատմիչ հեղինակ Նիկոբարեան զրոյ՝ երկիցն տեան կոչեաց զԱնի, (ՀԱցՅՅՅ, տիւրուտի)։ Ի հանդիպոյ յարևելեան հիւսիսային մասին եւս կայ փոքրագոյն ձորակ մի զգոյն ջրով, որ Գայլիձոր կամ Գիլիձոր կոչիւր առ հինս։ Ա.յսպէս յերից կողմանց պատեալ և կղզիացեալ

1 Թէպէտև ՚ի սակս ձորոցս՝ ԶՈՐՈՑԳԵՏ կոչեցաւ վիճակն Անւոյ, եթէ չիցէ սխալ կամ շփոթ ՚ի բանս երկոցուն Վարդանայ, աշ-

ձորովք[1] և պատառեան խանձուտ քարափամբք, միայն ՚ի հիւսիսոյ կողմանէ հաւասարի ընդ դաշտին, յորմէ և զատուցեալ և ամրացեալ կայ կրկին պարսպաւք, ձորէ ՚ի ձոր. որով և ձևանայ Անւոյ եռանկիւնի, յարևմտից և յարևելից կողմանց լայնագոյն, ՚ի հարաւոյ նեղ, և խապատանել կողմանց զայնագոյն, ՚ի հարաւոյ նեղ, և խապատանել քարաբերդի զոր յիշեցաք յարմինամէն ձուկ ասարտեալ քարաբերդի զոր յիշեցաք յարմինամէն պատուածին։ — Ներքին չրջապատ եռանկեանս յորում ամիսոփի քաղաքն, 4100 Ձ. ևեթ է, որով և տրամագիծն կամ երկայնութիւն քաղաքին ՚ի Հ. ընդ Հր. հարիւ հա-զարչափ մի. իսկ լայնութիւնն ՚ի Մ. ընդ Ե. երիր մա-սամբ նորին. որ է ասել քաղաք յոյժ փոքրիկ, և իբրև ոչինչ մի ըստ տարածութեանն առ համառն, առ մե-ծագործութիւնն և առ քաղաքական հանգամանսն, ո-րովք հարկ էր նմին լի և հոծ լինել. վասն այն և առաւել զարմանալի է խոստովանել զկնի-ա զայս հայկական հո-ղոյս, որ թէ ոչ բաւէր կրել հազար և մի եկեղեցիս, ըստ աչխարհածանօթ համարոյն և առակին և երդման ռա-մկաց, սակայն կրէր ոչ պակաս ազանչելիս ձեռագործս։

Խորհագրին և պատմէ. քաղաք բուն Զորագետոյ Թագաւորք կոչին որք ոչ ասա, այլ ՚ի կողմանս Գուգարաց Թագաւորեցին։

Ըստ աչխարհագրական դրից Անւոյ կայ ընդ 40° 30′ Հ. լայնութեամբ. և ընդ 41° 14′ երկայնութեան Բարիզու, ՚ի 1300 Ձ. բարձրութեան յերեսաց ծովու։ Բնական ամրութիւն և դիպան դիրք տեղոյն, ըստ նախնեացն ախորժակաց, (անտի բարձր քարափունք Ախուրենի և ատտի Ծաղկոցաց ձորոյն), խոժոռ քարաժայռք հարա-տևային անկեանն՝ զոպեալ անդնդոք, զորս ճչգրիտ իմն համառօտեալ ատորագրէ պատմիչ մեր Մատթէոս Ուռ-հայեցի, եթէ « Էր քաղաքն չորչնանակի քարակուռ, » և էր գետն Ախուրեան չրջապատ, բայց միայն ՚ի մի » կողմն կայր տեղի ինչ դիւրի՝ որպէս թէ նետընկէց մի ». այսոքիկ՝ ասեմ, ոչ վրիպեցան անչուշտ յամրանդիր աչաց նախնեաց մերոց՝ ՚ի կանուխ գարուց անտի. և անուն իսկ տեղւոյն՝ ըստ ձայնին և ըստ սղութեան նչա-նակի մեծ հնութիւն, զոր և անվրիպոս ամենայն ազգք կոչեն, Թուրքք և Պարսք՝ Անի ؘانى, Աւորիք՝ Անա Անի, Յոյնք Անիոն Ἄνιον։ Թուի ոչ միայն ՚ի տեղի ապա-հինի ընտրեալ, այլ և պաշտամանց՝ ըստ հեթանոսական կրօնից, որպէս և անուանակիցն իւր բերդ (որ և Կամախ) Ասկեղեաց գաւառի. յոր ուր եղեալ քաղցր պտուղն և բանիւք Շնորհալին՝ յերբեակ տառս անուանն՝ ասեմ, երրորդութեան վերագրէ, ասելով.

« Գեղեցկանուն զարմանալի,
Որ երբակի տառիւ բերի
Յերրորդութեանըն խորհրդի.
Որ միշտ ՚ի քէն երկրպագի »։

Յայժ հաւանեալ եմ թէ Անահտայ կամ նմանոյ դիցու-հւոյ նուիրեալ էր գառաջինն։ Ոչ գիտեմ այսու ինչ պատ-ճառաւ եթէ այլով առատգարանութեամբ՝ ոմն ՚ի Պատ-մչոյց ասէ. « Քաղաքն Անի որ կոչի Խնամք[1] »։

21. Թէպէտ և ոչ յիշի առ առ Աբշարունեօք, այլ հաւս յետ նոցին ՚ի կէս և գարու առ Վարդանամբք, որք և Թափեցին զայն ՚ի Պարսից, ընդ գիւաւորս ամրոցաց բնաւարհիս միոյ. և իբրև ՚ի պարապեալ վայրի՝ յետ ոչ բազմաց Ամբէնասպ Մարզպան և ուրացեալքն ՚ի Հայոց առ Վահանայ, զանգլատեալք ՚ի սմանէ՝ գամ մի « երթեալ բանակիցն մեծ ՚ի պարիսպ բերդին՝ որ ա-» նուանեալ կոչի Անի », յորմէ ապա խոյս տուեալ ան-կան Ա.Ախուրայս[2]։ Ձետ այսր գրեթէ ոչ ևս յիշի Անի[3] ցաւարս հարատութեան Բագրատունեաց. բայց հաւա-նութեան է եթէ չէն էր տեղին, մանաւանդ եթէ առա-գիս անդ իցէ ծնեալ Աշանեայ Համարոյն, ՚ի վերջին կէս Ի. գարու, որ մերթ Շերակացի կոչի և մերթ Անեցի, և առաջին գրագէտ ի ընծայեալ մեզ ՚ի Շերակայ։

Ա.յսու Մատէոս պատ Բագրատունեաց որ գանձագին արար ՚ի կամարարանաց գերկիր նոցա զԱբշարունիս և

1 Վարդան, խե։
2 Ղազար Փարպեցի, կէ։
3 Աշտոդ կամ աղաւաղեալ Համարիմ գյիշատակարան Պա-ցոդոց գրոց՝ զոր Զաքարիա պատմիչ ընդօրինակէ, իւրու գրեալ յամի Տեառն 554 ՚ի Մանկիկ Գեորգ Անեցի. քանզի Թուականն Հայոց ասի անդ եգեալ ՚ի Մովսէսէ կաթողիկոսէ, որ ՚ի Ներսէսէ եղեալ. և Անի մայրաքաղաք կոչի!


4 Վարդան (խԱ.), յիչելով զտացումն Շերակայ, յաւելու. « Շերէկ գկամախ, և բնակեցուցանէ ՚ի նմին զընտանիս իւր ». շփո-թելով ընդ Անոյ Դարանաղեաց, որ կոչէր և Կամախ։
5 Վարդան, խՏ։
6 Յովհաննէս կաթողիկոս։
7 Յովհաննէս կաթողիկոս։
8 Վարդան, խԸ։

կութեան պահապանաց, ուրեք իրրև հինգ Զ. է, ուրեք եօթն. ոմանք ասեն քան քայլ, այլ չգիտեմ որքան է քայլ նոցին: Երկոքին ևս պարիսպքդ և դրունքդ նորոգեալք բազում անգամ յընթացս երկուց դարուց, և դարձեալ քանաքարեալք, տակաւին վաթք ի շատէ կանգուն մնալով՝ հրաւիրեն զամենայն տեսող ի մուտս. այլ վասն ազէտալի լքման քաղաքին, ողբմատեսիլ մնացորդացն, և անմարդաճայն լռութեանն, պատշաճագոյն ևս է սմա քան կամարագրան Թօշունի վերատունթիւն Տանդէական տեմոյ սանդարամետացն [1].

« Ընդ իս են երթիք ի քաղաք անդորը տրտմապին...
Ընդ իս են երթիք յամենախոթիւն վայրապատին...
Որ մըտանէքդ՝ ի բաց թողէք ըղյոյս բնաւին »:

Եւ արդարև ուղեւորք որ սովորաբար յարևմտից, ի Կարնոյ և ի Կարուց՝ գան յայս կոյս, անցեալք ընդ լռնային ձորս միջատեղեաց վանանդայ և Շերակոյ, մինչ յառաջելով հիացեալ սիրտն ընդ կրկին յատկութեան բնակատոյց կոթողս Այրարատեան աշխարհիս, և ընդ հակադատակ բարատրս մեծափառ գրան ազանց՝ յերթևեկ արևելից և մտից, ընդ լայնանիստ քառակուսոյ լեառնն Ագրածո, ասեմ, յահեկէ, և ընդ բարձրադիզն սառնաձոյլ Մասիս յամէ, յետ սակաւուց այլ յայլմէ լինին՝ միջնորիտ երկոցուն նոցա տեսանելով զանհնարագրելին զայն հայկականն Երուսաղէմ կամ զՊաբիլոն. զեւևէջեան այն չէն և աւեր կամարակապ պատրակաց զանազանելոց ի ձև և ի չափ, ոմանք քառակուսի և չատք բազմերես, է որ անկիւնաւոր և է որ տափարակ, երկայնաձիգ Գայլեձորոյ ցետոնատրդ նորին յԱխուրեանն. յետ որոյ բարձր քարափունք անդնդախոր գետոյս չունէին ակնս ամրութեան. որպէս և ոչ յարևմտից՝ եղերք Ծաղկոցձորոյն, թէպէտ նմանորին և ի նոսին խոզ հետք քաղաքացոյց, որպէս և յանկեան անդ հարաւակողմանն: Յարդ երեսին միայնաւածք կրկին պարսպաց և յարևելակողմանն մինչև ի Ս. Գրիգորի Լուսաւորչի վանս. թուեցաւ ոմանց թէ և եռապարիսպ լեալ իցէ Անի, զի երեսին ուղղածիգ հետք լինչ հիմանց հեռացոյն ի ներքին պարսպէն քան սա յարաքսին. այլ մարթ է ոչով և ընակարան կամ զօրանիստ լինել: Թերամ լայն բոլորէր անդր քան զարտաքին պարիսպն, որոյ սրտ հագիւ նշմարին հետք, զի աւերակք լցեալ է. բայց և ի կէս ժէ դարս եռաս Դաւեճնիէ զբարձր ամրարատակ նորին, և ճախնայինն առէր զվայրն. յորոյ վերայ երբեմն լսատատոյտս արիւեալ Ալփ-Արսլանայ մատուցանէր ըզդօրան ի կռիւ՝ ի պաշարման քաղաքիս, ինքն առանձին եղեալ խանդարող պարապային, յամի յորում բռնադատէր զարբ մի Աշոտոյ հիմնարկութենէն (964–1064). մինչ ասկաւ ամաք յառաջ՝ յետ բարձման Թագաւորացն Հայոց՝ Աբասն Մագիստրոս Պահլաւունի բարձրացուցեալ էր « բաւանդակ զպարիսպ սորին կարկառակոյտ արձաս » նոր և հաստահեղոյս ամրութեամբ », որպէս և արձանագրէն: Ասյաքան չէնք միացեալք և բազում անգամ պաշտպանեալք քաղաքին՝ յայս առնեն անհերքեալ՝ զի յայժմիկր էր քաղաքն և մարթ էր անառիկ կոչել [1]:

22. Երկու լեռք զրանք են արտաքին պարսպին, եւ րնք ներքինոյն ի ճակատու անդ քաղաքին, որ է հիւսի-




12. Ներքին Պարիսպք Անւոյ, յարևմտակողմն:

կայարևք և եռայարևք, քարեղէն սանդղօք ի ներքուստ ի վեր երանելեօք. ամենայնին նշանական, այլ և ոչ մի խաչս անաղարտ սկզբնական չափովք մնացեալ. նոյնպէս և որ գնոքօք փարին պարիսպքն, թերևս բարձրագոյնք երբեմն գոլով քան զներքինն, այլ այժմ ցածունք և ակաւաբրգունք, (զի բրգունք կամ բուրգն և բրգներ կոչին յարձանն և ի գիրս աշտարակքն), և հեռիք են յիրերաց իրրև 10 կամ 15 կամ 20 Զ. և աւելի ևս. և համօրէն և սօքս և պարիսպքն բազում այն է զի գեղնորակ և գոն ուրեք սևագոյն կոփածոյ երկթզուխի քառակուսի քարամբք են հիւսեալ, և սևաշուր խաչաձևք ի նոսին անթիւք, ուրեք ուրեք ունելով ազուցիկ քառակուսի տախտակս վիմեղէնս սեաս կամ սպիտակ, և ի վերայ նոցին կամ առ երի գրանցն՝ ցանկալի արձանագիրք անաղարտք, թէ և անշուշտ սակաւք ի բազմաց. ընդ որս անհետացեալ են և թագաւորացն չինողաց յիշատակարանք, մանաւանդ որք յարտաքին ի մեծի պարսպին էին. զի իրր յատաղմամարտիկ գոլով Թշնամեաց բազում հարուածս ընկալեալ և տատել քաքցեալ են սոքա, և աշտարակք սակաւաթիւք մնան, իրրև երկուտասան. իսկ ներքինոյն աւելի քան վերնոյն երևին: — Ներքինս այս պարիսպ յարևելից կուսէ երկայնեալ ձգէր ընդ բոլոր-

1 Մուրաւիեֆ ինուս տեղաբնին յամի 1846 ի ձահ կշռեաց վերագրել զայս աշխարհաճանօթի բան քերդողաբոն խոստացոյց՝ ի վերայ կամարին Թօշունի, համարելով զայն նախագուռն Անւոյ.

« Per me si va nella città dolente; . . .
» Per me si va tra la perduta gente; . . .
» Lasciate ogni speranza, voi che entrate ».



13. Բրգունք յարևելակողմն Պարսպին:

սակոյն. որոյ միջինն մեծագոյն և Աչագ դուռն կոչելի՝ ոչ կշիռ հանդէպ այլ վաթք մի յարևմտից կոյ արտաքնոյ արևմտեան դրանն. նոյնպէս և որ յամէն իրմէ (Ագիկ՝) փոքր մի յարևմտից հանդիպոյ արևելեան արտաքին դրանն. այսպէս և աշտարակք երկոցուն պարսպացն չեն գէմ ընդ գէմ. են և ի կողմնական թեւս ներքնապարսպն գէթ մի մի դրունք. այսոքիւն դուռն մի յարևելից հիւսիսոյ՝ որ հանէ ի Գայլեձորն, և վասն այնորիկ Գայլեձորի դուռն կոչի յարձանս. և միւս՝ յարևմտից հիւսիսոյ, այն է Ծաղկոցի դուռն, որ լոկ Ջորոյ դուռն գրի յարձանս. երեքին հետք գրանց և յանապարհսպ արդ կոզմանս քաղաքին, յարևմուտս, յարևելս և յայսոսգոյն ևս ի հարս մերձ ի կոթողիկէն և ի կամարէն, վասն որոյ առ յայժմեայցս կամիջադուռն կոչի, որպէս և միւն Երևանայ դուռն, որ է Դուռնայ դուռն ըստ նախնեացս: — Մի ի ներքին գրանց (հիւսիսայնոց) կոչէր Կարուց դուռն, զի ընդ այն ճանապարհն ի Կարս, և ի գեպ է առնել ճանապարհն լինել. իսկ Դուռնայ դուռնն՝ թուի սրևելեանն: Ջարձանս Հոռոմոսի վանից յիշի և իգածորի դուռն (Աչգեձոր), որ իսկ թերևս սրևմտակողմանն դուռն. զի է յայնմ կողման ձորակ մի խառնեալ ի մեծ Ջորն Ծաղկոցաց, զոր կարէ և արդ ճանապարհն որ տանի ի Պայէզիտ: Գարձեալ, յիշին յարձանագիրս և այլ գրունք, (որպէս թուի ի կողմնս քաղաքին և ոչ ի ճակատուն), Գետակիրոցի խանապարի դուռն, և Ցիգրանակց դուռն: Ջարձանագրի սրեմն Բագնայր գեղջ

1 Նկատեալ և զայժմու միացորդն՝ ուշիմ ճանապարհակիցն անգղնացի Քեր-Բորդըր, զոյն խոստովանիբ. « The military power of the city, as far as fortifications could render it formidable, must have been very great ». — Ker-Porter. I. 75.


յիչի և Գաղտ դուռն, և տայ կարծել ոչ հասարակաց մուտք և ելք, այլ թերևս պահ ղգուշութեան ժամանակի մարտից կամ վտանգաց: Ի հասարակի չինուածք դրանցդ ամրակառոյցք են, կամարաձև, երկու և երեք զոդ կամարօք, այլ անզարդք և պարզք: Արևմտեան դուռն ներքին պարսպին, այն է Կարուց դուռն, իբրև չորս Ջ. լայնութեամբ, զրեաթէ խոպան խցեալ է ղերբկօք:

Որպէս չիք թուական չինութեան պարսպացն, և ոչ դրանցն, թէպէտ և գոն ի վերայ և առընթեր նոցին արձանագրութիւնք, բայց ոչ հնագոյնք, և ոչ ղչինութեանցն, այլ յաէտ զմուքսից և զրաժից ազատութեանց և գնահատից: Այսպիսի է արձանն յերկք չափ երկայն

վիմի, ի վերայ մեծ կամ Աւագ դրանն, որոյ լայնութիւն է իբրև եօթն չափ, որպէս թուի յերս ԺՍ. դարու կամ յառաջին կէս ԺԲ՝, զի զոդ յիշին ի նմին առանց ա-նուան՝ և վրաց թագաւորն և փաթշահն, որ է Պարսից, ընդ որոյ դերագոյն տէրութեամբ՝ Շահաբեան կամ Մանուչեան տոհմն իշխեր Անոյ, և ըստ սորին ձեռանէ Գրիգոր Աղաց և Յովհաննէս տեառք կամ պատրոնք քաղքին. զի այսպէս կոչին ներքին տեառչք կամ հպատղաքին. որք նորոգեն զայն, և ազատեն բազեաք քաղաքին. որք նորոգեն զայն, և ազատեն զքաղաքացիան ի պէսպէս հարկաց և բաժից նշանակելոց յարձանին, որ է այս.

Գթութեամբն մարդասիրին եւ անմահ Բանին Աստուծոյ եւ վան յերկար կենդանութեան ազքային ազքային աստուածադիր վարձահին եւ աստուածխնամ իշխանաց իշխանին աչխարհաչէն եւ ի թագաւորութեան վրաց աշխարհիս որ եղեւ մայրաքաղաք Անի խասինլու? () եւ ի տէրութեան քաղաքիս աստուածասէր պատրոնացն Գրիգոր աղին եւ Յովաննիսի եւ յեպիսկոպոսութեան տէր Յոհաննիսի ողորմածն Աստուած հայեցաւ ի գժուարութիւն քաղաքիս եւ խորհուրդ բարի ծագեց ի սիրտս պարոնացն Գրի. և Յով. որ զքաղաքս մեր նորոգել չինեցին եւ զամենայն հարկապահանջութիւնն բարձին[1] զմ. . . եւ զթաղաւս զհեծել զղսփչուն զախարթամարն եւ զդռնապիկն ի բաժ ⊙ ի զաղմն եւ ի մուտսիկն զարձուցին եւ զաթոռն հարկն որ յետո ի չարաց դրած էր զկապալն յեպիսկոպոսէն բարձին և յառաջին սահմ. . .

Ի ներքոյ աշտարակին որ յամէ դրանդ կայ՝ ազուցեալ են յորմն երեք մեծամեծ կարմրաքար խաչվէմք զեղաքանդակք. իսկ յահեկէն՝ յետ աշտարակին զուգակցի հանդիպակողմանն, կայ բարձրաքանդակ առիւծ ի վէմ քառակուսի. և յառ. երի նորա (յահեկէ) աշտարակին ծաղկազարդ գիւիի արաբիկ գրով՝ այս բան.



14. Արաբիկ արձանագիր Մանուչէի ի բուրգն Պարսկին Անւոյ:

« Ձանուն Աստուծոյ գթածին և ողորմածին. չինեցաւ աշ-
» տարակս այս բոլորչի հրամանաւ մեծին և յաղթողին
» և քաջքաջանաւ վարչին՝ հօրն քաջաց, Մանուչէի որ-
» դւոյ Շահաբայ », — որ է Պատասար ըստ Հայոց, որոյ

1 Զպէսպէս հարկաց՝ զծանօթէից և զանծանօթէից՝ լեզի յիշատակ յեռոյ ի ծանօթութեան 35 համարոյ:

Փառնէի ամիրային Գանձակայ, այն որ « առնու զԱնի
» յԱլփսլանայ, տալով նմա սակիակաւս նկարս ծաղ-
» կոցի. և առաքէ տէր աւեր քաղաքին զՄանուչէ թոռն
» իւր՝ յոյժ տղայ. որ իրրև զարգացաւ՝ յաւելոյր ի պա-
» րիսպն Անւոյ և յամրութիւնս նորա. և ած ի քաղաքն
» զամենայն մնացեալ իշխանսն. որպէս և մեծաւ հան-
» դիսիւ եղեալ ընդ առաջ մուծանէր ի ներքս՝ զԳրիգոր
» զորդին վասակայ, զԹոռն Աղիրատին ». և սա ինքն է հաստատօղն Պատրոնն Անոյ կարգեալ ի նմանէ:

Ի վերայ արևելեան դրան ճակատու քաղաքին՝ որ յամէմ կայ միջնադէ յիշեցելոյ՝ չիք արձանագիր, այլ յաշտարակին՝ որ յամէմն՝ ի խաչվիմի միում, այսպէս.

ՉԱսրդիս յիշեցէք.

Ի ՈՓ թվ. ի թագաւորութեանն Փառնոյ, ի հայրապետութեանն տէր Բարսղի ես Աբրահամ չինեցի զբուրջս ի հալալ արդեանց իմոց յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց. որք կարդայք զիս եւ ծնողս իմ եւ զԱրաքեալ վարդապետ յաղաւթս յիշեսջիք.

Փառնոյ կիլեալ է Թոռն Մանուչէի Թոռին առաջնոյն Փառնոյ:

Ասի դարձեալ ընդ արևելս հիւսիսոյ խաղալով՝ յայլում աշտաքակի կայ արձանագիր 1215 Թուականաւս, Մխիթարչի Գանձակեցւոյ, ի տէրութեան Շահնշահի որդւոյ մեծին Զաքարիայի [2]: Անդրադոյն յայլում՝ յամի 1208, ի տէրութեան նորին Զաքարէի ի Սարգսէ ումեմնէ արձանագրեալ [3]: Իսկ յաշտարակի որ հանդէպ խաչելոյ դրան արտաքին պարսպին՝ ինքն Մեծն Զաքարէ արձանագրէ այսպէս.

Ի ՈԿԱ. Զատրութեամբն Քրիստոսի ես Մանդատորթա խուցէս Ամիր սպասալար Շահնշահի Զաքարիա չինեցի զարձանս վասն արեւշատութեան մեզ եւ որդւոց իմոց:

Ցելից սորա ի ստորոտս բարձր աշտարակի միում ի վերոյ քարանդ որմոյն կայ հնագոյն արձանագիր անթուական.

Աչոտոյ իշխանաց իշխանի է.

Աչոտ ամի իշխանաց իշխան ծանուցեալ է յամի 1002.

Ցոյնպէս կոչէր և եղբայր Ցովհաննու Թագաւորի՝ մինչև առեալ և ինքն զարքայական կոչումն: — Անդրադոյն ընդ արևելս սմին աշտարակ 1216 Թուականաւ՝ կորուսեալ է զանուն կանգնողին ի խանգարմանէ [4]: — Անդրադոյն քան զաս յետ սմյոց կան աշտարակք երկու ցածունք, (հնագոյ սյլ աշտարակաց յերկոցուն միջի գոլով), և ունին

1 Տես զարձանդ Նմանահան Ձևագրութեամբ յէջ 42, որոյ սյս է ընթերցուած.


« ի Թուին ՈԿԴ. կամաւք ողորմածին Քրիստոսի ի պետութեանս Մանդատորթա խուցէս Ամիր սպասալար Շահնշահ Զաքարիան որդ... Շահնշահ Սարգսի ես Սարգիս որդի Սամուէլի ծառայ Քրիստոսի ի հալալ վաստակոց իմոց չինեցի զարձանս ի յիշատակ ինձ եւ ծնողաց եւ զաւակաց մերոց. որք կարդայք յիշեցէք զմեզ ի Քրիստոս »:

2 Ի Թ. ՈԿԴ. Շնորհիւն Քրիստոսի ի տէրութեանս Մանդատորթա խուցէս Ամիր սպասալար Շահնշահ Սարգսի ես Միսիթարիչն Գանձակեցի ծառայ Քրիստոսի ի յարդար վաստակոց Աբրահամու եղբաւր իմոյ չինեցի զարձանս վասն փրկութեանն հոգւոց նորա եւ յիշատակի մեզ եւ ծնողաց մերոց. որք կարդայք յիշեցէք զԱբրահամ ի Քրիստոս Ցիսուս:

3 Որ խանգարեալ դոլով այսքան ինչ վերծանի.

Ի Թ. ՈՆԲ. Շնորհիւն Աստուծոյ ի տէրութեան Մանդատորթա խուցէս... պասալար Շահնշահ Զաքարի ես Սարգ...որդ.. ծառա Քրիստոսի շի... անս վասն փրկութեան... ընդ նմին եւ զաշխատս:

4 Ի ՈԿԵ Թու. Շնորհիւն Քրիստոսի ի տէրութեանս Մանդատորթա խուցէս Ամիր սպասալար Շահ.... որք կարդայք աղաչեմք զմեզ յիշեցէք ի Քրիստոս Ցիսուս տէր մեր. Սիմէոն:



15. Ձրագրագիր Բրդատի տպագրի Պահնուկի։ (Տես յէջ 41)։


քանդակս քարեղէնս մէն երկուց վիշապաց, որք ’ի կողաց պարսպին սկսեալ պատին զնոքօք, և զլուխս առ զլուխս մերձենան, ունելով ’ի միջի՝ մի զոյգն զլուխս եղին, միւսն՝ այլ ինչ զարդ. յերկոսին և նոյն բան է, արձանագրեալ ’ի Շանուշէ ումեմնէ ժրագլուխ տիկնոջէ, յամի 1218, այսպէս.

Ի Թվիս. ՈԿԷ.։ կամաւքն Աստուծոյ ես Շանուշս կենակից Թաչերեսին անդարձով Թաչերեսին չինեցի զբուրջս յիշատակ մեզ։

Սոցին դուստր Թուի Մամ խաթուն, որ ’ի մերձաւոր յարևելեան (’ի Գայլեձոր կոյս) աշտարակին արձանագրէ՝ ամաւ զինի, և խանդարեալ է ուրեք ուրեք [1]։ Աղբատցին և ’ի հարաւ արևելից գնալով՝ նշմարի Ջլջեալ Թուա- կանաւ արձանագիր Լուսոյն որդւոյ Գրիգորի, յաւուրս տէրութեան Շահնշահի, ’ի միջոյն 1213–30 ամաց.

Թու . . . կամաւն Աստուծոյ ես Լուսոյս որդի Գրիգորյ չինեցի զարձանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց և յարեւշատութիւն Շահընշահի սպարապետին ի յամիրատութեան Վահրամա կատարեցաւ բուրջս. Տէր Աստուած ողորմեա Լուսոյին. ամէն.

Հուսկ ընաւից ’ի հարաւային արևելեան սպառուածի անդ պարապայն, աշտարակ մի զարձեալ զմնծին Զա- քարիայի ընծայէ զյիշատակ, յամի 1208, այսու ձևա- կերպութեամբ գրեալ.



16. Ձրձանագիր Մեծին Զաքարիայ ’ի Բուրգն արևելեան[2]։

1 Ի ՈԿԸ ԹՒ. Շնորհիւն Քրիստոսի ես Մամ խաթունս դուստր Թաչերեսին Լաւուեցո անմժամ ի Քրիստոս զնացի յիմ հաւրն ի հո... ամին որ ինչ տուեալ էք .... անյիշատակ էի շինեցի զբուրջս յիշատակ ինձ... աղաչեմ որ կարդայք մեզ Թող... :


2 « Ի ՈՒԺԻ Թուի. Շնորհիւն Քրիստոսի ես Մանդատորէս » խուցէս Աստր սպասալար Շահնշահ Զաքարիա շինեցի զարձանս » եւ զպարիսպս վանս յիշատակի մեզ եւ ծնողաց մերոց » :

Ոչ վասն սրեւելեան մասինս միայն որ ’ի Գայլեձոր՝
ղչինութիւնս Թուխ ասել, զի և ’ի հիւսիսակողմանն տե-
սան ոչ սակաւ բրգունք չինեալք ’ի ժամանակի տէրու-
թեան նորա և որդւոյ նորին Շահնշահի. և որպէս ար-
ձանքն և պատմիչք նշանակեն, յետ առմինոյ հիմնար-
կութեանն՝ երկիցս և երիցս ըստ մասին նորոգեալ և ըստ
մասին նոր չինեալ են պարիսպքն և աշտարակք, յընդ-
թացս երկուց և կէս դարուց. զնոյն առաւելեալն և եկե-
ղեցիքն վկայեն և ցուցանեն, հնութիւնս և նորութիւնս
իրրու երեք և կէս դարուք զանազանեալս. զի են որ
զվերջին քառորդի Ժ դարու. ըստ այսմ հարկ էր լինել և հաս-
բակաց չինուածոց քաղաքին, որք գրեթ Թէ ’ի սպառ
աւերեալք են արդ, և արձանք յիշատակաց նոցին անհե-
տացեալ: Ժամանակի, և առաւել քան զայն՝ պատերիմ
բռնութեան հարուածք ահն յանդիման երևին. վրէժք՝
որք զի ընդ մարդկան յաչս մախայիս *քան Թէ ընդ
Աստուծոյ, խնայեալ են փոքր ’ի շատէ սրբազանիցն չի-
նուածոց, այլ ոչ և բնակարանացն. զի Թէպէտ ոտյս
յետնոցս սակաւ է ոչ ամբակառոյցս լինել իրրև զեկեղե-
ցիան, սակայն էին էին և ապարանք և այլ քաղաքական
պիտոյից չինուածք, որոց վայել էր ոչ զաղիտակիսն լի-
նել. և սակայն չմնայ և ոչ մի ձողաչափ անգամ կան-
գուն, բաց ’ի հաստակառոյց ապարանից անտի Թագա-
ւորացն: Վասն որոյ որ գամ մի զննեալ և սիրացեալ
ընդ պարիսպն և ընդ աշտարակս՝ նոքին կիսամանեակ
կենդանութեան յետուղ զնմէ ընդ դուռն քաղաքին ’ի
ներքս, սոսկումն ընդ ոսկերան գնոյ և սարսիւ, ընդ բո-
վանդակ երեսս կամ յետակ քաղաքին ոչ տեսանելով և
ոչ զհետս բնակութեանցն, այլ առհասարակ կոյտս կոյտս
քարայեալ և մանրեալ նշխարաց չինից, որպէս զծով
մի աւերակաց. յորոց միջոյ հանգոյն նաւուց կիսաբեկք
ոմանք և հազիւ այլք բարեբաղդիկք պրծեալք, սմբաս-
նան քանիս չափ չինք արբազանք, և երկու բարձր աշ-
տարակք, որպէս կոթողք նշանակի և մահարձանք ան-
բաւ մեռելութեանց. և յոչ կամս իսկ զգոյ, զի արդարև
Դաւանն ընդ որ եմուտ՝ ահա երեր եհան ’ի քաղաքն
տրտմազգեաց, և յանկուցուն կոյս ժողովրդեան վայրա-
վառին կորուսելոյ: Այլ ելջ՞ հարկ անհրաժեշտ Թողուլ
քանել զամենայն յոյս ’ի բաց: . . .

Բայց արդ մինչ զեռ միջանք են երկդիսի կրից, յիշա-
տակօք անցելոցն և յուսով հանդերձելոց, քաղցրացի
մեզ աստանօր ’ի սեամն ներքին դրան Աշուց՝ յեղյեղել
’ի զիմաց նահանգին՝ տարարաղդիկն Եգեսիոյ, զոր-
երգ Շնորհալւոյ. որոյ մաքրութիւն սրտի և լեզուի հան-
դերձ եօթնդարեան հնութեամբ՝ լցցէ զքերբին վերատաց
Թռչնոց մտաց, որպէս պահանջէր արդեօք տեղիս այս.

« Այլ և ըզքեզ յոյս հրաւիրեմ՝
Աբեղեան քաղաքդ Աշնի.
Կըցորդ խնդս լինել ձայնի
Եւ ըսփոփիչ տարակուսի:
Քանզի և դու երբեմն էիր
Վայելչական հարսն ’ի քոյ,
Մերձաւորաց յոյս ցանկալի,
Հեռաւորաց վախճելի:
Շինեալ եղեր տուն արքունի
Ցընտրեալ նահանգըդ Շարայի,
Թագաւորաց բազմատունի
Որ ’ի ցեղէն Խոսրայելի: . .
Ցորում էիր ժամանակի
Բերկրեալ ուրախ և ցընծալի,
Որպէս այգի ողկուզալի
Կամ ձիթենի պըտղով ’ի լի:
Մանկունըք քո զուարթալի
Նըման նորոգ բուրաստանի.
Դըստերըք քո պատճճալի
Ցերգ և քընար միշտ ’ի խաղի:
Իսկ թագաւոր քո պանծալի
Նըստեալ յաթոռ թագն ’ի գըլխի,
Եւ զօրականքն ասէի ւ անտի
Կալով ’ի սպառ իւր հրամանի:
Նաև որդիքըն Սիոնի
Նըման դասուցըն հրեղինի՝
Ցարմարապէս յօրինուածով
Կաթողիկէ յեկեղեցի.
Այն որ հանդէտ և հաւասար
Վերնակառոյցըն խորանի:
Հայրապետք եպիսկոպոսք
Եւ քահանայք ու այլք ըստ կարգի,
Իւրաքանչիւր ’ի իւրում դասի
Պատշաճաւոր յայն տաճարի:
Զոր Թէ ասել հարկ լինիցի՝
Ի զրժուարին ու անկարելի,
Եւ անօգուտ յայժմուս բերի,
Ցորոց ոչ է մի ’ի միջի:
Քանզի անցին ըստ երազի
Որպէս ծաղիկք ամարանի,
Ըստ յորդութեան յորդ վըտակի
Գարնանաբեր հեղեղատի: . .
Սարն անողորմ անօրինի
Որ մերս արեան է ’ի սովի՝
Ոչ է յագեալ և ոչ յագի,
Մինչև ’ի գալ կատարածի:
Նոյն նա եհան ուրուն ’ի քեզ,
Որպէս յիս՝ յայն ժամանակի.
Հընձեաց զորոյն յանգաստանի,
Կանաչագոյն որ ’ի հասկի. . .
Եհեղ զարիւն սրբոց յերկրի,
Հոսեաց նըման ջրոյ գետի. . .
Աւրար զիսկն անթըմբռնի
Աչերթող մեռեալ գէշ գազանի. . .
Եւ է ասէն անկարելի
Որ քեզ հասին յայնըմ վայրի՝
Բոլոր ամէն մասունք չարի:
Վասն այնորիկ, ով անձկալի,
Որ ես ներհուն այսր ամենի,
Ի քոյն յայնժամ խիստ ողեսի՝
Ծանիր և զիս որ կականի.
Եւ որպէս փորձ տարակուսի՝
Լեր սըրտմակից ինձ յոյս վայրի »:


23. Այ ’ի ճանապել և քննել զմնացորդս մեծագործ-
տակ քաղաքին՝ անկ էր նախ յուզել յատակել զյատակն,
և որոնել զհետս անցուդարձի տեղեաց և զերապարա-
կաց, որով և չինուածոցն զիրք ճշդեալիս. այլ զի չև ևս
է արարեալ զայդ, և հազիւ երբեմն հետք ինչ փղոցաց՝
’ի հասարակի ուղղածիգք և անձուկք, ըստ նշմարելոց
առաջին քննողին՝ իրրև երեք կամ չորք Զաւ լայն, յոր-
քազ դարուց զհետ կոտեալ են աւերակս, փշի և ապա-
զ’աւ ’ի նախնի արձանաց անաւանեալ փղոցս ինչ ա-
չեացք, թողեալ հետահանից՝ ճշդելոյ զնոսին և զայլսն:
Մին՝ որ և գլխաւորն Թուխ կոչի Բռեն փողոց, և որպէս
կարծեմ ծայր ’ի ծայրէ անցանէր կորէր դքաղքն. ըստ
նմին Թուխն և այլք լինել ուղղանիգ փողոցք. քանզի և
յոլովք ’ի ծանուցեալ հասարակաց չինուածոց՝ գտանին
’ի վերայ ուղիղ գծի՝ զոր Թէ ձգեսցէ ոք ’ի նշանաւոր
կէտէ կամ ’ի կողմանէ միոյ ցմիս. զոր օրինակ յարև-
ելեան նեղքին գրանէն գրեաթէ ուղղակի ընդ հարաւ-



17. Կաւուրջ ’ի վերայ Աիտրեան գետոյ յԱնի:


Գրիգորի Ապուսահլենց՝ գիծն անցանէ ուղղակի ընդ
աշտարակն միջնակաց: Այսպէս և յարքունի ապարանից՝
’ի Մ. Հ. ԱՆ. Էր. ձգեալ գիծ՝ անցանէ ընդ աշտարակն,
ընդ կաթողիկէն, և ժամանէ ’ի Ս. Գրիգոր Լուսաւորչի
վանս: Իսկ զուգահեռական իմն արեւմտեան կողմն քա-
ղաքին ձգելով՝ յապարանիցն ցԱխուրեան՝ անցանէ գիծն
ընդ Ս. Առաքեալ և ընդ Տիրամօր եկեղեցիս, և մերձ ’ի
Ս. Փրկիչ: — Ցիշխն յարձանս և այլ փողոցք. որպէս, Վկրի
փողոց, զոր կարծեմ ’ի Հ. Ե. կողմն քաղաքին. Դարբնոց
փողոց, մերձ ’ի Ս. Գրիգոր եկեղեցի յարեւմտակողմն
քաղաքին, Սառամ-փողոց, փողոց-խոտիր: Դարձեալ և
այլք սրաթացի զուխակ անուամբ յիշին, և Թուին փոքր
փողոցք, որպէս Ս. Առաքելոց զուխակ, յայս է Թէ մերձ
յայն անուն եկեղեցին ’ի Հ. Մ. կողմն քաղաքին. Հա-
տեցոյց զուխակ. Ծառազուխակ, ըստ խոտոր դրիցն: — Ընդ
փողոցս յիշելի են և Կաւուրջք, յորոց երկոցունն երեւին
ցարդ տեղիք, և միայն տակաւին Մասն և գլուխք երկուս-
տեք գետոյն, որպէս երեւի ’ի պատկերիդ, ’ի հարաւոյ
կաթողիկէին, և Թուի անշուշտ միակամար: Ոմանք ’ի
կամրջացն Թուին յարկածածուկք, և Թերեւս խանապար [1]
կոչեցեալքն յարձանս. որպէս, Գնտակիրոցի խանապար,
Պապենց խանապար, « խանապարի ներքին դեղն երկու
հուձրա » (գաման, խորշ). եթէ չիցեն դաքս չուկայք, զի
յիշի ուրեք և խանապար կուղպականիով: Թողեալ առ
այժմ և զայլ ինչ քաղաքական չինից յիշատակս որ ըստ
արձանագրութեանց, մասիցաք յերեւելիսն ցարդ աչօք:

1 Թերեւս ըստ خنيور Խնիւր: պարսիկ բառի, որ արգարեւ
համարջ ինչ նշանակէ, Թէպէտ և ըստ կրօնական խմասից:



18. Որմն և դուռն Աչպարանից։

Մտեալ ընդ արեւմտեան հիւսիսային դուռն պարսպացն (որ պատշաճի Կարուց), և հայեցեալ յամակոցին՝ որ է Ծաղկոցաձորն, անընդմէջ յանկեան անդ պարսպացն և ձորափին՝ առաջին չինուած ըստ մերձաւորութեան, ըստ մեծութեան և ըստ գլխաւորութեան՝ յանդիման լինի Աչպարանքն կամ Աղբուենիք. ի մեծութիւն և ամրութիւն նորին՝ զոր վկայացին խաչատ Ջնձել այնքան հարուածք ոսխոց, վկայեն զայն թափառորդք և




19. Դուռն Աչպարանից և պատուհան։

կառոյց զանգուած չինուածոյն Թուխ արդարացուցանել զկարծիս ոմանցին՝ որ քաղաք իմն վաղ սացին զարքունի նիոգ. չէն այնպէս ընդարձակք որպէս համաւէն զրոյցք, այլ սակաւն և ոչ վաղը և զոյն չինուած. զի համարի իբր 75 Չ. ընդ երկայնն և ընդ լայն հաւասար. բայց զի նշմարին հետք այլ և յարակից չինուածոց, Թուեցաւ ոմանց հինգ վայրկենի գնացից չափ ասել զշրջապատ ապարանն։ Հարաւային պարիսպքն կարծանեալք են։ Դուռնն կոյ յարեւելից կուսէ դէղեցիկ քանդակօք զրուագեալ յեղերան և՝ի բարուրն, մանր զարդուք և խաչաձևօք՝ ի սեաւ և՝ի դեղին քարանց՝ որ ագուցեալ են՝ի քարինս պատոյն. և է հասպ յեղր ձորոյն, յորոյ՝ի յատակաց ամբառնան՝ի քարաժայռս՝ արեւմտեան և հիւսիսային որմունքն բարձունք քան զպարիսպան։ Դուռն մի և սակաւ

ինչ նեղագոյն կայ ի վերոյ այսր դրան, այլազան ձեւով քառակուսի քարաշարին, և պռնկիւն կամարաւ. յայտ է թէ վերին կամ միջին դահլիճին էր սա դուռն, կամ պատշգամբ հայելի: Ներկուս տրոհեալ երեմ սրբանկդ, ի հիւսիսային և յարեւմտեան մասունս. առաջնոյն որ մունք միայն կանգուն կան այժմ, այլն աւերեալ քանդեալ. իսկ երկրորդին՝ յոր մուծանէ դուռնն այն, կան և որմունք սենեկացն, ոչ բազմաթիւք և ընդարձակք. քարինք նոցին երկթզաչալ քառակուսիք, դնդ-

նագոյնք նման պարապացն. այլ զարդ կամ նկար առ նեղին չերեւի ի նոսին. չերեւին և պատուհանք, բաց ի միոյ միայնոյ որ հայի ի Ծաղկոցաձորն. թուի թէ ընդ երիս էին լուսանցուցքն լոտ արեւելեան տարատու: Սակայն կարծեմ թէ ի սակաւ ամաց հետէ բազում աւերուածքինք լեալ են յապարանսդ. քանզի անգլիացի ճանապարհորդին Ֆէլր-Բորդըր, որ յամի 1817 գնենայց զվայրսն, ոչ միայն զարգս և քանդակս յիշէ ի պալատանդ, այլ և սիրանայ և անճառելի խիճ ասէ զճարտարապետ-




20. Դահլիճ արքունի Ագպարանից:

քանոյ զարգուցն զրազմազանութիւն և զճոխութիւն, և զնրբանկար միտիանս ի յատակս անթիւ սրահից պատանն. վասն որոյ թուի թէ ձեղուանն փլուզեալ ծածկեալ է զվայելչութիւն չինուածոյն: Ի միում սենեկաց արեւելակողմանն՝ որոյ ձեղուն զմբեթայարկ է, սեաւ և կարմիր քարանց զեղեցիկ ծաղկաձև չարածոյ, կայ սանդան մեծ քարեղէն: Ագոի սանդուղք քարեղինք իջուցանեն ի ներքնատուն, որ սրղ չքեղագոյն և զանչելի

քան զվերնայարկն երեւի. քանզի է տեսանել ընդ բազմանդակ երկայնութիւն պալատանն յարեւելից ընդ արեւմուտս՝ կամարս ձգեալս ի վերոյ որմսեանց, և իրր Զատիս երկու բացագոյն յորմոց պալատանն՝ այլ որմն ուղղափիղ ածեալ՝ և պիտուրն ի խորանաձեւս տրոհեալ. յորոց ոմանք չունին մուտս ընդ որմն այս, իսկ այլք ունին անձուկս՝ որք հանեն ի նրբասրոցս և ի ներքնատունս մթինս. և են ոմանց դրունք ցածունք և ոմանց ընդար-

ձակք և բարձունք: Կամարակապ են և ներքնատունքդ կամ սենեակքդ ամենայն, ոմանք բարձր մինչև ցյատակ վերնատանն, և այլք խոնարհաձեղունք. բաղում փլածք են և ի սոսին և յանցիկին որ տանի հանէ ի Ծաղկոցաձորն. այլ որմունքս այսոքիկ ստուարագոյնք են և մեծամեծ քարամբք չինեալ, զոր ձեռին բռնութեամբ խանգարեալ է պարապորդ մարդկան ի խնդիր գանձուց, որպէս կարծեն նոքա լինել անդ. մանաւանդ զի և խորչք կամ դարանաձև խորք ինչ են յորմունսն: Զիք արձանագիր յորմունս և ի բնաւ պալատանդ. այլ ի հիւսիսոյ կողմանէ արտաքուստ ի կատարս որմոյն կայր բարձրաքանդակ պատկեր զինուորաձև առն, որոյ գլուխ խորտակեալ էր. անշանն ժամանէր ցծունկս, և գօտեաւ զպեալ զմէջն. ի միում ձեռին ունելով զպատկեր չինուածոյ՝ որպէս թուի պալատանս այսորիկ. և աւանդի լինել առնապատկեր Սմբատայ Բ Թագաւորի, զոր յամի իրրև 1845 հանեալ Ռուսաց տարան ի Պետրպուրկ[1]:



21. Տուն Պահլաւորդաց (կարծեցեալ):

եղակողմն ապարանիցն՝ առ քարափան վտակի միոյ խառնեցեալ ի գետ Ծաղկաձորայն՝ երեւին մնացուածք այլոց մեծագոյն եկեղեցւոյ իրր 13 Ձ. երկայն, կիսով չափ լայն, քառակուսի ձեւով. սա է անշուշտ մատուռն հռչակ յապարանն, զոր կիչ Եղբեն. Պոռէ, և վասն պատճառանն նուիրեալ համարի. քանզի ի հարաւային դիմի նորին կայր արձանագիր վրացերէն, և ի ներքոյ գրեալ հայերէն, ի թուա. ՈԿԵ (1216). եթէ, ես Գրիգոր եպիսկոպոս և վանահայր Պատրն քաղաքիս, հաստատեմք զհրամանս կաթողիկոսին: Երկոքին կողմանք եկեղեցւոյն որմոյսդ սեամբք բաժանեալ են ի վեց, և են ի նոսա քանդակ պատկերք մարդկան. նշմարի և ներքնատուն ընդ եկեղեցեաւս: Իսկ ի Հր. պալատանն՝ ուր սկսանի լսչնանալ

Անհնարին է արժանապատ լինչ իրաց յայտնութեան յապարանդ արքունի, թէ յակղուեցի խնամով բառնալ զվլածան, բանալ զյատակն և նչմարել զբաժանմունս կամ զմատուռն նորին, զդահլիճան, զննեակն, զդանձ տունս, և այլն, որպէս վայել էր ձոխահարուստ թագաւորացն այնոցիկ. նա և զդրատունս իմաստասէր պատկառորացն, որպիսիք էին յետին իշխեցդքն Զաքհանենէս–Սմբատ և Գագիկ Բ. յորոց զրոց ի գանձատանն պահելոյ՝ եհատ բաղդիս ի ձեռս մեր մատեան մի մեկնութեան Թղթոց Պօղոսի, գրեալ յամի 999. զորմէ և գեղեցիկ իմն ծանօթութ սայ ժամանակակից ատենաբանէր այր, մեծերիմ Գրիգորի Մագիստրոսի՝ Սարգիս վարդապետ Սեւանեցի, գրեալ ի վերջ մատենին յամին 1041, զոյս ձև. (տես յէջ 50):


24. Հպատգոյն յապարանս յարեւմտից կողմ առ պարսպաձոր Ծաղկոցաձորոյն նչմարի մատուռն մի աւերակ փոքրեալ ի կարմրագոյն վիմի, առնմէն և այլ փոքրագոյն ևս մատուռն վիմափոր: Որոց զրեաթէ ի հանդիպոյ յարեւ-

եառանիւնական միջոց քարափանց Ծաղկոցաձորոյն և յիշեցելոյ օժանդակ վտակին, կան կոյաք աւերակաց՝ որք չեւ ևս ծանուցան որպիսի ինչ չինուածք էին: Ի Մ. աւերակացդ և ի Էր. վիմափոր եկեղեցւոյն յորդր Ծաղկաձորոյն նչմարին հետք կրկնապարիսպք, առ որով գետակն ընդունի յահեկէն (ի կողմանէ քաղաքին) վտակ փոքրիկ յիւրմէ ձորակէն խառնեցեալ, որում մերձ թուի և դուռն մի եղեալ ելանելոյ ի ձոր անդր. և առ նոքօք երեմն կամարակապ մուտք սրբատաշ քարտմովք, զոր ոմն յեւրոպացի քննողաց Անուց՝ համարեցաւ Տան պահանորդաց:

Ձետ այնր դարձեալ քաղաքորմք պարսպին զնորեզրն Ծաղկոցաց. ուրանօր ի քարաին նորին և հատասար հեռի ի կրկնապարիսպ տեղւոյն՝ ի հիւսիսոյ, ի մերձէն՝

1 Ոմն յատաչնոց մերազգի այցելուաց ասէ զպատկերն՝ առն պէսատելոյ լինել և ի ձեռին ունել զգլուխն. և ուանդի ասէ Գագ-


կայ վերջոյ լեռնէ պատկեր, օրինակելով զդժբաղդութիւնն. այլ ինքն հաճի համարել վէսա Սարգսի՝ առ առակէ:



22. Զեռագիր Մատենադարանի վրա։ Ընդօրինակողի վերջաբանը։

Ընդօրինակեցի զայս ես՝ Գրիգոր Նկ. Սարգսյանս, ի քաղաքն Վասպուրական, ի գեղջէն Ռշտունիք, ի վանս Սուրբ Աստուածածնի, ի ժամանակս Տեառն Գրիգորի կաթողիկոսի, ի թվականութեան Հայոց ՌՀԵ (1196), ի ժամանակս Հեթումեան թագաւորութեան, ի տէրութեան Լեւոն թագաւորի, որդւոյ Հեթումայ թագաւորի, որդւոյ Լեւոնի թագաւորի, որդւոյ Ռուբինի թագաւորի, որդւոյ Կոստանդինի թագաւորի, որդւոյ Հեթումայ թագաւորի, որդւոյ Ռուբինի

սղան, և իբրև մի ՚ի հրաչակերտից աշխարհիս համբա-
» ւեր ՚ի Հայս: Այդ մեծագոյն և մեծահաւասան Գագիկ ՚ի
» վերայ այլոց բազում շինուածոցն՝ խրախուսեաց վերա-
» կանգնել զայնպիսին շինուած. ոչ առ հասարն, զի տա-
» կաւին ընդ այլազգեաց իշխանութեամբ էր այն, այլ փո-
» խադրել յիւրն արքայանիստ Անի. և ընտրեալ նմանա-
» գոյն ի՛ն վայր դիտակ, ձեռն արկ յամի 996–7. «Նոյնս-
» ձև չափով և յօրինուածով յարդարել ՚ի քաղաքին
» Անւոյ, (որպէս ասէ տեսող սորին Ասողիկ) հիմնարկեալ
» ՚ի կուսէ Գագկոյտաճորոյն, ՚ի բարձրաւանդակ տեղւոջն,
» տարփասէնչ տեսողացն, մեծատաղ վիմադրեան կո-
» փածոյ վիմօք՝ մանուածոյ քանդակեալ յօրինէ, լուս-
» անցոյց պատուհանօք, երբեակի զրամբք, զանազատես



24. Յատակաձև Ս. Գրիգորի Ագուղանեցւոյ:

» տեսանելն գմբեթաւորեալ, գոնեակ զերամարձ և եր-
» կնանման գնդին». և ՚ի հազար թուականին գկառա-
րեցաւ շինուածն. այլ համօրէն սարք՝ թերևս յետոյ ա-
րեան բովանդակեցան ըստ օրինակի կաթողիկէին, զորով
զերազանցէր անհրկայապէս ըստ գեղեցիկ զարդուցն
և դրուագաց. քանզի զ՚ի դարս բիւզանդական արուես-
տի տիպս բերէր, յոր կիրթ և հմուտ էր նախագաղա-
փարին կերտող Ներսէս կաթողիկոս, երկար ամս կեցեալ
և անեալ ՚ի Կ.Պոլիս: Այլ արդ հրաշալին այն գագա-
ղեան տաճար, թերևս պերճապատճէն ՚ի չինուածս Անւոյ,
ոչ ևս երևի, և ոչ իսկ տեղւոյ տերին է յայտ. և
զի՛ ՚ի հասարակի հաստատուցցք են եկեղեցիք քաղաքիս,
վասն որոյ և շատ կամ սակաւ կանգուն կան գիտելոյք
առ ՚ի նախնեացն յիշատակելոց, որոյս հիմնադատակ
կործանումն՝ թուի ոչ սկսմամբ բանաքեամբ եղեալ. և
զի ՚ի վաղուց հետէ տապալեալ էր՝ յայտ է ՚ի ժամանա-
կագրէն ԺԳ դարու (Մխիթարայ Այրիվանեցւոյ), որ
ընդ յիշատակի չինութեանն յաւելու և զտեսական բան,
«որ այժմ հանգուցեալ է»: Անեցին Սամուէլ որ նշա-
նակէ յամի 1131 գկործանել Ամենափրկիչ եկեղեցւոյ՝
ոչ յիշէ զգերահռչակ Գրիգորին՝ (որպէս անասնել զայն).
յայտ ուրեմն զի ՚ի միջոցի 1177 թուին՝ (յորում աւարտե-
նու ժամանակագրութիւնն), և յառաջ քան զվերջ ԺԳ
դարու՝ յորում աւարտե Մխիթար գիւրն, եղեալ է ար-
կածդ: — Բազմաւոր յայժ քան զայդ եղեալ և ծնուց նա-
խայիշեալս Ս. Գրիգոր մականաւանեալն Պարթևաբնակից,
յանուն պահպանութեան հիմնարկողի ՚ի վերինսմ քա-
ղաքի ի դարս: Փաքր է, այլ վայելուչ և ճարտարապետն
յայժ, թերևս Տրդատայ հմտին ձեռակերտ և այս. Թանձր
և ամրակառոյց պատճաքը, որով անխախտ մնայ յ՚900 ա-
մաց հետէ, զի չկաք ՚ի նմա յիշատակ նորոգութեան, որ-
պէս յայլ եկեղեցիս. երկոտասանանկիւնի է ձևով ար-
տաքուստ խարխոյն, այլ առ լսյնութեան կողմանցն բո-
լորչի երևի. երկոտասան Ձ. է տրամագիծն յարտաքին
պատին, իսկ միջին տասն Ձ. վայն, և պատհեալ ՚ի վեց
կիսաբոլորս, որպէս և պատաքուստ սուղ ինչ ՚ի վերոյ ՚ի
յատակէն ՚ի չրջապատ պատին՝ վեց պսակիւն խորշք
բացեալ են այսու > ձևով, և իբրև ՚ի վեց չերտս հա-
տեալ: Յաւարտ անդրպետայ վեցեցան ներքին բոլորա-
կացն կանգնեալ են մէն մի սիւնք, որով ձևանայ բո-
լորակ մի ևս մեծ ՚ի միջի, յորոյ վերայ ամբառնայ կամաձև
գմբէթ գեղեցիկ 12 լուսամուխք, սուղ ինչ ՚ի գագաթանն
մաշեալ, թերևս ՚ի բռնաքինէ չիրոզոյ պսակողին
գնա խաչի: Ոչ շատ քանդակք և զարդք են եկեղեցւոյս
պատաքուստ, այլ վայելուչ յայժ դրուագք չրջանակի գըմ-
բէթին և լուսամտից նորին. իսկ ՚ի ներքոյ անպահոյժ ևս,
իբրև անկարօտ պատճառի՝ լցեալ պարզութեանն գե-
ղով[1]: Փաքրկութիւն եկեղեցւոյս ինքնին և արձանագիրքն
յայտնեալ վկայեն՝ զի վասն հանգուցարանի տհմի իւ-
րեանց կանգնեցին զայն Պահլաւունիքն: Զկք արձան թը-
ւականի չինութեանն, այլ ՚ի վերոյ գրանն կայ մի ՚ի հնա-
գոյն ճեպագիր արձանագրաց Անւոյ, յամի 994, այսպէս.

Կամաւքն Աստուծոյ. ի ՆԽԹ թու. Ես Շուշան տիկնոջ տիկին զիւգակից Գրիգորոյ իշխանի ետու զՄրուանա կուղպակս ի Սուրբ Գրիգոր իսկ որ հա-կառ գա յիմոյ կամ յաւտարաց ՅԺԸ ինն նղոված է հոգով եւ մարմնով.

Միւս ևս արձան կայ անդ սկսեալ ՚ի վերոյ քան զսա երկու տող, և երկու տող ևս խառնեալ մածեալ ՚ի միջի

1 Հէմիլտէն, որ 45 ամաք յառաջ քան զթուական տպագրու-թեան մատենիս գրէր, Ճոխագարդ ասէ զարտաքինն եկեղեցւոյս. « Within the architecture was extremely plain, but on the outside highly ornamental: rich traceries, flutings and fretwork, with deeply-carved twisted beadings, were carried round the windows and under the cornices. — Hamilton, I, 200.

տողից սորին, թերևս ոչ հաճելով ընդ առաջինն՝ յետոյ զմիսն գրեալ է, որ է այսպէս.

Յանուն Աստուծոյ կամ եղեւ իմ Շուշանա տիկնոջ տիկնոջ որ ետու զՄրուանա կուղպակս ի Սուրբ Գրիգոր: Ձ: դրամ: է Սէդակ. եւ Ձ: Մրուա-նա. ԺՁ: աւր ժամ ի Քր.

Գրիգորդ է որդի Ապուղամրէ և հաւ Համանուանն Մագիստրոսի հաչակելոց, որոյ կայ և համառօտ արձան յիշատակի ՚ի հարաւոյ կուսէ եկեղեցւոյն, զայս օրինակ.

✠ Քրիստոս Աստուած յորժամ գաս վառաւաք Հաւր ի նորոգել զերկիր ողորմեա Գրիգորս ծառայի քո.

Իսկ Սեդա զոստոր է Գրիգորի և Շուշանայ. Հաւան-օրէն որդի Նոցա էր և Մրուանն. որոց որդի է երէց Վահրամ իշխանաց իշխան և սպարապետ, որ զհոգեբա-ժին վաղահասեան որդւոյ իւրոյ Ապուղամրէ զրէ անդ.

✠ Կամաւքն Աստուծոյ ես Վահրամ իշխանաց իշխան ետու զիմ որդւոյն զԱպուխամրի ոգեբաժին եւ գնեցի ը կուղպակ զՂորագոյնին եւ զՈրսատէնն Ոշականց ետու ի Սուրբ Գրիգորի եւ քան եկեղեցիքս որ ունին ի տարին գ քառասունք. արդ էթէ ոք հակառ գա յիմոյ կամ յաւտարաց նզովեալ եղիցի ի Հաւրէ եւ յՈրդւո եւ ի Սուրբ Հոգւոյն. ՅԺԸ հա. եւ Ապուխամրի մեղացն պարտական եղիցի առաջի Աստուծոյ.

Ի ներքոյ արձանին Վահրամայ կայ և յիշատակ Սարգսի ուրումն Լարարաբի, (թուի՝ քաջաձիգ ազեղանց).

Ես Սարգիս Լարարաբս ետու զիմ տունս ի Սուրբ Գրիգոր որ արնեն ինձ ժամ ԺԵ աւր իսկ որ հկառ գա եւ զիմ յիշատակս խափանէ յամենա-կալ..... նին Աստուծոյ հոգով եւ մարմնով ամէն.

Այլ կարեւոր ևս արձանագիր է միւս ևս որդւոյ Գրի-գորի և Շուշանայ, եղբօր քաջացն Վասակայ և Վահրա-մայ, Ապլղարիպայ մարզպանի, յամի 1040, որոյ և յայլ ընծս քաղաքիս երևին յիշատակք. և է այսպէս.

Ի ՆԶԹ թուականիս ես Ապլղարիպ Հաւոց մարզպան որդի Գրիգորոս եւ Թոռն Ապուղամրի Հայոց իշխանաց թէպէտ եւ անտես էի ի հաւրէ իմմէ յա-ղագս կրաերութեան այլ հարկեցա ի ծնողական սիրոյն եւ չինեցի զայս հանգստարան հաւր իմոյ Գրիգորոս եւ եղբաւր իմոյ Համզէի եւ քեռ իմո Սեդակ եւ չինեցի սենեակ ը զսուրբ Ստեփաննոս եւ զսուրբ.... պայման քահանայիդ այս է որ զամէն ուրբաթ ի Ս(ուրբ Ստեփ.)... ժամն իմ մնայն Շուշանա արասցեն եւ զչարաթին իմ հայրն Գրիգորոս եւ ի սուրբ Քրիստափոր զամէն ուրբաթ իմ քեռն Սեդակ եւ զչարաթին իմ եղբաւրն արնէ Համզէի եւ առաջաւորացն ուրբաթին եւ աղցացն ուրբաթանոյն փոխան յարճակ աւուրքն արասցեն ը աւր. արդ եթէ ոք ի քահանայից եկեղեցեացդ

պատ դուռ խոտոր եւ նայ պատրաս եւ տեղ ի վեր Հատ ի Հարե եւ Մորա եւ ի Մորա Հարե եւ **ՅԱՀ** *Նայոգ պատրաս եւ բարձ նորա ընդ Յորդան մեր։*

ոտիցն ի ձորդ Մորա եւ ի Մորա Հարե եւ ի Հարե ի վեր Նայոգ նորա ընդ Յորդան մեր։ Եւ Մորա եւ Մորա ի

ձեռք։ բայց այդ ևս մեծ բան չէր, որովհետև ի Հռոմ ամեն տարի կուգային հարիւրաւոր ուխտաւորներ, որոնք ամենայն ինչ կարող էին ծախսել։ Ամենամեծ բանը այն էր, որ Պետրոս Ա. Հռոմի եպիսկոպոսն էր, որ ինքն Յիսուս Քրիստոսի աշակերտներից մէկն էր եղել, եւ որ ինքն Յիսուսի ձեռքից էր ստացել երկնքի բանալիները։ Ուրեմն ամենայն հաւատացեալ քրիստոնեայ պարտական էր ուխտ գնալ դէպի Հռոմ, որպէսզի տեսնէ Պետրոսի գերեզմանը, եւ ինքն էլ մի քանի բան ձեռք բերէ։

Ուխտի գնացողները բաժանւում էին երեք դասի։ Ամենաաղքատները, որոնք 300 ֆր. էլ չունէին, գնում էին ոտքով, եւ ճանապարհին ամենուրեք մուրում էին։ Ովքեր 100 կամ 120 ֆր. էին ունենում, նրանք ձիով էին գնում, եւ ճանապարհին ոչ մի տեղ չէին կանգնում, այլ միայն ձիերը փոխում էին։ Ամենահարուստները, որոնք 1000 ֆր. էին ունենում, կառքով էին գնում, եւ ճանապարհին ամենայն տեղ կանգ էին առնում, որպէսզի հանգստանան եւ ուրախանան։ Ճիշտ այդպէս էլ մենք ենք անում։ Մենք ոչ ոքի չենք ծաղրում, այլ ինքներս էլ ենք ուխտի գնում։ Ես ինքս էլ ուխտի եմ գնում, եւ ինձ համար ամենայն ինչ պատրաստ է։ Ես ունեմ 1000 ֆր., եւ ուրեմն կարող եմ ամենայն հանգստութեամբ ճանապարհորդել։ Ես ունեմ մի կառք, որ ինքն իրան շարժւում է, եւ ինձ համար ոչ մի հոգս չկայ։ Ես ունեմ մի ծառայ, որ ինձ հագցնում է, կօշիկս մաքրում է, եւ ինձ համար ամեն տեսակ ուրիշ գործեր էլ անում է։ Ես ունեմ մի խոհարար, որ ինձ համար ճաշ է պատրաստում։ Ես ունեմ մի քարտուղար, որ ինձ համար նամակներ է գրում։ Ես ունեմ մի քանի ծանօթներ, որոնք ինձ հետ միասին ուխտի են գնում։ Ես ունեմ մի քանի ծանօթ կանայք, որոնք ինձ հետ միասին ուխտի են գնում։ Ես ունեմ մի քանի ծանօթ աղջիկներ, որոնք ինձ հետ միասին ուխտի են գնում։ Ես ունեմ մի քանի ծանօթ տղաներ, որոնք ինձ հետ միասին ուխտի են գնում։ Ես ունեմ մի քանի ծանօթ ծերեր, որոնք ինձ հետ միասին ուխտի են գնում։ Ես ունեմ մի քանի ծանօթ երիտասարդներ, որոնք ինձ հետ միասին ուխտի են գնում։ Ես ունեմ մի քանի ծանօթ պատանիներ, որոնք ինձ հետ միասին ուխտի են գնում։ Ես ունեմ մի քանի ծանօթ մանուկներ, որոնք ինձ հետ միասին ուխտի են գնում։ Ես ունեմ մի քանի ծանօթ նորածիններ, որոնք ինձ հետ միասին ուխտի են գնում։ Ես ունեմ մի քանի ծանօթ ծնողներ

— Ես ու՞մ եմ հիշեցնում։ — հուզահարվում վրացերեն։

Ա՛խ, ինչպե՞ս չհիշեմ, ինչպե՞ս չհիշեմ այդ ձեռքերը, որոնք ինձ ամեն առավոտ ջուր էին տալիս, ամեն երեկո ինձ քնեցնում էին, ամեն ցերեկ ինձ կերակրում էին։ Ես ինչպե՞ս չհիշեմ այդ ձեռքերը, որոնք ինձ հագցնում էին, ինձ սանրում էին, ինձ գրկում էին։ Ես ինչպե՞ս չհիշեմ այդ ձեռքերը, որոնք ինձ ամեն օր ինչ-որ բան էին տալիս, ինչ-որ բան էին խլում ինձանից

» վան վրկութեան հոգւոց ծնողաց իմոց և զաւակաց » (որոց առեալ խնամութիւն, ազգականութիւն և մուտ » թիւն), և արգելեալ տեարցն վաճառել առաջի մղիը » թիւս Լ»պ–իւղ–Մաամրանայ՝ ոչխարս և ուղտս։ Հակա » ռակող հրամանացս պատուհասեցի յԱստուծոյ. ՚ի » թուս. Հէնիր. 595 »։ Ոչ գիտեմ սր յերկոցուն մղիթադ էին, և ո՞ Մաամրանդ [1]։ Ի տարբե՝ հայերէն արձանագրեալ է, պղէս ՚ի միւսում աշտարակին,

Որ հաստատուն պահեն աւրհնին յԱստուծոյ. ամէն։

Ցայդմ յիշեալ տաճարէ կամ ՚ի յաջորդին՝ Սպասաւորն Ջաքարէ էառ գՆին, և յայնմհետէ բարձաւ Լուսաւորիչն Շէտատատեանց ՚ի քաղաքէն։

Մերձագոյն վինուած յայտարակս յայս՝ է ՚ի հիւսիսոյ ա բեմոյ իբր 80 Ձ. հեռի, աւելի կամ պակաս, եկեղեցին Ս. Աջաքելոյ, քառակուսի խաչաձև, չափաւոր մեծու թեամբ, ամրակառոյց և բաղմաղրաւոյ, նոյնպէս ճար տարապետութեամբ. գի ոչ որպէս զայլսն գմբեթաւոր է և ոչ սիւնաւոր, այլ ՚ի չորից կողմանց կամարք տափակք կամ յոյժ լայնք աղեղնաձև ձգեալ հաւաքին ՚ի կեդրոնի, մեծամեծ վիմաք յարկեալ. նոյնպէս և տեղի խորանին ոչ կիսաբոլոր խորիս և բեմիս զատուցեալ է, այլ հա տասար այլոց կողմանցն, միայն քանդակս խաչից և պէս պէս զարդուց ունի ՚ի ներքոյ և արտաքոյ կողմանէ, մի սիտնակերպ գունագոյն քարամբք [2] յոլովս, անաղարտս և վայելուչս թերևս քան զամենայն ծանօթ վինուածոց քաղաքին. բայց և շատք յայնցանէ արտաքուստ, որպէս և այլ ևս մատունքն խանգարեալք և աւերեալք են բըն նութեամբ, և մեծամեծ քարինք ՚ի բաց բարձեալ, կամ անկեալք ՚ի գետին, ընդ որս և բարաւորք դրանցն [3], յորս թերևս արձանագրեալ էր անուն վինողին և թուա կան վինութեանն, որ անծանօթ միտն։ Վասն այլմաձևու թեանն և անհամանութեան այլոց եկեղեցեաց՝ ասելին Խոհակերոց Նաչրէվանայ թագաւորի աեր զտեղիս. որպէս և յանուն այսր Պարսից թագաւորի կոչէ զվինե բերդն՝ արքունիս Նաչրէվանայ [4]։ Արտաքոյ և շուրջ զե կեղեցւոյն են աւերակք այլոց և վինուածոց, ընդ որս և վաքր անդաստակ կամ գաւիթ առաջի դրանն որոյն, որոյ ձեղուն ամբանայր ՚ի վերոյ կամարաձիգ որմա սեանց։ Մի ՚ի հնագոյն եկեղեցեաց լինել յայս առնէ զսա արձանագիր մի 1031 ամի, ՚ի ներքս յեկեղեցւոյն, և է այսպէս.

ՆՋ. Թու. Շնորհիւն Աստուծոյ ես Աբողամր որդի Վահրամա իշխանաց իշխանի ետու զԿաունուտի արան ի սուրբ Աստաբաղաս վանս եղբաւր իմո Գրիգորոյ առողջութեան եւ կենացն յերկարութեան։

Զայս է ՚ի Թուականէ՝ զի յետ այնր արձանագրեալ է Վահրամայ յեկեղեցւոջ Ս. Գրիգորի զգեբաժինն վանս որին Այծուղամրի որդւոյ Խրոյ (էջ 53)։ Արձանագիր մի ևս կարեւոր պատմական կայ յեկեղեցւոջս՝ առ լուսամուխ հիւսիսակողմանն, ընդ մեծաւ դեղաքանդակ կարմիր խաչվիմով. որ թէպէտև անթուական, այլ անուն եպիս կոպոսին Գրիգորոյ յայտ առնէ զգէպն ՚ի սկիզբն ԺԳ դարու. և է այսպէս.

Աստուածահաճոյ եւ ընդրեալ սուրբ միայնակեացն Գանձակեցի զծե մամ յանապատի կեցեալ խոտաճարակ եւ անառես ի մարդկային տեսութենէ եկն ի քաղաքս մեր ի տուչութենէ Աստուծոյ առաժամայն հրամանի ի Տեառնէ հասեալ փոխեցաւ ի մշտնջենաւոր կեանսն եւ թաղեցաւ պանդխտարէրն ի գերեզմանս աշխարհականաց եւ դիրք սուրբ ոսկերաց նորա բժշկութիւն առնէ ամենայն ախտաժետաց. եւ ես տէր Գրիգոր սահմանեցի զԱստուածածնին կիւրակէն աւրն յանուն նորա պատարագել զՔրիստոս. ով զնմա մուտքն ի յաթոռէս հանէ կամ յուզել իշխէ Կայէնի եւ Յուդայի չափն նզովեալ եղիցին։

1 Այս թարգմանութիւն է ըստ նուս գիտականնաց, հրա տարակեալ ՚ի Պրոսէէ. իսկ Պարսիկ ոմն թարգման՝ որում ցուցա արձանագիրս, ՚ի ժամանակի տպագրութեան մատենիս, ընթեռնու զանունդ Լ»ոաամ»ըբան, և փոխանակ անորոշ տերանց վաճա ռողաց՝ թարգմանէ. « Գլխաւորք նուսք (!) որք վաճառեն և գնեն » ոչխարս և ջորիս՝ բարեկամ մեօք, մի ևս արասցեն զայդ »։


2 « A beautiful arched roof divided into several compartments, » filled with mosaics of various patterns, formed of the different colou » red stones of the neighbourhoud, and having its walls covered with » rich carvings and sculpured arabesques ». — Hamilton, I. 100.

3 Այժելու ոմն յամի 1870, գրեամէ ՚ի սպառ քայքայեալ առ զեկեղեցիս զայս, զոր ինքնին հինգ ամօք յառաջ կանգուն տե սեալ եր։

4 Դեսիե։

Միւս խաչվէմ յայլում կողման նշանակէ գվիշտակ վա զաւոիկ ցանկալի և քաղցրալեզու մանկան, յամի 1318.

Այս է տապան . . . . .
Հանգիստ Սարգիս պատանեկի.
Էր գեղեցիկ եւ ցանկալի
Քաղցր լեզու որչափ պիտի.
Թուին ՉԿԷ վոխեցաւ ի Քրիստոս։



31. Ցատակաձև եկեղեցւոյն Ս. Աբաքելոց։

Են և այլ ոչ սակաւ արձանագիրք, որպէս տեսցի ՚ի ստորև ինից, յորս շատք են մաքսաւորաց կամ հնգա հարաց, տանուտէրի կոչեցելոց, աղատաշնորհութիւնք ՚ի զա նազան հարկաց, մանաւանդ վասն ուխտի եկեղեցւոյն.

հնագոյն ՚ի 1263 (ՉԺԲ). ընդ որս և Մխիթար եպիսկոպոս Տեղերոյ հնարի խափանել զվաճառ յաւուրս կիրակէից՝ առ ահի սաստմանեցից երկրի [1]: Աւժանի նշանակի է արձանն խաւսդղէն, կնոջ Աթաբէկ Շահնշահի որ յետ մահու սուն իւրոյ տիրապար չնորհէ ազատութիւնս ՚ի հարկաց՝ բնակչաց Աշոց, զոր տա կաւին իւրեանց հայրենի ժառանգութիւն համարի, այսպէս գրելով յամի 1320.

Թվ. ՉԿԹ. *ողորմութեամբն Աստուծոյ ես խաւսդղէս զուգակից Աթաբակ Շահնշահի որ յայսմ ամի եղ յաչխարհէ եւ ողորմութիւն մեծ եղեւ մեզ եւ աշխարհիս արեւելից. ես ամուսին նորա դուստր Շամշադին Սահիպ դիւանին եւ զարդ . . . Իւանէ Աթաբակին եւ իմ որդիս իմ Զաքարիա յաղաչս զարդոնին հոգոյն փրկութեան եւ եղբարց իմոց յերկար կենդանու-*

1 Յանուն Աստուծոյ ես խաչատուր ետու գիմ գանձագին սարաւոյծով տունս ի սուրբ Աստուածածինն քոս իմ ոգոյս եւ իմ ծնողաց. եւ պարտին սպասաւորք սորա ի սարուոյջն: ե: աւր ժամ արնեն անխափան եւ եթէ ոք հակառ կայ գրոյս այսորիկ յաւագաց կամ ի յընտանեաց կամ յաւտարաց ՅԺԲ նզովեալ եղիցի հոգւով եւ մարմնով անլուծանելի:

Շնորհիւն Աստուծոյ ի տերութեան քաղաքիս եւ յաւագնորդութեան Տէր Սարգսի եւ ի մելիքութեան Փախրադինին ես Մխիթար եպիսկոպոս Տեղերէցի ի ցասմանէ շարժի աւուրքս քարձաք գկիրակէի վաճառն ի փողոցէ. ով այս գրիս հակառակ կայ թէ մեծ թէ փոքր քաղաքիս մեղացն աւէր է:

Շնորհիւն Աստուծոյ ես Նուբայդին քոթիթս իմ ընկերաւքս եկի յԱնի տամիս վերայ տեայ գԱնոյ իրիցանուս զիաւելեխին* հրամանքն որ ի սկսբանէ քաժ ու տամիս չէին տվել, ես այլ հաստատեց իմ ընկերաւքս որ ոչ քաժ տան ու ոչ տամիայ գինչ ի առելեխին հրամանքն էր թողաք վանս յերկար կենդանութեան փաթշահին. ով որ այլ քաժ ուզէ կամ տամիայ Աստուծոյ ու ինգեթվոր լինի ու նզոված է ՅԺԲ հայրապետացն մասն գՅուդային եւ գկայենին առցէ. հաստատուն պահաւղքս աւրինին Աստուծոյ:

ՉԺԲ Լլղանին: Շնորհիւն Աստուծոյ մեք տաղմաճիքս վանս յերկար կենդանութեան եւ վանս պատրոնաց մերոց Սահիպ Դիւանին եւ Սահմատին եւ Քարիմադինին քարձաք ի յԱնո իրիցանուս զքաժն զոր ի սկզբանէ ազատ էր մեք վերստին այլ հաստատեցաք չունի ոք իշխանութիւն քաժ ուզելու ոչ ինչ ազգ ով իցէ որ կապելոր լինի ով այլ խաւսք ասէ կամ աղման անէ ** քաժի ուզելու, ՅԺԲ հայրապետացն նզոված է հաստատուն պահողքն աւրինին յԱստուծոյ. ԻԼԼ Գ ***.

Թվ. ՉԺ. Շնորհիւն Աստուծոյ ես Աղբուղէս որդի Իւանէի Թոռն մեծացն Զաքարիայի եկի յԱնի հրամանաւ Շահնշահի տեսայ զքաղաքս աղքատացեալ եւ խիստ ի վէր մնացել զի շատ հարկ էր ի վերայ դրած որ ի սկզբանէ չէր եղել. ես: գ: հարկ ի վեր կալս վանն յերկար կենդանութեան եւ արեւշատութեան եղբարցն իմոց Շահնշահի եւ իմ վանն իմ նախնեաց գերեզմանին համար Թողի զերկինն հազրն գկովին համբրելէն զոչխրին աղլեակն. եթէ ոք յիմ ազգէ եւ թէ այլ ուստեք որ գյիշատակս մեր հաստատուն պահէ աւրինի յամենակալ Բանէն Աստուծոյ:

Յուսովն որ առ Աստուած եւ սէր նորին ես պարոն Աղբուղայս որդի Ամիր սպասալար Շահնշահի Թոռն մեծին Զաքարիայի եւ ես պարոն Թամարս դուստր իշխանաց իշխանի պարոն Բուղտային տեսաք գԱնոյ աձոռս եւ գիրեցանիս որ հարկ էր ի վերէնին զոր մեք նախ. . . . . .

Կամաւքն Աստուծոյ եւ հրամանաւ պարոն Աղբուղին ես Մխիթար որդի Գրիգոր Խուցիսին որ Անոյ սաղմոսճի էի վանս պարոնաց արեւշատութեամն Թողի զջաղացնոյս ամենոյ զդամիէն եւ զդահեկ վանս պարոն Զազին հոգոյն. եթէ ոք ի մեծաց կամ ի փոքու զայս արձանս խափանէ մարդն էն նզովել եղիցի ՅԺԲ հայրապետացն մասն եւ քաժին զՅուդային եւ զկայենին առցէ. եւ որ հաստատուն պահէ աւրինին յԱստուծոյ:

✠ Շնորհիւն Աստուծոյ ես Գէշս որդի Պայկանն որ պարոնացն հրամանաւն Անոյ դաղմաչ . . . եւ վանս պարոն Աղբուղին արեւշատութեամն եւ եւս վանս Պարոն Զազային հոգոյն Թողի զքասանկին զդամիէն քաղաքիս եւ որ ի դրուց գայ որ յառաջն չէր լել եւ ներկարարն զվաճառիկն քասանիկ չառնեն . . ով որ զայս արձանս խարանէ դատի յԱստուծոյ մասն եւ քաժին զՅուդային առցէ հաստատուն պահողք աւրինին յԱստուծոյ . . Այս քանի առաջնորդ Մուղաէտէն եւ Քրիստոսատուր եղեն:

* Այսպէս կոչի (ասլեխ կամ խուլեզ), چاشنی ազատագիր արձանագրեալ ՚ի վերայ մզկիթին, յէջ 36:

** Նեղել, ձանրանալ:

*** Այսինքն, իսրայէլ Գրիչ:

թիւն ի մեր հայրենիք քաղաքս ի յԱնի թողաք զկովերոյն եւ զիշանուն ըզհամբրելէն եւ զդռնագիրն մեծի եւ զիւրաքանչիւր եւ որ զմեր աւանդս խափանել չանայ. թէ հայ լինի կամ վրացի կամ տաճիկ հանդատի եւ դատապարտի յԱստուծոյ. մանաւանդ եւ զեհեննակից սատանի եղիցի եւ վրացին կրուկ եւ անիծած լինի եւ տաճիկն ի յամենայն վտառատրեալ փեղաքարարոյն ամենիթով եւ սեւերես լինի. խակ որք հաստատուն պահեն զաւանդս մեր մինչեւ ի կատարած աշխարհի աւրհնին յամենակալէն Աստուծոյ. որք այս բանիս հակառակ կենան նզովի որպէս զՈւդա եւ զԿաեն. այս բարիս եւ ողորմութիւնս հաստատեցաւ ի յամիրատութեան պարոն Լիպլին [1]. ⊙ Պատուզ գրիչ:

Նշանաւոր է և արձանագիր Շապադինի, յամի 1348, որ յետին է ժամանակաւ ՚ի ծանօթ արձանագրութիւնս Անոյ, և կարևոր յիշատակաց. զի ոչ միայն ծանուցանէ տունս և արուեստանոցս յԱնի, այլ և հակզեցի մի Ս. Յոհաննու. զոր և ցուցանէ երբեմն վիճակ եղեալ ժողովրդապետութեան մեծի եկեղեցւոյ Ս. Աստուածածնայ, և ապա չորթեալ ՚ի նմանէ, և արդ վերատին առ նոյն դարձուցանէ. գրելով այսպէս.

Թ. ՉՂԷ. *կամաւքն Աստուծոյ ես Շապադինս որդի Յովանիսի ետու ընձա ի սուրբ Աստուածածնայս զսուրբ Սոեփանոս իւր ժողովրդովն իւր կալեւքովն զոր յառաջն չորթել լին. ես: էճ: սպ: տվի եւ յԱստուածածնայս դարձուցի. այլ ետու պ[ա]հակով պահեզի կէսն որ ի Չովթըվանց գնել էի եւ մէկ կուզպակ որ ի յԱմիր Հասնա գնել էի ի գտակկրոցի խանապրըի դռանն դիմացէ վանն յիշատակ լինճ եւ ամուսնոյ իմոյ Ավաք խաթունին եւ գեղեցկատեսիլ եւ բարեպաշտ որդոյ իմոյ Յովանիսին. եւ պարտին սպասաւորք սորա յամենայն ամի ՃԲ աւր պատարագ: դ: աւր Շապադինին: դ: աւր Աւաք խաթունին: դ: աւր Յովանիսին. կատարողքն աւրհնին յԱստուածոյ. հակառակքն դասին յԱստուածոյ:*

Եկեղեցիս այս Ս. Սոեփանոս, կարծեմ՝ որդ այն կոյտ աւերակաց է զոր յիշեցի ՚ի հարաւակողմն արքունական Ապարանիցն. նախ զի մօտ է յԱստուածածնայ, և երկրորդ զի յայլում արձանի ասի վանն եկեղեցւոյդ լինել հանդէպ դրանն Կարուց. և այդ դուռն, որպէս յիշեցաք ՚ի կարգին՝ յայնմ կողման է, որում պատշաճին դիրք աւերակացն:


Ի հիւսիսակողման Ս. Աստուածոյ և կից նմին կայ մեծ տուն աւերակ, որոյ անկեալ քարինքն վկայք են հոյակապ չինուածոյ: Միւս ևս աւերակ մատուռն մեծագոյն առընթեր կայ ՚ի Հր. Ն. կողմանէ, և խորանատեղին և այլ ինչ մասունք որմոյն կանգուն կան. և ՚ի վերոյ թերատ արձանագիր մի, յորում կարևոր ինչ ծանուցանէ Գրիգոր արքեպիսկոպոս Անոյ յամի 1217, զսովրաթենէ արոյ առ եպիսկոպոսն. որպէս տեսցէ ոմն ընթերցողն.

**. . . կ. Ի միւսում ամի որ էր թուականն ՈԿԶ, կա(մաւքն) Աստուածոյ ես Տէր Գրիգոր որդի Ապուղամրի Արհիեպիսկոպ(ոս կամ)եցաք բառնալ զեղեալ հարկ ի մեր գաւառէս Շիրակա եւ (ի քաղ)աքիս եկեղեցեացս յԱնոյ. զի սահման էր ի սկզբանէ յամենայն գեղէ երկու գրիւ հաց յամիոնս տալ*

1 Այլ որ ընթեռնու զանունդ՝ Շնէին:

*եւ ի քաղաքիս յամենայն եկեղեցիս մորթի մին զատկին տային. արդ ես յա-
ղագս յերկար կենաց պատրոնացն իմոց եւ ազգականաց եւ եղբարց իմոց
եւ վասն հոգւոց ննջեցելոց մերոց թողի զայս հաց ամենայն գեղի մեծի եւ
փոքու եւ զատկի մորթին ամենայն եկեղեցոյ եւ չունի որ իշխանութիւն պա-
հանջել մինչ ի գալուստն Քրիստոսի ապա եթ . . . կատարիչք յիշատակիս . . .
ցին ԱՍտուածոյ եւ յամենայն սրբոց . . . կենդանութեան եւ տուղ . . այ
իւրեանց :*

28. Ի հարաւոյ մեծի աշտարակին և փոքր ի առաւել հեռագոյն՝ի նմանէ քան Աւաքեալքն որ՝ի հիւսիսոյ, կայ յայժմուս, գուցէ և՝ի հնումն վեհագոյն և սրբազնագոյն ամենայն չինուածոց և աւերակաց տեղւոյս, նա և



32. Կարողիկեն Աչեոյ:


թագուհի իսկ աւերակացեալ քաղաքին՝ Կաթողիկէն Աչեոյ, նուիրեալ ամենասուրն Թագուհւոյ Աստուածամոր [1]. երբեմն հոգեկան և քաղաքային վաճառք և ճոխա-

զարդուն թեամբն յինքն ձգելով զբիւրս բիւրուց հաւատացեալս, և այժմ մեծազանգուած և անարդիլ զրիւքն և կիսականգուն կայիքն՝ իսկ և իսկ զրաւելով զաչս պըշ-

1 Յայն ասկս համարի՝ի Պարսից և՝ի Թուրքաց Գուրէ Մէրիեմ կոչել ողջոյն իսկ քաղաքին Աչեոյ, որպէս և զրէ ոմն՝ի պատմըչաց նոցին, مریم جلفه, առանց պէտ սեռուան քաղաքին:

ցեալս՝ի սիւնս աւերակացն: Փոքր մի՝ի բնաստ բարձրաւանդակ է գետինն՝ յոր զետեղեալ կայ, և երիւք ևս կամ չորիւք աստիճանօք չուրջանակի վերացեալ, որոց ոտնաչափ մի է լայնութեան և բարձրութեան. անտուստ ամբառնան որմունքն առհասարակ մեծամեծ կոփածոյ պեղնագոյն և թխորակ վիմօք, այնպէս քաջ յիրար մածուցեալ, ոչ է յայտ որպիսի նիւթով, զի համակ միաձոյլ սրբատաշ տախտակ իմն երևին: Զև եկեղեցւոյն է քառակուսի, 35 ½ Ձ. ընդ երկայնն արտաքուստ, և 23 6/10 ընդ լայնն. այլ իբրև չափ մի և աւելի թանձրութիւն որմոյն իբր երիւք չափաց նուազեցուցանէ զներքին մեծութիւնն ընդ երկայն և ընդ լայն: Ջարևելեան, հիւսիսային և հարաւային որմունս՝ յերկուս երկուս տեղիս

զոգս սրանկիւնս կամ դատարկս գործեալ է չափաւոր բարձրութեամբ՝ի յատակէն և՝ի վեր, և կամարաձև գործեալ՝ի վերոյ նոցին, գեղեցիկ քանդակօք: Ներքին եկեղեցւոյն որքան անպատճոյ՝ այնքան վեմ և զարմանալի երեւի [1], մանաւանդ գեղեցիկ զուգաչափութեամբ մասանցն, խորհրդաձև ձգմամբ կամարացն և հակայակառոյց սեանց. յորոց չորք վերանան՝ի միջոյ եկեղեցւոյն խաչաձև խարսխօք, երիս երիս անկիւնս ունելով ընդ միջոցս խաչաթևացն. բազմամանեակ են սիւնքն, առաւելք երեք չափ, գեղին և սեաւ մեծամեծ կտորովք, 16ականիւնի ին ձևով, և ամբառնան մինչև՝ի թևս կամարացն. և մանք՝ի չերտերն կորընթարդ են և ոմանք անկիւնաւոր. և կամարք աստի և անտի կապեն զսիւնսն ընդ իրեար [2].



33. Յատակաձև Կարողիկէին Աչեոյ:


արեւմտակողմեան կամարքն ցածունք են քան զայլսն. են և վեց որմանիւք յարեւմտեան, ՚ի հիւսիսային և հարաւային կողմանս, կիսով լայնութեան միջին սեանցն.

պարզուածք կամարացն ձգեալ են ընդ հիւսիս և ընդ հարաւ, և՝ի վերոյ նոցին այլ կամարագօտիք, որք ամբառնային զվեմականն գմբէթ լայնատարր, արդ առ-

1 « Cet édifice est remarquable par sa grande simplicité, qui n' exclut pas l' élegance ». — Texier, I. 149.

2 Ոչ գիտեմ զոր՝ի սեանց տատալեալ կորեին և մահարձան թուրքի միոյ տաչէին յամի 1870, յամենեան մայիսի, զոր գրելոյ ականատես այցելուի: — Արարատ Օրագիր Գ. 182:

մեաք՝ ’ի միջոցի 1830–40 ամաց՝ կործանեալ անկեալ և դյաւսակ եկեղեցւոյն ծածկեալ։ Գմբէթս այս երկնառնակ, ըստ ականատես պատմչաց, 92՛ բարձր ’ի յատակէն, 28՛ տրամագծաւ, կրէր երբեմն արտաքոյ ’ի գագաթանց տեղւոջ՝ խաչ արծաթի մարդաչափ բարձրութեամբ, զոր բարձեալ աւերածոյ հինից Ալէք–պարսանայ՝ փոխան այնը մահվժտականք եդին մահիկ ոսկեզօծ. ընդ նովաւ ’ի ներքուստ կախէր չհին բնբղեայ, որ կրէր երկոտասան լիտր, նոյնքան տանելով ձէթ, զոր Սմբատ Բ եւթերել ’ի Հնդկաց, ուր[1] բիւր ոսկի դահեկանաց, որ ըստ այժմեան արժէից միլիոնս ֆռանգաց առնեն։ — Եւրեք դրունք են եկեղեցւոյն, աւագն յարեւմտից, և այլքն ’ի հիւսիսոյ և ’ի հարաւոյ. ’ի վերոյ յետնոյս ’ի ներքուստ փորագրեալ կայ, «Ի ԹՈՒ. ՆՁՐ»։ որ է ամ Տեառն 1033։ Ի վերոյ կողմնական դրանցն են երեք երեք պատուհանք երկայնաձևք[2], և երկու երկու ընդ միմ նոցին և արևմտեան որմոյն, և մի մի բոլորակք ’ի վերնակողման կամ ’ի ճակատան. մի պատուհան քառակուսի երկայն յարևելս ’ի վերոյ խորանին, մի մի բոլորակք՝ աւանդատանց. երեք երկայնաձև պատուհանք յարևմտեան կամ ’ի ճակատս




34. Մէջ կաթողիկէին Անւոյ։

կողման, և յայմմէ միմնոյն քանդակ արծուի. և մի բոլորակ ’ի վերոյ նորին. և ’ի վերոյ քան զայն կարմրագոյն չքնաղ խաչքանդակ մի[3]. և երեք պատուհանք ’ի դասին։ Ի հինգ կամարաձև կարակնեալ է ճակատ եկեղեցւոյն. ’ի կենդրան երկոցուն ’ի կամարացն են քանդակք զարդուց սյալիակք[4]. նման նմին է և արևելեան կողմն, այլ ճոխագոյն ևս քանդակօք։ Կոնք խարանին ’ի ներքուստ կիսալուսը ամբառնոյ մինչև ’ի ձեղունն, ուր կամարաձև յանգեալ խառնի ընդ կամարագօտիս բեմին. իսկ ’ի ստորև ’ի գետնոյ ցմարդաչափ բարձրութիւն՝ բաժանեալ է ’ի տասն խորշս երկայն բոլորիս[5]. յորմէ երկուք ’ի խորչից դէպ հանդէպ՝ դրունք են, որ ընդ անդաւտս քարեայս՝ զործեալս ’ի մէջ որմոյն՝ հանեն ’ի կամարակապ քարաշէն մատրունս կամ պահարանս, ընդ որովք կան աւանդատունքն, վից Զ. ընդ երկայն և չորս ընդ լայն, նոյնպէս քարաշէնք և կամարակապք։ Նման իմն սոցին գոն

1 Այսպէս արժան՝համարիմ զգրեալն ը (ութ), զոր ոմանք ընթերցանն «ընդ բիւր ոսկի», և այլն։
2 Տես Պատկեր 37, յէջ 68։
3 Տես յէջ 68, Պատկեր 37։
4 Տես յէջ 68 Պատկեր 36։
5 Տես յէջ 69 և 70, զՊատկերս 38 և 39։

և այլ ոչ սակաւ դարանք կամ պահարանք յայլևայլ կողմանս ձեղունն, քարեղէն օճապատոյտ ամպղոզք ելանելիք, ոչ է յայտ յիւիչ պէտս շինեալք. կարծի և ներքնատուն լինել եկեղեցւոյն նոյնպիսի նեղ ամպղոզ ինչ նելի, այլ խափանեալ են չուխղէն։ — Զայս տաճար մեծ՝ հիմնարկեաց խրոխտն ամենայն Թագաւորաց Բագրատունեաց Սմբատ, և յատկապար Տիեզերակալն կամ Շահանշահ կոչեցեալ, իբրև յամի 980, «’ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանին եկեղեցին շինեաց ԱՂՐԻՆՅԻ[1]». այլ կանխելով մահուան Թագաւորին զաւարտումն մեծագործ եկեղեցւոյն, (որ թուի տեւեալ ըստ բոլորին աւելի քան զքսան ամ), «Կին (Գագիկայ որդւոյ և յաջորդի) նորա Կատրանիդէ » Թագուհի, բարեպաշտուհի եղեալ, որ էր դուստր Վա» սակայ Սիւնեաց իշխանին, չինեաց զհիմնարկեալ եկե» ղեցին Սմբատայ, ամենապայծառ վայելչութեամբ. » բարձրաբերձ կամարօք զմբեթաւորեալ. խորան եր» կնանման. և զարդարեաց ’ի զարդ ծիրանեծածուխ ոս» կեթել անկուածոց, արծաթեղէն և ոսկեզէն անօթոց, » և բաղմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ,




35. Հարաւային կողմն կաթողիկէին Անւոյ։

» որովք Նահանապետ ըստ երկնային կամարին կաթողի» կէն սուրբ »։ Իսկ, աւաղ, ’ի յետին դարս կոխան եղեւ և փարախ ձարակաւորացն Քրդաց և նմանեաց, ուր Թագաւորքն և քահանայապետքն Հայաստանեայց հանդիսանային։ — Արեւելեան որմն, որպէս երևի և ’ի պատկերի (Թիւ 38), հերձեալ է վերուստ ’ի վայր, և սպառնայ կործանումն ողբալի, թէ ոչ փութասցի ’ի կարկառումն։ Աբեղանապերդ ոչ սակաւք են յարտաքին որմունս տաճարիս. որպէս, ’ի հարաւայնումն՝ յիշատակարան Կաթողիկոսաց Վանայ կոչեցեալ, զորոյ կտակ հաստատէ Սարգիս կաթողիկոս իւրով արձանագրաւ. և է այսպէս, գրեալ ձեռամ՝ որ տեսանի կիսամաշեալ ’ի պատկերիդ. (Թիւ 40, յէջ 71).

Ի ՆԾ Թ Հայոց ✠ ՄԺԹ Թ(ուին) Հռոմոց . . . . . ի ժամանակս աստուածապատիւ եւ հոգեւոր Տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսի եւ ի մե-


1 Ասողիկ, Գ. ԾԱ։

ծափառ թագաւորութեանն Գագիկ Հայոց եւ Վրաց Շահանշահի եւ Կատ-
ըանիդէ Հայոց թագուհի դուստր Վասակա Սիւնեաց թագաւորի յողոր-
մութիւնն Աստուծոյ ապաւինեցա եւ հրամանաւ տուն իմն Գագիկա Շահան-
շահի շինեցի զսուրբ կաթողիկէս զոր էր հիմնադրեալ մեծին Սմպատա եւ
կանգնեցաք տուն Աստուծոյ նորոգ եւ կենդանի ծնունդ հոգեւոր եւ արձան




36. Զարդ ի կամարաձիչս ձախատուռ Կարողիկէին Անւոյ. (տ. էջ 66):

մշանջենաւոր. զարդարեցի եւ զարդիւք պատուականաւք նըւէրք լինձ ի Քրիս-
տոս եւ զարմից իմ եւ որդոց Սմպատա Աբասա եւ Աշոտ. Հրամայեալ
եմ ես տէր Սարգիս սպասաւորաց եկեղեցոյս յետ ելից բարեպաշտ թա-




37. Դրուագք պատուհանից Կարողիկէին Անւոյ. (տ. էջ 66):


գուհոյս զվարդաւարին յիմնեական միով քառասնիւ կատարել անխափան
միշեւ ի գալուստն Քրիստոսի. եթէ որ զարձանագրեալդ անփոյթ առնէ
դատապարտեալ եղիցի ի Քրիստոսէ.




38. Կոնք խորանի Կարողիկէին Անւոյ. (տ. էջ 66):



Ի վեց ՈՆԼ Կ Գ ամբոցն Ակռաց ի Ս Կ Ե Գ մարգարեական աստիճանաձև Հայոց դիրքեր Քաջի ՉՄՔ մեր Հայաստանյայ ձեռնարկ իմ Բեհեղ.



40. Պատճառաբանական ցանկ Ալեքսանդրի Ղազարեանի Կարապետ Ալեքսանդրի Ղազարեանի Ալեքսանդրի Ղազարեանի Ալեքսանդրի Ղազարեանի (տես լՀ 67)։



39. Ղազարեանի Ալեքսանդրի Ղազարեանի (տես լՀ 67)։

✠ Կամարակապ ճարտարապետական Ատաղձ ու քանդակազարդ մուտքերի Ղազարեանի

Ղազարեանի Ալեքսանդրի Ղազարեանի (1837–1903) Ղազարեանի Ղազարեանի Ղազարեանի

եւ զկամին : եւ զանգարիոն : եւ կատապան ով եւ լինի տա սերմ : ո : մոզ եւ ծախք զընծելոցն : զայլն տանուտէրքն առնեն իւրեանց տամբ որ չհասնի ի յԱյնի ոչ ինչ այժ : եւ գինեւոր անեցի եթէ սայլով եթէ գրաստով՝ բաժն ազատ է . եւ անեցի որ իւրենն մորթելիք գնէ բաժն ազատ է . եւ չալակաւոր Աղեցի յամէն ցեղ բաժին կէան ազատ է : եւ ի կապճին տանն գահեկանին : զ : գրամ այժմ տան : դ : բ : ազատ է : եւ մսագործի եթէ պահրէի լինի գլուխ եթէ ոչխարի զկէսն տա կէան ազատ է : եւ ի նատ ո ին կարէն ո ? դրաճն ազատ է .

Ի ներքոյ արձանագրի թագուհւոյն կայ յիշատակ Զուհալի ուրումն Կարեցւոյ, յամի 1235, այսպէս.

Ի թուիս ի : ՈՋՂ : ընտրեաւն Աստուծոյ ես Զուհալս Կարբցի որդի Գորգկանն միաբանեցա մեծավառ սուրբ կաթողիկէիս եւ ետու աւետարան Էսայի չրջառ եւ վառ . եւ սպասաւորք սրբոցս հաստատեցին մեզ ի տարին աւր մին պատարագ ի տանի սուրբ Աստուածածնին որչափ ես կենդանի եմ իմ եղբարքն Վահրամայ եւ յետ մահուան իմոյ լինճ առնեն եւ կենակցին իմոյ Տիկնոջն . կատարողն ատրհնեսցի :


Ձիք յիշատակ Նորգութեան կաթողիկէիս, այլ յետ երկերիւր ամաց չինութեանն, յամի 1213, Տիգրան պաշտօնեայ Զաքարիայ Սպասալարի, Նորոգէ զասուիճանս Նորին, և գրէ այսպէս ՚ի ճակատ եկեղեցւոյն.

Ի թուիս ՈԿԲ Կամաքն Աստուծոյ ես Տիգրան ծառայ Քրիստոսի չինեցի հալալ ընչիւք իմով զաշտիճաններս մեծավառ սրբոյ կաթողիկէիս զոր ի բազում ամաց հետէ խարխալեալ էր եւ ետու նուէրք ի սուրբ կաթողիկէս զիմ գանձագին կուղպակն որ ի կատանոցին է . ետու երկու Տաւնական եւ սուրբ Գրիգոր մին եւ երկու սկի արծաթիք աւազ խորանին եւ եդի լուծ ի վերա սպասաւորաց սորա ի տարին ... պատարագել յանուն իմ մինչեւ ի գալուստն Քրիստոսի :

Աչագ խորան ասելով՝ յայտնէ և վերկոսին փոքրիկ աւանդատունս մի մի խորան համարել : — Վերջին արձանագիրս նագիր է Խորենայ ուրումն յամի 1286. ընծայէ կաթողիկէին զձիթահանս իւր, մերձ յապարանն Տիգրանայ.

Թու . ՉԼԵ կամաւն Աստուծոյ ես Ըռոբէն ծառայ Աստուծոյ որդի Դավթի եւ թոռն Յոհնա ապաւինեցայ յԱստուած եւ ի մեծավառ սուրբ կաթողիկոսս զոր խորհեալ էի եւ կատարեցի ետու ընծայ ի սա զիմ գանձագին ձիթահանքն բոլոր մին ակն իւր ամենայն յաղողութեամբ որ է մերձ ի ... նիցն Տիգրանայ զոր իմ հալալ արդեամբք չինեցի եւ գնեալ էի զինքն ի թոռնեբուն ... եւ իչխեցող սորա Սարկաւագն եւ այլ սպասաւորքն հատուցին մեզ փոխարէն (յամենայն)ն ամի հինկ աւր պատարագ յանուն հաւր իմոյ Դաւթի


արդ եթէ ի մեծաց ոք կամ ի փոքունց ... իմոց կամ յաւտարաց զարդիւնքս մեր հանել կամ խաբանեալ չանս մեղաց մերոց պարտական եղիցի յատենին մեծի . իսկ որք հաստատուն պահեն ատրհնին յԱստուծոյ :



41. Եկեղեցի մերձ ՚ի Կարողիկէն:

Կայ և այլ արձանագիր մի կիսեղծ առ հարաւային տեղի Խորանին տակաւին կանգուն կայ և վայելչագեղ դրանն [1]:

Ի գերբուկս աւերակացն շուրջ զմեծափառ կաթողիկէին կատակէլոց, նշմարին մնատրունք երկու. մին յահեկէն կուսէ առընթեր որմանկեանն հարաւոյ, որոյ և յատակին [2]. միւսն ՚ի հիւսիսոյ՝ առ արեւմտեան որմանկեամբ, այլ յոյժ քայքայեալ: Թերեւս մի ՚ի սոցանէ, կամ այլ սակաւ ինչ ՚ի բացեայ՝ էր այն զոր յիշէ պատմիչն Վարդան ՚ի գործս Սարգսի կաթողիկոսի, եթէ « Շի-



42. Դռնեայ դռնոյն (տես յէջ 74):

[1] Ամենամբն Աստուծոյ ամենակալի ... ն զայգին որ ի Ծադնոցին է ընծաեցի ի ... վարդեվարին պասն հինգշաբաթին աւրն եւ ... որդոյն իմոյ Գէորգա արսեն զժամն եւ յե ... ց կամ յիմոց կամ յաւտարաց եւ զայգի ... ի Քրիստոսէ եւ ի մեղացս եւ իմ ...

Ի ներքոյ բանիցս կայ խաչքանդակ, և ՚ի սուրբ Նորին այլ արձանագիր թերատ, կամ մասն առաջնոյն, այսպէս.


Ով սրբասէր քահանայք եւ սրբամսեալ ժողովուրդք որք երկրպագէք տիկնո ... ոգուե .. իսրնդրեց ...

2 Ջանեալ զսա և ետ . Գոռէ յամի 1858 և յայժ ծռհազարդ

ասէ . « Le style de l' architecture est beaucoup plus orné ». E. Boré.

» նեաց զվկայարան սրբոց Հռիփսիմեանցն առընթեր կա-
» թողիկէին Աչոյ, և փոխեաց անդր զնշխարս նոցա,
» բերեալ մեծաւ հանդիսիւ, և կարգեաց զօրն տօն մեծ »։
Հաւանելի է մերձ սոցին լինել և տան կաթողիկոսարա-
նին, թէպէտ և ոչ յիշատակի յայտնապէս. և թէ ոչ
առաջին կաթողիկոսքն՝ այլ զէթ Տէր Պետրոս, և յետոյ
եպիսկոպոսունք Շերակայ Նատէին անդ։

29. Յարձանագիրս ուրեք յիշի տուն Գրիգորի սրբոյ
Աչահէրժի « մօտ՝ի տուրբ Կաթողիկէ՝ի հիւսիս կոյս »,
զոր նուիրեաց վանից Ա.րծոյ Առիծոյ։ Թուի թէ և այլ
ևս ոչ սակաւ չինուածք քաղաքականք կային՝ի հա-
րաւոյ կաթողիկէին ցգետն Ախուրեան, զի նշմարին
առ քարափամբք սորին յայնմ կողմանի դուռն մի՝ի քա-
զաքին որ պարսպէ զձորդին, այն է Դռնեայ Դռռնի [1];
յայժմեայցս յանուն Երևանայ կոչեցեալ, և աղբիւր մի,
և կամուրջ միակամար, որոյ գլուխք ևեթ կան յերկոսին
կողմանս Ախուրենոյ. և յարևելեան որմն պարսպացն
առ դրանն արձանագրեալ է այսու օրինակաւ [2].



43. Արձանագիր Ծիլենց Սարգսի Բաժարարի Աչոյ առ Դռնեայ դիտաւք։


Կարծեմ մօտ յայս դուռն կամ՝ի մերձաւոր սորին, ՚ի
խուռչի ուրեմն գետափին կամ՝ի հուն իսկ Ախուրեան

գետոյ՝ Թադեոս Պետրոս կաթողիկոս լտերս 400 միւռո-
նէ, կասկածեալ (որպէս և եղէն) զի արգելչեն ջրիք

1 Տես Պատկեր 42 յէջ 73։
2 « Թվ. ՉԿԹ. Շնորհիւ և. ողորմութեամբն Աստուծոյ ես
» Սարգիս Ծիլենց բաժարս Թոզի զԱրջս Սուրբ Գրիգորս
» զբաժն մեծ և փոքր վանն Հանկըստեան Պետրոնին մերս Շա-
» հանշահի և աստուածատուր զաւակացն Զաքարեայ և եղբարց
» նորա յերկար կենդանութեան. որ ոք զիշատակս խափանէ նզով
» եղիցի յամենակալէն Աստուծոյ Հաստատուն պահողք ուրհնին
» յԱստուծոյ »։

զպաշտօն իւր [1]։ Մերձ սոցին են Կաւարակապք՝ի վերայ
քարեղէն լայն սանդղոց, որք ելեն թերևս Բէշքինակապք
կոչեցեալքն յարձանագրին. և՝ի հանդիպակումն ևս դե-
տոյն՝ յարևելեանն երևին նշոյլսիկք. իսկ աստ՝ի ներ-
քին կողման քաղաքիս՝ ի կամրջոյ այսր յիշեցելոյ ընդ-
երկարեալ ընդ երեսս քարափանց ձորոյն ընդ արևելս՝
աւելի քան ընդ 50 Ձ. տանէն հանեն՝ի չինուածս խա-
թարեալս, որք նոյնպէս յերկարեալ ընդ նոյն կողմն ա-
րևելից՝ յարին՝ի զառ՝ի վայր ապառաժուտ գժադարակին
բարձրաւանդակ տեղի, ուր կառուցեալ կայ Ս. Գրիգոր
Լուսաւորիչ վանք և եկեղեցի, կրեր չինութեանն ժա-
մանակաւ քան զայլս, այն է յամի 1215, և անաղարտ և
անարատ մնացեալ քան զամենայն չինուածս Աչոյ. ուր,
վկայէ չինողն Տիգրան Հոնենց՝ պաշտօնեայն Զաքարեայ,
կայր յառաջն մատուռն մի Տիրամօր նուիրեալ, և կոչէր
Մաստաղան Աստուածածին. և « էր քաղաքին և մեցառ
» տեղի »։ Արժան է ընդհատանել զողջոյն զերկայն արձան
յիշատակին, որ գրեալ կայ՝ի հարաւոյն որմն եկեղե-
ցւոյն. յորում յիշէ մի ըստ միոջէ զտուրս կրպակաց, այ-
գեաց և այլոց տեղեաց՝ ի հասոյթ վանացն և եկեղե-
ցւոյն կարգելոց, և զահմանս սոցին, հանդերձ անուամբ-
քըն. և ունի այսպէս.

✠ Թվ։ ՈԿԴ։ Շնորհիւն եւ ողորմութեամբն Աստուծոյ յորժամ սիրեց քաղաքիս Աչոյ ։ հզօր եւ տիեզերակալ Ամիր Սպասալար եւ Մանդատուր-




44. Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանք։

թա խուցէս Զաքարիայ եւ որդին նորա Շահնշահ եւ Տիգրան ծառայ Աստուծոյ որդի Սմբատաւրենց [2] Սուլեմա։ յաղագէ Հոնենց վան յերկար կեն-
դանութեան տ(եր)անց իմոց եւ որդոց նոցայ չինեցի զվանքս Սուրբ Գրի-
գորոյ որ ի հինն Մատուռն Աստուածածին կոչիւր որ էր քաղաքին եւ մեցառ
տեղի ախտ (?) զոր իմ հալալ դանճով գնեցի ի հերէնէ տէրոց եւ բազում
աշխատութեամբ եւ դանճով պարսպեցի շուրջանակի. չինեցի զեկեղեցիս յա-
նուն սրբոյն Լուսաւորչին Գրիգորի եւ զարդարեցի բազում զարդիւք փըր-
կա(կա)ն նշանաւք սուրբ խաչիւ ոսկիւք եւ արծաթիւք եւ պատկերագործ խա-
տերով զարդարել ոսկով եւ արծաթով եւ ակամբք եւ մարգարտաւ եւ կան-
թեղաւք ոսկի եւ արծաթի եւ նշխարաւք սրբոց առաքելոց մարտիւրոսաց եւ

1 Մատթէոս Ուռհայեցի։
2 Գուցէ է ընթերցուածդ, Թերևս Սմբատ որդոյ։


մասամբ աստուածընկալ եւ տէրունական խաչին եւ ամենայն ցեղ սպասք յոսկոյ եւ արծաթոյ եւ բազում զարդաւք չինեցի զամենայն ցեղ զբնակա- ցան վանականաց եւ իշխանաց եւ կարգեցի ի սմայ քահանայք պատարա- գողք մարմնոյ եւ արենն Քրիստոսի որ անխափան պատարագ մատչի վասն արեւշատութեան տ(եր)անց իմոց Շահնշահի եւ որդւոց իւրոց եւ վասն Թողու- թեան մեղաց իմոց. եւ ետու ընձայս ի վանքս սուրբ Գրիգորոյ հայրենիք զոր գնել էի գանձով եւ վճռամբ հայրենէտիրաց եւ զոր ես ի հիմնէ չինել էի զայ- սոսիկ. Գաւառիսոնեց գեղին կէսն եւ Քարհոին ե գանկն, Մշակունեց կէսն



45. Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

Կապղուցն կէսն, Յամաքծովն բոլոր, Խուզած Մահմունդ ի Կարուց յերկիրն ու Յընդոյ ը դանդն, Խաչորկանն, եւ վնդուկն ի քաղաքիս, հայրենիք բազ- նեան ու միւն ի մոգանիս, խանապարն կուղպակնովն ու կամարակապ վնդուկն ու մարագն հետ բաղնեցն ատր Սարգսի ախոռն ու մարագն զոր գնեցի կալն եւ ը ակն ձիթահանք եւ ախոռնի ու մարագնի վանիցս ի դռանս վանիցս առչեւ պա- հէզն ու լանջն ինչուրվի Գլիճորի դուռն ինչվի գետն ու գետեզերն պահէզն զոր գնել էի եւ չինել Գիլնադռանն կէս ակն Ջաղաց Թարսի մի բոլոր ու մին այլ Թար-


փին չաք ը ատր Գլիճորին Ջաղաց ա Թարսին չաք ը ատր ի բէչքէնակապէն ինչուրվի կարմունջն գետին կէսն իմ գնած էն. Պապենց խանաբարն գ դանգն ու դռան կուղպակին բոլոր տներ Հատէցոնց զուկակի քաղաքիս դռանս բա- զում հողեր գնած. այգի ա Յերեւան այգի ա Յոլական այգի ա Կոշ. էգի ա Ամրոճ որ Սաղոան կոչի, այգի ա ի Մրեն այգի ա ի Ծմակին որ կաթողի



46. Յատակաձև Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ:


հող կոչի. զայս որ գնած է. եւ այլ բազում գրաւկնած էր, զոր ոչ ար- ձանագրեցի վանացս էի ավել ու թէ ազգն Թաւրեն ոսկին վանացս զոր ու- րիշ իմ անդարձագրին եմ գրել. եւ զվանքն Բեհեննց կոչեցեալ զոր ես չի- նեցի եւ նորոգեցի ընձայաւք փարթամացուցի ամէնովն. սուրբ Գրիգորոյ վանացս հոգացողս հոգոյ զորպիսութիւն. արդ էթէ ոք ի մեծաց կամ ի փո-

քունց յիմոց կամ աւտարաց զոր լինչ արձանագրիս է խաբանել Յանս կամ թէ իրք չորթէ յարդենցս որ ի սմա հաստատել է կամ պյիշատակ զմեղուցեալ ծառայ(ի)ս Աստուծոյ խաբանէ պինչ և իցէ պատճառաւք այնպիսին ուշ րոշել լինի փառացն Որդոյն Աստուծոյ եւ զպատիժս Կաենի եւ պՅուդայի ժառանգեսցէ ի գլուխ իւր եւ երիք սուրբ ժող(ով)ոյն եւ թ դասուց հրեշտաց (կա)ց նզովել եղիցի եւ մեր մեղացս համարս տացեն առաջի Աստուծոյ եւ կամ արարքն եւ հաստատուն պահողքն աւրհնին յԱստուածոյ. ✠. ԻԳ՝ ԳԶ։



47. Մէջ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ։

Եկեղեցին՝ արտաքին և ներքին ձեւով բերդ պնմանութիւն կամարակիերէն. պարզագոյն ևս գոլով, զերծ ի գոթական կերպարանացն. 14 Զ. է ընդ երկայնն և 10 ընդ լայն. մի միայն ունելով դուռն՝ յարեւմտից. կողմնակի երեքն մեսասան զոյգ նրբին սեամբք բաժանեալ են ի տասն երկայն կամարաձեւս, իսկ հակառն և թիկունք ի վեց, եօթն եօթն զոյգ սեամբք, ընդ ընտ 72 սիւնակք. իւրաքանչիւր ի զուգին ի միում խարսխի հաստատեալ է, որպիսի են և սիւնակք դմբեթին՝ յերկոտասան կամ յութևտասն բաժինս տրոհելոյ. յորդունս կամարացն, ի բարւորս լուսամուխն և յայլ մասունս բազում մանր դրաւոյք են վայելուչ քանդակաց, մանաւանդ ազդ ազդ հաւուց։ Անհուն է մէջ եկեղեցւոյն, այլ յերկոսին կողմանն՝ ուր որմք արտաքուստ ի ներքս անկիւնաձև գոգացեալ են՝ որպէս զկաթողիկէին և առաւել քան զնոյն, յերկոսին տեղիս մէն մի սիւնք յեցուցեալ կան, յորոց ձգեալ կամարք, որպէս և յորմոյ խորանատեղւոյն, միանգամայն ամբառնան զդմբեթն գեղեցիկ, որ ունի ութ լուսամուտս անձուկս. իսկ եկեղեցին՝ վեց։ Ա՛ս խորանն ասի և անսի են մատրունք կամ աւանդատունք փոքունք կրկնայարկք, ունելով մէն մի պատուհան։ Նշանաւոր ընորհք են եկեղեցւոյս զեղանկար պատկերքն հնախառն իմն վայելչութեամբ[2], յորոց ասկ ի Թուրքաց Նազրէդ գիխակ (նկարէն եկեղեցի) կոչի. և նկարագրեն համարին Ցոյնք, այն պի յանարէն գրեալ են անուանք սրբոցն նկարելոյ. գոնեն և յոյն և վրացի արձանագիրք ևս յեկեղեցւոյս. Թերևս սոքա իցեն կոչեցեալքն ի Տիգրանայ Պատկերագործ խառներն։ Ըստ Մաթեւիէվի, ի կամարամիջի գրանն է պատկեր Փրկչին, յորոյ մի կողմն էջքն ի խաչէն, ի միան Տիրամայրն, հրեշտակք և սուր մի ի քան. ի ներքին հնոյս եկեղեցւոյն՝ Տիրամայրն Աստուածորդւովք ի գրկի. Սեղան յետին ընթրեաց, և Սուրբք Ղեկողայոս, Ղեւոնդիոս, Աբրահամէս, և այլք, յատնագիր անուամբք. ի կողմնական որմունսն նկարեալ են Մուտք Երուսաղէմ՝ իշով, և Վերափոխումն Կուսին։ Ներկապեղով ևս գրեալ է ի վերայ կամարաձև բարւորի գրանն յատարէն տուն սաղմոսին. « Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո », և ի ներքոյ վերայ ցերէն՝ միւս տուն. « Այս դուռն Տեառն է և արդարք » մտանեն ընդ սա »։ Կից է եկեղեցւոյն և գաւիթն կամարակապ փոքր և քառակուսի, այլ կամարացն կործանեալ սակաւ ինչ մասն մնայ կանգուն, սեամբք չորիւք, երեք յարևմտակողմն և մի ընդ հարաւ, համանման եկեղեցւոյն վայելուչ ձևով և քանդակօք։ Ի հիւսիսոյ գաւթիս և որմնակից՝ մատուռն մի կայ ընդ լայնութեամբ նորին, նոյնպէս կործանեալ, անելով և սորա նկարս ոչ սրբոց միայն այլ և հաւուց և բուսոց։ Իբր հարիւր ամաւ զինի Տիգրանայ (1310) Մաթէ ոմն պաշտօնեայ Շահանշահի ի զարմէ Զաքարեանց արձանագրէ յարևելեան որմն եկեղեցւոյն, և ծանուցանէ զոր սորան.



48. Յատատուն Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ։

Թվ։ ՉԾԹ. Ա՛թապագի Աւիր սպասալար Շահանշահի Մծխինաւ բարթու խուցէս Մաթէս և իմ կենակիցս Թէնի եւ իմ եղբէր Մարկոս յայս ժամս որ Պարոն ողորմեցաւ զվանքս մեզ էրէս վաղ բարեպաշտ Տիգրան չուր էր բերել ի վանքս ու ի յանտիրութենէ խաղտել էր ու կորել մեք վասն արեւշատութեան Պարոն Շահանշի եւ Թուանդղին եւ երկնց որդուն Զաքարի եւ վասն մեր հոգուս յիշատակ բերաք զչուրս եւ հաստատեցաք յիշեցէք ի Քրիստոս։

Եկեղեցւոյս յայսմիկ են և երկոքին խաչվէմքս մահ- արձանք (Թիւ. 49 և 50) մին ունի զայս գրուած.

Յանուն Աստուծոյ. Ես Յովանէս... վանէ որդի Զորավանիկի կանգնեցի զխաչս զայս.

1 Ա՛յսինքն Իսրայել Ֆրէնչ։

2 Դեսիէ զայս վկայէ. « Peintures d'un style très-curieux et d'une belle conservation... Tous les sujets ne sont pas de la même main, ni peut-être de la même époque ; car il y en a qui sont très défectueux, tandisque d'autres ne dépareraient pas une église d'Europe ». — Texier, I. 99. — Նոյն նշանարեր ընդ պատկերքն և հայերէն անուանս։

Ուրբան անաղարտ մնացեալ է եկեղեցիս Ս. Լուսաւորչի՝ այնքան և աղարտեալ և անհետացեալ իմն են ամենայն ցեղ բնակարանք վանականացն և իշխանաց, զոր յիշէ Տիգրանդ յիւրում արձանին: Ընդ որս՝ և առաւել ևս ցանկալի էր գիտել զդիրս Բնիանց վանաց, զոր ինքն իսկ չունեալ ասէ և յանձնեալ՝ ի խնամս հոգացողի վանացն Ս. Գրիգորի: — Ի սորոսս քարափին վանացս յետ գետոյն կայ մատուռն մի փոքրիկ, և՝ ի հարաւոյ նորին աղտարակը մեծ և փոքր:

30. Երևին ձեռագործ քարայրք կամ սենեակք փոքածոյք՝ ի կողս քարափին և ձորոյ Ախուրենայ, յորոց



49. Խաչվիմ՝ի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոջ:

սակաւուք՝ի բացեայ են երկու քարայրք՝ի տորև զառիվայրին ընդ արևելս կոյս, և առ երի մուտք ցածուն, ընդ որ ուղի տարերկրեայ տանի նախ փոքր մի՝ի քաղաքն կոյս, ուր և երևի եկեղեցի մի. և չորք քարափոր դրունք, որոց մին հանէ ընդ հարաւակողմն ընդ գետոյն[1]. այլքն հանեն՝ի փողոցս իմն բաղադաձև ճղճղելոյս ընդ քաղաքացն՝ի հարթ յատակի. որոց մին, ասեն, դնոյ մինչև՝ի քարածերպս Ծաղկոցաձորոյ. իսկ առաջինն ընդ խոր և զառ՝ի վայր իջանէ, և անցեալ ընդ գետափն հանէ՝ի գլուխ բլրակի միոյ, յորում և աշտարակ կայ կիսակործան, ուր Ռուսաց պահնակս կարգեալ էր երբեմն առ արգելով զխախուտ գաղթելոցն՝ ընդ այն ճանապարհ թաքուն: Ցատակն այն՝ի սկզբան խճախառն է և լայնօրա, և ուրեք ուրեք մղին՝ի վիրս ջրոյ գետոյն, վասն որոյ և զանգիտելի են արդ անցքն, և՝ ի ոմանց թուրքարէն կիսոհն կիշմիզ կոչին (անդարձագնաց): Որ զիարդ և է՝ ցուցանէ ոչ փոքր ճարտարութիւն և արուեստ զնորոց նախնեաց, ութ հարիւր ամաւ յառաջ զԱխուրեանն Անոյ նախադաղտիար կարգելով Դամիզայն Լմնտնի. Թուի յղզուշութիւն և՝ի փրկանս հնարեալ զայս վասն վտանգաց պատերազմաց. սակայն են ոմանք՝ի մերոց յետին գրոց՝ որ ոչ միայն յայսմ վայրի՝ այլ և ընդ բովանդակ քաղաքացն ասեն լինել գետնափոր, կամ թէ ներքնայարկ քաղաք մի ընդ վերնումն, յորում՝ի դէպ է անձն ունել դառնել այլևայլ տեղիս՝ի պէտս իրաց իրաց, գոյ և հանգստարանս և մատուռս[2]:

Նման կամարակապ անդզուար ճանապարհին՝ զոր տեսաք՝ի Հր. կուսէ վանաց Ս. Գրիգորի, կայ և՝ի Հ. ընդ զառ՝ի վեր գետոյն, և հոգակաս ևս քան զառաջինն, իբրև 65 Զ. երկայն և 14 լայն. երկուստեք որմունք են, և՝ի վերայն կամարակապ, ի՝ներքոյ սահիճանք համակ քարակոփք. ոչ ուղղակի ձգի փողոցդ, այլ յօլ և յահեակ խոտորեալ, և առ անկեամբքն պատուհանք, որպէս և յայլ կողմանս ուրեք. յառաջելով ընդ արևելս՝ ընդլայնի փողոցն. քարինք որմոյն սրբատաչք և յատակագոյնք ևս են, թէպէտ և վերնայարին խաթարեալ և փլեալ ուրեք ուրեք, որպէս և կամարքն առաջինք. փողոցն այն լայնարձակ հանէ յհեկեղեցեակ մի կամ՝ի զոյգ մատրունս, ի կարմիր ապիւսագոյն քարանց կերտեալս, մէն միով խորանաւ, որք ամենևին անաղարտ մնացեալ են, այլ չունին արձանագիր, վասն որոյ և անանուն. այլ չգիտեմ որում մականբերութեամբ Ս. Աստուածածին կոչէ զսա ոմն յԵրուսղէմացի քննչաց քաղաքիս[3]: Մի՝ի մատրանցն բոլորչի բազմակողմանի ձեւով, հազիւ երկու Զ[4]. տրամագծաւ, ունի լուսամուտս չորս, նոյնպէս և զմբեթ իւր ամբարձեալ՝ի վերոյ վեցից որմասեանց, պէսպէս զրաւազօք հատուց. միւսն քառակուսի երկայն փոքրագոյն ևս է, երկու լուսամուտիւք, և երկու խորշիւք՝ի կողմանս

1 Մուտքերէն կոչէ զայս Galerie couverte, ըստ Պրոսէի, allant à la rivière. Թումանեանց, Un chemin souterrain.

2 Յետ գրելոյ զայսոսիկ՝ի ժամանակի ապագրութեան գործոյս եհաս՝ի ձեռս մեր փորձ տարւոյս (1880), յորում Յ. Գէորգեանց պատմ., Ճարտար լուսագրող ընկերացն (Յ. Փիւրքճեան) առաջնորդութեամբ Ցաշկի մոց գնացին, մնալով՝ի տարերկրեայ քաղաքին, ոչ յայսմ կողմանէ, այլ յահեկէ աւերեալ զրան արտաքին պարսպին՝ որ՝ի կողմն Ծաղկոցաձորոյ, ուր անձուկ մուտք են՝ի ծերպ քարաժեռից, ընդ որ հարկ է զառաջինն սողոսկ մտանել, և յառաջել. այլ ընդ հուսկ բարձրանալ վերին յատակն կամ խոռանայ ներքինն, և տալ համարձակ գնացս ընդ անձուկ փողոցս՝ի միջի թաղանդ որոց, որք բաւական խոտորին յայս կոյս յայն կոյս, և առ երի կան տնակք և կրպակք մանուանք, որոց յայտնին և գրունք և գարանք. այլ լուսամուտ ոչ երևեցաւ, զի ճրագաւ չըրջէին. բայց հողին կամ օդ ցուրտ ընչեր ուտեք և տապնապեցուցաներ, աւելի քան զ20° նուազելով անդ ջերմութեան քան յերկաս քաղաքին, վասն որոյ ոչ հանգուրժեալ աւելի քան զկէս ժամ՝ ելին արտաքս. բայց ուղեցոյցն ասէր յամի 1876 ընդ ապայից ոմանց ժամս չորս չջրեալ և ոչ գտեալ զեզ. ուրեք ուրեք պարիսպք ստուարք արգել լինին յառաջելոյ. ուրեք և ջուրք մնալք կաթեն՝ի վերուստ, որոյ նիւթ է կրաքար և ածղաքար: Երևին և յայլ կողմանս մուտք՝ի գետնաքաղաքն, այլ խցեալք կամ խանգարեալք են:


3 Ապիւ՝ի յատակագծին Անոյ (թիւ. 4) կոչէ Mère de Dieu.

4 Հայատառն լրագիր, (թիւ. 127) ասէ զչափն 4 1/2 զոյգ:

սեղանոյն. մի մի զրունք են նոցա ընդ արևմուտս, ուր և գաւիթ վեցքուանք սեամբք, ի կարմիր քարանց. յորում ասի Թաղեալ վեցից միակեցայ, և առ նոցին յիշատակէ համանիւ-խաչվէմք՝ի վերոյ դրան փոքրագոյն մատրանն. իսկ՝ի վերոյ դրան մեծագունին՝ նրբագոյն ևս քանդակք են զրաւագեայք: Թերևս այս էր տեղի Բնիանց վանացն չինելոյ՝ի Տիգրանայ. ցարդ երևին աւերակք բնակարանի յարևելից մատրանցն, զոր ոմանք ասէ ապարանս լինել արքայազտեր. և բացագոյն ևս անբաւ աւերակք են քարակոյտք, ընդ որս երևին և նշխարք հաստահատոյց որմից յարևմտից կուսէ եկեղեցւոյն. զորս մի յերջոպացի տեառագոյ հակայակերպս կամ կիւկլոպեայս ասէ. և՝ի հիւսիսոյ կուսէ՝ մնացուածք հզօր աշտարակաց:

Հուսկ՝ի սոսա և՝ի ձորակին Ախուրենայ՝ կան այլորակ չինք, Բաղանիք մի, և դերբուկք աւերակաց կատեալ գնովաւ գրեաթէ մինչ՝ի ձեղունն, ընդ որս արդ՝ի վայր իջանեն՝ի յատակն, որ է քառակողմն՝ երկայն իրր 18 Զ. լայն՝ 14: Ի հինգ բոլորակս զատուցեալ է, մի մեծ՝ի միջի և չորք մանուք յանկիւնսն, և՝ի միջի նոցին՝ զմեծ բոլորականն՝ չորք քառակուսի սենեակք, որք ցած գրամբք հաղորդին ընդ միջակայն, և՝ի վերոյ կողմանէ քարելով իմն տերևաձև կամ սրանկիւն աւարտին. նմանաձև են և կամարքն ձգեալք. երկու ևս մեծագոյն սենեակք են արմով զատուցեալք յայլոցն ամենեցուն: Երևին ցարդ տեղիք ծորակաց ջրոյն, այլ խանգարեալ է ամենայն: Եւ դի մերձ են բազանիքս վանաց Լուսաւորչի դատաստակերտին Տիգրանայ, հաւանութեան է թէ այն էր անուանեալն յարձանի միում՝ Հռնենց բաղանիք, որ է մանաւանդ սորին Տիգրանայ, որ և յիւրում յերկայն արձանագրութեանն յիշէ գնայդհնիք բաղնիսն ևս տուեալ՝ի հասոյթ վանացն. ՝ի նմին արձանագրութեան յիշէ և զայլ բաղանիս՝ի կողմն հրապարակի քաղաքին: Ճանապարհորդ ոմն անգղիացի որ իրր յիսուն ամաւ յառաջ (1834) գննեաց զԱնի, բազում բաղանեաց նշանս տեսանէր անդ[1]: — Բաղանիքս այս կան՝ի Հ. Ե. Ծայր քաղաքին և յանկեան ձորակացս Ախուրենի և Գայլեձորոյ. յորմէ և անդր հիւսիսակողմն քաղաքին է և մեծ պարիսպքն:

31. Յարևելեան ծագ հիւսիսակողման քաղաքին և հուսկ՝ի պարիսպս Գայլեձորոյ, յարևմտից կուսէ քաղաքացն և ոչ կարի հեռի՝ի նմանէ՝ կայ յետին՝ի ծանօթ նչանաւոր հին և հայակապ չինուածոց Անւոյ, Ս. Փրկիչ եկեղեցին, փոքր տարածութեամբ, այլ գեղեցիկ և համբաւին. բոլորչի է արտաքուստ, ՝ի տորև ութանկիւնի ունելով խարիսխ 13 1/2 Զ. տրամագծաւ, և՝ի վերոյ յ'12 անկիւնս[2] բոլորեալ, գորշագոյն մեծամեծ սրբատաչ վիմօք կերտեալ, և նուրբ սեամբք՝ի միջոցս կամ յանկիւնս կողմանցն. իսկ ներքնակողմն եկեղեցւոյն յութ կիսաբոլորս բաժանեալ է, և յիւրաքանչիւր միջի մէն մի սիւն միաստանի. յորոց վերնախարխանց և՝ի համարձեայ կողմանց հաւաքեալ ձեղունն՝ գործէ բոլորակ ամբարձիչ գեղանի երկայարիեան գմբեթին, որ ցարդ կանգնուն



50. Մահարձան՝ի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոջ. (տ. էջ 79):


է քարեղէն ելանելիօք ընդ որմամէջն, որ և տանի հանէ մինչև՝ի տանիս եկեղեցւոյն և գմբեթին: Յարևելակողմանն է լուսամուտ բոլորչի, խաչվէմ մի մեծ և քանդակ արծուի: Երկար և հին արձանագիրք փորագրեալք յարտաքին կողմանս որմանցն, յայս առնեն՝ թէ ոչ զհինաարկութեանն այլ զաւարտմանն ասի, այն է 1035, և զչինողն Աշղղարիայ, զորոյ տեառք ձեռակերտս և յիշատակս՝ի Ս. Գրիգոր Ապուզամրենց (24). նոյն և ասա՝ի Ս. Փրկիչս՝ զրե կրկին յիշատակս կարևոր գիտելեօք վարչութեան եկեղեցւոյն, յամս 1035 և 1036.

1 Several Baths. — Wilbraham.

2 Ոմանք որոց Ապիւ քառանկիւնի կոչէ Église en Icosigone. Իսկ Մուտքերէքն նմանն երևեցաւ հուշակաւոր մկրտին Էջմիծնի որ Յերուսաղէմ:

Ի ՆՋԴ Թուականիս ես Աղլղարիպ մարզպան եղի հրովարտակ ի Սբմ պատս չահանչահի առ կայսրն Յունաց Միխել ի Կոստանդինուպոլիս. եւ չատ չանիւ եւ մեծածախ գանձիւ բերի մատն ի սրբոյ խաչէն եւ եկեալ կատարեցի զտաճարս զայս եւ զնչանն յուսո կանգնեցի ի պատկ հարսինս Քրիստոսի եւ եղի լուծ սպասաւորաց եկեղեցոյս զկիւրակէին աւրն գիշերապաշտաւն առնել մինչեւ ի գալուստն Քրիստոսի. եւ քահանա որ մեռանի ի սուրբ Փրկչիս [ի] մի կալցեն յեկեղեցիքդ. եւ եթէ ոք ի քահանայից եկեղեցոյս եւ յիմ սպասուցս եւ կամ ի գրենոյս յափշտակէ կամ ծախելով կամ գինչ եւ իցէ պատճառանաւ եւ կամ զագահութեան զհետ երթա եւ զեկեղեցոյս մուտքս խորէ եւ սուրբ Փրկչիս ի պէտս ոչ անցուցանէ ի յԺը հայրապետացն նզովեալ լիցի եւ որ զԳրգոր երիցու որդիքս յեկեղեցապանութենէ հանէ կրկին անիծիցդ պարտական լիցի իսկ կատարիչ գրիս աւրհնեալ լիցի։


ԶԳէորգ գրիչ յիշեալիք ի Տէր.



51. Բաղանիք։

✠ Յամս աստուածապատիս եւ հոգեւոր տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի եւ ի թագաւորութեան Սմպատա որդւոյ Գագկա Շահանշահի ի ՆՋԵ թուականիս ես Աղլղարիպ մարզպան որդի Գրիգորս իշխանի եւ թոռն Ապուղամրի եւ եղբայր Վահրրմա եւ Վասակա չինեցի զսուրբ Փրկիչս ի մայրաքաղաքս յԱնի չատ չանիւ եւ մեծամեծախ գանձիւ եւ գնեցի հալալ ընչիւք իմոց կուղպականի։ գ։ եւ ձի... եւ այգի եւ հողեալ եւ ետու ի սուրբ

Փրկիչս եւ (զարդա)րեցի ոսկւով եւ արծաթւով եւ ականքք պատուականաւք եւ ետու աւետարան եւ տաւնական եւ նո... ին եւ նոր կտակարանաւք եւ կանգնեցի միլ առ[1]... րկչիս. արդ եթէ ոք ի մեծաց կամ ի փոքունց... (ի սպ)ասուցս եւ կամ յայլ իրացս որ ետու եւ յափշտ... խափան լիցի յԺը



52. Սուրբ Փրկիչ Ակեղեցի Անւոյ։


հայրապետացն նզովեալ լիցի.. (յետ ելի)ց իմոց յափշտակէս. եղի լուծ ի վերայ սպասաւորաց ե... զվարդեվառին [ետունն անխափան կատարել մին(չեւ ի գալուս)տն Քրիստոսի. ընդ նմին եւ զ... (որ)դւոյ Գագկա Սմպատա չահանշահի[2]։

1 Թուի՝ առ Դրան Սուրբ Փրկչիս։

2 Սմբատա այս է Գ, կոչեցեալն սովորաբար Յովհաննէս։

Ցաւելու և Պետրոս կաթողիկոս ՚ի Նմին ամի, 1036, ՚ի տուրս Աղլաղրիպայ, և հաստատէ զնոյն արձանաս.

Ի ՆՁԵ թուականիս Հայոց եւ ի մեծափառ թագաւորութեանս հզաւր եւ տիեզերակալ Սմբատա որդւոյ Գագկա Հայոց եւ վրաց չահայնշահի կամ եղեւ ինձ Տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի տալ զայգին Աչնկի որ ի մեր կորդւոյ արկած էր քրիստոսասէր մարզպանին Աղլաղրիպա որդւոյ Գրիգորոյ Պահլաւունւոյ վասն առաւել սիրոյն եւ երախտեացն զոր ծառաեալ էր զսուրբ Լուսաւորչի աթոռս. արդ տուաք զմնով եւ ծառվք պատղաբերովք եւ անպտղաւք եւ խոտագետնովք եւ գ̄ աւր ջուր ազատ ի խալաչ[1] եւ ի գեղջէ յամենայն հասուց եւ գրեցաք մեծաւ հաստատութեամբ զկտակս զայս. իսկ նա ընծաեաց յիւր չինեալ եկեղեցիս ի սուրբ Փրկիչս բաժակի վասն փրկա-



53. Ցատակաձև Ս. Փրկչի:

կան խորհրդոյն յիշատակ հոգւոյ իւրոյ արդ եթէ ոք զապարանսդ զոր չինեալ է Աղլաղրիպա առ սուրբ Փրկչիս աւ[2]... կամ զոր ինչ տուեալ է ի պէտս եկեղեցւոյդ եւ որոշէ ոք եւ կամ յապարանսդ բնակի եւ զեկեղեցւոյդ հոգւոյդ զոր ինչ պիտոյ լինի եւ երկիւղիւ Աստուծոյ ոչ հոգայ ի սուրբ Լուսաւորչէն եւ ի նորին աթոռակալացն մինչեւ ցմեզ յամենեցունն նզովեալ լիցի. իսկ կատարիչ գրոցս աւրհնեալ լիցի:

1 Թուի բերդ նշանակել, ֆալչ, քան զտուրան խալեն:

2 Որպէս Թուի՝ առնէր:

Եկու և այլ հին արձանագիրք են նուիրատուաց դրոշմեալք ՚ի տեւողական վէմն, երկոքին ևս զուգաժամանակք, յամի 1041. ՚ի միում ընդ Ս. Փրկչի յեղի և Ս. Յովհաննիս, որ Թուի մատուռն կից կամ մերձ նմին.

✠ Ի ՆՂ: Թ ի հայրապետութեան Տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի եւ թագաւորութեանն Սմբատա որդւոյ Գագկա չահանշահի ես Քրիստափոր ծառայ Աստուծոյ ապաւինեալ յողորմութիւնն Աստուծոյ եւ ի սուրբ Փրկիչս եւտու զիմ գանձագին հայրենիքս է տուն ի սուրբ Փրկիչս վասն մեղաց իմոց թողութեան եւ հոգւոց վրկութեան. եւ պարտին քահանայք սուրբ Փրկչիս յամէն ամի ի չորս եկեղեցիքդ յեկեղեցին զ̄ աւր ժամ առնել անխափան մինչեւ ի գալուստն Քրիստոսի. արդ եթէ ոք յիմոց կամ աւտար ոք հակառակ հոգւոց իմ յայտնեսցի եւ զարձանագրեալդ անփոյթ առնէ եւ իմ աներոյս յապշտակէ գատապարտեալ եղիցի ի Քրիստոսէ եւ մեղաց իմոց պարտական լիցի ի գալստեանն Քրիստոսի եւ անէծս մշտնջենականս ժառանգեսցէ. իսկ կատարիչ գրիս աւրհնեսցի:

✠ ՆՂ: Թ ես Շահիկս եւ իմ որդիս Վարդս տուաք զմեր կորդւս չինած տունս եւ զբակս ի սուրբ Փրկիչս եւ ի սուրբ Յոհաննէսեան յիշատակի . . .

Ձետ ամաց իրրև հարիւր երեսնից, այսինքն յամի 1173, Տրդատ աւագերէց Աբծոյ և երիցակինն Թուշուշ նորոգեն զեկեղեցին՝ որ գանձագին հայրենիք լեալ էր նոցա, կարգելով ՚ինձմա բաղամ հասոյթս. յիշեն զքառեսխին խորանս, որք են չորս եկեղեցիքն կոչեցեալք յարձանին Քրիստափորի, և Թուին աւանդատունք կամ մատուռք տաճարին և չերեփին արդ. և բաց յայնցանէ չինէ և ժառանգս ամարանոց և ձմերանոց. և արձանագրէ այսպէս.

Յամն աստուածապատիւ եւ հոգեւոր Տեառն Բարսղի Հայոց կաթողիկոսի եւ յամիրապետութեանն բարեհանուն Սուլթանի որդի Ամիր Մահմատի Թոռն Մանուչէի: յամի: ՈԻԲ: Թու: արդ ես Տրդատ քահանա որդի Սոսթինիս քահանաի Թոռն Գէորգա աւագ երէցս Աբծոյ եւ զուգակից իմ Թուշուշ աղախին Քրիստոսի յուսալով յողորմութիւն Աստուծոյ չինեցաք վերստին զմեր գանձագին հայրենիքս զսուրբ Փրկիչս շատ աշխատութեամբ եւ նորոգեցաք յառաջին պայծառութիւնն ոչ ունելով զոք աւգնական այլ միայն զբաւականն յամենայնի որով կարողացաք եւ կատարեցաք այդ եւ ընծայաբեր եղաք ի սա ի սորին չնորհէ չնորհս զնորս հնոյին աստուածագիծ պատգամաւ նա եւ զզարդս սպասուց ի քառեսին խորանն որ կանխեցին հանին ի սեղան զարդարեւ ուխտեալ զհաճելին կամացն Հայր պատարագ. չինեցաք սմա ժամատունս ամարանո եւ ձմերանո եւ ի կեանս մեր պաշտեցաք ի սմա զեկաւորս ճաղարդ[1] հաց. արդ ես Տրդատ երէց եւ լծակից իմ Թուշուշս ի մեր հայրենի ժառանգութեանց ի սպաս պիտոյից հացի եւ գինւոյ

1 Ոչ գիտեմ ստոյգ ինչ ընթերցուած բառիդ զոր չիմանամ, թէ պարտ էցե զառանն ճ համարել թիւ (հարիւր):

տուաք չորս այդի յԱ.րուճ զԱաղար եւ զՇլիկն և զԿովրածն եւ Բլար խաչկայն եւ ք̄ տուն եկեղեցւոյն գիմաց մեծ արտ[1] Բեխենցն ճ̄ կապճով մին ի միքէսն ի Ջրվտղին Բեխենցն այս է ի պղպղի. արդ ընդ այսր աչխատութեան եւ պարգեւի պարտին ժառանգորդքն զկնի մեր կատարել ամենայն ամի: խ: մի ի Տրդատա ի տիկին Խուշուշին եւ: ք: Սարգսկանն որդւո Սողոմոնի անխափան կատարել զյիշատակս մեր մինչեւ ցծագումն Ղազարոսի Աստուծոյ. եւ մի ոք իշխեսցէ չորթել յարդեանցս հաստատելոց ի սուրբ Փրկչէս. ապա թէ ոք զատուսցէ եւ որոշեսցէ զյիշատակս մեր եւ ինքն որոշեսցի ի վաստաց Ղազարոսի Աստուծոյ ՅԺԸ կոչն նզովեալ եղիցի ի մահ եւ ի կեանք. կատարիչք գրոցս աւրհնեալ եղիցին. ամէն:

Յետ այլոց ևս ամաց 120ից (1291), Մխիթար ոմն չինէ զանգակատուն և բերեալ դնէ ՚ի նմա զանգակս ՚ի վե- ւարճութիւն լսելեաց. իսկ զեկեղեցին գերագրական յաւելուածով կոչէ Աչխնաթրկիկ.

Ի թուի: ՋԽ. ես Մխիթար որդի Շերասցի որդի Զուսի Միսալուքենց[2] սուրբ նչանս եւ ի սուրբ Ամենափրկիչս եւ բերի զանգականիս եւ չինեցի զանկակատունս ի հալալ արդենց իմոց. որք զվարճանէք ի ձայնից սորա ասա- ցէք Տէր Աստուած ողորմեա Մխիթարա եւ ծնողաց իւրոց. սպասաւոր սորա m̄ մատուցէ պատարագ: ա: Սուրբ Գրիգորի:

Ցիշեալ Սուրբ Նչանն, ոչ իմանամ եկեղեցի՞ նչանակէ եթէ խաչ մի պատուհան: — Դարձեալ յետ 50 ևս ամաց (1342) վասիլ պաշտօնեայ Աթաբակ Վահրա- մայ Զաքարեանց, ժառանգորդի կամ Պատրոնի քաղաքս, նորոգեալ է զմբեթ Ս. Փրկչի, որ արդ վերստին կորուսեալ է զնորոգութեանն.

Թվ. ՉՂԱ. չնորհիւ եւ ողորմութեամբ բարերար եւ մարդասիրին Աստուծոյ ես Աթաբակ Վարհամ որդի Իւանէի որդուն մեծին եւ հզաւրին Զաքարիաի վերստին նորոգեցի զկումբէթ Սուրբ Փրկչիս վասն երկար կենդանութեան իմոյ եւ յիշատակ մեզ եւ նախնեց մերոց ⊙ արդ ես Վասիլս որդի Գրիգորս առաքեցա Պատրոնին հրամանաւն Աթաբակ Վարհամա եւ եկել կատարեցի մեծ չանիս եւ աչխատութեամբ զհրամանեալս ինձ. եւ սպասաւորք Սուրբ Փրկչիս ընձա մատուցին մեզ զվարդավառին կիրակէն ը պատարագ:

Եւ այս մի ՚ի յետին յիշատակաց է, ոչ միայն եկեղեցւոյ՝ այլ և համօրէն քաղաքին Անւոյ: — Ի նչանակելոցդ յարձանն չերևին այժմ առ եկեղեցեան և ոչ մի. այսինքն ոչ Աչպարանքն և ոչ Միհի չինեալ յԱլաղյաբիսէ, ոչ ժամատունք Տրդատայ և ոչ զանգակատուն Մխիթարայ. այլ դերբուկքն Թերևս ծածկեն զհիմունս նոցին: Բայց Նոր այցելուք նչմարեն ՚ի նոսին և Զիրա- հաւս, գուցէ յիշատակեսն յԱլաղարիալի արձանագրին, ուր եղծեալ է վերջ բառին:

1 Ցօրինակին մէջ արտ՝ նիշնդն:
2 Փինուխեան կարծի ընթերցուածդ, մանաւանդ անուանքն


32. Ցետին եկեղեցի նչանակեալ ՚ի քննոզաց աւերակացն՝ կայ իրրև հաւասար հեռաւորութեամբ ՚ի Ս. Փրկչէ ընդ Մ. Հր., ՚ի կաթողիկէին ՚ի Հ. Ե., և յաւանց Գայլեձորոյն ընդ Հր., խաչաձև նաւիսք. և համարի Նուիրեալ Տիրամօր կոչի[3]. այլ որքան չէն կամ աւեր իցէ՝ ոչ գիտեմ, զի ոչ մերս Հ. Սարգիսեան յիշէզան և ոչ այլ առողջզրողք: — Ա. առորոտով բովանդակ երկայնութեան պարսպացն և հարուստ մի ևս ՚ի ներքս ՚ի քաղաքամէջն կոյ՝ ոչ նչանակի ոչ չէն և ոչ

և փակատան m̄, որ Թերևս նչանակէ յոմեանց ապ:
3 Այլիս, որ կոչէ Église de la Sainte Vierge. Տես Թիւ. 54:

աւերակ տեղի, յայտ է թէ խոպառ քանդեալ է և խոպանացեալ. այլ միայն եկեղեցեակ մի աւեր մերձ յաբևմտեանն երեցուն գրանց ներքնապարսպին, նման այնմ՝ զոր յիշեցաք ՚ի սկզբան՝ յորևելից ազգունի ապառանիցն:

Աստանօր գլխաւորին չրջաբերութիւն մեր գքաղաքաւն ՚ի ներքուստ, և ամենայն ցարդ ծանուցեալ տեղիք, զոր գտաք յիշեալ յայլ և այլ քննողաց ամայացեալն Անւոց. այլ յայտ է թէ մեծագոյն մասն ևս մնայ քննելի, որ է բովանդակ եռանկիւնաձև միջոցն այն քաղաքին, յորում չորս կամ հինգ չինուածս միայն տեսաք: Քննելի է և Ծաղկոցաձորն որ ՚ի համանուն դրանէն ՚ի Մ. Հ. պարսպոյ քաղաքին՝ գլխանի, և տակաւ անձկացեալ և

հարթեալ՝ բաժանի ՚ի բազում առակս, յորոց մին խառնի ընդ Ավուրեանն ձորոյ. յայնմհետէ նորին առ առաւել չանցանէ զքարընկեցիկ. յատակ նորա հող է, այլ երեսքն խամխամն քար կակուղ, և երկուստեք փորեալ և հատեալ ՚ի նոսին կրպակք անթիւք մեծ և փոքր, ոմանք երկայնաձև խորացեալ ՚ի սիրտ ձորափին, և ոմանք ՚ի մանր սենեակս հատեալ, ունին դրունս մուխ հաղորդութեան ընդ իրեար. և լուսամուտս՝ ոմանք միայն ՚ի վերուստ առ ՚ի չեզ. է ուրեք գի կրկին կարգք են կրպակացդ մի ՚ի վերայ միւսոյ. խցեալ են այժմ շատիքք մուխ նոցին. ստորինքն խափանեալք ՚ի յատակս սորելոյ քանցն, և վերինքն գժուարամատոյցք[1]: Աւհասարակ մնացեալ են երեք ձորոյն, որով և կրպականիք յայժ



54. Եկեղեցի Տիրամօր:

այսմհետէ և անկերպարան, թէպէտ և ՚ի սկզբան իսկ թուի թէ անհարթ էին երեք նոցին. յոմանս երևին և խորշք կամ դարանք, խիտ և մանուք: Ոմանք ընտ կարանս կարծեցին զնորոյդ և իրր արտաքին քաղաք[2], որպէս զքարափոր քաղաքս Վարձիոյ և զՈւխլեսցիխեայ ՚ի Վրահայս, այլք՝ գերեզմանս, և զխորշն՝ է որ ձեռագործս, և է որ ՚ի ներգործութենէ ջրոյ ծակոտեալս: ի խորշ մի բռնել որմոյ տեսանի և նկարէն պատկեր՝ լուսապակ հիծելոյ աղեղնաւորի՝ որ նետաձիգ լինի (տես յէջ 89). և առ երի կոյ արձանագիրս.

Քրիստոս Աստուած ողորմեա Շուշանա աղախնո Քո:

33. ի հետախուզութիւն քանասիրաց և հայրենասիրաց՝ արժան համարիմ յիչեցուցանել միւսանգամ, և միշտաւաք առաջի առնել զընտուածոն, զորս ետասնոցս և զնմանին՝ որ յարձանս քաղաքին, Հոռոմոսի վանայ և այլոց մերձակայից՝ յիշատակին. ընդ որս և զընական տեղիս, որպիսի են Ձորք, (զատ ՚ի Ծաղկոցաձորոյ և ՚ի Գայլեձորոյ), անծանօթք յայժմուս. Իգաձոր, որ հանէր ՚ի գուռն մի քաղաքին. Քոխաձոր, ուր և կամուրջ. Կարմիրի Ջոր՝ որ Աբելաց կոչի. և յիշի յարձանագիրս Հոռոմոսի վանայ. ուր, և յայլում արձանի յիշի Աբելի-ակն ՚ի Գիշոյ գրան. Աչրևուց ձոր, նմանպէս յարձանս Հոռոմոսի վանայ յիշեալ, և Թերևս փոքրիկ ձորակն է որ ՚ի Հ. քաղաքին քերեալ զարքունի ապարանիք խառնի ՚ի Ծաղկոցաձորն, և էր անդ Ջա-

1 Ոչ գիտեմ ասուցիս ՚ի ձմրս յայս թէ այլուր իցէ տեղի պատկերիդ (Թիւ. 55), զի պատկերահանն որ զաւերակս Անւոյ գծագրեալ է, հանդերձ սակաւուք այլովք, ոչ նչանակէ զսորա դիրս:
2 Պրոսկ և Խանիքով:

ղացք։ — Քաղացդդ բազում ուրեք յիշատակին, այլ ոչ և դիրք նոցին, բայց միայն դա և որ ՚ի Գայլեձորն էր Հառօրինիկ անուանեալ. միւս ևս հինաւիկ յարակից կալուածոց Գունեհանից տոհմի։ — Ջիրահանք, առ Ս. Փըրկչաբ յիշեցաք ՚ի վերոյ. յիշին և այլք առ Գրան Կարուց։ Ըստ ոմանց առ եկեղեցեաք էին ձիթահանք ՚ի պէտս լուսոյ։ Ցարձանագրի Տրդատայ ուսպերիցու Նպղոզոի Ս. Փրկչի՝ յիշի Ջրփղոն Բեխենց[1], յորոյ անուն տեսաք և վանս մի (Բեխենց վանք) յիշատակեալ յերկար արձանագրի Տիգրանայ՝ չինողի Ս. Լուսաւորչի վանաց։ Ցարձանս Հառմոսի յիշի և Ջրոիրն Աբեղի, այլ թուի արտաքոյ քաղաքին լինել։ — Մի ՚ի հասարակաց կամ պիտանի չինուածոց է և Միհն, որպէս ասէ Ագաթանգիոս (յամի 1035) կանգնեալ առ Ս. Փրկիչ եկեղեցեացն. և Տիգրան Հոնենց (յամի 1215) յիշէ զՄիհն ՚ի մեռոնաի (հրապարակի), զորս ըստ բառին և ըստ կանգնիլ բայի՝ մարթ էր կոթողս իմն կարծել, այլ յերկոսին ևս յիշեալ տեղիս՝ տան խնամո պետանի և հասութարեր տեղւոյ։ Նկատելի է և այս դի Պետրոս կաթուղիկոս փոխանակ միհի՝ յիշէ զԱպարանս չինեալ Ագաթանգեղոյ առ Ս. Փրկչի։

Կարևոր ևս են չէնք արուեստանոցաց և վաճառուց։ Ոչ յիշին կարաւանատունք կամ իջևանք, և հոգեւտունք[2] կամ անկիւնոցք. այլ փնդուղք (ֆօնտուք ըստ Ագա-



55. Վիհաւոր գերեզմանք (՚ի Զաղկոցաձոր?)։

թանի չինուածոց է և Միհն, որպէս ասէ Ագաթանգիոս (յամի 1035) կանգնեալ առ Ս. Փրկիչ եկեղեցեացն. և Տիգրան Հոնենց (յամի 1215) յիշէ զՄիհն ՚ի մեռոնաի (հրապարակի), զորս ըստ բառին և ըստ կանգնիլ բայի՝ մարթ էր կոթողս իմն կարծել, այլ յերկոսին ևս յիշեալ տեղիս՝ տան խնամո պետանի և հասութարեր տեղւոյ։ Նկատելի է և այս դի Պետրոս կաթուղիկոս փոխանակ միհի՝ յիշէ զԱպարանս չինեալ Ագաթանգիոս առ Ս. Փրկչի։

Կարևոր ևս են չէնք արուեստանոցաց և վաճառուց։ Ոչ յիշին կարաւանատունք կամ իջևանք, և հոգեւտունք[2] կամ անկիւնոցք. այլ փնդուղք (ֆօնտուք ըստ Ագաթռոնայ, Լորագոնի և Որսատի. և Նորագոնք՝ Թորոսոնց, Վարդի, Աթիժոյ, Աչետաց, և այլն։ Զանազանին ուրեք և յաւելուածով կոչո մասնկամբ, կռղպակի-կոնդ, զոր օրինակ ՚ի փողոց տեսաք փողոցկոչեր (23)։ — Սապր, թուի յատակն, զի յիշէ ոմն գկալզպակ իւր առ ևերքին Սկզբ Տիգրանայ. այլոր յիշին և ներքնատունք Նոցին կամ առորին յարկք. որպէս ՚ի վերջին յիշատակիզ կուզպակի-կաերոյն՝ ասի լինել դաղայեն[3] ՚ի ներքևն. և յայլում՝ կուզպակ, և ՚ի ներքևն Տակաբք. յիշին և այլոր տակաւոքդ[4]։

1 Գիտելի են առ սուգտութիւն ընթերակայ բառքն, «ի Մեքենն ՚ի Ջրփղին Բեխենցն, այս է ՚ի Պղպղի ». տես յէջ 86։

2 Ցարձանս Բագնայրի յիշի Հոփէրոռն մի Պիչարինց անուանեալ, զոր վանականքն վաճառեալ էին, և բարեպաշտն ոմն վերստին գնեալ զարձուցանէր ՚ի վանսն. այլ չէ յայս սուգիս ԱՄՔ եթէ ՚ի նոյն իսկ ՚ի Բագնայր էր տեղիդ։

3 Թերևս Խալլ, ախոռ, ձիանոց։

4 Ցարձանագիրս Արջոյ Աճիճոյ։

Իսկ գործարանք կամ արուեստանոցք և արուեստք յիշատակեալք, որոց և ուրոյն թաղք էին, յիշին այսոքիկ. Կօշիկարոց. Դարբնոց փողոց մերձ ՚ի Ս. Գրիգոր. Բազմոց (կերպասագործք) ՚ի փողոցկոչէն. Նալպանդոց (Պայտար). Փոկարարոց (?). Սառամ փողոց, (համատագործք). Կատունոց, որ թուի զերձակք լայն զգեստուց՝ գիշատաւ կոչեցելոյ ՚ի Պարսից. Գառակիարոց խանութարն (23), որ են գդակակարք կամ խոյրաարարք։ Ցիշին եզակաբար և ոմն Նկրկարար, և ոմն Լարաբար։

Ցառանձնական բնակարանաց, այսինքն տանց քաղքին, որք և զամենատեսարան ծանուցանեն, իրրև Ապարանք՝ յիշի չինեալն յԱպղերիպայ մարզպանէ՝ յաւուրս Թագաւորութեան վերջնոյ Սմբատայ (Ցովհաննու), որ առ Ս. Փրկչին. Սարաւոդով տուեալ Խաչատրոյ ուրումն, նշանակէ լինել ՚ի սարաբարձր տեղւոջ կամ իրրև պատշգամբ շարչ հայեցիկ. որպէս և այլ ոմն յիշէ գիւր « Տաճարն և գԱպարանդն և ՚ի ներքևն Տուն[1] ». — Տուն Տիգրանայ բազում անգամ յիշին, որ է Հոնենցն, չինող



56. Գեղանիւար պատկեր ՚ի Զաղկոցաձորի։

Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանաց, յորոյ անուն յիշի և դուռն մի քաղաքին, և այլ կողմանք և շէնք. Բահրամայ տաներն. Քարգմանչաց տներ. Ագբրենից. Գառնեհանից. Աչետաց. տուն Բախտիարեանց. Խաչատոր տունն մերձ ՚ի Ս. Գրիգոր Ապատամբենց։ Ի հասարակի տունքն որք ըստ Փէր Խորէնըի, յանձուկ և ՚ի բազմադարձ փողոցս, բաժանեալք են ՚ի բազմաթիւ յարկս կամ սենեակս, որ և որոշակի երևէին առ ՚ի չգոյէ տանեացն՝ կործանելոյ։

34. Ցաղքս սրբազան չինուածոց, վաճառայք ՚ի ընդ քաղաքին ոչ յիշին, բայ յայնցանէ զոր ՚ի առորագրութեանս կարգեցաք, այսինքն է Ս. Գրիգոր Լուսաւորիչ (29), Ս. Աստուածածին (26), և Բեխենցն (29). իսկ եկեղեցի՝ արտաքոյ առորագրելոցս երկուս ևս միայն

պատեամ յարձանագիրս, որք թէ և չասին, այլ հաւանիմ լինել ՚ի քաղաքին, և են Գառնանից եկեղեցին, և Գոգոնց կամ Գողոնց Ս. Աստուածածին, որոց դիրք անյայտ. այլ դի էին առ նոսին տունք, զորս տեսարքն նուիրեն, ոմն՝ վանաց Բագնայրի և ոմն՝ խնծկօնից. որոք թէ առ ՚ի մէնչ ծանօթից և նշանակելոցս հասանէ ընդ միջ և ընդ փոքր, ընդ հին յիշատակեալս յանուանէ և ընդ միայնոյս ցարդ՝ յ33։ Իսկ մեր միայնեն, յեօթն հարիւր ամաց հետէ հաչակեալ և ՚ի կարգս առակաց յերդեցեալ Հազար եւ մի Եկեղեցիքն Աշոց։ — Որք ՚ի սկզբանէ դարուս և այսր յայց և ՚ի քէնն ելին աւերակաց քաղաքիս, ոմանք՝ 20 և ոմանք 40ու չափ եկեղեցիս նշմարեցին. իսկ ոմանք ՚ի փոքրագոյն չափ պարագայսս սահմանացն հայեցեալ՝

1 Արձանագիր ՚ի Բագնայր, որ անթուական է, այլ դուշակի ՚ի սկիզբն ԺԳ դարու գրեալ։

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ի ՍԿԶԲԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԻՆՉԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԻՒՐԻ

ՀԱՏՈՐ Ա.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ

քաղաքաց: Յանկալի էր պատմութեան յայտնագոյնս ճառել զայսմ կարևոր խնդրոյ, զոր գրեաթէ խափանէ. այլ մարթ է առասպօր ասել, թէ և քարինք քաղաքին վկայեն դիոյ, թէ ոչ և զրպէտն. և մի անգամ ևս և բազում անգամ արդարանայ առանն, «Անին չէն» » աշխարհս աւեր », և այլն: Վկայութիւն մի և այսոցիկ յուշանեն բազմաթիւ գրունք քաղաքիս՝ արքունի պալատայիւք, որք ձգին ի քաղաքս շահաստանս, ի Կարս, ի Դուին, Յերևան, և յայլ կողմանս. որում ի դէպ է վկայութիւն համարել, թէ և օրինակաւ ասիցէ, զբանս Աբիսաակիսի Քերական գրչի յառաջին կէս ԺԴ դարու. « Ի Դունայ Անւոյ պղչակ մղոն է: — ՅԱնոյ ի Կարին » պղչակ մղոն է: — ՅԱնոյ ի Սերասաիա պղռան է »: — Ընդ գրունս Անոյ և ընդ պողոտայս՝ յայտ է թէ ոչ միայն բնիկքն Հայք և բնակիչք Վ բայիք և Տաճիկք, մեռ և եղս առնէին, այլ և եկք ի բազում աշխարհաց, թէպէտ ի պատճառս վաճառականութեան և թէպէտ տարադէմ ուղևորութեանց. որպէս և գալուստ վերոյիշեալ քարողիչ գեսպանին (Բիսպիքեայ), որ և յառաջ քան զինքն եկեալս անդ եղեալ հինգ այլս յիւրոց կարգէն քարողիչս, ընդ նոյն ճանապարհ ի Թաթարս ուղղեալ, թուղթս ընծայական ունելով ի քահանայապետէն Հռոմայ: Ի յիշման սոցին, թէ և ի հարևանցի, արժան է յիշել և զկրօնական ծանօթութիւնս և ընտելութիւնս ընդ ազգսնոսայց, որ՝ որպէս ի տունն Կիւլիկիոյ զայնու ժամանակաւ՝ եմուտ և ի մեծ կենդրոնս յայս Հայաթեան, ըստ ահագնութեամբ իմն վկայելոյ Սահմանոսի Ուռպելեան, որ ոչ միայն Անւոյ այլ և ի Շիրակ առ գնոյն ծաւալեալ [1]:

Միւս ևս կարևոր քննելի, որ և ըստ բազդի զգալի և դիւրին է և անժխտելի, ճարտարապետութեան գեղեցիկ արուեստն է, որ և արդարև գեղեցիկ երևի Անւոյ, և միակ միայորդ է անդառ մեծագոյնս վայելչութեանց նորին. զոյն՝ այլ տակաւին մեծ միայորդ. ընդ որ երբեք չտանջեցաք Հայ մարդ. զի թէպէտ և չերևիցին ի նմին կատարունակ յատկական ոճք և ճարտկք, (և մեր երևելին յայնմ դարու), այլ ունին ճարտկ և ոճ զոր և օտար քննիչք խոստովանին իսկատիպ ճարտկական լինել, և քաղցրանան ի քիմն մտաց, նա և զմայլին իսկ բազմք. և ինձ այսպէս թուի, զի թէ բազդ ձեռն արկանէր մարդոյ յատակել զտեղին, և գէթ զվիճակացոյն վերականգնել չէնս և նորոգել, հանդերձ պարսպօքն, բրգամբ, կամարօք և անդղօք, իբրև մի ի տակաւուց և յանհնամեաց հռչակելոցն քաղաքաց երկրի՝ այցելութեան և ուխտի վայր լինէր. և որպէս Մաշկի եղակատութեան հնոյն ունին ի Հայս զընականին, ունէր և Անի՝ զարուեստականին. քանզի թէպէտ և չինուածք ճարտարապետեալք, գեղեցիկք, մեծամեծք, առաւելաչնորհք իսկ՝ գոյին և յայլ քաղաքս արևելից, այլ թերևս ոչ ուրեք այսքան հոծ և կուռ, և ոչ իրրև զսա վարժարան կամ հանդիսարան ճարտարապետական հանճարոյ սզղին:

Երիցագոյն ի քննոյս աւերակաց Անւոյ ի դարձս, աղնուականն Ֆէր Բորդըր անդղիացի (ի 15 Նոյեմ. 1817) հիացմամբ գրուատէ զնրբութիւն և զգեղեցկութիւն ճարտարապետական ոճոյ առ հասարակ չինուածոցն. « Նաև զպարիսպն բարձունս և զաշտարակն նրբագոյն » հիւսուածովք [2]». և զոր ի նոսա խօսչէմս « ճոխագարդս և քաջ ընտիր քանդակօք [3] ». Նոյնպէս և յամենայն բիւրս տեսանց, խոյակաց, յոյժ բազմազարդ գրուագս [4]. և առանձինն վասն արքունի ապարանիցն ասէ, « չինուած » սքժանի համբաւոյ հին մայրաքաղաքիս. որ երկայնեալ » ձգեալ [5] ընդ բովանդակ միջոցն ի պարսպաց քաղաքին

Հաբկ (ընդհանուր) Հ. Թ. 62.
Հարաւնեհակ. Թ.
Հնծելի (տուբք) Շ. 40.
Պասպէճու } (Սպանդանոցի կամ Մարթելեաց) Յ. Շ. 40. 72.
Մսագործի }
բերդին. « Կոզք նորին, ասէ, ցցուածել են խանձաքար
» սեպացեալ ժայռիք, որք թուին մի մի աշտարակք
» զանգակակիրք՝ չուրջ բոլորեալք զմեծարտոր գմբեթաս-

1 When the sun had quite sunk behind the mountains, it was no time to linger longer in such a place ; and with infinite regret, I obeyed the summons of my guides, and took a last look of the majestic relics of Ani, lying, a vast solitude, on the grey and wintry plain : for no living creature appeared, even as a single looker-out, from the murderous bands reported to infest the city. — Ker Porter, I. 175.


2 On passing the inner gateway we had a full view of the town, with the walls stretching away from us on each side : and although these ruins were not so numerous as we had expected to find them, there was, neverthless, something impressive and almost awful in the sight of a christian town, built in a style so peculiar to itself, and unknown to modern Europe, now nearly in the same state in wich its destroyers had left it eight centuries ago. The whole site of the town was covered with the fallen remains of smaller buildings and private dwellings, whilst about twenty larger public edifices could be distinguished from the rest. — Hamilton, Researches, in Asia Minor, Pontus, I. 198.

3 Die Kirchen sind meist gross und bezeugen den Reichthum und den Luxus, der hier besonders in X Jahrhundert herrschte. . . Prächtige mit Arabesken verschöne Saülen sah ich bei fast allen. — Koch, Reise durch Russland, II, 382, 384.

4 The feelings excited by the sight of this deserted city, are very melancholy. The forsaken churches remind you that a powerfull christian nation here sank beneath the repeated attacks of the most barbarous tribes of Asia, the bitterest foes of civilisation and christianity. The very preservation of the buildings heightens the impression of lonenless, and you involuntarily look around for signs of life. Amid the utter ruin of more remote antiquity, very different feelings are exited. The shapeless mounds of Babylon are like the skeleton : but the deserted yet still standing city resembles the corpse whose breath has fled, but wich still retains the semblance of life. — Wilbraham, 291.

» կեղծն ձեռին գործ, այլ բնութեան հաստատ վիթ-
» խարի. գագաթն է Ա.ռարատոյ, առաջին երկիր, ուր
» վերծեալքն ի չրհեղեղէն ընտանիք՝ եղին զպաշտպար
» խրեանց յեղեմնէն ի տապանէն: Ի քան և յաւելի
» փարախ հեռատեսանէ՝ յերեան գայ հրաբուխն վսե-
» մական, ամբառնալով ի վեր քան զամպս՝ զդլուխն
» յոխորտապանծ: Ա.յս ենթակայ է պատկերի քաղա-
» քին՝ որ յաչս հարկանի դիտողին զոյն յարևելից կող-
» մանէ [1] »:

Իսկ համազգի նորա (Պօռէ), որ ամաւ յառաջ քան



59. Աւերակք տաճարի միոյ յԱնւոյ:

գնա յայց եկ Անւոյ, « Մեծաւ ըղձիւք, ասէ, անցաք ընդ
» հիւսիսային աւագ դուռն Անւոյ, բացեալ որպէս յա-
» ւուր տօնականի՝ յելս բազմութեան խնդամիտ քաղա-
» քացեացն. և ներքին նորա երևեցաւ յաչս մեր թա-
» փուր որպէս զերեզմանն կրկեալ: ... Եւ յետ հարեւա-
» ծոց բաղարաց և պարսքարաց՝ որոց հետք երևին ի
» պարիսպն, և խրամատութեանց նոցին, քանզակքն
» և արձանագրութիւնք, ամենայն ինչ՝ ընդ ցամաք և
» պարզ երկնեան՝ պահին եզական երևոյթ նորութեան
» և թարմութեան. որպէս թէ դեռ երէկ լեալ իցէ յար-
» ձակումն ի վերայ քաղաքին, և յաղթողին այն ինչ
» քարձեալ վարեալ գիողպատան: Խոյք աճեցեալք և

1 Au point où les deux vallées se rencontrent, un nouveau coude de la rivière entoure un rocher qui s' avance comme une espèce de presqu' ile aux milieux des eaux : il ne tient à la terre que par un isthme étroit. Ses flancs sont hérissés d' aiguilles de laves qui semblent autant de clochetons entourant le vaste dôme d' une cathédrale. Mais sur la pointe du rocher, dans la partie la plus inaccessible, où l'on arrivait autrefois par un escalier soigneusement taillé dans le roc, s'élève une chapelle dont le porche ruiné livre l' intérieur à la violence des ouragans, qui descendent furieux des gorges du Caucase, et viennent mourir en grondant dans les vallées de l' Arpa-tchaï. En face de cette chapelle, s' élève un autre dôme qui découpe sur l' azur du ciel sa forme blanche et correcte : mais celui-là ne fut pas élevé par les hommes, c' est la nature qui en a façonné le colosse : c' est la cime de l' Ararat, la première terre, où la famille sauvée du déluge, posa le pied en sortant de l' arche : à plus de vingt lieues de distance, apparait le majestueux volcan, qui élève au dessus des nuages sa tête menaçante. Tel est le fond du tableau pour le spectateur, qui regarde la ville du côté de l' Est. — Texier, I. 94.

» խորշակահարք յարևոյ՝ ծածկէին զաւերական սիրեալս
» յերեսս գետնոյ. հալիւն զզուշացուցանէ զՀօտ իւր
» յարօտ անտի. ամենայն որ ինչ ի քաղաքին թուի
» անիծապարտ: Ցարևմտից կուսէ ապառանքն արքու-
» նիք ծակոտեալք և ծայրատեալք՝ կորացեալ խոնարհին
» ի վերայ Ծաղկաձորոյն, որ արդ ցամաքեալ և ամայի
» կայ. ի հարաւոյ միջնաբերդն քայքայեալ որմիքն
» ամբառնայ ի բարձրանդակաւմ, և յարևելից՝ ձայն
» Ախուրենոյ մանչելով ի կոկոռուտ յատակին՝ հնչէ
» որպէս ողբ բնութեան ի միջի համայնակարհական սգոյ:
» Եկն պանդուխտ թափառելով միայնակ յաւերակացս
» միջի, և զնէն ու զնէն հայեց ու փարձ առնելով
» ի գիտութիւն յիշատակաց տեղւոյն և ազգին բնակելոց
» երբեմն ի նմին, տխրութեամբ վարակի ի տեսիլ ասե-
» ծածոց և անխնայութեան մարդոյ ի վերայ մարդոյ
» եղբօր իւրոյ, ընդ որում պարտ և արժան էր նմա կեալ
» ի խաղաղութեան և յանդորրու[1] »...:

Ի միջոց ժամանակի 1841–1851 ամաց յոլովագոյն ևս և կարևոր քննութիւնք եղեն յԱնի, և յազգայնոց մերոց զոր վերագոյնք յիշեցաք (Գէորգ, Հ. Ներսէս, Կարապետ և Աբէլ վարդապետք), և յօտարաց. յորոց՝ զառաջինն մեծ երկրագէտն և բանմանուկ քննող Կովկասեան գաւառաց Ասիին գերմանացի, յամին 1844 եհաս և զնէն քաղաքին և նշանակաց զչէնն. և միանգամայն կոչ զԱնի՝ Աստղ նախակարգեան, գերափայլեալ ի միջի քաղքաց Հայոց իւրոյ ժամանակին, և թերևս վասն այնոքիկ իսկ ոչ ընդերկար բաւէր տեսել յայնմ պայծառութեան վասն ախարհագրական դրկին, գոլով յատարկի անդ բարբարիկոն հակամարտութեան արևելից և արևմտից[2]: Ցետոյ մատեաւ Մուրաւիեֆ Ռուս յամի 1846, որ զան զրնաւ յատաղագոյն եկեալն բանասիրական իմն աչօք նկատեաց զԱնի, և պատաճեցոյց նմա զքերնագիր Գէոմոյոց Տանդէլի, որպէս յիշեցաք և մեք ի մուտս դրանն: Ցետ նորա հոչակագոյն ևս արևելագէտ և աշխարհաքննին Ռուս՝ Խանիքոֆ զօրապետ, յամի 1848 անդ արկ յԱնի:

Երկուամեայ ևս յետոյ (1850) Ֆէռիարանն Գիտութեանց Պետրոպոլիի առաքեաց արուեստաւոր մի զերմանացի Քհանգիր անուն, որ ուուրս բաղումս (6–17 օգոստ.) զեղերեալ յԱնի՝ եհան մխանդամ զձև շրջապատին և դիտակին, և ընդօրինակեաց գլոլովս յեկեղեցեաց և այլոց չինուածոց, որպէս և զայլ ինչ տեղեաց Շիրակայ և մերձաւոր գաւառաց. զորս յետ տասն ամաց (1860) Պրոսէ, Փռանսի արևելագէտ և հմուտ լեզուաց Հայոցս և վրաց, վիմագիծ տպագրութեամբ բազմաթիւ պատկերօք, գրեալ և երկար տեղեկութիւնս զայնոցանէ և ընդչինուածոցն, քաղեալ ի բանից այլոց ևս ուղեգրաց, և թարգմանեալ զԲժշկեան Հ. Մինասեայ Պատմութիւնն Անւոյ, զամենայն բովանդակ հրատարակեաց, կոչելով զգիրն Աւերակք Անւոյ, (Les Ruines d' Ani), յերկուս մասունս արտեալ. ընդ նմին և Պրակ մի պատկերաց աւելի քան զերեսուն և վեց, և արձանագիրս ինչ նմա նահան տասիւք: Եւ է այս նշանագրն և հոխագրն զբուած և ցայսօր մայրաքաղքին Անւոյ, թէպէտ և բազում վիրակք ընթերցման արձանագրութեանց և թարգմանութեանց են ի նմին, այլ և բազում գիտելիք, և գովելի խնամ. յորոյ վաստակոյ և մեք օժանդակեցաք, մանաւանդ ի պատկերաց եկեղեցեաց, թէ և չիտէ նա զոմանս ընդ իրեաւ: — Ցետ ամենեցուն և դրեթէ ի ժամանակի յետին պատերազմաց, Անգղիացի ազգն Քրէյ (Creagh) ի հետուստ կամ ի մօտ գնացեալ հետացմամբ զԱնի, հրատարակէր զգրեաս, յոյսմ իսկ ամի (1880).

« Աստանօր և հասարակաց և տոկականաց չինուածք՝
» նշանակք են փարթամութեան, ճարտարութեան և
» ձեռնհասութեան չինողացն, որպէս և նախնեաց փա-
» ռաց և վաղեմի վսեմական մեծութեան Ցեղի, որ թէ-
» պէտ յանարգագոյն տերութիւն նուաստացեալ՝ առ
» երի տահմանաց աղնիւ մայրաքաղքին իւրոյ, դիտաց՝
» յաղթելով և տարերաց և աւերածութեան բարբարո-
» ռաց, թողուլ նման անջնջելի և անվհատ իսկ ի ժա-
» մանակաց: Բայց կայտ կայտ դէրբկացն և պէտպէտ խոչք
» և խոթք՝ անհնար առնեն որոշակի քննել զոմանս
» յարդուսագեղ քանդակաց և ճարտարագիծ մանեակաձև
» պատուանոց զպատուհանաց և դրլանակաց արտակա-
» ռաց դրուագաց չինուածոցն, որք զոգիր հաւասար
» հռչակապանծ ակառանն Աթենայ՝ վիհսղոք են[3] »:

1 Nous avions franchi avec empressement la grande porte septentrionale d' Ani, ouverte, comme en un jour de fête, pour laisser sortir la foule joyeuse des citoyens, et son enceinte s' offrait vide à nos regards, telle qu' une tombe profanée... Néanmoins, les coups des balistes et des frondes sur les murailles, les brèches qui les entr' ouvrent, les ornements et les inscriptions qui les décorent, tout a conservé, sous ce ciel sec et pur, une apparence singulière de nouveauté et de fraicheur. On dirait que l' assaut a été livré la veille, et que le vainqueur vient de dépouiller sa proie. Des herbes longues et jaunies déjà par le soleil recouvraient les ruines éparses sur le sol. Le pâtre évite ce pacage pour son troupeau; tout ce que renferme la ville semble frappé de malédiction. A l' ouest le palais des Rois, troué et mutilé se penche avec humiliation sur la Vallée-aux-Fleurs, aujourd' hui nue et aride; au sud, la Citadelle couronne une éminence de ces murs en lambeaux; et, à l' orient, la voix de l' Akourian, grondant au fond de son lit de rochers, retentit comme la plainte de la nature au milieu de ce deuil universel... L' étranger errant seul au milieu de ces ruines dont il interroge chaque pierre afin de recueillir les souvenirs attachés au lieu et à la nation qu' il habita, est douloureusement ému à l' aspect des ravages et des excès commis par l' homme sur l' homme dont il est le frère, et avec qui il devrait vivre pacifique et heureux. — Eug. Boré, Le Correspondant, Tome I.

2 Der als Stern erster Grösse unter den damaligen Armenischen Städten, villeicht zu hell und verlockend durch die Nacht barbarischer Zeiten leichtete, und eben deshalb, vermöge seiner Weltstellung auf jenem merkwurdigen schauplatze des immer feindlich miteinander ringenden Orients und Occidents, wohl nicht lange culminiren konnte. — Abich.

3 Here both the public and private buildings are indicative of the wealth, address and interprise of their constructors, as well as of the ancient glory and once imposing grandeur of a race which, although reduced to the most abject slavery in the immediat eneighbourhood of its noble Capital, has left, in defiance of the elements as well as of the destructiveness of barbarians, an indelible mark defying time itself. In consequence, however, of heaps of rubbish and other impediments, it is impossible to examine closely some of the elegant traceries and exquisitely twisted beadings encircling the windows and cornices on the ornamental exteriors of buildings, almost as majestic as the famous Acropolis of Athens. — Creagh. Armenians, ecc. I, 3. II, 139.

Ցառաջ քան զամենայն յիշեալ հետաքնին հնդինակս, յամի 1834, յամեան մարտի, Տիւրուբա Հելուեթացի քաջ հնագէտ և բնագէտ, ժամանեալ մինչև ի բերան Ախուրեան գետոյ, արգելաւ ի քննութենէ աւերակաց Անւոյ՝ որում ըղձակերտ լինէր, աչ ունելով անցագիր, և ցառաց յոյժ, որպէս և մեզ ցուէ. զի երկրագործ գոլով ժամանակաւ և հմուտ հետազօտ՝ մարթէր նմա անապարագրելի զառնել զչինուածսն և մանրագոյն տալ ծանօթս, քան իւրում սգոյ. « Հնգետասան մղոնաւ չափ » ևեթ ի բացեայ կալով մ' ոչ տեսանել զհոյակապ աւե- » րակս Անւոյ, (բացագանչէ), զգերագոյնս ի հետաքնին- » լեաց և զարմանալեաց Հայաստան աշխարհի: Յոլով » յեկեղեցեացն տաճարին յոտին կան, որպէս և պա- » տուարք պարսպացն, գրունքն և ապարանք, արձանա- » գիրքն և քանդակք, ամենայն ուրեք[1] »:

Երիցագոյն քան զյոլովս ի յետնոց քննողաց յիշին և երկու Ռուս, Պուտուխին (Boutchougin), որոյ հանեալ էր փոքրիկ յատակագիծ քաղաքին, նշանակեալ ի նմա եկեղեցիս 19, և Խուտապաչե (Khoudabachef), որոյ գրեալ էր տեսութիւնս ի Հայս. այլ երկոքեան ևս ոչ համարձան տչգրաստկերք: — Անգղիացի տիկինն Շիլ (Lady Shiel) որ թուի ընդ առն իւրում ուղեւորեալ ի Հայս և ի Պարս յամի 1836, յԱնցուկութիւնս իւր ի կենցաղ և ի տարագ Պարսից (Glimpses of lifes and manners in Persia) տայ ծանօթս և զաւերակաց Անւոյ, ոչ գիտեմ որպիսի բանիւք: — Մի ի լուսագոյն գրուածոց՝ անտեսից չինէն, է հարատարակեսական քննութիւն Կրիմ (Grimm) Ռուս, որոյ անձամբ չտեսեալ և գծագրեալ է գլոլովս ի շինուածոց Անւոյ՝ սակաւուք յառաջ քան զԲէշտնէր, և հմուտ եթեամբ հառէ զարուեստն: Ցետ այսպիսեաց և այսպանեաց այցելուաց՝ աւելորդ համարիմ խուզել և զոյլոց ևս քննութիւնս, յոր թերևս չէք նոր ինչ գիտելի:

Հմուտգոյն թերևս քննութիւնս տարին կարգեալքն ի հղկել զահմանս երկրի երեցուն պետութեանց՝ Ռուսաց, Թուրքաց և Պարսից յամի 1856, այլ մինչև էր հրատարակել քննութեան նոցին, ի վերոյ եհաս միւսանգամ ծանր և նոր պատերազմն Ռուսաց ընդ Թուրքաց (1877), և սահմանախոսութիւն ապա և սահմանափոսութիւն. և միանգամ ևս հնչեցին աս բազմահարաւած պարսպաք Անւոյ՝ բախմունք բանակաց. զի ցայն վայր տարածեալ Մահմետ փաշայ սպառազէս Օսմանեանց՝ զալ թէ իբոյ ճամբարն յամեան յունիսի, ի տեղի տալ Ռուսաց անդր քան զԱխուրեան. ընդ որ՝ ի սահմանս քաղաքին անցագոյ գունդ մի հեծելոց, տապտտակել յարևելեան Շիրակ՝ ի բաժին Ռուսաց. և յետ աւուրց ինչ (25–28 յունիսի) ընդհարան գունդքն հակառակամարտք ի նոյն սահմանս Անւոյ, և բանակեցան առ աւերակօքն, ցկէս օգոստոս ամսոյ. և ապա թողեալ սակաւ պահապանս՝ մեկնեցան Օսմանեանք ի Ֆլորկվորէ և ի Գարապայ: Թէ յաւերմն աւերք յատես մայրաքաղաքին՝ ի Թընդմանէ հրանօթոց, կամ վասն այլ հարկի պատերազմաց, ոչ գիտեմ. որպէս յատաչնեամն քան զայս յեղանակի մարտից, յամին 1856, ասացաւ, եթէ սին ի զօրավարաց՝ յորոյ բաժնի էր քաղաքն՝ կամաւ ետ ական գործել և քայքայել զչինուածսն, զի մի լիցին հրապարտք զայնոցանէ. իրրու թէ չէին բաւական այնքան բազմադարեան հարուածք և մերք յետին քաղաքամարտն Հայոց. կամ թէ դիւրին էր բառնալ ի մտաց և ի սրտից զանջնջելի յիշատակ նոցին, որ և զօտարս անգամ ի գալ և ի գոլով շարժէ, թող թէ զվիրք ազգայինս. որոց արդ ի խաղաղել երկրին ընդ պետութեամբ Ռուսաց՝ ձեռն արկեալ է նորոգել զամենս յեկեղեցեաց, և հաստատել վանս միաբանակեցս ի չինութիւն տեղւոյն և ի պաշտօն Աստուծոյ: Եւ զի յանհնարինն թուի վերականգնել զԱնի, խորհուրդ գեղեցիկ ազգային եռանդեամբ և արդիւնաբերութեամբ ի գործ արկեալ ափղիսարնեան Յովհաննիսեան Ֆիւրգիանեան, բազմամեայ պատրաստմամբ լուսագրեաց վայելչապէս զրեսքէզ զամենայն կաղմանս պարսպաց և չինուածոց քաղաքին և ոչ սակաւս յարձանագրութեանց, զորս և ձեռնարկէ հրատարակել ծանօթաբանութեամբ: Ուղեկից նորին՝ Յակոբեան Գեղամեան՝ յատարտ առարտ գրութեան տեղւոյն, յարէ ընտրանս և զ' ատ յիշատակէ ինչ գրուածս նորոց այցելուաց՝ յորմանս չինուածոյն. օրինակ իմն. « Եկի, տեսի, և ողբացի »:

« Լաւ էր չէի եկել տեսել.
Բայց եթէ արժանացայ՝
Տուր, Տէր, ինձ գերեզման չմտնել,
Մինչդեռ Հայաստան ոտին չէ կանգնել[2] »:

1 Être à 26 verst d' Ani et ne pas voir ces ruines magnifiques! Ce que l' Arménie offre de plus curieux et de plus admirable! Nombre de ses églises sont encore debout, ainsi que ses murailles d' enceinte, ses portes, ses palais: des inscriptions, des sculptures partout. — Dubois de Montpérieux, III. 457.

2 Բան այսոցիկ և այլք» ընդ որս գասելի են և Համառօտ տառագրութիւնք այցելուաց Անւոյ, հրատարակեալք յապագին օրագիրս Տփղեաց. և միաշաւաք քարտէսք տեսարժանց նորին, վիմագրեալք ի Յոհ. Տէր Աբրահամեան՝ ի Կաֆա, և ի կարապետ Յովհաննիսեանց ի Մոսկուա. որպէս և լուսագրեալքն ի Նիկիա և Մակարոմիչ օտարագրեաց, զորս մեր չէ տեսեալ: — Ի բանաւոր միջատակաց ծանօթ է ի կողմնս անդ Հայոց դիմնադևան տղերգն Անւոյ, Ամբատեան Ալէքսանդր Վարդապետ.

« Անի քաղաք նշաւակ կուլայ.
Զրկայ ըսող՝ Մի լա, մի լա.
Կրանն քիչ է, Թող մընայ լայ:
Ախ. երբ լսեմ, Մի լա, մի լա.
Շատ դաւերով կ' այրիմ տապիմ,
Չ' ունիմ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խրճաքարս գայ ժողենայ՝
Հիւ չէ ըսէ, « Մի լա, մի լա »:
Ախ. Հայ ազգայ, խրճաձայ ինձի,
Տէս, Թէ քու Անին ինչպես է». և այլն:

Բան այսմ ոմոյ երեք տունք են: — իսկ յետագայ երեք տունք Թուին Հաւուած մի խակիր եղերերգութեան գայլեղոց Անւոյ ի կողմանս Ռուսինիոյ, ուր և անշնարին տառապանս կրեցին ի Սահմանէ իշխանէ Վլատիսլաւ յամի 1551. պատահիկ այս գրեալ էր առաջագոյ քան յամի 1725, այլ երբ յօրինեալ՝ ոչ գիտեմ.

« Յորժամ փախեաք գնաքս Անի քաղաքէն՝
Աչկաք Ուլաչ Պուլտան, հեաի Մահարէն.
Անդ ոչ գտաք նաև ոչ մի մեր ազգէն:
Ուչ հարք զորդիս ոչ մայր դաներս ճանաչէր.
Իւրաքանչիւր խորոց սրտիկ հառաչէր.
Ամենք տեսանց այլք ամահիկոց ազատէր:
Տիւ եւ գիշեր լամբ եւ ողբամբ մեք յայտնի,
Մինչ լսացաց սիրտ եւ աչեան խաշտաւի.
Զի զրկեցաք Անի քաղքէն գովելի »:

ԿԱ. Իսկ մեղ հարկ է արդ յառաջ յերկարել տե-
» ղագրութեանս Անւոյ՝ խոստովանել, զի ոչ միայն յայժ-
» մուս բուռն և վառ է յիշատակ նորին առ մերայինս, այլ
և՝ ի հնոմն անդ յայժ սիրելի եղեալ էր բնակչաց իւրոց,
և հռչակելի արարեալ յարևմուտս և յարևելս, որպէս
տեսաք՝ ի վերդ (38) [1]. բազում խնամով չինեալ և զար-
դարեալ, նաիմն և պահեալ և գգուեալ: Զախաւոր ճա-
շակ գեղեցկին՝ ոչ միայն չինեաց և վայելչացոյց զԱնի,
այլ և վայելաւէրս գեղեցկին յարգարեաց զԱնեցիս. և
իբր գանձ ինն ցանկալի, իբրև ամուր ապաւանի, իբրև
կերատած չքնաղ և գեղափայլ երանգ երանգ ակնահա-
ճոյ վիմաքն իակ, և իբրև սրբատն և ազնիւ քան զամե-
նայն հայաբնակ քաղաքս ժամանակին, պահելի և պաշ-
տելի. յոր ասաս ոչ միայն բազում արուիք հեղան և քաջ
արի մարտից պատրաստեալ ազգայնոց ընդդէմ օտա-
բաց [2], այլ և կանայք Հայկազունք առաքինասան յԱնի,
Թերևս առաւել քան յայլ քաղաքս իւրեանց. և արդարև
մայրաքար գիտային և գրագին պէսպէս օրինակաւ. և
ոչ գիտեմ՝ սիրք իւրեանց թէ սոքա առաւել երախտա-
պարտ լեան՝ ի չինութիւն, յամրութիւն, ի ճոխութիւն
Անւոյ, և՝ ի պայծառութիւն եկեղեցեաց նորին. որ-
պիսիք ոմանք խոստովանաւք Թագուհին՝ կին Աչոտոյ Ո-
ղորմածի, Կատրամիդէ Թագուհի կին Գագկայ Ա, Մա-
րիամ Աբծրանի՝ կին Թագաւորին Վրաց, Կատայն
հանի ամիրային Փառանի Բ, Ռատեան կին Իւանէի
Օրբելեանց, Շամուշ չինող աշտարակաց, և բազում այլ
նուիրատուք, նորոգողք և չինողք, որոց անուանք գրեալ
են յարձանան, և չատք ընդ նմա. և Թերևս վիճակն
բնութիւ՝ Ա.յծմնիին այն արիութեանց մայր [3]: — Աչե-
լորդ է ասել, զի քաղաք որ այնքան չանիւ և զանձու
խնամիւք, անհրաժեշտ արժանաւոր սիրոյ և սքանչաց
ընծայիւք բնակչացն և եկաց, բազմապատիկ պայծառու-
թեամբք, ճոխութեամբ, հանդիսիւք և խրախութեամբք,
և անգամ չասլելութեամբ և որ ինչ ըստ նմանէ, ըստ
մեղադրութեան ամանց՝ ի պատմչաց. քանզի իբրև յետ
չորեքհարիւրամեայ անիշխանութեան և անկման ազգիս՝
կանգնեցաւ արքայատոհմ տուն Շիրակայ, որպէս երիտա-
սարդ մի գայթեալ, և Անի՝ որպէս սիրտ՝ ի լանջս նորին
խայտայր եռանդուն կենդանութեամբ և կենդանացու-
ցանէր որ չուրջ զնովաւն. և որպէս սահմանուն չքոյ և
փառաց նորին ճառագրէ [4]. « Աչխարհ՝ որ երբեմն ժա-
» մանակաւ իւրով զգրահաւ տասնի իւր, կանա-
» չագեղ, տեսիլապէս, պաղատիր, գեղեցկատես և երջա-
» նիկ անցաւորացն ցուցանիւր. քանզի իշխանք նոցին
» յիշխանական գահու զտարիճահայաց գիմաք, և զգար-
» նանաւիր ծաղկանոցաց բերեալ զնմանութիւն՝ վառ՝ ի
» վառ դունովք առաջի կացեալք, ուրախական երգոց և

» բանից միայն լինելին հանդէպք. որ և ձայնք փողոյն
» և ծնծղայիցն և այլ երգեցողական արուեստիցն՝ զըս-
» զայն անձինս ի առնչին ուրախական բերկրանաւք:
» Աչդաւօր և ծերք նստէին ՝ի հրապարակս, հարկաւոր
» և պատշական ալեաք բարգաւաճեալ. այլ և մարք ըղ-
» մանկունս՝ ի գիրկս ընկալեալ, և մայրենի գթալիքն ազէ-
» խարչեալ, վասն առատ ուրախութեանն մոռանային
» զախրական ժամանակս երկանց, զորէն ազատեալ
» զնորափեսաւոր ձագաքն միւռ թոթռելով: Զինչ ասաս
» ցից և ցհարանցն ՝ի անեկէ, և զփնտրիցն յատա-
» գաստի զսրահարուստ ըղձից զրորքաքսն և զանժպղ-
» բնութեանն զհակամտութիւն: Այլ և ՝ի վեր տանելի
» ե մեղ զրանս, առ հայրապետական աթոռն և առ թա-
» գաւորական պատուն. զի մինն՝ զորէն անպոյ խոտացեալ
» ՝ի պարգևացն Հոգւոյն, ՝ի ձեռն վարդապետական
» շնորհին՝ ցօղէր զցօղ կենացն, որով պարարտացեալ
» պտղաբերէր եկեղեցւոյն դրախտ. արթուն պահապանս
» ՝ի վերայ պարսպաց նորա կարգելով՝ զոտ՝ ի յինքնէ
» ձեռնադրեալսն: Իսկ թագաւորն՝ յատուկ օրինն յոր-
» ժամ՝ ի քաղաքէն ելանէր, զօրէն վեպոյի որ երանէ
» յառագաստէ իւրմէ, կամ որպէս առնչինային արու-
» սեակն որ ՝ի գլխոյն արարածոց բարձրանալովն՝ զամե-
» նայն սեռսանեալս յինքն ձգէ, այսպէս և նա զպազա-
» չէր փարփառն հանդերձիւք և մարգարտահատուն թա-
» գիւն, և զամենայն մարդ ՝ի տեսութիւն և՝ի զարմանս
» ցուցանէր. որ և սպիտակամազ նժոյգ՝ ոսկեզօծ զար-
» դիւք առաջի ընթանալով, ՝ի ճառագայթից արեգականն
» որ զնովաւ հարկանէր՝ չացուցանէր զտեսողացն տեսա-
» նելիս. իսկ զօրացն բազմութիւն խուռն առաջի ընթա-
» նալով՝ զօրէն ծովային ալեացն զմիմեանսիք կուտակե-
» լով: Եւնա անասպատական վայրքն լցեալ և խճողեալ էին
» կրօնաւորական դասուք. մինչ զի զգետս և զագարակս
» առ բարի նախանձ քահեալ՝ առնէին բնակութիւն կրօ-
» նաւորաց:... Եւ եկեղեցիք որ ՝ի նոսա՝ որ զերկնից
» բերէին զնմանութիւն վասն պայծառ չինուածոյն, և
» վասն գեղեցկաշուք զարգարանացն, և վասն անչէջ
» լապտերացն և չահիցն վառմանն, որոց լուսոյն առա-
» գաւթիւն ընդ օդոյն տարածեալ՝ այսր անդր ճաճկելով
» զարեաց ծովու բերէր զնմանութիւն, որ ՝ի հանդարտ
» ժամանակս ՝ի քաղցրաշունչ օդոյն զրոիք ալեացն վճաս
» վէտս ՝ի վերայ միմեանց չրնապատին. և անուշարու-
» բակ խնկոյն գոլորշիք, որ ըստ առաւօտեան նուի-
» բաբերացն հրոյն ներգործեալ, զգարնանաւրեր ժամա-
» նակին բալիցն ցուցանեն զօրինակ, որ ՝ի ծայրս լերանց
» նառեալ՝ արգելոյն զհատադայիս արեգական: Իսկ
» զընակոզացն ՝ի նոսա՝ որ բան բաւական իցէ առ ՝ի
» պատմել զօրինակն. զքաղցրաճայնութիւն երգոցն և

[1] Ընդ արևմտեան հին ժամանակակից հեղինակս յիշողս Անւոյ արժան էր յիշել և զվիպասանն Ասողկոն Փարիզու և Գեղեցկին Վ.ինեայ, մինչդեռ շէն էր Անի, եթէ առաւել հեղինակին էր ըստեղծեալ զրան Ասողկոն իբրև պանդխտի, և ոչ մեզապէս Թարգմանչի յաւելեալ, Յովհաննու Տէրվնոյ երիցու, ՝ի ԺԲ. դարու. որ յետ կարճելոյ զառոյց հեղինակին զուգորդութենէ փարիզու ՝ի Պաւեանն՝ և յայլ ինչ կողմանս, յօգէ և զայս առն.

« Աղդի դէպ յարեւելս՝ յերկիրըն Հայոց
Մոնու յԱնի քաղաք՝ որ է Մեծ Ամրոց »:

Եթէ հեղինակին իցեն բանքդ, պարծանք են Անւոյ, իսկ եթէ Թարգմանչին՝ մեծ ևս պարծանք հայբենասէր ոգւոյն, որ և յայնմ անա-դանեալ դարու ոչ մոռացաւ զԱնի:


2 Ընդ որս անմոռաց գասելի է յայնմ հանդիպի և փոխադարձ Անեցին Ռաֆէլ, որ զդիակն ողբմամաչ Գագկայ Բ, յետին Թագաւորին Բագրատունեաց, դողացեալ ՝ի զրից սպանչացն, տարաւ հանգոյց յատենի բնակութեան նորին:

3 Տես յէջ 99:

4 Արիստակէս Լաստիվերտցի, Գլ. ժ:

» զանգաղատ տաղտաղերգութիւնն, զատուածային զրոյն
» ընթերցմունս, զտէրունական ծնունդն զհանդէս և զըս-
» կսիցն զպատիս, և զմիախորհ խորհուրդն զկաս և
» զառ ՝ի յատուածայինն նկրտումն, և այլն ևս »:

Զայս ամենայն շնորհս Անւոյ յիշելով, զանցեալն և զներկայ նշմարս, արդ ՝ի տալ և մեր յետին հայեցուած-
՝ի նոսին, ներեսցի արդեօք զնել կնիք զրան ուրումն ազ-
գայնոց յետին զարուց, որ համառօտեալ զդէպս անցեալ
քաղաքիս, յասելն ՝ի կարգի զրութեանն՝ զԱնի թագա-
ւորական քաղաք, առ նմին զուշով ածեալ՝ ՝ի վերայ
բերէ, թէ, « Նաև ատուածայնական առեմ, և ոչ ամա-
չեմ »: *



ՀԲ. Մերձագոյն Անւոյ վայր նշանաւոր՝ է գիւղն Զօղ-
լիձա, որ է հինն Բագնայր. իբր երկու փարսախաւ յա-
բևմտից քաղաքին, և նոյնքան հեռի ՝ի գագաթանէ Ա-
լաձա լերին, ՝ի հիւսիսային ստորոտան. գեղեցիկ գրիւք,
հայելով ՝ի դաշտավայրն և յաւերակացեալն արդ չինն
մեծ: Ցնոս ՃԿ դարու մեծատաւտ և մեծափարթամ իշ-
խանք Պահլաւունիք կանգնեցին ատաճար զմի ՝ի կարի
հռչակաւոր վանորէից ժամանակին: Աւագիկ՝ խան իմն
ասէ, ՝ի յիշելն զվախրամ իշխանաց իշխան, զԱմբատ
մագիստրոս որդի վահրամայ և զմարզպանն Ա.ստ,
« զԱրամնչէն և զԲգնեղն չինեաց »: Ամբնչինու կանգ-
նեղն յայսմ է վահրամն, և Բգնայրի՝ ըստ այլ պատ-
մչաց՝ Մագիստրոսն Ամբատ, յորոյ զործի Թուի սեփա-
կանեալ մագիստրոսական պատուանեղ, որպէս է
գուշակել յարձանագրութեանցն: Ժամանակագիրն Ա-
նեցի յամի 1009 կամ 1010 նշանակէ զչինութիւն վա-
նիցն. այլ այս համարելի է աւարտն. քանզի Աւագիկ
տան տաս յատաչ նոյնպէս գրէր. և զի չյաւելոյ զը-
բաւատ ինչ զչինուածոյն՝ ՝ի դէպ է առ իրեւ անկատար
համարել զնոյն: — Անուն գեղջն՝ որ գրի և Բգնեղ՝ զա-
գանիլ երեմ Բագարանի. այսինքն, բագնեաց ունող յո-
լովից՝ ՝ի ժամանակս հեթանոսութեան, այլ ոչ յիշա-
տակի առ նախնիս. և արդ ամայացեալ և՝ ի սակաւուց
Թուրքաց բնակեալ, չունի այլ նշան մեծութեան՝ բայց
զարժանին տեսութեան և մեծ կոչելոյ՝ զեկեղեցի վա-
նացն, զՍ. Աստուածածին, որ և բազում անգամ յար-
ձանն կոչի Մայր յուսոյ, իբր տեսական նմին մեկզիր.
և յոյն սակս առաւելապէս զրաւսի, և յերկոցուն
պատճառացն և յարձանացն կոչի՝ « Հրեշտակապետական և
» փոխագաւթենչ », և « Ժողովեալ սրանց աստուածայ-
նոց ». առաջին մեկզիրդ երկոս կրկնեալ՝ Թուի յառուկ
իմն պատճառաւ, զոր անգիտանամ. իսկ Ժողովեալն,
այսինքն վանքն բնակութեան աստուածախոհ սրանց,
այժմ խարտ քայքայեալ է, և քարաքարումն մինչև ՝ի հի-
մունս յատակեալ: Բան բազում կանգուն մնայ հինգա-
բեան հոյակապ եկեղեցին, հանդերձ վեմնական գմբե-
թաւն. և բերէ փոքր ՝ի չատէ գձև եկեղեցւոյ Հոռոմոսի
վանաց, նման նմին յերկուս տրհեալ, ՝ի տասնր և ՝ի
ժամատուն. բայց տարայս տասնր անձկագոյն է քան եր-
կայնութեանն և քան լայնութեան, այլ գաւթին ընդար-
ձակագոյն, քառակուսի հատասր. իսկ Հոռոմոսին գա-
ւիթն անձուկ է քան լայնութեան: Զորք սիւնք գեղե-
ցիկք և մեծամեծք ՝ի միջավայր ժամատանն և երկո-
տասն որմայեաց ամբառնան զեղջուն բազմայտս և
քաջածիգ կամարաք. կլիս հանդէպ դրանն արևմտից՝ կայ
և դուռն յարևելս մուծիչ ՝ի տաճարն, յորում չորք
տատար և բազմանկիւն որմնչեց սիւնք և երկոք ևս
այլ փոքունք, յարևմտից կամարակցեալ ընդ իրեար,
որպէս և երկաւտեք խորանին, ամբառնան զդմբեթին

* Ընդ վերոյիշեալ տրտաղրութիւնս պյեղտացն Անւոյ ՝ի մա-
տուռս, յարտգրի և քերդուածս այս առ նոյն յիշատակէ.

ԱՆԴՈՐԲԱՆՔ ԱՆԻՈՑ

Հրաչագործակ հիգն Հայկին,
Հարբտատութիւն եւ հանճար,
Սիրտ խանդաղատ, չերմ հոգին,
Հոսկ վառարենակ իւր տաճար՝
Յամանակաց միջօրեայ
Եւ յաչխարհայ միջակէտ՝
Յանդոյթ յարձանս Ա.խուրեայ
Եւ ի ծործորս ծղոտաձոր,
Երկնեաց ծընունդ անկրման,
Ըզգեալ վհիկ վհհական.
Զոր ոչ Զրուան հանրակուռ,
Ոչ ժանտ բաւեայ պաքն Ըսկիւթ,
Ոչ յաչաղկատ հրոսք անդամ՝
Թարդաւանել յայս անգիստ:
Թօթափեցին, այո, գարք՝
Զամենազանդ պերճանս,
Ա.ստ նիշք չքոյդ անվրիպարք՝
Շողան յամին քո կողմանս.
Եւ վերնական հովանի
Տառապեցոյց փարատն,
Ոչ ախտանիք որձաքար՝
Յապահովին գլիշատակ
Օթեվանաց նախհարանց.
Ա.ստ զոր հիմիկ գոմի յատակ,
Կանգնին հաւատք գերասպանձ.
Եւ ուր յաչտ հակէ խաչ՝
Նա յաւիտեան անամուչ: —

վայելչաշուք[1]. հաղիւ ութ Զաւի է լայնութեան տաճարին և իբր 14 երկայնութեան, իսկ ժամատանն իբր 15 Զաւի: Մի դուռն է տաճարին՝ի կէս հարաւային որմոյն, յորում կողման որմաւորիւք հինգ կամարս արկեալ յոյլ սիւնս որ՝ի հանդիպոյ զդրծին գաւիթ ցածուն և անձուկ իբրև 4 ½ Զ. ընդ երկայնութիւն տաճարին. և՝ի ծայր նո֊ բունն՝ որ է յարևելից եկեղեցւոյն՝ կան զուգաչափ և զու֊ գաղիր մատրունք երկու գմբեթաւորք, իբր եօթն Զ. ընդ երկայնն և չորս ընդ լայն. որմիակից այնր՝ որ յերի կայ եկեղեցւոյն, գոյ արտաքոյ տապան վիրմի, զոր կար֊

ծեն Ս. Լուսաւորչի նշխարաց հանդիստ, և պատուին Թուրքք անգամ. բայց յարձանագիրս միւս մատուռնն կոչի եկեղեցի յանուն Ս. Գրիգորի: Ի նոյն արձանաց առագի բաղում ևս այլ շիրմաց վիճել երեսին սակ, և Տարսայատուռն վիճել մեծատանդ և բարեպաշտից. յոր սակս Թուին կանգնեալ մատրունքդ. և զատ յայնցանէ՝ Գևորգեանց մին նկուղացին, զոր վիճեն Խաչերդայր ոմն և ամուսին իւր Սիամայ՝ի սկիզբն կայս ԺԳ դարու, որ պէս ցուցցէ այս արձանագիր.

Ես Խաչերդայր որդի Աստուածատրո եւ ամուսին իմ Սիամայ վիճեցաք զգերեզմանաց մին եկեղեցին եւ տուաք զմեր տաճարն եւ զսարաւագին եւ ի նեղքեւն տուն ի սուրբ Աստուածածինս եւ հայր Սիմէոն եւ այլ եղբարքս փոխարէն հատուցին յամէն ամին. ՉԸ. աւր ժամ. Գ. աւր Խաչերդաւրն. Զ. Սիամային. կատարիչք գրիս աւրհնեսցին յԱստուծոյ:

Ի նմին ժամանակի, յամի 1229, Խաթուն՝ կին Խաւազ իշխանի՝ վիճէ, որպէս թուի, այլ մատուռն, զի պակաս բան «՝ի վերոյ տապանատանս». և յամի 1262, Գա֊ րեգին երէց՝ որդի Մանդիկ երիցու՝ յիշէ զգնդգնդևանս

Տեսի զբարէ եւ զԱսւր...
Նա մանաւանդ տեսի՝նչ ոչ.
Հողակոյտակք թաքթաքուր,
Ամայութիւնք յանայսոյ.
Զորքս ձաղեալ՝ հողմ ու աւազ
Յարձակավայր անարգել՝
Դիմամարտին հանապազ
Աչդըր քան զանդըր վարգել:
Ուր Շամիրամ չպարէր վէս՝
Անդ որջացեալ կոյղ ու աղուէս:
Տեսի զՀռոմկեն եւ զՄեհիթիս.
Լերինք եւ այրք կռանակոփ.
Յոր՝ պատ՝ի պատ ի կոտսխս
Նշոյլ զնռեալ եւ ամիսի՝
Բազմադարեան հեթանոս.
Եւ շուրջ՝ զուգեալ յամանակ
Աչխոյհ անյոյս ծեր Նելոս՝
Յածի ալեաք ժժգունակ:
Մընչէ Մեհենեան վէմն յարեւ,
Ասյ ի սկզբ՝ ոչ արդարեւ:
Տեսի զզըղեակ Աստիկեայ
Բազմաղբրուազըդ զԱթէնք.
Խոհք Պերկլի, դասս Փլեղեայ՝
Զեղեն չինիցդ ապաւէնք.
Հաղիւ նշխար խուսափուկ
Ձըղնի երդմամբ վըկայել՝
Թէ ճարտար մասն եւ փափուկ
Երբեմն ինքեան էր վայել.
Դրդէ զմիտս յամպ դեղեցկին,
Ոչ մինչ յերկինս՝ ուր հոգին: —

Ոչ այսպոյն յիմ հայրն աղգայ
Յարփիակիզըն Ասյրարատ,
Ասպընջական օտարաց,
Գգուիչ Հայոյն հարազատ:
Լուսակարկաղ ընդ երկնաւ
Տեսի զյետինն իւր ոստան,
Խաչազդեցիկ նըշանաւ
Նախորսապատ սրբազան.
Համբուրեցի զնիչ քարանց,
Եւ սօսափիւն յիս էանց:
Մինչ Թողեալ զարձրըն Դըւին՝
Էջ բազդ հայոցան ի Շերակ,
Հարեալ յիմասո աղնըւին
Ասո Հայաթիւն համիրակ՝
Միարանէր կամովի.
Աչգօրն՝ համարձակ զօրեղի,
Կուռըն կարընեղ կորովի՝
Նարմնազուակ ընդ ծղոի,
Կըռնել կռիւել սրահ երկնի
Ըզնաւթրականն իւր Աչխ:
Սըփռէր արքայ ոսկի խիտ,
Եւ բուրդն ի բուրգըն յենոյր.
Սըփռէր զըչխոյ մարգարիտ,
Մատուռ մատրան տայր համբոյր.
Քաջահռուտ քաջայոյս
Կարկառեալ ճոխ առ փինատ,
Յաչխարհօրէն ի խրախոյս՝
Հազար տաճար ըսիր պալատ
Կանգնէր յըզձիկն իւր յԱչխ,
Ասնել յաչխարհս անուանի:

տամբն: Եւ որ լուան զայս (կարապետ վարդապետ) ասէ աչօք տեսեալ և չօշափեալ զմածուցիկ նշխարն կարմիր՝ յամենայն կող֊ մանս սեանն, և համարի նշխարաց Քրիստոսի՝ի վերին կամ՝ի ներքին կողմն սեանն: — Հայսմաւուրք Օրագիր, Թիւ 179: — Յիշին և այլ ուրեք՝ի Հայս նման իմն Թոռմնակք Լուսաչխիք:

տոհմի իւրոյ: Բայց աւերածոք՝ ոչ միայն բնակութեան կենդանեաց, այլ և ննջեցելոցն չեն խնայեալ, զի ոչ նըշ֊ մարին արդ տապանքդ, և ոչ խակ արձանք կանգնողաց հոյակապ եկեղեցւոյն. Նա զի և դյոլովս՝ի մեծամեծ քա֊ րանց քակեալ և՝ի բաց տարեալ է վասն նոր շինուածոց, թէպէտ և կան ինձ տակաւին յինէնէ չափ արձանա֊ գրութիւնք արտաքուստ տաճարին և մատրանցն, և յո֊

լովագոյնք՝ի ժամատանն. և այնոքիկ միայն են արդ պատմութիւնք Բագնայրի, իբր երկուց և կէս դարուց. զի հնագոյն արձանագիր ինացեալ է 1042 ամի, և յետ֊ նագոյն 1266. բայց է և հնագոյն մի ևս, յայտնապէս յետ 1021 ամի[1], թէպէտ և անթուական. այն է արձան Սեդայ, քեռ Գրիգորի Մագխաստոսի, ՝ի վերայ շիր֊ մատր մատրանն՝ օրինակ զայս.

Ես Սեդա տիկնայ տիկին դուստր մեծին Վասակա զուգակից Վահրամա իշխանաց իշխանի որդւոյ Աչոտայ իշխանաց իշխանի տասանորդեցի զվաստակս գեղջն իմոյ Գաղտաի ընծայելով ի սուրբ ուխտս Բագնայրիս վասն յիշա֊ տակի զաւրականին Քրիստոսի հաւրն իմոյ Վասակա փոխեցելոյ յաչխար֊ հէս. եթէ ոք ի մեծամեծաց կամ ի փոքունց կամիցի խափանիչ լինել որս֊

Կապին կամարք կարծրակուռ
Ցանդունդս յախտուն Ախտոյ.
Ի ճոխիչ սայլից հասկաթուռ՝
Թնդան եւ սրտաք ի վերոյ.
Աստեղաթիւ աստղափայլ
Նորահարսութիւնք ոսկեթագ՝
Աբծաթամոյզ մանրաքայլ
Զանցիկս առնեն վարդյատակ.
Մականակիքըն երկրքին
Փայլեն գոնակ արեգին:
Ո՛վ, քանի՛ խուով եւ խաղաղ.
Ո՛րքան մըղեն անդ զիրար
Ախուն, արտօսր եւ ծիծաղ.
Հոգեծըփանք անդադար:
Քանի՛ ամբոխ ազազակ
Ի հրապարակ, յարդասայն.
Քանի՛ այգունք կարմրատակ,
Եւ թըխաթոյր վաղորդայն:
Ո՛րքան կենաց մուտ եւ ել: . . .
ԶԱչխի՛ բաւ՞ ոք թըւել: —
Հաշթեւեալ երթ համաբաւ՝
Կոչնակ տեղեանդ հիսհրաչ: —
Հծծէ հիւսիս առ հարաւ.
Երթոյ ըզդօն կարդոյ վանդ.
Հեզկէն խաղ խաւիղիկ խուժ՝
Բերէն տանին անթիւ խայր.
Հարիւր բարբառ խաժամուժ
Յաղխարհվաճառն անդ ճոխայր.
Եւ զարձեալ հինն Հայաստան
Շահաստանաց չահաստան:
Խուժ՞ յանկարծ թշնամի
Ի կողոպուտ եւ յաւեր. —
Եկեղեցիքն հազար մի
Համահաւաք տան հրաւէր.
Ախին ընակիչ՝ բերդապահ,
Ախին ընակիչ՝ զինաւոր.
Ու Ախծաւին ուղղ եւ վստահ
Ախծաթաղեղն Ղահիտ նոր,
Ի դաստակերտ բըրդանէ
Եւ պաշտպանէ եւ վանէ: . . .

Խրոխտ աչտարակք անթի առ անթի՝
Նմանեալ պարուց պատանեաց
Եւ պճնելոյն ի բահաւանդ
Ի խաղս այգեայց հալանեաց,
Թրլին ճօճալ մահկանեւ՝
Ի սահպնաց լուանեկին:
Տարփեալ ի հարսն եւ յարեւ՝
Զայնէ պահնակ զըղեկին.
Գանչեն սիրով արձագանգք
Եւ Հռովմոսն մահարձանք:
Վառեալ Վահագն աստղավար
Սուր գմբեթից անչէջ Լահ,
Ուր Սմբատ թագ առ արնար
Ու Ախոտ ննջէ Շահանշահ,
Շողայ չիրմաց մանուպատ.
Յորըս Թըւին աներկմիտ
Յաղօթս ի տուրս անընդհատ
Թոռոմանայդ, Կատրամիս: . . .
Քան ըղթատեր՝ կենդանի
Են ինձ գամբանք քո, Ախի: . . .
Ախ օրհասն յեղյեղուկ
Համայնամինչ ոսոխ բաղդ՝
Ժամանեալ գայ. — վահ, եղուկ: —
Ո՛չ ոչ. նա չէ ատ անգաղթ.
Կաթողիկիքս երկնադար,
Կոթողք ու արձանք խաչակնիք,
Եւ Մարեմայս վեհ տաճար՝
Յաւերժութեան ունին նիզ.
Մի բնաւ տեսցէ նա զԱխի՝
Հետակոծոյս ի գեանի:
Լիցի եւ սա լուռ, ամայ.
Ախ երբ, զիմքդ, եւ կամ ուստ. —
Ոչ գիտայ ճետ Ախդամայ.
Գաղտնիք եւ խնամք են վերուստ:
Ոչ ձեռն յաղթիկս, կամ գոռ ոտիմ՝
Վատնեաց եւիք զայն թափուր,
Ախ որ յԵդեմ պահախումբ
Սերովբն Հայոց բոցաստր.
Չի մի օտար, մի գազան
Վարձեացի զվայրն երկնադան:

1 Չի յայսմ ամի մեռեալ է Վասակ Հայրն Սեդայ, որ յիշէ յարձանագրին իբրև վախճանեալ ոչ յառաջ քան զյոլով ամս:

չեալ լիցի ի փառացն Աստուծոյ եւ ընդ մեղաց մերոց համարս տացէ յա-
ւուրն դատաստանի :

Իակ Թուականաւ արձանագիրդ, որ յամի 1042, յա-
րևելեան որմն եկեղեցւոյն արտաքուստ, է Գրիգորոյ ու-
րուման Ծաղկին կոչեցելոյ, եղբօր Մուկաթլի, որ և Թուի
չիշխանական զարմից լինել, և որ ընդհէ վանացս Բա-
գնայրի զկրպակս իւր ՅՆչի, ընդդէմ վընդղկին Վասլի,
վասն արեւշատութեան սորին և որդւոյն.

Ի ՆՂԱ. *Թւ. ի հայրապետութեան Տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի եւ ի թագաւորութեանն Գագիկ շահանշահի որդւոյ Աշոտոյ կամ եղեւ իմ Գրիգորս Ծաղկանս եւ իմ որդեացս որ տուի զիմ դանձագին կուղպակա-նին որ Վասլին վընդղկին ընդդէմ է ի Բգնայրին վանս ի Սուրբ Աստուածա-ծինն ի ձեռն առաջնորդի հաւր Ստեփաննոսի վասն Վասլին արեւշատութեան եւ իւր որդեացն եւ իմ Գրիգորս մեղաց թողութեան եւ ոգւոց փրկութեան եւ որդեաց իմոց. եւ հայր Ստեփաննոս եւ միաբան եղբարքս կամաւ յանձն ա-ռին որ ամենայն ամ զՊաւղոսի եւ զՊետրոսի տաւնին աւուրն պատարագն յամէն եկեղեցիսդ իմ եղբարն Մուկաթլի արասցեն եւ յետ վախճանի իմոյ լինճ մատուսցեն. արդ հայր որ լինի եւ զիմ ժամն խափանէ առաջի Աստու-ծոյ իմ մեղացս պարտական լիցի. արդ եթէ ոք ի մեծաց կամ ի փոքունց յիմոց կամ յատարաց եւ զայս հողս . . . ուխտէս յասլտ . . . պատճառաւ նզովեալ լիցի :*

Կայ առ երի սորան սկիզբն այլոյ նոյնպէս հին արձա-
նագրի, այլ թերակատար մնացեալ. և է այս.

Ողորմութեամբ Աստուծոյ ի հայրապետութեան Տեառն Պետրոսի և ի թագաւորութեան Գագիկ շահնշահի որդւոյ Աշոտոյ . . . եառս զիմ . . .

Ցետ սոցին հնագոյն արձան գտանի՝ի վերայ դրան մա-
տրան Ս. Գրիգորի, յամի 1145, այլ ուրեք ուրեք եղ-
ծեալ. զոր կին մի Ազիզ անուն առէ օրհնեալ? ՝ի յիշա-
տակ որդւոյ իւրոյ համանուան Սրբոյն.

Ի ՇՂԴ *Թվ. ես Ազիզս մեղուցեալ աղախին Քրիստոսի աւրհնեցի զե-*


Մի արհաւիրք մահաշուք՝
Ուր հնչէին պատգոհ
Երեքսրբեան ալէլուք.
Այլ լըռութիւն խնքնախոհ: . . .
Որպէս շուշան մի բեկբեկ
Յառաւօտին մարերի՝
Յօդաթաթաւ հողմաթիկք
Կայցէ ծղօտին առ երի.
Կամ կոյս ի կոյս տապանի՝
Պատեալ ի քող իւր՝ Աչի: —
Փայլակք բըրաց Հայկազանց
Թափք ընդ պատօսր անապակ,
Մանրակոտոր մռունչ բամբռանց,
Հառաչ հեզիկ պատակաւ,
Զըմեռն եւ խունկ եւ քրքում,
Ոչհան յերեալ յանթառամ,
Խաչ խնդաւիթ եւ պտուղ.
Այս անգորրանք յամերամ
Քառմ կիսարթուն քնարանի,
Քաղաքանայր գեղանի: —
Թորգոմաթոհան եւանգան,
Յառեաւր... պնդեա զսիրտ քո վառ.
Դէմսոր Աբանոյ ծաղկաբուն,
Լացեր... կալ զաչքըդ փարխառ.
Եղերամայր մշտամուռնչ
Շատ մեզ լալոնքն Ախտեան: —
Դիք ձեռն ի բանչ հայկաշունչ...
Ահա գիմիթք վերյարեան.
Ահա շուշանըն կանգնի. —
Ողջոյն տամ քեզ Նոր Աչի:

կեղեցիս զՍուրբ Գրիգոր ի յիշատակ որդւոյ իմոյ Գրիգորոյ ի ձեռն հաւր . . .
մանր. Եւ առաջնորդ սուրբ . . . .

Ցետ այսորիկ գտանի Թուական մի ևեթ 1152 ամին.

Ի ՈԱ. *Թվ. . .*

Ի վերոյ դրանն կայ նորագոյն արձանագիրն յամի 1266.
Եւ է Խաւտաղայ իշխանի որդւոյ Սանտխի և Թուին մեծ Խաւտաղայ, որ իւրեանց ասէ « սեփական զսուրբ ուխտն » Բգներ ». որ և այլով ևս արձանագրութեամբ տակաւ ամաք յառաջ (1262), տայ նուէր վանիցն բազում տեղիս.



60. Եկեղեցի Բագնայրի:

որպէս զնան Աչնակ գեղջ՝ զբաժին անդրանկան իւրոյ Սանտխի վեցամեայ վախճանելոյ, զՋրնորիկ վանս՝ հան-
դերձ սահմանաք նորին, ջրաղացս և պահէզս, այլսկք հանդերձ, որպէս ցուցցեն երիզեան արձանգր.

ԶԺԱ ✠ կամաւն Աստուծոյ ես Թաւրաւզ մեծ Թաւրաւզիս Թոռն Սանխա որդիս. իմ անդրանիկ որդին Սանայն որ կէս տարեկան ի Քրիստոս փոխեցաւ յիմ գանձապին հէրէնեցն յԱչնկու որ իմ պապն գնել էր ու սիկելով յիս տվել ինչ իմ պապն մեռաւ ես Թաւրաւզ իմ կնոջն զբաժինքն ակն ու մարգարիտ իմ պարոնին տվի Շահնշահի ու կրկին զԱչնակ գնեցի ու զիմ որդոյն բաժինն զԱսանկն ի Բգներս տվի յԱստուածածինս զվէրն էգին իւր ընձանողիս: ք: չինական զՄեհրեւան ու զԹաչատուր Դուլուսին փեսայն իւրենց հողոյն ու ջրոյն. ի Տգնիս զՋաղացն. յիմ խոտահարն: ճ: բարդ խոտի տեղ որ վանքս ընձէ... սկի արծաթի: Ես Թաւրաւզ զայս ընձաս տվի սուրբ Աստուածածնիս. ով այս գրելոցս հակառակի Աստուածամայրս լինի իւրն դատախաղ ✠ Եւ Տէր Սարգիս եւ հայր Աբրահամ Յուսէփ փակակալ եւ այլ միաբանքս հաստատեցին ի տարին ժ ուր պատարագ է Սանկն ե Թաւրաւզա ✠ Ով որ զայս գիրս խափանէն ժը լցին... հոգով եւ մարմնով. եւ որ հաստատ պահէն աւրհնեալ եղիցին յԱստուծոյ. ամէն:

ԶՍիմէոն պատուղ յիշեցէք աղաչեմ.

ԶԺԵ չնորհիւն Աստուծոյ ես Թաւրաս որդի Սանանկն եւ ի մեր սեփական սուրբ ուխտն Բգներ ի սուրբ Աստուածածինն զմեր զգանձապին զՋրճորիկ վանքն իւր սահմանաւքն չաղացովին եւ պահիպան... եւ զԱզի աղբերն զպահէզն որ իմ պապն գնեալ էր եւ ինձ տուեալ ես յիմ կենդանութեան եւս ի վանքն. եւ հայր Աբրահամ եւ այլ սուրբ եղբարքս փոխարէն հաստուցին մեզ ի տարին. ժ. ուր պատարագ յետ ելից իմո ինձ առնեն. ով եւ իցէ որ մեր արձանագիրս յետ չրջէ կամ... կամ յաւտարաց մեղաց մերոց պարտական եղիցի առաջի Աստուծոյ. Իսրայէլ գրիչ:

Բազում ամաք յառաջ, այն է յամին 1223 կամ 1229, թեալ չինութիւնս ինչ 'ի վերայ յիշեալ տապանատանն, Խաթուն՝ կին վերոգրեալ Թաւրաւզոյ՝ արձանագրելով 'ի և տուեալ զհայրենի կալուածս իւր կամ զառն իւրոյ 'ի վերայ հարաւային գրան եկեղեցւոյն, յայսմնէ 'ի յիշատակ Մոգուաց գեղ (8): Եւ յայսմ ամենայնէ յայտ լինի Սանայի իւրոյ որդեկին տարաժամ վախճանելոյ՝ արա- բազնայրի կամ վանացն՝ լինել սեփական Թաւրաւզեանց:

ՈՀԸ (կամ ՈՀԲ)... ու... ութ... Խաթուն... բարեպաշտ իշխանին Թաւրաւժին հայրենիքն ի Մոգուաց որ է ի հնոյէ... զատեալ եւ բաժանեալ սահմանաւքն եւ այլ... հրշտակաբնակ սուրբ ուխտս ի Բագնայրս յաղագս յիշատա... ոց մերոց եւ անդրանկին մերո Սանայինն որ կիսաւրեակ փոխեց(աւ) եւ սուգ մեծ եթող ծնողաց իւրոց յորոյ յիշատակ չինեցի ի վերայ տապանատանս սպասաւորք սուրբ Աստուածածնիս աստուածասէր հայր Սիմեւոն եւ այլ սուրբ եղբարքս յանձն առին յամէն ամի: ի: ուր պատարագել զՔրիստոս: ի. ուր Խաթունին: ժ: Թաւրասին: ժ: Սանանին անխափան մինչեւ ի ծա-

դումն Որդոյն Աստուծոյ. եթէ ի մեծաց կամ ի փոքունց զմեր ընձայքս հանէ ի սուրբ ուխտէս.. կամ առաջնորդ զմեր ժամն խափանէ մեղաց մերոց պարտական լեցի առաջի Աստուծոյ. կատարիչք գրիս աւրհնին յԱստուծոյ:

Ձայնէ և յահեկէ գրանդ կայ մէն մի արձանագրու- նայն եօթն կուղպակս 'ի քաղաքին և երեք տունս 'ի թիւն, յամս 1208–9. միոյն Խաչերես Լօռեցի տայ վա- ներքսէն. և զուսար Նորա Մամ գիւր կուղպակն.

ՈԾԸ. Ի յամն աստուածապատիւ Տեառն Սարգսի որդոյ Զաքարեան ես Խաչերեաս որդի Աբրահամու Լաւռեցի եւսու զիմ գանձապին եւթն կուղպակն ի չարի վեց ի վերեւն եւ մին ի ներքն... (ս)զքսին ընդդէմ եւ երեք տուն ի ներքսեւն ի սուրբ Աստուածածինս ի ձեռն հաւր Սիմեոնի եւ սուրբ եղբայրութեանս եւ զայգին որ ի Մարմետ. եւ սոքա փոխարէն հատուցին ինձ: ի: ուր ժամ: ը: ինձ: ե: Աբրահամու: գ: Դինարկանն: ք: Հրանուշին: ք: Աքբայութեան ու հաս:

Ես Մամ խաթունս դուստր Խաչերեսին եւսու զիմ կուղպակն որ ի վոզկտերն է ի Բաղնոյ... որ հաստատ պահեն աւրհնին յԱստուծոյ..... անէծք զՅուդային եւ զԿայենին....

Միւս արձանագրան Պարսիմոյ որդի Հասանայ՝ ասպի- սի Օշական գեղ, տայ զայգի իւր Վարդենց-Նորք.

ՈԾԹ. Ի յամն աստուածարեալ եւ մեծարգո Տն Սարգսի վերադիտողի մայրաքաղաքին Անո եւ ի պետական իշխանութեան Շահընշահ Զաքարեան ես Պարսիմն որդի Հասանա ռախս մեծանուն գեաղջն Աւշականո միաբանեցա սուրբ ուխտիս եւ եւսու զիմ հայրենի զայգին զՎարդենցնորքն ի սուրբ Աստուածածինս ի ձեռն բարեխէր եւ սուրբ եղբայրութեանս յիշատակ հոգւո իմո. եւ սոքա փոխարէն հատուցին ինձ զաւր յարութեան Ղազարու բոլոր զեկեղեցիքս պատարագել զՔրիստոս: ե: Պարսիմի: ե: Խութին: դ: Սեգանին. որք հաստատուն պահեն աւրհնին յԱստուծոյ եւ որք խափանեն նզովին ի Քրիստոսէ:

Հետեւողք լինին նմա 'ի նուիրատուութիւն՝ սպասաւորք իւր կամ պաշտօնեայք, Մրուան և Սերոբ որդի Ռատի:

Ես Մրուան միաբանեցա սրբոցս հետ իմ Պարոնին եւ եւսուն ինձ աւր մին պատարագ անխափան:

Ես Սերոբս որդի Ռատին Երեւանեցի եւսու զիմ այգին որ ի Զորդուանն է ի սուրբ ուխտս եւ պարտին սպասաւորք սորա ի տարին: դ: աւր պատարագել զՔրիստոս յանուն Սերոբին:

Ա.յլ ամենայն արձանք քառանիւ չափ՝ գրեալ են յորմունս և ընդ կամարագօտեաք ժամատանն, ՚ի միջոց ժամանակի 1201–1262 ամաց. յորս զատ ՚ի նուիրատուութենց յոլովից՝ նշանաւոր է սահմանադրութիւն Գրիգորի արքեպիսկոպոսի Անւոյ՝ որդւոյ Ապուղամրի, յամի 1215, վասն թուոյ մատուցանելի քառասնից, այսինքն է պատարագաց, տակս միաբանից, ըստ իւրաքանչիւր ամսեանի. զոր և այլուր գրեալ է նորա.

ՈԿԴ. *Կամաւ Հոգւոյն Աբբոյ ես տէր Գրիգոր... ի մեր սեփական ուխտս սուրբ եղբայրութեամբս հանդերձ եթէ ոք ի միաբանից փոխի ի Քրիստոս պատարագ մատուցցեն հարկն՝ ղ՝ խ՝ երիցոյն.. աբեղին՝ գ՝ խ՝ աշխարհական աբեղին՝ բ՝ խ՝ եւ ամենայն եղբայր ասր մի պատարագ եւ որ չկարէ ծ կանոն աղաւթք արասցէ. եթէ ոք յայս կարգելոցս պակասեցուսցէ (մեր) խղճին եւ մեղաց պարտական է առաջի Աստուծոյ*

Տէր Աստուած ողորմեա Մարգարէին ամէն:

Հաստատեալ է և վանականացն վճիռ՝ վասն անխա- վան կատարելոյ զկտակ միաբանիցն, զոյս օրինակ.

Աննամբն Աստուծոյ. *Բնակիչք սուրբ ուխտիս Տէր Քրիստափոր եւ Գամաղիէլ վարդապետս ամենայն միաբանութք զայս կտակ անշինջելի հաստատեցաք եթէ ոք ի միաբանից փոխի առ Քրիստոս զինչ որ անդարձ առնէ եւ իւր հոգւոյն տեսող մի ոք իշխեսցէ խափանել ոչ պատրոն ոչ հայր ոչ միաբան. ապա եթէ լուծանեն յերից սուրբ Ժողովոյն նզովեալ եղիցին հոգւով եւ մարմնով.* Զձեռսէփ գրիչ Տէր յիշեա:

Նման իմն սոցին է և արձանագիր վանահօրն Սիմէոնի. որ առ կարօտութեան ժամանակին, ՚ի պատճառս սովոյ, որոյ և գերութեան, (որպէս թուի յետ առման Ախոյ ՚ի թաթարաց), վաճառեաց տունս ինչ ՚ի կաղաւածոյ վանէն հոգւոյ նուիրատուին (խաչերեսի որդւոյ Վարդի).

Կամաւքն Քրիստոսի այս մեր գիր է սուրբ ուխտիս հաւր Սիմէոնի եւ միաբան սպասաւորաց սրբոցս զերդ որ Խաչերեան Վարդին որդին որ ի Քրիստոս փոխեցաւ եւ զիւր գանձով չինած տներն ի գաղտ դռանն խեչ երեսի սուրբ Մայրս լուսոյ սպա դառն ժամանակի հանդիպեցաք սովս եւ սրս եւ գերութեան ծախեցաք եւ ի սրբոցս ի պէտս անցուցաք եւ փոխարէնս հատուցաք յամենայն ամի երեք ասր պատարագ զերկուսն Խաչերեսին եւ ըզմէկն ամուսնոյ իւրոյ Մլքերոյն. եթէ ոք զգրեալս մեր անփոյթ առնէ եւ խափանէ յերից սուրբ Ժողովոյն նզովեալ եղիցին ամէն:

Ցառաջ և յետ կիսոյ ՃԳ դարու արձանագրեն նուիրատու պայազատք կամ պատրոնք տեղւոյն ՚ի զարմէ Ապուղամրից և Ապիրատից, Շարապշահ որդի Ապիրատի, յամի 1234, որ մեր սեփական կոչէ զկնդեցին[1], և կին նորա Թագուհի, որք նուիրեն մարգս ՚ի Շիրակաւանի և այլ պէսպէս[2]: Նոյնպէս և դուստր նոցա Թայիկ

1 ՈԶԳ. Շնորհիւն Աստուծոյ ես Շարափշահ որդի Ապիրատին ետու ի մեր սեփական եկեղեցիս ի սուրբ Աստուածածինս: գ: ակն ջաղաց ի Շիրակաւանին եւ զթաչին մարգն եւ սպասաւորքս հայր Սիմեոն եւ

այլ միաբանքս փոխարէն հատուցին ինձ: ժը: աւր ժամ: ժ: աւր ինձ: գ: Կուրթէլին: բ: Կիւրիկէի: ա: Հասանա: բ: Աիխաթունին:

2 Ես Թագուհի զուգակից Շարափշահին ետու

թագուհի տաց կուզպակս երկուս[1], և յետոյ ուրեմն յամի 1262 յաւելու և զհայրենիս իւր զՆորս[2]: Ա. նոքօք տէր

տեղոյն կոչի Գրիգոր Մագիստրոս որդի Ապուղամրի յամի 1233, որպէս ցուցանէ այս արձան.

Ի թուիս ՈՁԲ չնորհիւն Քրիստոսի ի տէրութեան տեղոյս Գրիգորի Մագիստրոսի որդոյ Ապուղամրի եւ յաւուրսնորդութեանս հաւր Սիմէոնի եւ Սարգիս Ծմակին աւագերէց որդի Գրիգոր քահանայի ետու զիմ գանձագին հայրենիք այդին զՇնձկանկի զներքի դեհն իւր ծաղկոցովք իւր չորեսին ափնեբովք ի սուրբ Մայրս լուսոյ եւ սոքա փոխարէնս հատուցին յամենայն ամի ուխ աւր յանուն իմ պատարագել զՔրիստոս. եւ այլ ետու զՔարգզեմա տներն զի ուր լինձ վախճան լինի գիշերապաշտաւն եւ մատաղ առնեն. կատարիչքն եւ հաստատուն պահողքն աւրհնեսցին ի Քրիստոսէ Աստուծոյ.

Միւս եւս Ապուղամր որդի Մագիստրոսի և Թոռն Վահրամայ իշխանի՝ յամն 1261–2, երկիցս արձանագրէ, գնեալ ՚ի Տիգրանայ զՂազոց կէսն, և նուիրեալ վանացն, և երկրին եւս արձանքն թերատ են մնացեալ[3]:

Մի ՚ի յետին արձանագրողաց է Գարեգին երէց որդի Մանգիկ երիցու, յամի 1262, որ նուիրէ վանացն՝ ուր գերեզմանք տոհմին էին, զնորագործիկ գիւղ իւր գանձագին, և գրեանս ինչ.

ՁԺԱ. *ի վերադիտողութեան մայրաքաղաքիս Անու Տէր Սարգսի տեառն տեղոյս չնորհիւն Աստուածոյ ես Գարեգին երէց որդի Մանգիկ երիցու եւ ամուսնի իմ Մարեամ միաբանեցաք ի սուրբ Աստուածածինս եւ ետու զիմ գանձագին գեղն զՆորաղբոյրիկ իւր ամենայն անդաստանաւքն որ բնական լեալ է. մի տաւնական մակաղաթ մի աւետարան ոսկետուփ իմ գանձով գնած վասն յերկար կենդանութեան պատրոնաց իմոց եւ յիշատակ ծնողաց Մանկանն եւ Թաճերոյն ✠ եւ հայր Աբրահամ եւ Յուսէփ փակակալ եւ այլ սուրբ եղբայրքս փոխարէն հատուցին ի տաւնի Քառասնիցն զ՝ աւր պատարագ յամենայն ամի բ՝. Գարեգոյնին բ՝. Մարեամ ա՝. Մանկանն ա՝. Թաճերոն. արդ եթէ ոք զմեր պատարագն խափանէ կամ զմեր աւետարանն կամ զտաւնականն ի սուրբ Աստուածածնէս ի մեր գերեզմանէս հանէ յերից**

խաչ մեծածախ եւ աւետարան: Սաւրբ Գրիգորու ✠ Աբդ որք կատարեն եւ հաստատ պահեն աւրինեալ եղիցին յԱստուծոյ հաստատ է ամենայն անդաստանաւքն հողովն եւ ջրովն մինչ ի գալուստ Որդոյն Աստուծոյ:

1 Ես Թաիկ Թագուհի դուստր Շարափշահի ետու երկու կուզպակ յիմ կուզպականոյն որ ի Նալվնդնոցին. եւ Աբաքել եւ Հայր Սիմեոն եւ այլ միաբանքս փոխարէն հատուցին ինձ. ը՝. աւր պատարագ. կատարիչք գրոյս աւրինեալ եղիցին յԱստուծոյ:

2 Շնորհիւն Աստուծոյ ես Թաիկս դուստր Շաբաղաշին ետու զիմ գանձագին հայրենիքն զՆորան ի մեր ուխտս ի Բգնայրս ի սուրբ Աստուածածինս ✠ եւ հայր Աբրահամ եւ այլ միաբանեալ սուրբ եղբայրքս փոխարէն հատուցին յամենայն ամի. ժ. աւր պատարագ. ը՝. աւրն ինձ առնեն Թաիկանս եւ

3 ՁԺ. Կամաւն Աստուծոյ ես Ապուղամր որդի Մաքիստրոսի որ գնեցի զվէս Կաղղուցն ի Տիգրանանց եւ ետու ի սուրբ Աստուածածինս ի մեր սուրբ ուխտս որ զփոխարէնն.....

ՁԺԱ. Կամաւն Աստուծոյ ես Ապուղամր որդի Մաքիստրոսի Թոռն Վարհամ իշխանին վանս ի Քրիստոս յոտոյն ետու զիմ գանձագին հայրենիքն զԿաղղուց կէսն իւր հողովն ու ջրովն ի սուրբ Աստուածամայրս ի մեր սուրբ ուխտս որ մնաւտ ի....

**Ես Թորոսը Ծարեցի Ծարեցվոյն ասեցի զայս պատմութիւնս ի տարին Ցռ. [1562] ի ժամանակս Սուլթան Սուլէյմանայ որդւոյ Սուլթան Սելիմայ որդւոյ Սուլթան Սուլէյմանայ որդւոյ Սուլթան Սելիմայ որդւոյ Սուլթան Բայազիտայ որդւոյ Սուլթան Մահմէտայ որդւոյ Սուլթան Մուրատայ որդւոյ Սուլթան Ուրխանայ որդւոյ Սուլթան Օսմանայ որդւոյ Սուլթան Ալփ Արսլանայ որդւոյ Սուլթան Սելճուկայ որդւոյ Սուլթան Միքայէլայ որդւոյ Սուլթան Սելճուկայ որդւոյ Սուլթան Դուղրուլ Պէկայ որդւոյ Սուլթան Մահմուտայ որդւոյ Սուլթան Սուբուքթագինայ որդւոյ Սուլթան Ալփթագինայ որդւոյ Սուլթան Մանսուրայ որդւոյ Սուլթան Նուհայ որդւոյ Սուլթան Նասրայ որդւոյ Սուլթան Սամանայ որդւոյ Սուլթան Իսմայէլայ որդւոյ Սուլթան Ահմատայ որդւոյ Սուլթան Նասրայ որդւոյ Սուլթան Սամանայ որդւոյ Սուլթան Նուհայ որդւոյ Սուլթան Մանսուրայ որդւոյ Սուլթան Իսհաքայ որդւոյ Սուլթան Ալփթագինայ որդւոյ Սուլթան Սուբուքթագինայ որդւոյ Սուլթան Ալփ Թ

Սակաւ ամաք զկնի (1213) Յովհաննէս քահանայ՝ որդի Հոռմեանց Կոստանդին երիցու, տայ ընծայ, որպէս և 'ի Բագնայրն տեսաւ. բայց անուանք տեղեացն կամ տեսակք ընծայից չնշելոյ են յարձանին.

Ի թվ. ՈԿԲ Շնորհիւ բարերարին Աստուծոյ ես Յովհաննէս քահանայ որդի Հոռմեանց Կոստանդի քահանայի միաբանեցա սուրբ ուխտիս եւ գանձագին արարի... եւ ընծայեցի յԱրջու Աւճի ի սուրբ Աստուածածինս ի ձեռն տէր Գրիգորի որդոյ Ապուղամրի եւ փոխարէն լինճ տուեցին յամէն ամի: ֆ: աւր ժամ անխափան: ի: լինճ: ե: Սիսվարդին: գ: Խաչերեսին: ե: իմ ծնողաց: բ: Խոցադեղին: գ: Միխայլի: ա: Կատային որ հաստատ պահեն աւրհնին յԱստուծոյ եւ որ խափանեն նզովին ամէն:

— Այլ արձանագիր ծանուցանէ զի տէր կամ ժառանգորդ վանացն՝ էր Գրիգոր Ապուղամրենց արքեպիսկոպոսն Աննոյ, որոյ գուշակի զի և նորին նախահարքը էին կանգնողքն. և որպէս 'ի Բագնայրի՝ աստ ևս սահմանէ քառասունս պատարագաց վասն առաջնորդի ուխտին և միաբանիցն, և թերևս 'ի նմին խոկ 1215 ամի.

Հրամանաւ Տեառն Գրիգ(որի արքեպ)իսկոպոսի որ էր ժառանգորդ սուրբ ուխտիս եւ բնակիչք վանացս հայր Գրի... վարդապետս Գերսամն եւ եղբարքս սահման եղաք յիշատակ ննջեց... մինչեւ ցվերջինսն որք միաբան ի սուրբ յուխտս հանգուցեալ են պատարագել զՔրիստոս... ալ յայտնու-թեան ղպահքն: ը: աւր անխափան զամենայն եկեղեցիքս եւ միա... անին որ ի Քրիստոս փոխի հաւրն եւ վարդապետին: գ: ֆ: եւ երիցոյն եւ բնա-

րեքն փառանցին զմինն Մամքանին. արդ եթէ ոք յառաջնորդաց տեղոյս զգրեալս խափանէ կամ ծախէ մեր մեղացն պատասխան տացեն յատենին Քրիստոսի:

ՈՃԶ. Ողորմութեամբն Աստուծոյ ես Աւագ տիկին դուստր Գորգկանն միաբանեցա սուրբ ուխտիս եւ զիմ զնայրենի կէս ակն ծիթհանքն որ ի յիմ ծնողացն ի պսակի ներքեւ ինձ բաժինք էր հասել եւտու ի սուրբ Աստուածածինս. եւ հայր Սիմէոն միաբանաւքս փոխարէնս հատուցին մեզ յամենայն ամի հինգ աւր պատարագ զերեք աւրն Աւագ տիկնա եւ զմինն Գորգկանն եւ զէկն Թաճերոյն. եթէ ոք գյիշատակս մեր խափանէ մեր մեղացն համարս տացեն առաջի Քրիստոսի: Մանասէ գրիչ:

Ես Հասան Կողբցի որդի Մխիթարա ըստիսին Թոռն Համէլին ապաւինեցայ ի սուրբ Աստուածածինս եւ յայլ սուրբքս եւ վասն փրկութեան հոգոց մերոց եւտու զմեր գանձագին հայրենիք ակիսն[1] զկէս դանկն ի սուրբ յուխտս[2] եւ լերամբքն եւ սոքա փոխարէնս հատուցին ի տարին սասն պատարագ զուտ աւրն Համէլի իմ եղբաւրն եւ զերկուսն կատարին. կատարիչք գրիս աւրհնին յԱստուծոյ:

ՈՂՍ. Կամաւ անեղին Աստուծոյ ես Մանգըտվասգ (*Մանգտաւագ*) որդի Թամարտաւլին մշեցի միայբանեցա սուրբ Աստուածածինիս եւ ետու ընծայ ե դահեկան. հայր Սիմեւ.... վարդապետքս եւ այլ միայբանքս փոխարէն հատուցին ինձ ի տարին ի տաւնի սուրբ Սարգսի: բ: աւր պատարագել յանուն իմ զՔրիստոս:

Շնորհիւն Քրիստոսի ես Սարգիս որդի Թաչտոին միաբանեցա սուրբ ուխտիս եւտու ծիթհանաց աղցաւղի քար եւ յամէն ամի: ե: լիտր ձէթ. իսկ հայր Աբրահամ եւ այլ միաբանքս փոխարէն հատուցին ինձ ի տարին: բ: աւր պատարագ. կատարիչքն աւրինեսցին եւ որ հակառակ կան...

Կամաւն Աստուծոյ ես Թաչտուր էտու զՄուլուքին հողն որ թեղենեաց այգոյն ի հետ է ի Բգնայր ի սուրբ Աստուածածինս եւ հայր Աբրահամ եւ եղբարքս փոխարէն հատուցին: բ: աւր ժամ: ա: ինձ: ա: Տիկնոջն. որ հաստատուն պահեն աւրինին յԱստուծոյ:

Զ.. Ես Շահեր Կիրակոս միաբանեցա ի Բգների եւտու զիմ գանձագին հողերն.. ամինակից ներքի դեհին...

1 Յօրինակին «ԱՀՆ»:

2 Թուի աստանօր պակասել բանի:

բեղային: գ: ֆ: եւ աշխարհական հաբեղային եւ մանգանն: բ: ֆ: եւ ամենայն եղբայր աւր ա ժամ արասցէ եւ որ պատարագող չէ ժ կանոն աղաւթս արասցէ. Ողք հաստատուն պահեն զգրեալս աւրհնին եւ մանակից եղիցին սուրբ պատարագացս:

Վերջին արձան յիշատակի, 1289 ամին, է Որդեկայ երիցու Կողբայ, որ անդ զայգին Պառաւենց կոչեցեալ յանուն հաւուն իւրոյ քահանայի, նմանէ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վանացս, գրելով այսպէս.

Շնորհիւն Քրիստոսի ես Որդեկ երէց Կողբցի որդի Դաւթի Թոռն Պառաւ իրիցոյ միաբանեցա սուրբ ուխտիս Արջու Աւճոյ եւ ետու ընձա ի սուրբ Լուսաւորիչս Գրիգոր զիմ հայրենի այգին որ ի Կողբ է որ Պառաւենց կոչի եւ զներքն տունն որ ես չինել եմ եւ փոխարէն հատուցին մեզ հայր Աղբէաս եւ այլ սպասաւորք յամենայն ամի պատարագ ի տաւնի Աւետեաց Աստուածածնին: ը: աւր: բ. ի.. իմ մաւրն Թագուհէ ա կենակցի իմ Մամլնթէ: բ. աղջայ իմ յորոնու (?) բ լինճ Որդեկիս. եւ որք զյիշատակս մեր հաստատ պա աւրհնին յԱստուծոյ եւ որք խաբանեն որոչին ի Քրիստոսէ: Զ: Լ: Ը: Իմ բազում մեղայ Թողութիւն արարէք:

Այլ եւս արձանքն լինչ նշանակեացին 'ի ստորեւ[1]:—Զկալուած վանացն որ յայգիս Մբենոյ և Օշականոյ ապահարոյ Աննոյ, որ է յառաջին քառորդի ԺԳ դարու, և Անդրէաս յամին 1289:

Գրիգոր՝ առ Գրիգորով արքեպիսկոպոսաւ, որ է յառաջին քառորդի ԺԳ դարու, և Անդրէաս յամին 1289:

Հարկ արարեալ է Սահմաղին Պատրոն Աննոյ յամի 1273[2]: Երեք միայն վանահարք յիշին յարձանիդ, Վարդան, Գրիգոր, Մանգասարդ. Երկու միջնաւ հեռի կայ յարեւելից Արջոյ Աւճոյ և նոյնքան 'ի հր. քաղաքին Անւոյ, յարեւ-

1 Կամաւ բարերարին Աստուծոյ մեք Աւիւծս եւ Շուշիկս միաբանեցաք ի սուրբ ուխտս Արջու Աւճի եւ տուաք զմեր գանձագին տունն որ ի սուրբ... ի կալին. եւ հայր Վարդան եւ այլ միաբանքն հատուցին մեզ զ աւր ժամ... Շուշկան: ա: Ազգին: ա: Աստերին: ա: Տիկնոջն: ա: Կարապետին. կատարողքն աւրինեալ եղիցին յԱստուծոյ. Կամաւքն Աստուծոյ ես հայր Վարդան եւ այլ միաբանք սահմանեցաք զԱստուածածինն խոր..... հասարակաց լինի ժամն որ խափան.....

Ես Պարոնիկս միաբանեցա սուրբ ուխտիս Արջու Աւճոյ եւ ետու զիմ գանձագին հողերն զԳերմըստու տնավճնիքն առաջի եղեզն Գինեկոյ ճանապարհն միջի եղեզն....

Ճանուն Աստուծոյ հայրենիք որ կա վանիցս այս է. Բաչխին բուրքն եւ ախոռն եւ զ պատարագ բ աւր Լոյսոտին եւ բ խաչտին եւ բ ծնողաց նոցա. փոլկաբարոց կուղպակն եւ տունն ի ներքեւն. զ աւր պատարագ գ աւր Բունկանն եւ գ Մխիթարչին. Արդելմսեանէ տունն դ աւր ժամ Յոհաննիսի տունն աւր գ ժամ բ իւրեանն եւ ա իւր հաւրն. Սարաճ-

2 Յիշի այս յարձանագիրս Մբենոյ:

փողցին կուղպակն գ ժամ բ աւր Շնաճուորկանն եւ բ Գէորգա: եգեդիմին բ տունն եւ տան տեղ մի գ աւր ժամ գանգատին եւ տակաւքն բ աւր ժամ Պետրոսոյ. Ես Լիստս այլ ետու գ արտ եւ ետուն ինձ գ ժամ. Գրիգոր որդի Ապաներժի եդ տուն վանիցս մաւտ ի սուրբ կաթողիկէ ի հիւսիս կոյս եւ առ ժամ ի տարին ա իւր հաւրն ա Մարեմ կանն ա Նղբայրկանն եւ ա իւրն անխափան:

✠ Ես Աւիւծս որդի Մխիթարա ձոնին ետու զիմ հայրենի բ արտերն որ ի յա.. քիակս է ի սուրբ ուխտս եւ փոխարէն հատուցին սուրբ եղբարքս բ աւր պատարագ ի տաւնի Հռիփսիմեանց յամէն ամի ա ինձ ա Նուրսթէ. կատարիչքն աւրինին ի Քրիստոսէ:

Ես Հազարդեղս միայբանեցայ սուրբ ուխտիս եւ ետու ընծայ տուն ա. եւ սպասաւորք սորայ հատուցին ինձ բ պատարագ ի տաւնի սուրբ Գէորգին յիշեցէ Քրիստոս Աստուած զՄխիթար զԹանկիկին եւ զՍիմէոն եւ զՓոփխիկն զՍզիզն որք միաբէն եւ ընծայաբերք եղեն զՆորիսատն զՈհիսրն զՏիկնացն...

մտագոյնն եղեր ափանց Ախուրենի, ուր գետս այս մեծ
իմն եռանկիւն գործէ, յորմէհետէ հիւսիսոյ խաղալով յա-
րևմուտս և ապա դառնալով յԵ. Հր. և պատէ յերից
կողմանց զքաղաքատուր մի զառ՝ ի վեր սեպացեալ ընդ
արևելս և խոնարհեալ հաւասարեալ դաշտին ընդ ա-
րևմուտս: Մի է սա՝ ի յաւէտ զարմանալի չինից Շերա-
կայ. և թէ ոչ յոլովութեամբ չինուածոցն՝ այլ բազում
մասամբք նման Անւոյ, և յառաջ իսկ քան զայն մեծաւ
խնամով յարդարեալ յերեսս քարաբլրին և՝ ի ներքս
կամ՝ ի սիրտ նորին. և թէպէտ այժմ աւերակ և ամայի,
այլ հաստատադոյզ կերտուածովք և ահաւորահայեաց
դրիւքն՝ ի վերայ անընդհատոր ձորագետոյն և լայնանիստ
դաշտին, յոյժ վեհմակերպ երևի, և յայտնէ զքաջայա-
դուքն և խորատեսս միտս ընտրողի տեղւոյն. որ իբր չո-
րեք հարիւր ամաք յառաջ քան զԱնի՝ կամեցաւ նման
օրինակ իմն ամրոց կանգնել անդ՝ ի պատասպարութիւն՝
յերեսաց Պարսից: Եւ էր նա, ըստ Պատմութեան Խաչէն
Հայկազնեայ, կողմնակալ արևելից կարգեալ՝ ի Մօրկայ
կայսերէ, յելս Զ դարու. « Մահաղ անն յաչխարհէն
» Հայոց, այր չար և անօրէն. և նա չինեալ զամրոցն առ
» ամէն Ախուրեան գետոյ, և կոչեաց զնա Մահագի-
» նեղդ ». որ ծեքեալ՝ ի բերանս փոխեցաւ՝ ի Մաղասա-
բերդ: Զայս յիշատակ ընդարձակէ Զաքարիա Սարկ-
աւագ Պատմիչ ԺԼ դարու, հշգրիտ նկարագրութեամբ
դրիցն, (Բ. թ). « Թագաւորն Յունաց Մօրիկ, էր ազգաւ
» Հայ, ԱՒՀյրատա գաւառէ, յՕշական գեղջէ... Սա ա-
» ռաքեաց՝ ի հայրենի երկիրն իւր՝ ի Հայս՝ այր անի Հայ
» ազգաւ, Մաղաս անուն, չինել քաղաք մի յոչխարհին
» Հայոց՝ յանուն իւր: Եւ նա երթեալ գտանէ տեղի մի
» ի Շիրակ գաւառի, մերձ ՝ի ԱՒՆի, ՝ի հարաւակողմն,
» ՝ի վերայ Ախուրեան գետոյ, ՝ի մէջ երկուց լերանցն,
» ՝ի տափարակ տեղի, որ երեք կողմն բարձր քարափք
» էին, և յարևմտեան կողմն փոքր ինչ դիւր և սակաւ
» ինչ զառ ՝ի վայր. և հաւանեալ տեղւոյն՝ պարսպեալ
» զայն, և կոխեալ գետն՝ անուանեաց Մաղասաբերդ:
» Եւ մինչ գայր իշխանութիւն ոչխարհս ՝ի ձեռն քրիս-
» տոնէից, տիրեցին քրիստոնեայք Մաղաս բերդին. և
» յորժամ անկաւ երկիրս ՝ի ձեռն Պարսից, տիրեցին և
» Մաղասոյ բերդին, մինչև յաւուրս մեր: Եւ ՝ի մերում
» ժամանակի տաճիկ ոմն՝ դատանութեամբն Օսմանցւոց՝
» կեղծաւորեալ ՝ի կերպ Կարմրագլխոց, զգեցաւ մորթ,
» և անուանեաց զինքն օրինապահ, որ է Աւդալ կամ
» Գաւրիշ. երբեմն երթայր ՝ի Կարբի, և երբեմն գնայր
» ՝ի Մաղասաբերդ. և այսպէս երթևեկութեամբ ծա-
» նօթացաւ սուլթանին Մաղասոյ բերդին. և հաւա-
» տարմութիւն ցուցեալ, մինչ զի զրանալի բերդին հա-
» տուցանէր տալ նմա: Եւ եղև գնալ սուլթանին յԵ-
» րեան, որ էր ինքն ազգաւ Բօղչալու, և եթող ՝ի բերդն
» զորդին իւր: Իսկ զաւրին ևս էր ՝ի բերդին. և յա-
» ւուր միում առաքեաց առ փաշայն Կարսոյ՝ և զեկոյց
» նմա, թէ յայս նիզ գիշերի եկայք զաք ՝ի դառն բեր-
» դիս, և ես տաց զան ՝ի ձեռս ձեր: Յորժամ լուան զայս
» Օսմանցիքն՝ խնդացին. և պատրաստեցան արք երիւ-
» բիւր, և ՝ի պայմանեալ գիշերին կազմեցին գինքեանս,
» և եղեալ գնացին վաթսնդուց երիվարօք մինչ ՝ի բե-
» րան ձորոյն. և իջեալ կապեցին զերիվարան անդ, և
» ինքեանք հետիոտս ընթացան անմռունչ ՝ի դառն բեր-
» դին: Իսկ... ուզալն կայր ՝ի վերոյ պարսպին և հայէր.
» և ետես զգօրս Օսմանցւոցն. և գի ՝ի ձեռին ունէր ըզ-
» բանալի բերդին, երայ զդառնն՝ և եմոյծ զնոսա ՝ի
» ներս, և կալան զորդի սուլթանին, և գերեցին զորս
» ՝ի նմա էին: Իսկ կին սուլթանին իբրև եաեա՝ գի տէրն
» զբերդն, պատեաց զերեսն իւր փակեղամբ, և ընկէց
» զինքն ՝ի բարձր քարանցն ՝ի վայր, և մեռաւ. և այս-
» պէս անկաւ քաղաքն ՝ի ձեռս Օսմանցւոց մինչև ցայս-
» օր: Եւ լուեալ զայս խանն Երևանայ, և կալեալ ըզ-
» սուլթանն՝ եհան զմորթն ՝ի տիկ, և եղից խոտով, և
» առաքեաց առ Շահն: Եւ ինքն առաքեաց զօրս առ կող-
» մըն Քրտաստանայ, և բերեալ բազում աւարս և գերիս
» Թուով հարիւր և քառասուն: Այս եղև ՝ի ՌՁԼ թը-
» ւին ». 1638.

Զարդիս, որպէս յիշեցաք, ամայի և աւերակ է բերդ. այլ տակաւին մեծաւ մասամբ կանգուն կան կրկին պա-
րիսպքն որ յարևմտից ՝ի տափարակ կուսէ. արտաքինն
ցածուն է և ունի դուռն յայմմէ կողմանէ. ներքինն բարձր
յոյժ և երիւք կիսարոլոր աշտարակօք. ՝ի մէջոց կրկին
պարսպացդ գետնափոր տեղիք են հաստեալք ՝ի քարա-
ժեռի. նոյնպէս գետնափոր և ամնգուաղ քարահատ
ճանապարհ կամարակապ և ոլորտապատ սկսեալ առ
դրան ներքնապարսպին տանի և հանէ ՝ի գետափնին.
միւս ևս քարաչէն սանդուղք ՝ի կողմանէ այլոց դրան
հանին յաշտարակն. վանն բնական ամրութեան այլոց
կողմանց՝ պարիսպս ոչ ստուարս գործեալ է անդ, թէ
և այնոքիկ ևս քայքայեալ են: Ի բերդին նշմարին մնա-
ցուածք քարաչէն տանց և ապարանից, բազմիք մի և
քառակուսի չրամբար մեծ: Ի վերոյ դրանցն կան տաճ-
կերէն արձանագիրք՝ որք չեն քննեալք և ծանօթացեալք.
իսկ ՝ի քրիստոնէական նշանաց՝ ծանօթ միայն են աւե-
րակք երից մատրանց փոքունց: — Պատմութիւն Զաքա-
րիայ յայս առնէ զի և ցվերջ ԺԼ դարուն չէր աւերեալ
և անյայտեալ տեղիդ, որամ ոչ յետդպէսցի ու-
զևորաց եկեալ է ՝ի քէնն, բայց Թերևս ձեմելի խոս-
ցայր ուզևոր. զի այս թուի կոչեցեալն ՝ի նմանէ բերդ
Ախտառայի, որ և յետին բերդ էր Թուրքաց յայնմ կող-
ման սահմանին Պարսից, ընդ որ Էանց նա ի 26 մայիսի
1694 ամի. և սակ զայն չինեալ յերից կողմանց յանմա-
տոյց քարաբլրի, անելով ոչ սակաւ բերդապահս, և
գեօղ ՝ի ստորև, ուր վճարէին անցաւորք զբաժն. և ոչ
կարի հեռի էր անտի կամուրջ, ընդ որ էանց ՝ի հող
Պարսից [1]:

43. Սակաւուք հեռի ՝ի Մաղասաբերդոյ, իբր մղոնաւ
և կիսով յարևմտից հարաւոյ՝ կայ ամայի գեօղն Կարմիր

1 Passammo poscia per la Forte Arpasuy, ultima fortezza dei Turchi, posta talmente su d' una rocca, che da tre lati non ha bisogno di mura, ma solamente da quello per cui s' entra. V' è dentro buona guarnigione e fuori un villaggio, dove si paga un Ruplo, 10 quarto di ducato della moneta di Napoli, per lo passo di ciaschedun cavallo. — Gemelli.

քէնտ (գեօղ), յորում գոյ ակն ունել ջիւտակ լինչ ՝ի
Բագրատունեաց ժամանակի գտանել, այլ չէ ուրուք
քննեալ կամ մեզ ծանուցեալ:

Ի հարաւոյ սորին՝ երկու մղոնաւ հեռի, և յարևելեան
հարաւային ստորոտս Աւանս լերին՝ կայ ՝ի բարեկիր
վայրի գիւղն Աւանան, այժմ Ազիզ կոչեցեալ և բնակեալ
՝ի Պարսից: Քաղ նշանաւոր է ՝ի սմա եկեղեցին, մի ՝ի
հնագունից ՝ի Հայս և յընդհանուրս, զի չինեալ է յամի
Տեառն 636–7, որպէս ցուցանէ մեծատառ արձանա-
գիրն բոլորեալ զճակատաւ չինուածոյն.

Քսան եւ եւթնեմեայ Հերակղի բարեպաշտ թագաւորի Ներսեհի Շիրակա եւ Աբշարունեաց տեառն եւ Թէոփիլոսի (Ա.)շարունեաց եպիսկոպոս(ի) ես Գրիգոր եղուսար եւ Մարիամ իմ կին չինեցաք զսուրբ եկեղեցիս վասն մեր հոգւոց:

Մակաղրական անուն Գրիգորիոս Թուխ հռոմէականն, որ և առ Բիւզանդացի կայսերօք վարիւր, Illustris (պայ-
ծառ, չքեղ) պատուակոչումն, և յայտ է թէ մեծատուն և պերճ ոմն էր, զի չինեաց զեկեղեցին այն չափաւոր մեծութեամբ, քառանիւ և գմբեթայարկ, յանուն Ս. Աննայիկ, որպէս ցուցանէ արձանագիր Սոփեայ թագու-
հւոյ Վրաց՝ դառեր Աշոտոյ Ողորմածի, գրեալ ՝ի վերոյ դրանն.

Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Սոփէ.. շահնշահի Հաոյ եւ Վրաց թագուհւո թողել եմ զԱլամանն չարչատս վասն իմ հոգւոս եւ արեւուս եւ Շահընշահի հոգւոն եւ Գագկա եւ իւր որդեացն արեւուն. Եթէ ոք հետ մեր յանդգնի եւ առնու ՅԺԸ լոյն նզովեալ եղիցի եւ բաժինն ընդ Յուդայի մատնչի եւ ընդ Սիմոնի կախարդի եւ ընդ Գեհենի բորոտի. եւ սուրբ Աննայ նմա ոսոխ:

Հանմանման ամին կայ ՝ի ստորև միւս այլ արձանագիրք, սկզբնաւորեալ, բայց Թերակատար թողեալ.

Յանուն Աստուծոյ այս իմ ձեռնադիր է ✠ Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Սոփէ Հաոյ եւ Վրաց թագուհւո թողեալ եմ զԱլամանիս չարչատս վասն իմ որ

Զարմանաց է զի ՝ի նշանակեալ ժամանակէ չինու-
թեան եկեղեցւոյն՝ ցվերջ կոյս Ժ դարու չիք յիշատակ
կամ արձանագիր յեկեղեցւոջդ, և ոչ այլ յետ յիշատա-
կին Սոփեայ թագուհւոյ, և ոչ ուրեք ՝ի գիրս գտանի
անուն գեղջդ:

Յարևմտից հարաւոյ գորին իբր փարասաւ հեռի, և
՝ի Հր. Աւանայ լերին՝ կայ Տաշնիկ կամ Թաշնիկ ըստ
արդեացս, տաճկաբնակ գիւղ, որոյ անուն հայկական
ցուցանէ զչինութիւն և զարգաւառանս յերբեմն ժամա-
նակի. այլ ոչ գիտեմ զինչ մնացուած կայցէ ՝ի նմին:

Շուրջ սահմանք գիւղդայիդդ այժմ անչէնք են, բայց
հարկ է թէ երբեմն չինախիտ էին, և Թերևս ՝ի սոյն
սահմանս ոմանք ՝ի գիւղից և յագարակաց վիշեցլոց
յարձանս Բագնայրի, որպիսիք են Նորդ, Գաղտա, Մաև-
ենիտուս, Ռոտանատա, Վարդենից՝ Թերևս նոյն ընդ գը-
բեալն Վարդենցնորդ կամ Վարդենացնորդ, և ընթեռնուի
Վարդենաց-նորք, զի և առանձինն՝ որպէս տեսանեմք՝
յիւրն և Վարդանց և Նորք: Ընդ սոսին յիշատակելի է
և Ջրձորիկ վանքն զոր Խաւռաւ Իշան էտ ՝ի կալուած
Բգնայրի, ընդ որում և զՊիդիաղբերն զպահէզն [1]:

Նաև յեզերս Ախուրեան գետոյ, ՝ի Մաղասբերդոյ և
՝ի վայր մինչև ՝ի սպառուածն Շիրակայ, ոչ նշանակին
գիւղք չէնք, այլ սակաւ և աննշան տեղիք. որպէս, Պայ-
րամքիւնի երկու փարասաւ հեռի յարևելից Աւանայ,
և նոյնքան ՝ի հարաւոյ Մաղասբերդի, հանդէպ Գոլ-
գուվ պահակատան արևելեան Շիրակայ: Ի սորա հա-
րաւոյ երկու մղոնաւ հեռի՝ Թուռքի փոքր չէն, և նոյնքան
հեռի ՝ի հարաւոյ նորին Գառդուշ հանգրուան. և մերձ
նմին ի հարաւոյ՝ Գարագուշի հանգրուան: Խոնարհագոյն
ևս երկու փարասիոք այլ հանգրուան, Միւսան անուա-
նեալ, որ արդ միակ տեղի մարդաբնակ երևի մերձագոյն
յանկիւն միութեան Ախուրենի ընդ Տեկորոյ գետակին:

1 Տես յէջ 116:

46. Հովիտ Տեկորոյ. — Հարաւային մասն Աբեմեան Շիրակայ ընդ մէջ Ախուրեանց, Երասխաձորոյ և Վանանդայ՝ հովիտ է գետոյ վտքու, որ այժմ յանուն Տեկոր գեղջ կոչի Տիկոր չայի, և գայ յարևմտից՝ ի սահմանակցութենէ Վանանդայ, ի լեռնակողմանց. որպէս յիշէ զայս և հին արձանագիր մի համառօտ գեղջն, և ասէ՝ ի գարնանոյ ցաշուն անընդհատ հոսել, ընդունելով վտակ մի՝ ի հիւսիսոյ Ալաճա լերանց: Յդմէ սահմանի յարևմտից կոսէ նշանակի Գարագաղ գիւղիկ. և մերձ՝ ի խառնուրդն՝ ի գետային Տեկորոյ՝ յանուն նոքին հանգրուան կամ գիւղիկ մի և ա: — Ի գլուխ հովտին Տիկորոյ հոսպ յիրեար են երեք հին և գեղեցկաչէն տեղիք, Ագարակ, Թծկօնք և Տիկոր: Առաջինն և արևմտագոյն՝ երկու մղոնաւ հեռի՝ ի Տեկորոյ, առ խառնրդովք բազում վտակաց որ գետանան՝ ի Տեկոր, Ագրակ կամ Էդրեկ կոչեցեալ յայժմուս, և Ագարակ՝ ի հնումն, ունի եկեղեցի չափաւոր մեծութեամբ, խաչաձև, կանգուն կաթողիկէիւ. ՝ի հիւսիսոյ կից ունելով այլ եկեղեցի քառակուսի, երկայն 15 Զ. ամ, և լայն 5 ½. այլ միայն որ մնէնք սորա մնան երկուստեք, այլն ամենայն կործանեալ է: Ոչ է յայս չինող գոյին, այլ առ գրամբ չէն եկեղեցւոյն գրեալ կան արձանք. յորոց առաջինն յամի 1006, բայց թերատ է յառաջին տողն և յանունն՝ որ թերևս էր Պահլաւունին Ապլղարիպ. նոյնպէս և այլ արձանքն պակասաւորք և խանգարք են, գուցէ և առ տպիտութեան քարակոփին. և են տողագրեալքդ [1]: Ցերկոսին երկար արձանն յիշատակեալ եկեղեցի Ս. Կարապիկ, Թուի սա իսկ և ոչ Ամենայ մայր եկեղեցին. իսկ հատառոտ նուիրացն Աշոտ և վկայն Տէր Ամենէ, հաւանօրէն և Աշոտ Գ. Ողորմած արքայ, և Ամենիա կաթողիկոս, ապա ուրեմն յերկրորդում մասին Ժ. դարու գրեալ:

47. Երկրորդ տեղին է Թծկօնք կամ Թցկոնք ըստ նախնեաց, իսկ ըստ արդեացս Հինգ-Ծուղրք որ և Պիշգիխակ ըստ Թուրքաց. իբր կէս մղոնաւ հեռի յարևելից Ագարակայ և՝ի Հ. կամ՝ի ձախմէ գետոյն Տեկորոյ, ոչ գիւղ և ոչ չինանիւթ, այլ տեղի անապատական մենաստանի. արդարև՝ի զարմանալի իմն ամայութեան, յախտիայս գժուարամատոյց կառուցեալ, ՝ի բարձրաբերձ քարափանս խորաձորոյ գետոյն, ուր ահեղախառն իմն կերպարանօք ժայռի բնութիւն՝ի կարկաչանս ուղխոյ և՝ի մարգս յատութիս: Զարմանալի և չինքն. հինգ եկեղեցիք քարակերտք, երեքն կից իրար՝ կամարօք և որմովք, և երկուքն սակաւ ինչ տարանջատք. զարմանալիք և գեղով, վայելմամբ գեղնորակ սրբատաշ վիմացն և վսեմական գմբեթօք, թէ ոչ և մեծութեամբ. և ևս զարմանալի և հաճելի՝ ամենևին անարատ և անաղարտ մնալովք յոտ և կէս դարուց հետէ: Բայց և այլազգ իմն զարմացարեր և վարանեցուցիչ, յիշատակաւ կանգնողին, որ՝ի պատմութեան մերում և՝ի միտս ազգայնոց՝ զիւր սրբի ոմն երևութանայ, իբրև մանիչ թագաւորութեան Բագրատունեաց և Թեկնածու նմին, իշխանն Վեստ Սարգիս. սակայն և գովի նա՝ի պատմչաց՝ վասն մեծագործութեանցն, և առաւարար իմն կոչի «Շինող բերդից և վանորէից». որ և իբր պակ առաջնոյն ձեռագ կերտից, ըստ բանից Անեցւոյն, «Մեծապատիւ Վեստան Սարգիս՝ զինի բազում չինուածոց, բերդից և եկեղեցեաց, զհրաշալի զվանս զթծկաձև չինեաց, պայծառ պակաս զարգարեալ զքաւարանն, որ է Ս. Աստուածածին»: Անուն տեղոյն յօրինակս ինչ գրոցն Թցկոնք կոչի, անշուշտ վասն միակեցացն բնակարանաց, յորոց սակաւք երևին և ցարդ՝ի պարապատս քարափանն՝ յորում երեքեան յարակից եկեղեցիքն են. և որոց առաջին և գլխաւոր յիշեալն՝ի ժամանակագրէնն Ս. Սարգիս, արտաքուստ բոլորչի է, ՝ի ներքուստ խաչաձև բոլորակ թաղօք, 12 ½ Զ. ընդ երկայնն, 11 ընդ լայն. չորք մատրունք են՝ի նոսին, երկուք կրկնայարկք առ խորանաւն և երկուք հանդէպ նոցին: Ոչ սակաւ արձանագիրք են յարտաքին որմունսն, և հնագոյն՝ի նոսին յամի 1033, որ է զայս օրինակ.

Յանուն Աստուծոյ. ՆԶՔ թուականիս Հայոց Տեառն Պետրոսի Հայոց Կաթողիկոսի եւ ի թագաւորութեան Սմբատայ չահանշահի որդւոյ Գագկա չահանշահի ժամանակի որ էր որդիացեալ եւ սիրելի ճորտ Սարգիս : Գ : ից թագաւորայ Հռոմոյ առեալ գ : ից պատիւ անթիւատ պատրիկ վեստ

Յանուն Աստուծոյ ես Գէորգ եռու զՋիթահանքս ի սուրբ Կաթողիկէ եւ ի Գէորգ երեց. եւ պարտի տարին: ի: աւր... Եւ ես Աշոտ հաստատեցի եւ ես Տէր Ամենէ վկա... արդ եթէ ոք հակառակ կա ի մեծաց կամ ի փոքունց: յԺը: իցն ... նզոված է բաժինն ընդ խաչահանուացն եղիցի.

Գտակաւ սկիզբն յետագայ արձանագրութեանս.

. . . . . այսոց եթէ ոք հակառակ կա ի մեծաց կամ զգիր եղծէ յԺը իցն ապեակ է հոգով եւ մարմնով:

1 ՆԾԵ ✠ յանուն Աստուծոյ ես Ապ...ն.... կ հեթե եռու զՋրփողիս.... զմարգ զամէն շաղ իմ արտէս վ.... զաղունդ վրտո կաթաղիկէի խընգագին եւ տուել եմ Թադի Ոսկահանա եւ իւր զաւակացն եւ ինքս ազ(ատ)եալ եմ յամէն չարէ վասն Սմպատա շահանշահի արեւուն եւ Աղբներսեհի հոգւոյն. եւ պարտի: ի: աւր ժամ Աղբներսեհի. Թէ ոք այս հրամանիս հակառ կա նզոված է.

Յանուն Աստուծոյ այս իմ գիր Ամահոկիս որ սվել եմ ի Կիրակոսի կաղիս վասն իմ ոգոս զտունս իմ արեմ փորած եւ զաւակաց ի...

եւ դուխ արևելից. արդ հրամանաւ սոցա կամ եղեւ եղբարց որդւոցս Եզդու Ապլ Չասնա եւ Թատապա տալ զմեր արկեալ եգիւն որ ի Գագկաւնս յեղերն Երասխա ի վանքս Տեկորո արեւչատութեան (չահան)չայի եւ դուկիս մեզ եւ մեր ծնողաց մեզաց թողութեան. թէ ոք այս գրոյս հակառ կա եւ յես[1] սրբոցս հանէ զաւձին Կաինի Յուդաի խաչահանուացն զանէծան առցէ: յԺը: հայրապետացն նզոված է աւրը Երրորդութենէն մի գացի ողորմութիւն յաւուր դատաստանին. հայր որ ի վանքս նստի ամէն տարի: դ: քառասունք կատարել պարտի մեր ծնողացն եւ յետ մեր վախճանի մեզ: թէ ոչ ընդ նոյն անիծիւքս անգցի եւ առաջի Աստուծոյ մեր մեղացն պարտական է:

Աշունք արձանագրողացդ՝ նուիրատուաց և հօր իւրեանց՝ արաբացիք են, և թուին՝ի գնեզ անտի դարձեալք՝ի քրիստոնէութիւն. իսկ թուականն փափագելի առնէ գնոցունն ևս գտանել զչնութեանն, որ ըստ նշանի ժամանակագրութեան Անեցւոյն երևի յամի իբր 1022: — Ի կէս ԺԲ դարու սահմանն միաբանքն քառասունս պատարագաց վան հօր և եղբարց վախճանելոց, ըստ օրինի այլոց վանաց, որպէս տեսաք՝ի Բզնայր և այլուր[2]:

Շնորհիւն Աստուծոյ ի ՈՒԲ թուի. եղեւ նորոգումն վերստին ի ձեռն Պաղտոսի ուստի եւ հաստատեցաք որ թէ ոք յեղբարցս փոխի ի Քրիստոս եւ հայր որ լինի պարտի առնել գ քառասուն ժամ եւ ամենայն եղբայր ա աւր պատարագ առնէ եւ որ չառնէ պատարագ Ժ կանոն աղաւթս արասցէ. ա բեղայրն բ քառասուն. հայրն լաւ մնատաղ առնէ. որք հաստատուն պահեն զգրեալս աւրհնեսցին յԱստուծոյ եւ խափանիչքն նզոված են:

Ցետ այնր թուի տեղոյն անկեալ ընդ իշխանութեամբ այլազգաց, յորոց Թափեալ Մեծին Զաքարիայի՛ զինու զօրութեամբ, արձանագրէ յամին 1211, հանդերձ նուիրատուութեամբ չինից և այգեաց, այսպէս.

Կամաւն Աստուծոյ ի ՈԿ թուականութեանս Հայոց ես Զաքարէ ամիր սպասալար Հայոց եւ Վրաց որդի Սարգսի ազատեցի զսուրբ ուխտս զայս իմով արեամբս ի յայլազգեաց եւ ետու ի սուրբ Սարգիս զվանականսդ Մըջկաղբիւրվին եւ այգի մի ի Բագրան եւ չինական մին ի գիւղս յիշատակ հոգոյ իմոյ եւ յարեւչատութիւն հարազատ որդւոյ իմոյ Շահանշահի եւ եղբաւր իմոյ Իւանէի: Հայր Յովհաննէս եւ այլ միաբանքս հաստատեցին ըզսուրբ Սարգսի զաւագ բեմն անխափան պատարագ առնել լինճ միջնորդութեամբ Դաւթի որդւոյ Շոթբուկայ. արդ էթէ ոք յիմ աղգականաց եւ կամ յաւտարաց եւ կամ ի հարանց գիմ գյիշատակս խափանէ եւ զվանականսդ յայս սրբոցս հանէ: զաւձին: զԿաենին: զՈւդային. զիսաչահանուացս զանէծան առցէ: յԺը: իցն ի սուրբ Երրորդութենէն մի գացի ողորմութիւն. ամէն:

1 Ա յսմնքն յայս:

2 Տես յէջս 22. 118. 122:

— Ա՛լ նուիրատուք և արձանագրողք մինչև ցամին 1210, են յետագայքդ· խաչատ Շեխեանց, յամի 1221.

Թ· ՈՀ· Յայսմ ամի ի տէրութեան Շահանշահի կամաւ բարերարին Աստուծոյ ես խաչատս Շեխեանց եւ ամուսին իմ Աւագ տիկին միաբանեցաք սուրբ ուխտիս խծկանիկ եւ տուաք զմեր հայրենի տներն որ ընդդէմ Գոդոնց սուրբ Սարգսի է եւ զկուղակն որ ի վերա ծռազուկակին է· եւ հայր Յովհաննէս եւ Պաւղոս վարդապետս եւ այլ սուրբ եղբարքս հաստատեցին ի տարին ե̄ աւր պատարագ: գ̄· աւր խաչատին առնեն· գ̄· աւր Աւագ տիկնա· ա̄· աւր Ակիրատին: արդ որք հաստատուն պահեն զգրեալս աւրհնեսցին յԱստուծոյ եւ խաւխանիչքն որոշեալ եղիցին ի սուրբ Երրորդութենէն· ամէն: Տներն ի մայրաքաղաքին է ի յԱնի մատա ի Տիգրանանց ի դուռնն:

Քաւիկ որդի Ճուճայի, զօրավար Շահնշահի որդւոյ մեծին Զաքարեայ՝ նուիրէ այգի մի յամի 1230.

Թվ· ՈՀԹ չնորհիւն Աստուծոյ ես քաւիկ որդի Ճուճայիս զաւրավար Ամիր սպասալար Շահնշահի տեառն իմոյ գնեցի ի հալալ արդեանց իմոց զայգին որ ի Բագրան զոր Ջնաղին կոչի եւ ետու ի սուրբ ուխտս խծկանս ի սուրբ Սարգիս յիշատակ մատր իմոյ Շուշկանն եւ եղբաւր իմոյ Վարհամոյ· Եւ սպասաւորք եկեղեցոյս սահմանեցաք զնաւասարդին աւուր պատարագն անխափան առնել Շուշկանն եւ Վարհամոյ· կատարիչքն աւրհնեալ եղիցին եւ խաւխանիչքն անիծեալ եղիցին· Խաչատուր գրիչ:

Աբրահամ երէց որդի Սարկաւագ երիցոյ որդւոյ Սամուելի երիցու Ագեցւոյ, զոր մարթ է համարել հասանօրէն թուն հաշակատր ժամանակագրին, պարզևելով տուն և կրպակ՝ զրէ յամի 1233.

Ի ⋮ ՈՁԲ ⋮ Թուին չնորհիւն Քրիստոսի ես Աբրահամ երէց որդի Սարկաւագ քահանայի թուն Սամուէլ երիցոյ Ագեցի ետու զիմ գանձագին: ը̄: տուն նորաչէն եւ ի վերէն ը̄ կողակ ի սուրբ ուխտս ի խծկանս յատաջնորդութեան տէր Աբասա եւ վարդապետ Պաւղոսի եւ յայլ միաբան սուրբ եղբարցս· Եւ փոխարէն հատուցին մեզ յամենայն ամի: ղ: աւր պատարագ: դ: Աբրահամու եւ: բ: տէր Պապ երիցու եւ: ա: հարկեացն· կատարիչք զրոյս աւրհնին յԱստուծոյ եւ հակառակքն որոշին ի Քրիստոսէ· եւ յիմ ժամէս ետու ի սուրբ Սարքսի կողման ննջեցեալըն· գ· Խոցադեղին: բ: Յոհաննէս երիցու: գ: Տիրանցին: բ: Շահմամին· այլ ոչ ումէ աղման չկա հետ դուղին· հայր որ եթէ յանդգնի ծախել կամ գրաւականել մի գտցէ ողորմութիւն ի Տեառնէ· Յիշեա Քրիստոս զԳրիգոր աշխատող եւ զՈիմանոս:

— Բռնաւոր և կին իւր Տղայ-տիկին՝ պարգևելով այգիս՝ ի կողմանս Մրենոյ յամի 1240, գրեն այսպէս.

Թուին ՈՁԹ չնորհիւ եւ ողորմութեամբն Աստուծոյ ես Բռնաւորս ծառայ Քրիստոսի եւ ամուսին իմ Տղա տիկին ողորմութեամբ աստուածասէր

Պարոնի իմն Գրիգորս միաբանեցաք սուրբ ուխտիս խծկանիկ եւ ընծայեցաք ի սմա զմեր գանձագին այգին որ ի Մրեն է զոր Աղտոտն կոչեն եւ Աւետման մեծ ագին ի ձեռն աստուածապատիւ եպիսկոպոսիս Տէր Աբասա եւ այլ սուրբ եղբարցս· եւ սոքա փոխարէն հատուցին մեզ զՂազարոս տանէն պատարագն մինչեւ ի գալուստ Բանին Աստուծոյ զկէսն ինձ առնեն Բռնաւորիս եւ զկէսն զուգակցի իմոն Տղա տիկնա· արդ որ զգրեալս մեր կատարեն աւրհնեալ լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ եւ որք խափանեն որոշեալ լիցին ի փառաց Որդւոյն Աստուծոյ:

Ի եւ այլ արձանագիր ՈԿԳ (1214) Թուականաւ, որպէս և միւս ևս՝ ի վերայ մեծի և գեղեցկաքանդակ անջատ խաչվիմի, այլ որմն ընդ միջ ածեալ երկոցուն՝ խափանէ զընթերցուած նոցին: — Ի հարաւոյ կուսէ յարակից է յեկեղեցիս մատուռն փոքր, և յորմն նորին առ գետնաստապանագիրս այս, յամի 1208.

Թուական ՈՃԷ ես Գ··· ոս աշակերտ Մարգարէի քահանա(յի) միայնաւորի կանգնեցի զխաչս պահապան գերեզմանի սորա եւ եղբաւր իմոյ Առաքելին· աղաչեմ յիշել յաղաւթս ձեր·· զվարդապետս: զՊՂ: եւ զԱՆդրէաս եւ զծնողսն իմ· եւ զտէր Առաքելն որ նահատակեցաւ ի Կեչրոր քաղաքի զանազան տանջանաւք:

Երկրորդ եկեղեցին իբր տասն քայլս՝ ի բացեայ, այլ երկար որմով կցեալ ընդ առաջնոյն, բաղմանկիւնի բոլորի է արտաքուստ, խաչաձև՝ ի ներքուստ, լինն Զ· ընդ լայնն և ընդ երկայն, չորիք մատրամբք՝ ըստ առաջնոյն, և երկու զրամբք: Սրճանաղիրք սորին որ՝ ի հիւսիսի և ծածկեալ կամարաւ որմոյ՝ որ յարակից զոյն ընդ երրորդին· այլ երևի Թուական մի ՆԾԵ (1006) եթէ չիցէ ՆԶԵ (1036)· բայց՝ ի վերայ արևմտեան աւագ դրանն գրեալ է վեհմաբար այս տուն Աղմոսաց.

Ա՛յս դուռն Տեառն է եւ արդարք մտանեն ընդ սա:

Թուի եկեղեցիս այս կոչեցեալ Ս· Սամփսոնու:

Երրորդ եկեղեցին փոքրիկ, յարակից երկրորդին Ս· Աստուածածին կոչի, և է քառակուսի, ի ներքուստ խաչաձև կարճաթև· ունի և գաւիթ կամարակապ զառաջեան, այլ կիսակործան· յարևելեան որմն եկեղեցւոյս՝ ի բարձուէ արձանագրէ ծանօթ պաշտօնեայ մեծին Զաքարէի՝ Տիգրան նորոգող վանացն յամի 1213, պարզևելով այգիս և ձիթահանս՝ յԱնի և այլուր.

Ի Թուիս ՈԿԲ Շնորհիւն Քրիստոսի ես Տիգրան հաւատարիմ ծառայ Մանդատորթա խուցէս ամիր սպասալար Շահնշահ Զաքարիայի տեառն իմոյ տեսի զպատգամաւորիւն սուրբ ուխտիս խծկանից եւ Թափուր յամենայն ընչից եւ վերստին նորոգեցի ամենայն պիտուիք եւ ապաւինեցաք ի սուրբ Մայրս լուսոյ· ետու զիմ զգանձագին ակն մին ձիթահանքն որ յԱնի է եւ այգի մին ի Մարմետ է որ Մինչնայգի կոչի յատաջնորդութեանս հաւր Յոհաննի եւ սուրբ եղբարցս եւ փոխարէնս հատուցին զեկեղեցիս ի սկզբանէ տարոյն մինչեւ ցկատարումն տարոյն յիմ անուն կատարեն եւ ի տարին: ի̄: ունք մին իմ պարոնին Զաքարիայի յիմ եկեղեցիս եւ զայլն որչափ ես կեն-

*դանի եմ իմ ծնողացն եւ ապա լինէ յետ առ Քրիստոս ճանապարհորդե-
լոյն մինչեւ ի գալուստ Բանին Աստուծոյ. եթէ ոք ի մեծաց կամ ի փոքունց
պիշատակս մեր խափանէ եւ հակառակէ ոսոխ եւ դատիչ բարկութեան
սուրբ Աստուածածինս եղիցի եւ ոքք հաստատուն պահեն աւրհնեալ եղիցին
ի Քրիստոսէ։*

Աստուած ողորմի Գրիգորո. ամէն։

Նման ամին է ձեւով և մեծութեամբ չորրորդ եկեղե-
ցին, քարընկեցիս ’ի բացեայ յերիցն և յայլոմ քարա-
փան, յարեւելից նոցին. վկան ’ի սմա արձանագիրք, այլ
դերեզմանք արկղաձեւք չուրջ զնովաւ, ’ի միում գրեալ.

*Ո՛ր նահատակեցաւ (ի Կ)եչրոր քաղաքի, որք երկրպագէք Քրիստոսի
սուրբ նշանիս յիշեսջիք զմեզ որ կայք առաջի սորա. Թվ. Հաոց ՈՀԱ.*

Թուի նոյն տէր Աւաքէ՝ որպ նահատակութիւն յիշեցաւ
վերագոյնդ յայլոմ արձանի։ — Հինգերորդ եկեղեցին
քարընկեցիս հեռագոյն յարեւելից կուսէ և յայլոմ քա-
րաժեռի, ձեւով և չափով նման է երկոցուն նախագրե-
լոցդ, և ունի պարիսպ չուրջ զիւրև. առ հիւսիսային
դրամբ նորին կանգնեալ կայ մեծ և գեղաքանդակ խաչ-
վէմ ’ի վերայ հնգաստիճան պատուանդանի, և ’ի ստորև՝
երեք որոցաձև տապանաք. ’ի միումն գրեալ յամի 1034.

*Ի ՆՋԳ թուիս ես Հաջաջ որդի Աղլ Հա(սանայ ի) տղական հասակի ելի
յաչխարհէ եւ ոչ տեսի (զվ)այելչութիւնն սորա եւ սուգ մեծ թողի ծնողաց
իմոց առ Քրիստոս. յիշեցէք վիս աղ.*

Յարեւելակողմեան զիսի պարսպին կայր այլ խաչվէմ ազուցեալ ’ի նոյն, և առ ստորև գրեալ յամի 1231.


*Թվ. ՈՉ. Այս է հանգիստ Անեցի Գրիգորո եւ աւթեւան. որք կարդէք
յաղաւթս յիշեցէք. Տէր Աստուած ողորմեայ սմա։*

Դարձեալ ’ի հարաւային կողման պարսպին վերծանի այս պարզ և գեղեցիկ տապանագիր Թամարայ ուրումն հնոջ.

*Ես Թամարս որ կամն առաջի սուրբ զենարանիս Աստուծոյ եւ սպասեմ
գալստեան Տեառն։*

Որպէս տեսաւ յարձանաղ՝ երեք վանահարք յիշին ’ի
նոսին. Պօղոս յամի 1153, Յովհաննէս յամն 1211–23,
և Տէր Աբան եպիսկոպոս, 1233–40. առ յետնովքս յիշի
և Պօղոս ամն վարդապետ՝ յամն 1208–1233, իբրու մե-
ծապատիւ և նշանաւոր ոք. և Թուականքն ժամանեն
գ1240, որ են առաջին ամք բռնակալութեան Թաթա-
րաց ’ի Հայս, յորոց ասպատակէ թերևս ամայացան խըց-
կունք միայնակեցացն. այլ ատանաւոր ժամանակ ներո-
ղամիս քան զպատմութիւնն՝ յաւերժացուցեալ է գյիշա-
տակ մեծոյդ վկատին, իբրև ’ի բարւոյս անմեղադրու-
թեան նմին, կամ ’ի նշանակ յամենայնի յանդուգն և
բարձր ձեռնարկութեանց նորին. որոյ միւս ևս մեծա-
գործ գաստակերտ երևի ’ի Ծառաքար Երասխաձորոյ։
Փղղի միոյ հոթի սեփականութիւն և գոմք խաշանց և-
ղեալ էին խծկօնք. այլ իբրև ’ի ծագել վերջին պատե-
բազմին Ռուսաց (1877) խոյս ետ նա ’ի տեղւոյն, Յա-
բրահիմ վարդապետ ’ի Թաւշանդլաղ գեղջ Ախալքա-
Շիրակայ՝ ձեռն էարկ նորոգել զայն, յարդարելով սե-
նեակս բնակութեան և գպրոց մանկանց։ — ի լրոյ և
ոչ ’ի տեսոյ՝ ասէ ոմն, յանմատոյց քարափունս անդ խըծ-
կօնից չհնեալ կամարակապ մեղուանոց, ուր այժմ ա-
ղանիք վայրենիք գազարին. և կալտի սալայատակ, և
արօտավայրք ’ի սարահարթին, ուստի խողովակաւ ըղ-
կաթն կովուցն իջուցանէին երբեմն ’ի վայր՝ ’ի վանան։

48. Երրորդ վինատեղին մեծագոյն և հնագոյն քան զառաջինսն է Տեկոր գիւղ, խառն բնակեալ ’ի Հայոց և ’ի Թուրքաց, իբր կիսով փարախաւ կամ նուազ ևս հեռի յարեւելից Խծկօնից, ’ի հարաւոյ կամ յայմէ իբրանաւն գետոյն, յերից կողմանց լեռնապատ, արձակ յարևելից կուսէ գոլով։ Աւերանակցութեամբ գետոյն յայտնի նշանաւոր և գլխաւոր տեղի բնակութեան լինել ’ի հնումն. որում վկայ և մեծաչէն և հաստակառոյց անկործան եկեղեցին, քան զյոդունս եկեղեցեաց Հայոց՝ գուցէ թէ և քան զընտաւ հնագոյն, վասն այնորիկ և արժանի քննութեան հարատապետական արուեստիւն. զի բազում իւիք զանազանի ոճով յեկեղեցեաց Անւոյ, չորիւք և հնգիւք դարուք երիցագոյն քան զնոսա գոլով. և մեծատարր զանգուածովք կանգուն կացեալ այնքան դարս, թէ և նորոգեալ երբեմն։ Քառակուսի է ձեւով, 27 Ձ. ընդ երկայնն արտաքուստ, այսինքն որմիւքն հանդերձ, և նոյնպէս՝ ընդ լայնն 18. կիսաբոլոր խորանին արտաքս քան զկարգ որմոյն հանեալ է. և առաւել նոքաձև այս է՝ զի և երկոքին որ առ նովաւ առանդամունք կամ մատրունք կրկնայարկք, նեղք և երկայնք, արտաքս քան զհասարակ կողմանցն եղեալք են ընդ Հ. և ընդ Հր. իրրև երեք Ձ. և ’ի յատելեալ մասանս անդ նոցին՝ յարևմտեան որմունն՝ երկար կիսաբոլոր դասարկ գործեալ։ Ձորք քառակուսի և յոյժ ստուար սիւնք




61. Եկեղեցին Տեկորոյ։

իրր երեք չափ թանձունք՝ կամարակցութեամբ ’ի կողմանց խորանին և աւագ դրանն՝ ամբառնան զգմբէթն, որոյ ներքին գոգակ խողովակաձև ինն երկար գոգացեալ է, այլ արտաքին կոնն տափակագոյն և լայնագիր է քան զայլոց եկեղեցեաց Շերակայ. վկայ և այս հնութեան ոճոյն, որպէս և անսեթևեթ պարզութիւն ներքնակողման եկեղեցւոյն։ Աւագ դուռնն արևմտակողման այժմ խցեալ է, որպէս և մի ’ի հիւսիսայնոցն. ունի դուռն և ’ի հարաւոյ. ’ի վերոյ զուգակ ցածուն սիւնակաց՝ պարզեալ են պայտաձև կամարք բարւորաց դրանցն աւելի քան զկէս բոլորակի [1]։ ի ճակատին փոխանակ սովորական սեանց՝ երեք երեք մոյթք են կրկնաման քառակուսիք, և ’ի միջի վերջնոցն այսինքն որ ’ի ծայրն, մէն մի լուսամուտք. և քիւ կամ դրուագեալ գօտի քանդակին որ ’ի վերոյ նոցա՝ ոչ է ուրոյն և անջատ, այլ ընդ բովանդակ երկայնութիւն ճակատն անընդհատ ձգեալ և բոլորեալ զպատուհանաքն. գոյ և զոյգ մի անճուկ լուսամտից յհամանիվնանաձև ճակատն, և խաչքանդակ ’ի միջի նոցին և ’ի վերոյ. և լուսամուտս ևս փոքր վերագոյն քան զայն. իսկ գմբէթն չունի չուրջանակի լուսանցոյցս։ Աչսպիսի զոյգ և բարձր լուսամուտք անճուկք և ևս փոքրագոյնք, են և ’ի կողմնա-

1 Զայս քաջ նկատեալ Դէսիէ փաստն Ճարտարապետի, ոչ բիւզանդիկ այլ հնդիկ ինն ոճ նշմարէ, և զի չէ ևս էր ասէ Աբաս-ցւոց մտեալ ’ի Հայս, ապա հաւանելի է թէ ’ի քրիստոնէից մուճաճ առ Աբաքացիս՝ ձեւս այս յարևմտեան Ասիա։

կան երեսս եկեղեցւոյն, առանց խաչքանդակաց. իսկ ատրճին կողմն ունի երիս երիս վայելչահաս աստի և անտի դրանցն և՝ի ծայրան, և երիք պատուհանք նըմանք ճակատուն, նոյնպէս և քիւքն միահետք: Շուրջանակի զեկեղեցեաւն են սալք կամ աստիճանք քարեայք, և զպատուհանսն ոմանք կամարակապ. իսկ ներքինքն ունին ի վերայ զարդ ինչ ի քարանձաւի:



62. Ցատկաձև եկեղեցւոյն:

Ուրանայ եւ Հոռո.... (ե)պիսկոպոսի եւ Տ... յրոնի Տեկորոյ վանաց երիցու եւ Մանանայ հազարապետի հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհաննու Հայոց կաթողիկոսի եւ Յոհաննու Աբշարունեաց յիւր բարեխաւսութիւն եւ բոլոր աղգիս եւ ամուսնի եւ որդեկաց եւ սիրելեաց եւ սրբոյ Սարգսի. Սահակ Կամսարական չինեաց զայս վկայարան.


— Անսովոր իմն թուի անուն վանաց երիցուն որ թեբատ մնայ.. յրոն հաւեալ. իսկ Մանանն հազարապետ անծանօթ է մեզ՝ ի պատմութենէ [3]. այլ երեքին այլ անուանքն՝ կաթողիկոսին և եպիսկոպոսին Աբշարունեաց և Կամսարականին Սահակայ, որ է անշուշտ երէց եղբայր քաջացն և սիրելեաց Ներսեհի և Հրահատայ, զոր դին վերջին ամաց ե դարու, և ոչ այլում ժամանակի. վանն որդ կաթողիկոսդ Յովհաննէս՝ հարկ թէ քաջածա-

1 On s' est longtemps persuadé que ces sortes d' arcades avaient été exclusivement employées, dans l' origine, par les artistes musulmans; mais en les retrouvant dans cette contrée appliquées à un temple chrétien, et à une époque où l' Arménie était exclusivement chrétienne, il faut, je pense, accorder que le principe de ce genre d' architecture est dû plutôt aux chrétiens qu' aux musulmans... Ce système de construction est donc bien évidemment originaire de ces contrées. — Tex.

2 Le caractère de cette construction se naturaliserait facilement en France, et l' on pourrait en faire d' heureuses applications dans les églises de village: c' est surtout la solidité de la structure qui devrait le faire prévaloir. — Texier. I. 120.

3 Քաջիկ քննելի են տառք արձանիդ. Թերևս Մանանն իցէ Վահան մեծն և քաջն Մամիկոնեան:

Աբձանագիր չինութեան եկեղեցւոյն կայ՝ի բարաւորի աւագ դրանն, այլ քարանցն խախտեալ և տեղափոխեալ է ուրեք, և՝ի չորս տողս բովանդակեալ, այլ և այլ վնասուածովք տառից. ՚ի սկզբանն Թերատ բառք ինչ կան, Թերևս մասն այլոց արձանագրի որ երևի ՚ի վերոյն.




63. Մէջ եկեղեցւոյն:

Ա.յսչափս փորագրեալ գոլով մնացեալ է, իսկ հետևորդն նկարագրեալ գրեալ էր, վասն որոյ և Ընդեալ: — Յաղեղնաձև դրանդեացն կայ յիշատակ այլոց Բագրատունեաց և Կամսարականաց Սահակայ, որ է անշուշտ երէց եղբայր քաջացն և սիրելեաց Ներսեհի և Հրահատայ, զորդին վերջին ամաց ե դարու, և ոչ այլում ժամանակի. վանն որդ կաթողիկոսդ Յովհաննէս՝ հարկ թէ քաջածանել ի սուրբ Երրորդութենէս:

նօթ Մանդակունին իցէ. նաև Թուականին պակասու-Թիւն և՝ վկայ է յառաջ քան զդիր Հայկականին լինել: Այլ քանզ դիտողութեան և պատճառանաց յարդութեան արժանի է տառացս այս, որոյ չափական Թանձրութիւն որմոյն և եռաչափեան սեանցն՝ կանգուն և անասան պահէաց զայն՝ այս չորեքտասան դարձ, ՚ի վերայ այնքան սասանութեանց երկրի և բաղխման բանակաց ՚ի բազմաթար դաշտագետինս Շիրակայ. և թէպէտ ոչ որպէս զեկեղեցիս Թէոկնից ասեմ իսպառ անաւրոտ մնացեալ, այլ դոյն կարկատանաւք՝ ցարդ իսկ ըստ բազղի՝ պաշտի ՚ի մերազնեայ բնակչաց գեղին: — Յարձանն մերթ յանուն սուրբ Սարգսի և մերթ Սրբոյ Երրորդոչբական կոչի տաճարդ. Թերևս գոյր անդ և այլ եկեղեցի կամ մատուռն՝ որոյ չերևին հետք: Հնագոյն յարձանն, որք ամենքին Թուաւորք են, յետ վերոգրելոյդ՝ է խոսրովանուշեայ Թագուհւոյ, կնոջ Աշոտոյ Ողորմածի, յամի 971:

Թ·ՆԻ ✠ Յանուն Աստուծոյ ես Խաւսրեւանիւղ Հայոց Թագուհի հաստատեալ եմ զՏեկորոյ չարչեան յեղն կայթ մի. արդ մի ոք իչխեսցէ լուծանել ի սուրբ Երրորդութենէս:



64. Ճաճատ եկեղեցւոյն Տեկորոյ:


— Յետ սորա ութեասան ամաք գնին, այսինքն է յամին 989, արձանագրեալ է տոզաչափ բանս.

✠ Ի ՆԱՀ Թ. Յանուն Աստուծոյ ես Գրիգորիկս եպոս.....

տանէի Թագուհւոյ, յամի 1008, և ամուսնոյ իւրոյ Գագկայ-Աշոտոյ Թագաւորի, յամի 1014, որք ամենայն պնդեցան զդեկոր.

Ի ՆՕԷ Թուականութեանն Հայոց ✠ Յանուն Աստուծոյ կամ եղեւ ինձ կատարանիդէ Հայոց Թագուհի դուստր Վասակայ եւ ամուսին Գագկա Թողեալ եմ զՏեկորոյ չարչեան վանն Գագկա չհանչահի արեւչատութեան եւ իմ որդեացն. եւ վերակացուք սորա պարտական են զերանի որում Թողու-

թիւն ասեն հանապազ. արդ թէ (մի) ոք իչխիցէ լուծանել ի սուրբ Երրորդութենէն: Եւ ես Աչոտ թագաւոր հաստատեցի եւ թողեալ եմ զհարկն քնովիմք յաւիտենից եւ զթաստակն վասն իմ արեւչատութեան եւ իմ ծնողաց եւ եղբարց եւ զաւակաց իմոց որ աւր: թ: կ: Հայոց Ն: Կ: Դ: էր. արդ եթէ ոք հակառակ գա կամ հարկիս կամ չարիատիս թողլուս յԺը ից նզոված է երերեալ լիցի որպէս Կաեան անիծեալ որպէս Քանան բաժին նորա ընդ Ուդաի եւ ընդ խաչահանուացն եղիցի. վասն սուրբ Սարգսի չինութեան եւ վասն մեր հոգեացս ազատեցաք զազգ եւ հայր եւ մայր եւ որդիքս. արդ մեր մեղաց եւ մեր ազգի մեղաց տէր է որ ընդդիմանա....



65. Կողմն ևկեղեցւոյն Տեկորոյ:

Յետ սակաւ ամաց, 1018, նոյնպէս ապահարկ առնէ Թա- Թուլ ոմն, որ կամ տէր էր տեղւոյն կամ հարկահան.

Ի ՆԿԷ *թկ. Յանուն Աստուծոյ ես Թաթուլս Թողեալ եմ զՏեկորս հարկն վասն Յէվանէս Թագաւորի եւ իմ որդւոյն երկար արեւչատութեան. արդ եթէ ոք հակառակ կա իմ մեղաց եւ իմ ազգի մեղաց պարտական է առաջի տեառնին Քրիստոսի:*

Յամի 1036 միաբանք Խծկոնից և եկեղեցական Տեկորոյ հաստատեն կիրաւունս կիրաւութեան Լոյն Տեկորոյ. զի չորս օր ացամ դեղջ անկ էր, և երեք՝ Ագաբակուց գեղջն, ըստ սահմանի առաջնոց Թագաւորաց և ըստ վկայութեան ծերոց և գիտողաց, որոց հարց և փորձ արարեալ՝ վերստին հաստատեցին զառաջին սահմանն.

✠ **ՆՁԵ** *թկ. Հայոց ի Թագաւորութեան Յիվանէսի չահանչահի եւ հայ-*

րապետութեան Տեառն Պետրոսի Հայոց վերադիտողի եւ ի տէրութեան Սարգսի արեւելից Դուկիս ես Հապ... չահիկս եւ եկե(ղե)ցպանս միաբան եղբայրաքս Խծկանից վանն Տեկորոյ Լրոյս եւ Ագարակուց ուղելը զինչ առջի Թագաւորու...ն լել է: զ: աւրս եւ: զ: գիչեր Տեկորոյ է: գ: աւր եւ: գ: գիչեր Աքրկուց հարցի.. երս եւ գիտողս նզովուք եւ երդնլով աւղորդն այտ է. եթէ ոք հակառ կայ: յ: ժ: ը: հայրապետաց նզոված է բաժին ընդ Յուդաի եղիցի եւ ընդ այլ աստուածավաճառին եղիցի եւ ընդ այլ չարագործաց որ առելի են Քրիստոսի. ի գարնմէն ի վեր մինչեւ յաչունն հանապազ գայր Լուրն լերինն անխափան:

Որպէս վերծանի յարձանագրութենդ ընդ Թագաւորի ժամանակին Յովհաննու, և ընդ Պետրոսի կաթողիկոսի յետ և վեհան Սարգիս Դուկ Աբեւելից, և յայսմնէ՝ պայ- ազատ տէր գոլ տեղւոյն. որոյ և կինն՝ դուստր Գրիգորի Մագիստրոսի՝ յամի 1042 ազատագրէ զՏեկոր ի պաշտիտս կոչեցեալ հարկէ.

ՆՂԱ *թվ. Յանուն Աստուծոյ ես Տիկ(ն)ոց տիկին դուստր Քրդղոյ Մագիստրոսին եւ ամուսին Սարգսի արեւելից վեստիս թողեալ եմ զՏեկորոյ զպաշտիտս չահանչահի արեւչատութեան եւ իմ ծնողացս հոգոյն արդ եթէ ոք հակառակ կա իմ ծնողացն մեղացն պարտական է առաջի ահեղ տեառնին Քրիստոսի բաժին ընդ Յուդաի եղիցի կատարիչ հրամանիս աւրհնեալ եղիցի.*

Ծառայիկս յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս:

Առաջինն յարձանացդ յայտ արար զի անդաստին ՚ի Է դարէ գոյն վանք հաստատեալ ՚ի Տեկոր, որ է ասել յաւուրց անտի Թարգմանչաց. յետ այնր ժամանակի մինչև ՚ի Բագրատունեացն արձանագիրս, մի անգամ միայն գտանեմք զանուն Տեկորոյ, կամ լաւ ևս զՏիկոբեցւոյ Յովհաննու, թերևս առաջնորդ եղելոյ վանացն. զոր իբրև մոլորեալ ոք ՚ի կրօնս՝ ՚ի բաց որոշեալ Ի կաթողիկան Յովհան Օձնեցի՝ ՚ի ժողովի Նոր քաղաքի (Վաղարշապատու), յամի 724[1]:

49. Յարևելից Տեկորոյ երիւք կամ չորիւք մղոնօք ՚ի բացեայ, յահեկէ գետոյն, կայ փոքր գիւղ կամ հանգըստուան Գղղի-Գռղի կամ Գղղի-Գալէ, որոյ հանգամանք անծանօթ ինձ: — Սուղ ինչ ՚ի հարաւոյ սորին գետն Տեկորոյ ընդունի վտակ մի օժանդակ յարևմտից կուսէ ի Ջեալ և եկեալ ՚ի միջոյ Քաղաւ և Եաղլուճա լերանց բարձանց, յորոց յերկայնաձիգ ստորոտս կան երկու գետք համանունք, Վերին և Ստորին Սօրհաւիր կամ Սօրհուռ ղուգ. ՚ի միւմ յայնցանէ մատուռն աւերակ: Մերձ նմին ինչ ոմն ՚ի մերայոց զՊագարձրգ տեղի, և հինգ բերդս? աւերակս անդանօր գոլ — ի միջավայր ընթացից վտակին և ՚ի հարաւոյ կուսէ՝ որ է յահեկէն՝ կայ Ծայնի հայաբնակ գեօղ մեծ, կամ Ջուռնի. թերևս կոչեցեալն Ջուռ յարձանս Հոռոմոսի վանաց. ունի եկեղեցի հին կիսափուլ գմբեթաւ, չափաւոր մեծութեամբ և խաչաձև, բայց չկան ՚ի նմին արձանագիրք, այլ բարձրաքանդակ պատկերք չորքոտանեաց, եղին և առիւծոյ, և Թռչնոց: Ի սահմանս գեղջս բղխեն հանքային ազբերք:

Ձանկեան խառնրդոց վտակիս ընդ Տեկորոյ կայ Մեհրդի գիւղ հայաբնակ, մեացորդաւ բերդի և եկեղեցւոյ: Մարթ է բաղդատել զմնացուածս չինուածոցն ընդ միւսոց հիւսիսայինն Մէվրեկայ կամ Մաւրիկայ (12):

Ի Հր. երկոցուն գիւղիցս Ծաղկայ և Մաւրիկայ մաբառնայ երկայնանիստ լեառն կիւրևկ. առ որով յարևելից հարաւոյ Ծաղկայ՝ կան հուլ յիրեար թեհիդիր և Գղղի-Գալի գիւղիկք կամ հանգրուանք: Ի հարաւոյ սոցին առվտակի միում է Ջրոյի հայաբնակ գիւղ մեծ, ՚ի հրաշալղեխուտ երկրի կարմիր և գեղին տափաքարանց. և ՚ի նորին հարաւոյ երկու մղոնաւ հեռի՝ Հանդղ-գայա քարաբլուր, և ապա լերինք որ անջրպետեն ընդ Շերակ և ընդ Երասխաձոր: — Իակ յարևմտից հարաւոյ Ջուչայ՝ իբր փարախաւ կամ երիւք մղոնօք հեռի ՚ի նմանէ՝ Բոլիկ գեօղք երկու, Վերին և Ստորին, ՚ի սահմանակցութեան Կաղզուանայ, ՚ի խանձախաւոն երկրի: Այնոն չինեցին և դիրք նոցին ոտն համարել նոյն ընդ Բաւաց-ձոր տեղւոյ ՚ի Շերակ, զոր յիշեցաքս յէջ 33:

30. Ի հարաւոյ կուսէ լերինն երկու մղոնաւ ՚ի բացէ, յելից Ջրոչկայ իբր երկու փարախաւ, և ՚ի մէջ Տեկորգեղոյ՝ նոյնքան հեռաւորութեամբ, յընդարձակ՝ այլ յա-

1 Ջայս յիշէ Յովհաննէս Սարկաւագ Հակիրճ տող մի բանիւ, որ կարևոր կայծ լինի է ՚ի լոյս եկեղեցական պատմութեան մերոյ:

մայի դաշտի կոչ գլխաւոր չինից այսր մասին Շիրակայ աթոռ դասատուին՝ առ Յովհաննէսայ Իշխանութեամբ, Նախճաւան հայարնակ գիւղ մեծ, յորում և մեծա- կառոյց հին եկեղեցի Ս. Յովհաննու, որոյ գմբէթ անկեալ է և ի յետին ժամանակս յարկեալ, նոյնպէս և խաթարեալ որմունքն կարկատեալ են, ի պէտս պաշտաման. արձանագիրքն ևս խանգարեալք են, և միայն ցորդ նոցին ունի թուական 1035 ամի, առ Յովհաննէս Սմբատ թագաւորաւ, գրեալ առ գրանն ի նկրքուստ.

Ի ՆՋԴ թուականիս ի թագաւորութեանն Սմբատայ Շա(հնշահի) որդւոյ Գագկա ես Գրիգոր .... եւ թոռն Զուտասին ... (Աեւփ)աննոս յիմ հայրենի ....:

Թերևս հնագոյն քան զայդ է արձանագիրն որ ի հարաւոյ կողմանն արտաքուստ [1], և ևս հնագոյն որ ի հիւսիսոյ կողմանէ մեծամեծ տառիւք, որ և մաղթողական իմն թուի, այլ ըստ առաջնոյն թերացեալ.

Աստիաննոս յառաջաւաքեալ եւ նախասար(կաւագ) .... զԳրիգորի ծնաւղն ... Հիպատոս ....

Ցառաջ քան զսակաւ ամս, յերի եկեղեցւոյս՝ ի թիկանց կուսէ, յայանեցան գեհենափոր մուտք և քարեղէն սանդուղք իջից ի դամբանարան քարաշէն. ուր և տեսան երկու տապանք արկղաձևք, որմով զատուցեալք յերկրաց. ի վերոյ միոյն գրեալ էր, որչափ ստուգի յընթերցուածոյ քննողին, թերևս ոչ քաջ վարժ[2] յայսպիսի քննութիւնս, այս գեղեցիկ և արժանաքնին տապանադիր, առանց թուականի.

Աստուածոյ հրամանաւքն եւ աստուածակոչ հրաժարմամբք աստ է հանգուցեալ ընդ հարս իւր երանելի Տէր Աբրահամդ Կամնարական Ապուհուսպատ պատրիկ եւ իշխան Հայոց որդի Հրահատս Պատրիկի Շիրակա եւ Աբշարունեաց տեառն եւ ամուսին Շուշանա Մամիկոնենի.

Գուցէ նորին իսկ Շուշանայ իցէ ընթերակայ տապանն: Ի կարգս կամնարական իշխանաց և տեարց Շիրակայ անյիշատակ է սա ի պատմչաց. և թուի լինել որդի քաջին և եղբայրասիրին Հրահատայ եղբօր Վերսեհի և Սահակայ վիճոյի եկեղեցւոյն Ցեկորոյ. անչուշտ նա, և կամ մի ի մերձաւորացն՝ և այսր Նախճաւանի եկեղեցւոյս է վիճող, զոր և թերի և վերջին բառ արձանագրութեանցն.. Հիպատոս.. յայտ առնէ՝ զԱպիհիպատ պատուոյ մակդիրն. յորմէ և եկեղեցին նոյնպէս ճանաչի Ջ դարու վիճած լինել. և արժանի մեծ խուզարկու քննութեան տեղիս այս, և որ չուրջ դիւրին: Ի սասանութենէ երկրի՝ ասէ զկործանումն գմբեթին, ոմն ի մեծայոց [3], որ և վկայէ լինել առ նովաւ գեհենափոր նըկուղս. որք և ի ճահ գան հին համբարանոցաց ընկիզ տեղանց երկրիս Կամնարականաց, որոց և Ոստան գոլ գուշակի Նախճաւան, որպէս և մինչև յայժմ գլուխ գիւղօրայիկ կոչմանս էր: Զերկոսին ևս հանգամանքս տայ գուշակել պատմահայր մեր Խորենացի. ղի ասէ

(Գ. լբ), Աբշակայ Բ յետ կոտորելոյ զկամնարականան Աբմաւիր՝ անդր հրամայէ կուտել զհամբարս նոցա. «Զորոց պեղեալ երկուս խորս յոյժ քաջախորս և աստա- » կապէս լցեալս, որ ի չինին Նախճաւանի, բերին սայ- » լովք նոցին աւանին». ուրանօր և զսակերս գազանակուր եղելոց տերանց իւրեանց՝ « հաւաքեալ ի սայլսն, » ներքոյ եղեգանն, բերեալ թաղեցին ի նոյն խորս. զոր » զգացեալ Աբշակայ՝ հրամայէ զսայլորդսն ի վերոյ խո- » րոյն կախել զփայտէ »:

31. Ի չրջասիրեա տահմանս Նախճաւանի ոչ նշանակի ամենևին չէն տեղի, և սակաւ ի տարին գնացս գետոյն Ցեկորոյ. առ որով յահեկէն՝ որ է ի Հ., փարատեալ հեռի ի Հր. Եւ. Մարիկոյ՝ փոքր գիւղն Պաձալը կամ Բաձալա, յորում միայն աւերակք երևին. և խաղարհագոյն ևս իբր կրկին փարախաք Ցիւզ-Դիլիտ, զի են անդ անցք գետոյն, որպէս և ի հանդիպոյ նորա ընդ Ախուրեանն. և փարախ մի ևեթ հեռաւորութեան է ընդ երկոսին: Եւ ևս խանարհագոյն և երկու մղոնաք ևեթ

Գագա որ... ի կատարած աշխարհի ... դոյն արեվոյն եւ ...


1 ... Նայ կամաւքն Ամբա... Ամդրէաս Մրենոյ — խաւսուխեմ սուրբ Ստեփան ... Շահնշահի


2 Ոչ դիտեմ՝ այր հանդիպեալ և գաղափարեալ էր զտապանադիրս գայս, զոր մտերիմ ոմն՝ ամաչ չատաչ առաքեաց մեզ. և արդ ի պահու տպագրութեանս՝ այլոց լանաւորի խոստումն է առաքել տեղեկութիւն գայմանէ. Թերևս ժամանեսցէ ի յաւելուած ծանօթութեան ի տեղոջ ուրեք մատենիս:

3 Տէր Պօղոս Վարդապետ Պետրոսեան:

ի վերոյ խաւնրդոց Ցեկորոյ ընդ Ախուրեան՝ նշանակի փոքր տեղի ինչ Գիչ անուն, այլ չգիտեմ որպիսի:

Իսկ ի միջոցի տեղոյ երկոցուն գետոցն իբրև մղոնաւ հեռի յերկուցն ևս, որք ցամաքակղզի իմն եռակողմն գործեն անդանօր, և երկու մղոնաք ևեթ ի Հս. Բագաբանի, կան աւերակք յետին շինի արևմտեանն Շիրակայ, հռչակաւորն Մրեն, այժմ գադաթաղ կոչեցեալ, վանն այգեստանեացն չուրջ յոլովութեան, զոր ունէք վանն աւերածոյն սիրեն կոչել Խարապա (աւեր). ղի այնպիսի իակ է տեղին ընդարձակ և խուռն աւերօք բազում չինից, որք և արտաքոյ սահմանացն՝ յայգեստանսն եւ բևին, և համարին վինել գերեզմանք նախնի բնակչաց Մրենոյ: Անուն տեղոյս յիշի գառաջինն ի պատմութեան մերում ի կէս ե դարու, առ Վարդանամիքս, ի սակս երիցու տեղոյն՝ Խորենայ, որ ընդ մեծին Ղևոնդեայ երիցու Վանանդացւոյ՝ նախապատիս այլոց երիցանց կարգի ի ժողովի. և գաթէեալ՝ ընդ նմին՝ իբրև այր մեծարոյ և ճարտարաբան նուիրակ առաքեցաւ առ Ս. Վարդան,





66. Մրենոյ եկեղեցին:

ըստ բանից Յովհաննու կաթողիկոսի. և ամենայն յետագայ պատմիչք, Ասողիկն, Սամուէլ, Վարդան և այլ ժամանակագիրք, իբրև յոյժ հրաշակերտ և աչքարհաճոյակ չինուած յիշեն զնկեղեցին կամ զփաթողիկէն Մրենոյ. և զշինութիւնն կամ զհիմնարկութիւնն առեն յամի 613–4. և արդարև մնացուածք նորին՝ զնոյն վկայեն ակներև, բաղդին պահեալ զնա՝ թէ ոչ ամբողջ այլ ոչ և խափանքայքայեալ, որպէս այլ չէնքն, և ապարանք և դիւանա-

րանք Բաղրատունի Թագաւորաց, որոց հիմունք և հեղ լոկ երևին. Նոյնպէս և անուանի այգեստանեացն՝ քաղաքաւ սահմանք, զի երեքթև խոպանացեալ՝ ճարակս լոկ ընծայեն արդ արօտականաց: Արդ տաճարս այս սահմանակիցն՝ պարզ քառակուսի է ձևով, 18 Ձ. ընդ լայնն և 30 ընդ երկայն, ՚ի մոխ գրանն մինչև յորմն կիսաբոլոր խորանին, որ որպէս զՑեկորդն ելանէ արտաքս քան զկողմն լայնութեանն. Թանձունք են որմունքն, որպէս և չորեքին սիւնք ՚ի միջին՝ ատաղձք, աշքառակուսիք՝ այլ երկայնանիստ բազմանկիւն խարսխօք, որք հանդերձ երկաթամիւք որ առ արևմտեան մեծի դրամբն և քառակոյս կոմնական նրբագոյն որմեցեալ սեամբք՝ կամարօք ձգելովք՝ ամբառնային գոյակապն անշուշտ գմբէթ, զանկասն արդ և քայքայեալ: Երկուսեքն խորանին են աւանդատունք կամ մատրունք վայելչաձևք: Այլ նշանաւոր քան զայլ ինչ ՚ի կաթողիկէս, ըստ այժմեան միացուածոց, են բարձրաքանդակ պատկերքն ՚ի վերայ դրանցն. արևմտայնոյն՝ հրեշտակք երկու կանգնեալ և արք վեց ՚ի ստոմն, ոմանց մատեան ՚ի ձեռս ունելով. հիւսիսայնոյն՝ մանուկ ձողաբարձ խաչ ունելով ՚ի ձեռին, և ծեր մի երկրպագու, երկոքին ևս անկեալ ՚ի ծունր, և երիվար համեստեալ առ նմին. զոր ՚ի կարծել զԱհառաւնին. Նոյնպէս և այլ ծեր մօրուեղ երկայն պարեգօտիս քառակ ՚ի ձեռին, և ծառ ՚ի թիկանց նոցին. բայց յարուեստ ճարտարութեան զուրկ են քանդակքն: Առ եկեղեցեաւն են հին չիրիմք, կէաք արկղաձևք և բարձրաղիրք, այլք ըստ սովորական տարազաւ տափակք, և քանդակազարդք, այլ ոչ նրբեղէն որպէս զԱյնոց: Յարձանագիրն որ յարևմտեան և ՚ի հարաւային արտաքին երեսս որմոյն՝ ոչ ընթերցաւ դեռ անուն և թուական շինողին, զի արձան մի ՚ի վերնակողմն արևմտեան գրանն անվերծանելի մնաց ՚ի քննողէն՝ առ յոյժ բարձրութեանն. իսկ որք ընթերցանն՝ առ չնաւէր Բաղրատունեաք են գրեալ, և առաջին թուականաւ յ՚992 ամի, որ է այս.

Յանուն Աստուծոյ ի ՆԽԱ. Թիվականին ես Դավիթ Վարդա որդի էտու զիմ այգին զայն որ ի գետեզերն իմ ձեռաց արկել ի սուրբ կաթողիկէ ի ձեռն աստուածապատիս եւ հոգեւոր տեառն Սահակա եւ պարտիս եմ ընդ գեցեալ մինչ ի միւսանգամ գալուստն զբարեկենդանին ուրբաթ աւրն պատարագն յամենայն եկեղեցիս յիմ անուն մատուցանել. եւ որ ոք առե կամ յապիշտակել իմ մեղացս եւ իմ ազգի մեղաց պարտական եղիցի առաջի Աստուծոյ եւ յԱստուծոյ դատապարտ եղիցի եւ մնան եւ բաժին ընդ խաչահանս կրեցէ. իսկ կատարիչ գրոյս աւրհնեալ եղիցին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց:

Ջոյս տուրս նուիրաց հաստատէ Սոփիա զվոյ, իւրով յատուկ անթուական արձանագրութեամբ.

✠ Եւ ես Սոփի դուստր մեծին Աշոտոյ Շահանշահի Հայոց եւ վրաց թագուհի տվեալ եմ եւ հաստատեալ զԴավթի զայգին ի սուրբ կաթողիկէ եւ ի տէր Սահակ եւ ի նորին աթոռակալս զոր ինքնս անգարձ էր արարեալ վասն Դավթի հոգւոյն եւ վասն իմ եւ վասն Գագիկ Շահանշահի արեւշատութեան եւ որ ոք յապըշտակել չանայ յԱստուծոյ բանէն... եալ եղիցին իսկ հրամանակատարքն աւրհնեալ եղիցին յԱստուծոյ:

Եղբայր զվոյիդ՝ Գագիկ Ա. արքայ՝ արձանագիր հրամա- նաւ ազատ կացուցանէ զՄրէն ՚ի կոռ անուանեալ հարկէ.

Յանուն Աստուծոյ այս իմ հրամանք են Գագիկ Շահիանշահի ազատեալ եմ զՄրենոյ զկոռն որ ի Նախճաւանի էր գմարզոյ եւ զելլն ի ձեռն խնդրոյ աստուածապատիս տեառն Սահակա Աչարունեաց եպիսկոպոսի որ անմոռաց խնդրէ ի Քրիստոսէ Թողութիւն լինել մեղաց իմոց. արդ աւր որ ընդդիմանա իմ ա(յս)հրամանացս կամ յիմ որդեաց կամ այլ որ եւ

եղէ պարտական լիցի մեղաց իմոց եւ իմ ամենայն ազգի եւ սպանման ա- րեանն Քրիստոսի. իսկ կատարիչ գրոյս աւրհն եղիցի ի Քրիստոսէ. Սուրբ կաթողիկէ եւ սուրբ նշանս կենաք գրոյս. Եղեալ առաջնորդ բարոյս Չարպ Հայոց տանուտեր. Վահան քահանայ գծող:

— Թոռն Թագաւորիս, միւս Գագիկ (Բ), ՚ի սուղ և յառաջեալ ամի անդ Թագաւորութեանն, որ է 1041, առնէ զայդ ինչ հարկս, արձանագրելով ՚ի ստորև՝ նմանողութեամբ բանիս հասուն իւրոյ, այսպէս.

✠ ՆՂ Թուականութեանս Հայոց ի հայրապետութեան Տեառն Պետրոսի եւ Խաչիկ Հաց կաթողիկոսաց այս իմ հրամանք են Գագիկ Շահանշահի որդո Աշոտո. ազատեալ եմ զՄրենոյ զՀարկն զծուծ եւ մրուր զկապիճքն.. իմոցին եթէ ոք ընդդիմանա հրամանաց իմոց յիմոց կամ.. ով իցէ պարտական եղիցի սպանման արեանն Քրիստոսի եւ ամենայն ազգի մեղաց... յԺր հայրապետացն նզովեալ եղիցի կենաւք եւ ի մահու. Եղեւ առաջնորդ Հաց տանուտէր.

Այլոց ևս արձանագրի յամի 1063 կայ սկիզբն միայն, յորմէ և զուշակի զի երկաթեան էր գրելին.

Ի Յարեդական տոհմիս տումարիս եւ Թվ. Հ. ի ՇԺԲ ամաց չր...

Յարձանաց աստի երևի լինել Մրենոյ ՚ի հնումն Աչարունեաց գաւառի մասն, գէթ ընդ նորին եալսկոպոսաւ վիճակեալ: Նշանակելի է և Հայոց տանուտերանց յիշումն, որ թերևս զՄարզպանն իշխան նշանակէ, որպէս և Հարպդ անուն զԱզգղարիպ: — Այլք յարձանագիրս նոցին են ՚ի հարաւակողմն եկեղեցւոյն, և յետ երկուց դարուց գրեալք, ՚ի կիսոյ ԺԳ դարու ցվերջն կոյս. որոց առաջինն՝ յամի 1251, հրամանաւ Շահանշահի որդւոյ մեծին Զաքարիայ, և առաջնորդի տեղւոյն, խաուս արգելու զանչափահասից ձեռնադրութիւն.

Թուակ. Զ Յամս աստուածապատիս Տեառն Կոստանդեա Հայոց կաթողիկոսի.. հրամանաւ մեծին Շահանշահի եւ յառաջնորդութ(եան). տէր Գրիգոր եթէ ոք յեպիսկոպոսաց կաշառաւք է.. առնէ կամ անմուրուս կամ առանց ընտրութեան մասն ը(Յու)դասին առցէ եւ զԱխմանի կախարդի. ով զգիտս ջնջէ.. ջնջի ի կենաց գրոյն.

Երկրորդն է յամի 1273 Սահմադինայ Պատրոնի Անւոյ, որ ազատագրէ զհարկ այգեաց ոմանցն Աւրջոյ-Աւանայ (43).

Թուակ. ՉԻԲ ողորմութեամբն Աստուծոյ ես պարոն Սահմադինս ազատեցի զտուրք ոմանցն Աւրվա(ռճ)ո այգեաքն Մրենոյ եւ Աւշակնո ի խալալ եւ յերրորդ հարկէ որ բնական ազատ էր ոչ ամիրխո... ոնաւորի ոչ ումի ձեռն չկա ի վերա վասն արեւշատութեան որդեց իմոց եւ քաւութեան մեղաց մե.. ազատ մինչ ի ծագումն Քրիստոսի. արդ թէ ոք ի մերոց կամ յաւտարաց..:

Նոյն Սահմադին Թոռ և արձանագրողն յամի 1284, լով նախ զՄրեն և ազատ բառնալով զտանտին կոչեցեալ Սէնոպ մականաւանելով զինքն և որդի Աւետաց, գնեհարկ հայի.

Թուակ. ՉԼԴ Կամաւն Աստուծոյ ամենակալին այս մեր արձանագիրս է

պարոն Սէնոպ Սահմատինս Աւետեց որդոյս եւ կենակից իմ Ոփտուրիտայ որ յառաջ գնեցի զՄրէն յիմ հալալ արդեանց եւ հաստատեցաք արձանագրով եւ թողաք զՄրենոյ տանսկն հացին որ ի չարիատն նախ մեզ արեւշատութիւն եւ որդեաց մերոց եւ յիշատակ յետ ելից աստի կենացս եւ մեզ մեղաց թողութիւն եւ արձան տալ մինչ ի գալուստն Քրիստոսի. արդ էթէ ոք ի մերոց կամ յաւտարաց զհաստատ արձանս մեր խափանել չանայ պարտական լիցի սպանման արեն Որդոյ Աստուծոյ եւ տատաւղ նորայ սատանա լիցի եւ զյաւիտենից անէծն ժառանգեսցէ զՈւդաի եւ զԿաենին եւ հաստատ պահաւղքն աւրհնին յԱստուծոյ. Կիկլիչանայ ամիրութեամբս գրեցաւ.

Եւ յետ ամաց չորից, այն է յամի (1288) բառնայ և զբաժ խաղողոց և զգինւոյ, յաւելուլ միւս ևս արձանագիր.

Թ. Հ. ԶԼԷ Յանուն Աստուծոյ եւ միշնորդութեամբ ամենայն երկնաւին եւ երկրաւին զաւրութեան ես Պարաւն Սէնոպ Սահմադինս եւ ամուսին իմ Ոտուրտա վասն փրկութեան մեղաց մեր եւ վասն յերկար կենդանութեան զաւակաց մերոց եւ վասն չինութեան համար Մրենոյ հացին չարիատն թողել էաք. եւ հայ մալ թողաք զէգեց գինս եւ խաղողի խալէն որ այլ ոչ ի մերոց եւ ոչ յաւտարաց ոչ ով չխառնէ. ով հակառակի եւ զմեր յիշատակս խափանէ նզովի յԱստուծոյ եւ յիր հայրապետացն եւ մանն եւ բաժին նորա ընդ Ուդաի եւ ընդ Կաէնի եւ ընդ սատանաի:

Նշանելի է ի նախագրեալ արձանին ամիրութիւն Կիկլիչանայ, զոր կարծեմ ոստիկան կամ կուսակալ Թաթարաց լինել ի Շիրակ. և թաթարատիպ անուն կնոջն Սահմատինայ՝ Ոտուրտա կամ Ուրտուրիտա: — Վերջին արձանագրութիւն ի Մրեն է ի 1295 ամի, Դաւթի ուրուանն նաւրաքառուի.

Թ. ՉԽԴ Կամսան Աստուծոյ եւ Դաւիթ միաբանեցա սուրբ կաթողիկէիս եւ արարի արդիւնք. տէր.. այլ սպասաւորք եկեղեցոյս փոխարէն հատուցին մեզ ի տարին ՌԺամ ի տաւնի Դաւթի եւ Յակոբայ: ա. լինձ.. Դաւթի եւ: ա: ամուսնոյ իմոյ Էլ խաթունին կատարիչքն աւրհնին յԱստուծոյ:

— Ձիշտակէան յառաջնումն արձանի Տէր Գրիգոր և ի վերջնումն Ընդեակ, այլ միայն նշանակն թողեալ Տէր, չէ յայտ առանձինն եպիսկոպոս իցէ իբր Աւշարունեաց յաջորդ, թէ մանաւանդ եպիսկոպոսն Անւոյ:

Ի սփիւռս սահերակաց Մրենոյ են և երկու մատրունք փոքունք. ի չրջանակի դրան միոյն գրեալ է յամի 1277.

Թ: ՉԻՋ. Ի հայրապետութեան եւ թագաւորութեան Հաոց տեառն Յակոբա եւ Լեւոնի եւ ի պարոնութեան Սահմատինին վերակառուցեալս զայս խորան յանունադրութիւն Յիսուսի Քրիստի մերո որ է պատճառ աղաւթելոյ ի սմա եւ գիս զՄիս. վարդապետս եւ որք աւգնեցին յիշեցէք ✠:

— Իակ խաչվէմք գամբանականք բազումք են յայլ և այլ կողմանս եկեղեցւոյն. յորս գոն և մեծամեծք և հաստատ կառոյցք որմածոյք. ի միում ի նոցանէ արձանագրեալ է այս բան.

Ով սուրբ խայչ փրկական եւ ներկեալ արեամբ Որդոյն Աստուծոյ ի քեզ ապաւինեցաք ծառայքս խաչելոյն Քրիստոսի եւ Մարտիրոս եւ ամուսին իմ Վարդուտս եւ հարազատ որդիք մեր փառսամն Չմայէ[1]... Սգս (Սարգիս) Քհ (քանանայ) եւ քոյր մեր Ն֊ճիս կանխեցաք զխաչս բարեխաւս մեզ եւ ծնողաց մերոց եւ զաւակաց մերոց. արդ աղաչեմք:


Ցաւերակս անդ որ ի միջի այգեաց, կան մնացուածք մեծագործ չինուածոյ միոյ՝ զոր արգելիս անուանեն, այլ միայն երկու որմունքն մնան, և ի միումն դուռն մեծ և հոյակապ զեղեցիկ քանդակօք, յորոյ վերայ և ի բարձու կայ արձանագիր, որ և առ բարձրութեանն մնաց անվերծանելի. ի ղէպ է կարծել զսա մնացուած ապարանից Սահառունոյ իշխանապետին Հայոց, և արժանի քննութեան և բաղդատութեան քանդակացն ընդ չինուածոյն Անւոյ: Անդ էր անշուշտ և ամրոցն, և որպէս թուի՝ ոչ համակ քարաչէն, այլ փայտակառոյց. զի յամի 1163 իբրև աթաբէկին « Ելտկուզ գայ յայրեցեալն և » ի քանդեալն (ի Վրաց) Դաւին, և խոցոտեալ սրտիւ » և մխռեալ իբրև զգազան կատաղի գայ ի Մրեն, և » այրէ անդ զամրոցն, ուր ողջակիզեցան վանն Քրիս» տոսի չորեք հազար». քանզի նոյնքան Պարսիկս կոտորեալ էին վիրք ի զօրաց նորին, զորս տուեալ էր Սադունի երբեմն քաղաքապետի Անւոյ հատուածելոյ ի Թագաւորէն Վրաց՝ առ Էլտկուզ. — Ոչ ինչ ընդհատ ի վնասի նշանաւորք վկայեն և այդպիսի Մրենոյ, տաւեալք ի կալուածս վանորէից, որպէս արձանքդ ցուցին բազում անգամ, յորս յանուանէ յիշին այդպիսի կոչեցեալք Հոռոմնաման, Աղտոտ[2], և այլք:

32. Աստանօր յաւարտման տեղագրութեան Արեւմտեան Շիրակայ՝ քաղաքաւանաւս ամայացեալն Մրենոյ, քանզի յիշեցաք գամ մի լինել զայն ի բաժնի ժառանգութեան Սահառունեաց, կարեւոր համարիմ և որչափ ինչ ծանօթս ի՛ աւանդել զայսմ տոհմէ Հայոց, որ ոչ ընդ նախատաս նախարարս ազգիս կարգի և ոչ ընդ հզօրագոյնս, և ոչ գաւառ որիշ յանուն նորին. այլ գուցէ յաւարչին ժամանակի այգպէս իսկ անուանէր մանն մի երկրին ի տանմանակցութեան Շիրակայ և Երասխաձորոյ. որում երաշխաւոր կայ և Սահառունիք գեօղն, սեփական ժառանգութիւն Յովհաննու Սմբատայ (Գ) արքայի, զոր և ընորհեաց ի հասոյթ Ս. Գէորգայ արքայական հանգստարանի ի վանս Հոռոմոսի[3]. և թէպէտ չեն յայտնի դիրք տեղւոյն՝ այլ չիք երկբայել թէ յայս կողմանս էր, ոչ միայն վանն գաստակերտին Դաւթի Սահառունոյ ի Մրեն, այլ զի և ի շարս զօրաբաժնի հայազուրկ բանակին՝ յերի Հանունեաց, Գաբելենից և Աբեղենից կարգին Սահառունիք, և գլխաւք զերկիր երեցան գոյք՝ տանմանակից տեղւոյս՝ զոր ստորագրեմք. Հանդոյն նոցին և զօրանան իւր՝ 300 արանց է միայն, նշանակ սահմանագրութեան տոհմին: Սակայն ոչ յանկանխին և հուսկ յետագասից ի բարձս. քանզի ի Գահնամակի Ս. Սահակայ՝ գասի ԻԵ ի մնացեալ եօթանասնանն: Անյայտ է մեզ ծագումն տոհմին և անուանն, որոյ մերձաւոր գտանեմք զԱհառու անուն մարդոյ՝ յայլում տոհմի (Անձևացեաց), և զՈհանն քաղաք յԱւտի աշխարհի, յորմէ թերևս եկք էին ի կողմանս Աղբրատայ. ոչ յիշին առ Խորենացւոյ ոչ ընդ Հայկազունեան և ոչ ընդ վաղարշակեան նահապարութիւնս. այլ զառաջինն ի կէս Դ դարու յերևան ելանեն առ Բուզանդայ[4], իբրև ձեռներէց և տւեալ իշխանաք. նախ առաքեալն ընդ այլոց ոմանց ի Կեսարիա ի ձեռնադրութիւն Ս. Յուսկան, որ յետոյ առաքեցաւ և ի կոչ Ս. Դանիէլի առ Տիրան. այլ խառնակ իմն է նախ գրութիւն անուանն առ պատմչին, և յերկրորդում նուագին[5] թուի կոչիլ Որ կամ Զոան իշխան Սահառունեաց տոհմի: Ցետ առկաւսոյ յիշի[6] ընդ գեսպանս առաքեալս Աշտակայ առ Վաղէս կայսր՝ ընդ Ս. Ներսէսի « և Մուշի Նահապետն » Սահառունեաց »: Եւ ոչ յետ բազմաց ի թագաւորու-

1 Փակագրով գրեալ էր այդ, որ Թերևս Հմայեկ ընթեռնուլն է. ընդ նմին կայ և այլ անուն մի եղէ:
2 Տես յէջ 32. 77. 129, և այլն:
3 Տես յէջ 31:
4 Բուզանդ Գ. ԺԲ. գրե « Եւ զմերոյ տոհմի ազգի իշխան » Սահառունեաց ». զոր ոմանք համարեցան ընթեռնուլ Մերուժոհմ իշխան ազգի. կամ Մերոյ իշխան ազգի տոհմի, և այլն:
5 Նոյն Գ. ԺԴ:
6 Նոյն Գ. ԺԱ:
7 Նոյն Ե. Լե, Լէ:

բայց միայն դարու և կիսով չափ՝ նախածանօթին մեր չի-
նող կաթողիկէին Մրենոյ, Դաւիթ Սահառունի, այր մե-
ծատգէտ և մեծագործ. որ նախ հաճոյացեալ Պարսից՝ ի թա-
խանակ այլադաւանից՝ եկաց Մարզպան Հայոց, յամի իբր
613. և յայնժամ ետ կանգնել զպարծանս Մրենոյ. և
զատ յայլոց՝ որ ոչ յիշին, արար չինութիւնս և՛ ի հեռա-
ւոր սահմանի, Աղթամար կղզւոջ ծովուն Բզնունեաց:
Պէսպէս անցք թուին անցեալ ընդ նա և՛ ձեռն նորա
յամս մարտամբոխ յուզմանց Պարսից և Յունաց, և յար-
շաւանս Հերակլի կայսեր, որ զմեծ մաս Հայոց թա-
փեաց՛ ի նոցանէ, և ընդ այլս և զԴաւիթ յիւր ապաւա-
կացոյց, ոչ զիաւոր որպիսի պատուով կամ պաշտամամբ:
Բայց զայս յիշէ ժամանակակից պատմիչ մի մեր [1], զի՛ ի
ծանօթ դաւանաւոթեան Աթաթարիկոսի որդւոյ Հե-
բակլի՝ ընդդէմ հօրն (յամի 635), ընդ համախոհան գաւա-
և Սահառունին Դաւիթ. վասն որոյ ձերբակալ արա-
րեալ զնա Մժէժի Գնունւոյ (երկրորդի) որ զօրավար էր
կայսերական զօրաց, առաքէր՛ ի պալատն. այլ «Հատեալ
» նորա զկապանս իւր՝ ՛ի ճանապարհին, սատակէ զարան
» որք տանէին զնա. և դարձեալ անդրէն՝ միաբանէ ընդ
» ինքեան զզօրս Հայոց, յարձակի՛ ի վերայ Մժէժի
» Գնունւոյ, զօրավարին Յունաց, և հարեալ սատակէ
» զնա, և զվարագ-Գնէլ Գնունի. և առ ինքն զզօրա-
» վարութիւնն՝ կամակցութեամբ և սիրով ամենայն զո-
» բայն: Իսկ թագաւորն առնէ, ըստ խնդրոյ իշխանացն,
» զնա իշխան ամենայն ասպարհացն, և տայ նմա պատիւ
» կրաւպաղատութեան, և հաստատէ զնա՛ ի ծառայու-
» թիւն իւր: Եւ կալեալ զիշխանութիւնն ամս երիս ամե-
» նայն ճշմարտութեամբ մեծապէս, ապա անարգեալ՛ ի զո-
» բայն հալածեցաւ, և անմիաբան լեալ ամենայն ազա-
» ւասն՝ կորուսին զերկիրս Հայոց»: Գրեաթէ՛ ի սմին
ժամանակի և ամի եղև առաջին մուտն Ա.բրաքացւոց՛ ի
Հայս, և այն իսկ թերևս պատճառ շփոթութեան ազա-
ւասցն, զորս խոպան նուաճեցին յետ սակաւուց աշխար-
հակալքն այնոքիկ հարաւայինք. և թէ՛ ի նմին ժամանակի
մեռաւ իսկ ոչ մեծագոլն այն և քաջակորով այր Դաւիթ,
որպէս հաւանական թուի, գէթ անյայտանայ այնուհետև
՛ի պատմութեան, ընդ նմին և համբէն տոհմն և անուն
Սահառունեաց. և մնայ միայն՛ ի վերոյիշեալ արձանն
Յովհաննու Թագաւորի, և՛ ի կիսաւերդանն Մրեն. և ո՛
գիտէ թէ ոչ հանդիպեցին ընդ սեաւղաք հովանեաք նորին՝
նշխարք վերջնոյն այնորիկ, այլ նախապատուին՛ ի տոհմի
իւրում Սահառունեաց, որոյ արձանադպ լռութեամբ
դաստակերտն իւր տաճար՝ դադարեալ՛ ի պաշտամանէ:

[1] Այն ինքն է Սեբէոս պատմիչ գործոց Հերակլի կայսեր:




67. Քանդակ յարդուհւոյ ապարանս Ա.ևոյ *:

* Ոչ գիտեմ յորում մասին ապարանիցն էր քանդակդ՝ նշա-
նաւոր երկվեթ արձուամբ. իսկ զԴրէկ (քանդակին՝ որպէս իմա-
նամ) Թերևս արժան էր ՅՎՍ (Յովհաննէս) ընթեռնուլ, և ոչ ՅԻՆՈ
ինն, Թէպէտ և այս անհեղեղ անուն՛ ի յետին դարս:

Բ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇԻՐԱԿ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ



Իրակայ արևելեան մասինս յայտնի է անկրպետ յարևմտեայնոյն՝ գետն Ա.րմա և Ա.խուրեան. որոյ հիւսիսա-
կողման անձուկ մասին՝ սահ-
ման գործեն լերինք Գուգա-
րաց աշխարհի, Լօրիւզ, Մա-
տաբէփ, Ղուշդարա, Լէռ-
լի, և այլն. յարևելից կո-
ակ լերինքն անկրպետք վի-
ճակաց Ա.րագածոտն գաւառի, Նոր Ա.ծնեայ, Գարախաչ,
Աղդարան, Գուչ թէփեսի, Թէփէնէկ կամ Թէրդի գլուխ,
և ինքն լայնանիստն Ա.րագած. իսկ՛ ի հարաւոյ՝ գար-
ձեալ Ա.րագածոտն գաւառ: — Հիւսիսային մասն երկրին
մինչև՛ ի սահմանս քաղաքին և բերդին Աղեքսանդրա-
պոլի՛ լեռնային է և առատ ջրովք, որք թափին յԱ.րմա-
հարաւային կողմն հարթածաւալ, սակաւս ունելով զե-
տակս, և լեռնաբլուրս ցիրս, այլ ոչ լերինս բարձունս:
Հիւսիսագոյն գետակացն կոչի Լօրթիւիւ. և ըստ հարաւոյ
նորին ելիս տիրէ, որ առեալ զԱղչայ՛ ի Գարախաչ լեռնէ՝
թափի յԱ.րմա: Ընդ մէջ սորա և այլոց գետակի՛ ի Հր.
ամրառնայ Սիսի կամ Սիւի լեառն՝ բարձր 2450 Ձ: Հզօ-
բագոյն ևս գետակ կայ՛ ի Հր. նորին, որոյ չէ մեզ ծանօթ
անուն սեփական, ունելով՛ ի Հր. զԿամխուռտ Լ. 2107 Ձ.
և զՇիշրեփէ, 2287 Ձ. յորմէ իջեալ վտակ անցանէ ընդ
քաղաքն: Հզօրագոյն քան զոսոս գետակք երկու իջեալք
՛ի ստորոտից Ա.րագածոյ և խառնեալք յիւրեաք՝ թափին
յԱ.խուրեանն, յանկեան կցուածոյ իւրեանց ունելով
զմեծ գիւղն Գարադլիսէ. հարաւայինն՛ ի գետակացս
ընդունի յայնմ կողմանէ, որ է յահեկէ խրմէ, երկուս
ևս վտակս, զԳարանկա որ է Կարմրաջ կամ Կարմրաչան
ըստ Հայոց, և զՕտուզ պուղագ, զոր մարթ է Հարիւնոյ
ջուր կոչել, զի անցանէ առ համանուն հուշակաւոր մե-
նաստանաւն: Ի միջավայր զուգից գետոցս և Ա.խուրե-
նոյ՝ ամրառնայ Գղզղ-տաղ լեառն 1803 Ձ: Չորաւագոյն
սահմանք արևելեան Շիրակայ հանգոյն արևմտեայնոյն
ամայի են և անջուր, և խոպան երկիր Ջաղրնձի կոչեցեալ,
մինչև յելս սահմանաց գաւառին առ Ա.րագածոտամբ:

34. Ցանուն նորակերտ մեծի սահմնակալ ամրոցին՝ Ա.ԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ, կոչեցաւ վիճակս՛ ի Թուսաց, ՛ի պա-
տիւ դշխոյին իւրեանց, այլ արևելեայք յանուն հին գեղջն
Կումրի կոչեն, որոյ հին հայկական կոչմանէն վերադրել
՛ի գէպ էր՝ Կումայրի: Են՛ ի վիճակի սոո գեօղք իբրև
120, զրեաթէ բովանդակ հայաբնակք. թիւ մերազգեացս
յամին 1878 համարէր 95,000, ՛ի գէպ է համարել արդ
100,000. իսկ համօրէն բնակչացն իբրև 120,000, յորս
յետ Հայոց բազմաթիւ են սերունդք Թաթարաց: Ի ցոյց
աճման մարդաթուին՝ կարգեմք սոոանօր երկուս աշ-
խարհահամարս, մին սարաբեալ յառաջ քան զ1865 ամն,
միւսն յամի 1873, որոց երկոցուն համեմատութեամբ
հարկ է զարդիս ոչ սակաւ յաւելեալ համարել. և այսմ
երաշխաւորէ մեզ թիւ անձանց կաթողիկ Հայոց, (զոր
միայն գոաք յետ աշխարհագրի 1873 ամին), ՛ի վիճա-
կագրութեան հովուապետի Նոցին, եպիսկոպոսին Սա-
բադովի, յամի 1876. յորում երեւի յաւելուած իբրև 260
ոգւոց քան զմարդաթիւ 1873 ամին: — Ա.ռ գիւրա-
գոանելոյ զինդրելին՝ գեօղքն ըստ այբուբենից կարգեցան
՛ի յուցակիդ. իսկ զգղզն բնակեալս ՛ի նոսին՝ նշանակին
սոաքն, Հ. (Հայք)· Հ-կ· (Հայ Կաթոլիկ)· Թ· (Թուրք)·
Ր· (Ռուրդ)· Եզ· (Եզիտի):

Աշխարհագիր Արեւելեան Շիրակայ

Գիւղ. Բաց	1863 Տուն	1873 Տուն	1873 Դուիս	Ազգ
Ադվանք	30	46	416	Հ.
Ադուլէ	17			Հ.
Ալագիւսկ	18	29	231	Հ.
Ալին	55	80	752	Հ.
Ախուռեան		42	383	Հ.
Արդիկ	213	269	2359	Հ.
Արխուելի Մեծ	70	75	710	Հ.
— Փոքր	40	56	437	Հ.
— Մուս	46	65	551	Հ.
Արմուտլու	32	52	440	Հ.
Գալէլի		34	256	Հ.
Գայդուլի-Ղազանճի	23	38	361	Հ-կ.
— Զէֆուլիկ	22	25	311	Հ.
— Տիւզքէնտ	25	36	328	Հ.
Գարագիւնսկ Իլի	42	63	630	Հ.
— Իլի (Փոքր)	180	222	1631	Հ. և Հ-կ.
— Նոր	13	34	323	Հ.
Գախուլու	60	102	956	Հ.
Գոզլիլիսկ Մեծ	72	96	718	Հ.
— Նոր	20	96	255	Հ.
Գոզլոչ	33	51	438	Հ.
Գրդուսկիրմէն	44	70	615	Հ.
Դահարլու	37	60	476	Հ.
Դաշալէ	44	75	622	Հ.
Դարբանտ	17	38	341	Հ.
Եասաղուլ	73	104	839	Հ.
Եկանլար	48	64	661	Հ.
Զաւինճ		30	248	Հ.
Թալիպօղլի	17	32	308	Հ.
Թաւշանլար	83	119	873	Հ.
Թէվիսէօլէկ	53	88	625	Հ-կ.
Թէքնէլի	14	32	404	Հ.
Թիդոյի Խարապա		18	143	Հ-կ.
Թօմարտաշ	96	61	556	Հ.

Գիւղ. Բաց	1863 Տուն	1873 Տուն	1873 Դուիս	Ազգ
Թօփարլու	39	66	569	Հ.
Իլխասլի	87	100	900	Հ.
Իմիրխան	38	57	565	Հ.
Խանվալի	25	19	185	Հ.
Խաչագիւխ	22	29	293	Հ.
Խոխի պօղազ			317	Ռ.
Խոբլու Փոքր	17	31		Հ-կ.
Ծիրկելի			176	Հ-կ.
Կապս	26	44	356	Հ.
Կիւղէլտէբէ Թուրքի	28			Թ.
— Հայոց		38	368	Թ.
Կիւլիւպուլաղ	10	9	151	Հ.
Կիւրճի-Եօլի	22	31	435	Հ.
Հաճի Խալիլ	40	39	298	Հ.
Հաճի Նազար-զուլի	73	100	800	Հ.
Հաճիճ (Պէչաղ)	33	39	415	Հ.
Հոռոմ	148	211	1421	Հ.
Ղազանճի	58	81	638	Հ.
Ղազարապատ	60	42	353	Հ.
Ղանըլճա վերին	51	68	643	Հ.
— Ներքին	36	40	389	Հ.
Ղասամ-ալի	38	29	303	Հ.
Ղէղահ	24	31	276	Հ.
Ղութնի-ղշլախ	12	18	145	Հ.
Ղուլիման	33	51	413	Հ.
Ղօլղաթ	32	54	673	Հ.
Ղօնախաղըման	65	90	775	Հ.
Ճըղըխլար	38	65	627	Հ.
Ճոլհան	24	38	347	Հ.
Մահմուտճուղ	74	123	1019	Հ-կ.
Մէլիքքէնտ	39	58	546	Հ.
Մէհրալի	62	100	732	Հ.
Միրաք		66	572	Ռ. եզ.
Մունճուղլու	29	40	369	Հ.

Գիւղ. Բաց	1863 Տուն	1873 Տուն	1873 Դուիս	Ազգ
Մուսլուղլու	30	33	411	Հ-կ.
Մօլլա Կէօհճէ	80	113	931	Հ.
Նորաշէն	63	79	678	Հ.
Շիրէվէ	20	33	281	Հ-կ.
Շիրվանճուղ	90	137	1202	Հ.
Զըրխլը	41	63	465	Հ.
Զրախլը	55	81	837	Հ.
Զօպան քէրաքմազ		33	316	Ռ. եզ.
Զօրլու	25	36	345	Հ.
Պայինտուր	66	74	582	Հ.
	30	52	359	Ց.
Պանոփվան	40	57	475	Հ.
Պաղդիւղ (Ախտաճ.)	57	66	598	Հ.
— Նոր	11	19	167	Հ.
Պապուրլու		42	366	Հ.
Պարնի գիւղ (Պէկքէնտ)	71	101	782	Հ.
Պէկիրխանէ	40	54	475	Հ. և Հ-կ.
Պուղտաշէն		30	185	Հ.
Պօղոսխուշ	12	21	274	Հ.
Պօղոսօղան	77	84	658	Հ.
Պօղոսզքէսէն	39	66	567	Հ.
Ջալալ կէչիտ	33	50	428	Հ.
Ջաղուռ	109	106	1011	Հ.
Ջառջառիս		65	441	Ռ. եզ.
Սալուտ				Հ.
Սամուրլու	11	17	165	Հ.

Գիւղ. Բաց	1863 Տուն	1873 Տուն	1873 Դուիս	Ազգ
Սարըպաշ	15	29	232	Հ.
Սարիւար Մեծ	42	49	476	Հ.
— Փոքր	21	32	280	Հ.
Սէօկիւսլիս	130	178	1565	Հ.
Սուֆանվէրտի	63	95	411	Հ.
Սօնկուրլու	35	59	521	Հ.
Տանա-տամամկիրմէզ	31	57	529	Հ.
Տէրէքէօյ		20	135	Հ-կ.
Տէրէքլէր	36	63	534	Հ.
Տիւզքէնտ	80	145	1061	Հ.
— Թուրքի	20			Թ.
Փալուտլու	36	43	367	Հ-կ.
Փիրթիքեանտ	15	27	214	Հ.
Քարաղբիւր		30	294	Հ-կ.
Քեալալի	16			Հ.
Քեաֆթարլու	71	90	665	Հ-կ.
Քէյթի Մեծ	48	63	584	Հ.
— Փոքր	18	31	275	Հ.
Քիշիքքէնտ	20	27	218	Հ.
Քէփէնէկ Մեծ	104	163	1239	Հ.
— Փոքր	34	53	392	Հ.
Քէօր-պուլաղ		21	193	Ռ. եզ.
Քէֆլի	13			Հ.
Օրթագիւխ	37	47	424	Հ.
Ֆերթոյ		30		Թ.

55. Առաջին չէն առ ստորոտով լերանց հիւսիսակող-ման վիճակիս և առ ակամբք Էօրթիւլիս վտակի է պա-հակատուն կամ հանդրուան սուրհանդակաց Ռուսաց Նովոյ-Դերոյիցքի (Նոր-Երերոդութիւն), յեղր համանուն լճին, որ և Մատաբիւխ կոչի՝ ի Զաւախս: Ա. նովին վտակս է և Ֆիրդոյ գեօղ կամ հանդրուան չուարնա-կաց, իբրու 30 ընտանեաց: — Ցելից կուսէ սոցին՝ ի ստորոտս բարձու (9850′) Լէռնի կամ Աիւլպաց լերին՝ Տի-րէքօյ (Զորգիւղ) բնակեալ՝ ի 20 տուն կաթոլիկ Հայոց. նոյնպէս և մերձաւորն Դիդոյի-թաղապատ: — Ա. նովին Էօրթիւլիս գետակաւ և՝ ի Մ. Հ. Նոր Աիմէտ լերին է Քարաղբիւր գիւղ, բնակեալ նոյնպէս՝ ի կաթոլիկ Հայոց, 30 կամ աւելի տանց: — Իբրև մղոնաւ և կիսով՝ ի Հր. Քարաղբիւրի և մերձ՝ ի գետակն՝ կայ Ղազանճի գիւղ Հայաբնակ, ՝ի ստորոտս Նոր-Աիմէտ լերին իբր յ՚2068 Զ. բարձու. և առ նովին գետեզերբ հանդրուան սուր-հանդակաց Ռուսաց՝ Ղազանչինսքի: — Ի Հր. Ղազան-ճեայ երկու մղոնաւ կամ աւելի՝ կայ Շիրթխի գիւղիկ հին եկեղեցեաւ, առ աղբերակամբք վտակի փոքու, յո-րոյ վերայ յամի 1873 Սահմանաց Անանիկեանց Կիւմրեցի արկ վայելուչ կամուրջ եռակամար, սեաւ և կարմիր քա-րամբք, 50 Զ. երկայն և 6 լայն, հանդերձ սենեակաւ՝ ի պէտս ուղեւորաց, արձանագրեալ՝ ի կենայ կոթողի գիւ-շատան՝ ի հայ, ՝ի ռուս և Թուրք լեզու.

Շնորհօքն ամենազօրին Աստուծոյ չինեցաւ կամուրջս յինքնակալութեան Աղեքսանդր Երկրորդի օգոստափառ կայսեր Ռուսաց, արդեամբ եւ ծախիւք Սահմանոսի Անանիկեանց, ի յիշատակ հոգւոյ վերկութեան իւրոյ կենակցին

Գայիանեայ, եղբօրն Կարապետի եւ կենակցին Հռիփսիմեայ եւ ծնողաց նոցին. եւս առաւել վերակացուին չինութեանս Գրիգորի Դաւիթեանց։


Մերձ՝ի կամուրջն կայ թթուաւհամ հանքաջուր, յոր գան՝ի քաղաքէն (Կեմրոյ) ՚ի լուանալ, ՚ի սահս առողջութեան։ — Ա. փոքր վանական Եկի-սէրէ կայ Դղըղ-ղօչ կամ խաչ գիւղ, ամայի եկեղեցեաւ, որոյ են և արձանագիրք քննելիք, որպէս և նախայիշեալ տեղիքդ և որք գնին. զի բազմաւունեաց և Պահլաւունեաց դաստակերտք գուշակին, որպէս Մարմաշէնն մօտակայ և վանքայք և եկեղեցիք Աբեմտեան Շիրակայ. այժմեան եկեղեցին կոչի յանուն Ս. Աստուածածնին։ Կայ և ՚ի Հր. Շէրթէփէի երկու մղոնաւ հեռի համանուն պահակատուն Ռուսաց։ — Երկու մղոնաւ ՚ի Հր. Գղըղ-ղօչայ է Նոր-Գղըղիխ առ Եզի վանական, յորում է Հայոց եկեղեցի Ս. Լուսաւորիչ անուն։ ՅԵ. սորա Զիֆտլիկ կամ Գայգուղի-Զիֆտայի գիւղ, ՚ի սորոտաս Գարախաչ լերանց. և ՚ի սորա Ե. Հր. Գայգուղի-Տիւզքէնտ գիւղ ՚ի գլուխ գետակին. Թուի և ՚ի սմա լինել հին եկեղեցւոյ կամ վանաց, զի է առ նմին և քար-խարտեպ աւերակ գեղջ։ — ՅԵ. սորա և մերձ յակունս Եզեայ՝ ՚ի սորոտաս և ՚ի խորս Աղլաղան լերին՝ Պօղոդղ կամ Պօղ-նօգոդղ գիւղ. եկեղեցին Հայոց՝ Ս. Աստուածածին։ Ի սահմանս գեղջս և յայլ ևս կողմանս ձորակին Եզի-սէրէի գոն ցուրտ հանքաջուրք։ — Սակաւուք հեռի ՚ի սմանէ ՚ի Հր. և նոյնպէս ՚ի սորոտաս լերանց արևելեան սահմանին՝ կայ Սադռտ գիւղ։ — Յարևմտից Սալատի և ՅԵ. Սէրի լերին՝ Կիւղիւհ-պուղագ (Վարդաղբիւր) գիւղ։ — Յարևմտեան սորոտաս լերինն և մերձ ՚ի գեան Ա.բիա և ՚ի սորոտաս Սիփայ, առ փոքու վտակի Աբագիխի գեօղ, բնակեալ ՚ի Յունաց։ — Ի Հր. սորին առ գետեզերբն կայ Պիւնարխան գիւղ, սուրբ Աստուածածին եկեղեցեաւ Հայոց, և փոքու ամրոցաւ, ուր միւս ևս պահակատուն Ռուսաց. և բերան գետակի միոյ Ա.բիա. առ որոյ եւ գերբ յարևմտակողմն իբր չորիւք մղոնաք հեռի ՚ի Պէնաբվանայ՝ Զրզրխպար գիւղ։

Յանձուկ ձորահովտի Իլի գետոյ որ յարևելից յարևմուտս ընթացեալ Թաւիր Ա.բիա, կան գեօղքն, ըստ ընթացից նորին, Զօղոռ, որ և Պօտանանի-խարտպա, Կիւրնի նօի, Թէքնէի և Ձէրապ-կէլիտ որ և Թաւինսքի, յանկեան գետակցութեանն, ՚ի 5150′ բարձու. առ որով, որպէս անուն տայ գուշակել, անցք էին ընդ Ա.բիա գետ, և այժմ պահակատուն Ռուսաց ՚ի 5130′ բարձու, որ է վեցերորդ՝ սկսեալ յառաջնոյն ՚ի հիւսիսային արևմուտեան ծայրէ վիճակիս։ — Յարևելս կայս Կիւրնի-եօղ գեղջ ՚ի լերանցամէջս ասի գոլ մեծի աւերակ չինատեղւոյ, ձիթահանք հինգ, և բազում ջրաղացք, և այլ միացուածք չինուածոց, զորս կոչեն Խարապա Գարա-խաչի, այսինքն Աւերք Գարախաչ լերին. և ՚ի քարանց անտի հանեալ տարեալ են ՚ի պէտս չինութեան Ալէքսանդրապոլի. բայց ազգայնոց ոչ է քննեալ զտեղիս, որպէս վայելն էր։ — Ի հարաւոյ գեղջն (Կիւրնի եօղ) և ՚ի հիւսիսոյ Շէրթէփէ լերին, իբր կիսով փարսախաւ հեռի յերկոցունս եւս՝ կայ փայտաշէն գեօղ, որ Թարգմանի Ա.բդալլահ, բնակեալ ՚ի կաթոլիկ Հայոց։ — Չհարաւս կողմն ձորահովտին Եզեայ պարսպեն գրեթէ ապխաղխեալ խաւթք և ոտք լերանց Շէրթէփէի յարևելից, կամ խուռայ՝ յարևմտից, և Բոլոս-ասրի ՚ի միջին. վասն որոյ և ջուրք կամ գետք բղխեալք ՚ի նոցուն՝ ՚ի հարկէ ընդհարաւ իջանեն, և չառք յիրար անկեալ՝ ապա գառնան յարևմուտս թափիլ Ա.բիա. բայց և չառից չեն նշանակեալ վերջին ընթացք յանցի սահմանն՝ որ շրջապատեն գքաղաքն և զամրոց վիճակին՝ զԱլէքսանդրապոլ։ — Յարևելեան կողմն անդ ՚ի Հր. Շէրթէփէի կան Սարիար գեօղք երկու, Մեծ և Փոքր. և յԵ. նորա Ազպուղագ ի Մ. Հր. Շէրթէփէի և յԵ. Հր. Բոլոսասրի՝ Քէրի կամ Քէյրի Մեծ և Փոքր գիւղք երկու, մին ՚ի Մ. Հր. միացան իբր երկու մղոնաւ բացագոյն, առ վտակաւ՝ որ ուղղակի ընդ հարաւ ընթացեալ իջանէ ՚ի քաղաքն և յանուն նորին կոչի։ — Յարևմտից սորա փարսախաւ հեռի և նոյնչափ յԵ. Ա.բիայ գեաց կայ Եւաղող կամ Եաւաղող գեօղ ՚ի սորոտաս Կամխաւս լերին։ — Ի Հր. Մ. Սարիեաթայ և Ագպաբազայ առ եզերբ նոցին գետակիկ կայ Ա.րդխակի Նոր կամ Երրորդ, զի կան և այլ երկու հին գիւղք համանուանք։ Ցելից հարաւոյ սորին ՚ի լեռնային և յարևելեան սահմանածայրս վիճակին՝ Ջաջուռ կամ Ճաճուռ գիւղ, յահեկէ նոյն վտակի առ Մարալ լերանբ։ Ընդ մէջ Ա.բդխակեայ ՚ի Մ. Հր. և սորին Գէթեայ յԵ. Հր. կայ Տէրպէնտ գիւղ, Թերևս զի ՚ի կիրճս լերանց է։ Ի հարաւոյ կուսէ սորա՝ Թեօփարուզ կամ Թէփրի. առ որով ՚ի պահոս տպագրութեան գործոյս՝ ծանուցանէ ազգային օրագիր, յայտնեալ աւերակի եկեղեցւոյ, և ՚ի նմին երեք գերեզմանաք, որպէս և արտաքոյ նորին նոյնչափ։ Գան մերձ նմին և աւերակք վանաց առ Գօնագ-գրբան գիւղիս, որ կոչ յիւրից կուսէ առաջնոյն (գեղջն) և ՚ի Մ. Հր. Ջաջուռի։ Ի սորա ևս Եզ. հարաւոյ՝ ՚ի սպառուած լեռնոտանց արևելեան սահմանին՝ Հաճի-Նազար դուղի գեօղ։ — Ի լերինս յայսոսիկ են քարատհաք պիտանիք, որպէս և առ Գարախաչ լերամբ, յորոց մին կոչի Թաշքարի քարահանք. ուր ՚ի պեղելն գերկիր, յամի 1867, վասն չինութեան ջրանցից, գտան կոփածոյ քարինք և եկեղեցական որմնափակ, և եօթն գերեզմանք ՚ի նմին. ՚ի միում արձանագիր կիսեղծ, յորմէ ոչ թուական և ոչ այլ ինչ կարեաւ ստուգեցաւ, բայց այս հատուած բանի.

Ես տէր Դաւիթ առ Աստուած վոխ.. ցեալ չինեցի զսուրբ եկեղեցիս... ծնողաց իմոց որք ընթեռնուք արդ? դիս յաղաւթս յիշեցէք եւ Քրիստոս... հատարակաց ողորմի ձեզ։

Ի Հր. Ստորին Գէթեայ առ նովին վտակաւ և ՚ի Մ. Թէվէրլեայ՝ Օրթագիխ, յորում հին եկեղեցի փոքր։ — Ի հարաւոյ վերջին գիւղորայիցս՝ յընդարձակ սահմանի մինչև ՚ի բերդաքաղաքն՝ չկան գիւղք և չէիք։ Իսկ առ գետեզերբն յետ ձէլէպկէյիի՝ ՚ի Հր. Կամխաւս լերին, է Կապս գիւղ, առ որով եօթներորդ պահակատուն կամ սուրհանդականոց. յորոյ հարաւոյ երկու մղոնաւ կամ փարսախաւ ևս ՚ի վայր առ գետեզերբն ութերորդ պահակատունն է, ՚ի միջի երկոցուն ապերբահս ձորաւ Նխան Վերին և Ներքին Ղալըձա գիւղից. յորոց անուն կոչի և իններորդն՝ որ ՚ի հարաւոյ նոցին և մերձ ՚ի բերդաքաղաքն։

36. Յարակից մերձաւորութիւն երկոցուն Ղանըձա գիւղից, գետանցքն առ նոքօք, (ուր և յառաջնումն արկեալ էր կամուրջ, յիշատակեալ ՚ի սկիզբն ԺԹ. դարու [1]), և առաւել որ առ երի նոցին՝ ՚ի հիւսիսոյ կուսէ՝ մենաստանն կիսաւեր կիսականգուն, հռչակաւորն այն Մարմաշէն, յայտ առնեն զի տեղի նշանաւոր էր առ. այլ արդ հին բնակութեանցն անչքեցեալ և ՚ի նոր գաղթականաց Հայոց ՚ի կողմանց Կարուց բնակեալ, տակաւին քաջանչան մնայ մենաստանն, հոյակապ եկեղեցեան և չիրմաք պայազատաց Պահլաւունեաց։ Ո՞ առաջին չինող կամ յոյր սակս Մարմաշէն կոչեցեալ, յանուն Մարեմայ ուրուք տիկնոջ [2], եթէ Մարիամ կամ Մարմ



68. Մարմաշէն։

կոչեցելոց առն՝ ոչ է յայտ. բայց ոչ է ընդունելի Մարմարաշէն կոչումն, որպէս առ Կիրակոսի Գանձի միայն գրի, Թերևս վրիպակաւ գրչին, իբրու թէ մարմարեան քարամբք իցէ չինեալ, որ ոչ է: Ա.բասիճն յիշատակող չինութեանն Աղուիկ՝ խառնակ իմն ասէ, որպէս և ՚ի յիշատակի Բգնայրի տեսաք. իսկ արձանագիրք և այլ պատմիչք հաւաստեն, ընդ որս և Ժամանակագիրն Սամուէլ, հանդերձ թուականաւ սկսմանն և աւարտմանն, եթէ, եղև «Սկիզբն չինելոյ մեծաձուռն և վայելչագործ » զարմանակերտ և հոյակապ ուխտին Մարմաշենի՝ ՚ի » քրիստոսասէր իշխանաց իշխանէն Վահրամայ, սկսեալ » ՚ի ՆԼԵ (986), և աւարտեալ ՚ի ՆԽԳ (994) ամին, որ » լինի ութ ամ»։ Այլ ստուգագոյն ևս վաւերական՝ ըստ բաղդի՝ անկնկիզ մնայ, արձանագրեալն յերկար և սպան-

1 Յիշելոցն յարձանագրի Տէառն Գրիգորի, որ ստորև ընթերցցի, երեքին ցարդ անենկանձ քառակուսի մնացուածք։

2 Ոմանք Համարին յանուն Մարեմայ Թագուհւոյ Ա.խթազաց, որոյ արձանագիր ընթերցցի ընդ հուպ. այլ Վահրամայ արձանն հնագոյն է քան զնորայն և կոչէ ինքն զտեղին Մարմաշէն. այլք յանուն Ճարտարապետին կարծեցին, այլ և այս ոչ հաւաստի։

ծալի բանիւ՝ ’ի նոյն իսկ ’ի չինողէն, ’ի հարաւային որմն եկեղեցւոյն արտաքուստ, որ ցուցանէ զչինութիւնն ամենայն է արձանն.

Շնորհիւն Աստուծոյ ես Վահրամ իշխանաց իշխան անթիպատ պատրիկ որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծաց ի ցեղէն Պահլաւունի եւ ի զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի որ յաղագս ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ եւ զաւետարանական ուխտս Մարմաշէն սկսեալ ի ՆԼԵ թուականին Հայոց յաւուրս Սմբատայ որդւոյ Աշոտոյ Հայոց թագաւորի մինչեւ ի ժամանակս Յովհաննէսի որդւոյ Գագկայ Հայոց Շահանշահի առն իմաստնոյ չինողի եւ խաղաղարարի, եւ ի թուականիս Հայոց ՆՀԸ. եւ կատարեցաք մեծ ջանիւ եւ բազում ծախիւք ես եւ մայր իմ Շուշիկ Հայոց տիկնաց տիկին եւ եղբարք իմ Վասակ իշխանաց իշխան որ նահատակեցաւ ի թուրքաց պատերազմի եւ Ապլխարիբ Հայոց մարզպան եւ մանուկն Համզէ. որք էաք ամենայն տամբ եւ տոհմիւք հաւատարիմք տերանց մերոց եւ նահատակեալ ի վերա տանս Հայոց աշխատութեամբ եւ արեամբ մերով եւ որդւոց մերոց եւ գանձուց առատութեամբ եւ ամենայն հնարիւք լինդրէաք զխաղաղութիւն աշխարհիս եւ զհաստատութիւն եկեղեցեաց. Շինեցաք եւ այլ բազում եկեղեցիս եւ վանորայս. բայց զտեղի հանգստեանս մերոց առաւել սրտուով մեծացուցաք եւ լիացուցաք ամենայն գոյիւք լերամբք եւ դաշտաւք աւանդեցաք ի սա գիւղս եւ ագարակս գանձագինս. զԲագարանի գեղ եւ զիւր ագարակն. զԳողիան եւ զՊորտանգն զԱրագէճ եւ զԱզատա զԱմանէն եւ զԵղնկայն. եւ յԱչկանի այգիք եւ գ ջաղաց. եւ բ ջաղաց ի Դողս. ի յԱչտարակի այգի. ի Կարբոյ դաշտի այգի. ի Սերկեւզի այգի. ի Վժան այգի. ի Մրենի այգիք. ի յԱնի տներ եւ կղզակական. եւ զարդարեցաք զսա ամենայն կազմութեամբ ի յիշատակ յաւիտենից մեզ եւ որդւոց մերոց. եւ կարգեցաք ի ձեռն սուրբ հայր Երեմիայի եւ որ զինի յաջորդեցաւ Սահակեանս նորին որդիացեալ. եւ փոխարէն հատուցման ընկալեալ մեր ի ժառանգաւորաց սուրբ ուխտիս տարին ՁՔ քառասունք անխափան մինչեւ ի գալուստն Քրիստոսի. Արդ եթէ ոք ի մերոց կամ յաւտարաց աւագ որ զմեր զտուրս ի սուրբ ուխտէս պակասեցանէ կամ հայր որ զմեր ժամն խափանէ ինքն որոշեալ լիցի ի Քրիստոսէ եւ դատող նորա սատանայ լիցի եւ մի տեսցէ նա զփառս Աստուծոյ. իսկ որք հաստատուն պահեն զաւանդս մեր աւրհնեալ եղիցին:

Զիք երկայել զի որք յետ այնքանեաց դաստակերտ եկեղեցւոյ եւ վանորէից՝ սատ ընտրեցին զհանգստարան իւրեանց յետին, ոչ խնայէին ընչից եւ խնամոյ՝ առ յարդարել զսա իրաւամբք մեծաչէն եւ զարմանակերտ. որում վկայէ և եկեղեցին կանգուն մնացեալ, չափաւոր մեծութեամբ, մանաւանդ թէ փոքր, քառակուսի, 12 Զ. երկայն, 10 լայն, կարմրագոյն վիմաք, առանց սեան վերամարձ ունելով զգմբէթին խորշորշեայ, չորիւք լուսամուխք, արտաքուստ սիւնազարդ և սրանկիւն կամարք ’ի վերոյ նոցուն, որով օտարանայ ’ի ձևոյ եկեղեցւոյ

Անոյ. երիւք քանդակաղարդ մեծ պատուհանաք յԱեւ ’ի Հ. եւ ’ի Հր: Սեղանն վեց Զ. երկայն և սակաւ ինչ պակաս լայն՝ ունի աւանդատունս կամ մատրունս ստոյ և անտ, մէն 3 Զ. երկայն, 1,75 լայն, սակաւ մի ցած յատակ կօք քան զբեմն. և դուռն յարևմտից: Ի թիկանց կիսաբոլոր խորանին կան եօթն լուսամուտք ցածունք և փոքունք, կամարակապք և սիւնաւորք, ընդ նկարաձև քարաշար միահետ քուով. ըստ կաթողիկէին Անոյ են և յատակքին որմունս սորին անկիւնաձև գոգացեալ խորք: Ժամատունն զրեամբ հատաստաչափ մեծութեան տաճարին, քայքայեալ է. և կործան դնին բազմանկիւնի միատանի սիւնքն չորեքին՝ որք բառնային դյարին. այլ արդ վարկպարագի իմն կարկատեալ մասամբ ’ի նորեկ

բնակչացն՝ ընտրեալ է ’ի տեղի ազօթից. բայց կանգուն կան աստի և անտի մատրունք երկու կամ եկեղեցիք փոքունք սրածայր գմբեթաւորք՝ կարմրագոյն քարամբք կերտեալ. այլ քանզի զքարինս արտաքին երեսաց որմոյն բարձեալ է յաւտոյ՝ անգիր և անյիշատակ մնան: — Են առ նոքօք, և հեռագոյն ևս, հինգ տապանք չիրմաց, յորոց մին ըրգաձև՝ էր Սոփիայ կնոջ Վահրամայ, որպէս յայտնեցաւ յամի 1824, ’ի տորերկրեայ դամբանի, ’ի վերին Վանըձա, ուստի բարձեալ զկափարիչն արձանագրեալ՝ բերին ’ի տարին գիւղն, և եդին ’ի վերայ գերեզմանի քահանայի միոյ նոր վախճանելոյ (Տէր Պօղոս անուն). և այս է գրուածն հանդերձ թուականաւ 1015 ամի.

Ա.յս հանգիստ է Սոփիայ աղախնոյն Քրիստոսի կնոջ Վահրամա Պահլաւունւոն իշխանաց իշխանի դստեր Տիգրանայ Հայոց մարզպանի տեառն Անձեւացեաց մեծին Վասպուրականի. կիսաւրեա առ Աստուած փոխեցաւ եւ թողի զաւակս իմ տրտում. աղաչեմ յիշեսջիք զիս եւ Աստուած ձեզ ողորմեսցի. Թ. ՆԿԴ:

երկուք և ’ի տապանացն որ առ ժամատամբն՝ ունին զանթուական և զհամառօտ արձանագիրս զսյսոսիկ.

Ա.յս հանգիստ է Ապուղամրի որդւոյ Մագխատրոսի.

Ա.յս է հանգիստ Ղա(րիփ)ես որդւոյ Ապուղամրի:

Եւ հինգերորդն՝ նորագոյն քան զնախագրեալսն, օրիորդի մից, որպէս թուի վաղամեռիկ եղելոյ[1], յամի 1342.

Ա.յս հանգիստ է Նլու խաթունին դստեր Թալայի. Թվ. ՋՂԱ:

Ցայտ է զի դոքա կրաեր են բազում ժամանակօք քան զԱսիա և զՎահրամ և զյիշեալսն յարձանի նորին, որոց տապանք ոչ յայտնեցան. այլ զի աստանօր էր և Վահրամայն՝ վկայէ երկար արձանագիր Գրիգորի եպիսկոպոսի որդւոյ Ապուղամրի: — Ա.ս յիշեալ արձանագիր հին՝ Մարեմայ զխոյի, այսպէս.

Շնորհիւն Աստուծոյ ես Մարիամ Աւխազաց եւ Հայոց թագուհի դուստր Մեծին Սենեքերիմա եւ թոռն Գագկա Հայոց արքայի որ եւտու զՏարուս ի սուրբ եւ ի տիեզերական ուխտս Մարմաշէն առաջնորդութեամբ Հաւր Սոսթենի վասն (Գա)գկա իմ պապոյն մեզաց թողութեան եւ Կատային իմ հանկանն եւ հատուցումն բարի ընկալա ի սրբոցս զսեանն եկեղեցին զսուրբ Պետրոս ի Քրիստոս պատարագաւ զտարին ողջոյն Կատային իմ հանկանն[2]

1 Երկրորդ տառ անուան դստեր Թալայի՝ սեպաձև կամ փշաձև ինն ունելով ’ի գլուխն, որպէս երևի հանդէպ, ոչ գիտեմ ստոյգ Նլու ընծեռնի էր, եթէ Նազլու, եթէ այլազգ. բայց տառքն անեղծք են:

ՆՆՈՒ

2 Կատա նոյն ինքն է Կատրանիդէ կամ Կատրամիդէ Թագուհի, կին Գագկայ Ա., որոց դուստր՝ մայրն Մարեմայ և կին Սենեքերիմայ արքայի Աբծրունեաց՝ է Խուշուշ, որոյ անուն ոչ է նշանակեալ ’ի Տօհմացոյց Ծառի անդ Բագրատունեաց, (էջ 96), որպէս ոչ է նշանակեալ և յիշեալն էջ 138 Սոփիա, դուստր Աշոտոյ Ողորմածի և կին Թագաւորին Վրաց, որ Թուի Բագարատ Բ, զի սա էր իշխող նոցին յամս 958-994:

մինչ ի գալուստն Քրիստոսի: Արդ եթէ ոք ի մեծամեծաց կամ ի փոքունց ի Հայոց կամ ի Վրաց, որ այս գրոյս հակառ կա եւ զիմ զգեւղն զՏարուս ի յայս ուխտէս հանէ, ինքն ելցէ ի կենացն Աստուծոյ եւ պարտական լիցի արեանն Քրիստոսի եւ մի տեսցէ զփառսն Աստուծոյ. իսկ որ հաստատուն պահէն զաւանդս մեր աւրհնեալ եղիցին:

Միւս ևս երկար արձանագիր կարևոր՝ ի հիւսիսային պատին տաճարին գրեալ՝ ի քան և մի տող, յայտնէ զնո- րոգումն նորին յետ 200 ամի վնասիեանն (1225) ՚ի ձեռն պայազատաց զարմի նոցին Պահլաւունեաց.

Ի ժամանակս բարեպաշտից եւ աստուածասիրաց պատրոնաց մերոց Աթաբակ Իւանէի եւ Մանտատորթա խուցէս Շահնշահի հրամանաւ սոցին վերստին նորոգումն եղեւ հրաշափառ տաճարի Աստուծոյ մաւրս լուսոյ սըրբոյ կաթողիկէի Մարմաշենոյ ի ձեռն որդւոց Աղուղամրի Մագիստրոսի Տէր Գրիգորոյ էպիսկոպոսի եւ հարազատի իմոյ Խարիբին թոռանց Վարհամա իշխանաց իշխանին եւ զարմից եւ շառաւեղի սրբոյն Գրիգորի (չի)նողի ի հիմանց մեծաւ տենչմամբ եւ յուսով (քա)զմաւ վասն բազմագումար քահանայից եւ պարգեւեալ արդիւնս յոլովս գեղաւրայս այգեստանս կուղպականի Ջաղացանի որ եւ ցուցանէ իւր արձանագիրն մի ըստ միոջէ. եւ վարթամացուցի ամենայն գոյիւք առ ի ընուլ եւ առաւելուլ զպէտս կարեւորս զիւրեանց եւ զեկաց. եւ ունէր ժամանակս իբրեւ ոչ սակաւս զի աւերեալ էր յանաւրինաց եւ զվանքս գեղ արարեալ եւ զկաթողիկէս բերդանման ամրացուցեալ էր եւ կայր ի խաւարի սգաւորութեան զրկեալ յամենայն գոյից մինչեւ յաւրս յայսոսիկ ✠ Իակ ի ՈՀԴ թուականիս Հայւոց քալ եւ արի զաւրականն Քրիստոսի սիրելի եղբայրն իմ Խարիբին իմով կամակցութեամբ խորհուրդ բարի միտ արկեալ ազատել զսա ի տղմուտ եւ ի զազիր մթնազգածութենէն հասուցանել նախկի փառաւորութեանն հանեալ արտաքս ըզչինական եւ եղեւ բնակարան սրբոց քահանայից եւ կրաւնաւորաց հաճոյացելոց Աստուծոյ. զարդարեցաք զսա սպասիւք պայծառազգեստիւք եւ սըրբութեամբք ոսկեղէն եւ արծաթեղէն եւ հին եւ նոր կտակարանաւք եկեղեցականաւք, եւ ընձայեցաք ի սմա նուէր զմեր հայրենի գեղն զԱզատա ✠ եւ որ ի վանից հողիս վերայ չինեցաք եւ անուանի Տիրաչէն. եւ ի յայնկոյս գետոյն Ջաղացանի որ կան ի կարմրէն(ջէն) ի վայր եւ վեր զկոտ զհող եւ զոր ինչ ի սկզբանէ ունէին. եւ ի քաղաքիս զմեր պապէնի հայրենիք էկեղեցին զսուրբ Աստուածածին Թոր(ոս) ամենայն ժողովրդեամբն. եւ երկու այգի ի Մարմաշի որ ի նախնեաց մերոց ի մեզ էր հասեալ. եւ միաւորեցաք զվերի վանքն մեծ վանից իւր ամենայն ստացուածովք եւ լիցի հրամանաւ միոյ առաջնորդի: Մինչ այս առ այսչափ կատարեցաւ առժամայն գեղեցկագեղ

եղբայրն իմ Խարիբի Մագիստրոսն գովելոյն յամենայն լեզուաց մարտիրոսացաւ ի պատերազմի անաւրինաց եւ միայն մնացի ես Գրիգոր եղկելի եւ պրկեալ ի նմանէ. զմարմին նորա բերեալ թաղեցաք առ դրան սրբոյ կաթողիկէիս մերձ առ նչխարս հաւուն մերոյ Վարհամա իշխանի: Եւ փոխարէն հատուցին սպասաւորքն սորա ընդ մերոց արդեանցս զոր արարաք զկաթողիկէիս աւագ խորանին պատարագն յանուն նահատակին Քրիստոսի Խարիբին կատարել յամենայն աւր ի սկզբանէ տարւոյն մինչեւ ցկատարումն տարւոյն յայսմ հետէ մինչ ի ծագումն Արդոյն Աստուծոյ. որ ոք խափանէ կամ չորթել չանայ յընչից էկեղեցւոյս որոշեսցի ի փառացն Աստուծոյ եւ զրկեսցի ի մշտնջենականէն. կատարիչք գրելոցս աւրհնեսցին յԱստուծոյ եւ ի սրբոց նորա յոգի եւ ի մարմին:

Ցայսմ կողման տաճարիս ՚ի վերոյ գրանն կայ խաչ- վէմ քանդակեալ, թուականաւ 1026 ամի և բանիս.

Թու. ՆՀԵ[1]. Ես Մատաթէս կանգնեցի.

Եւ ՚ի հակառ գրան հիւսիսակողմեան մատրանն՝ անթուա- կան արձանագիր նուիրատուի ուրումն, այսպէս.

Ես Տէր Գրիգորս Տեառն Սարգսի եւս զիմ սուրբ Նշանս ի սուրբ ուխտս Մարմաշինի, եւ փոխարէն հատուցին զվարդեւարին քառասունքն եւ վեսաչին ութաւրէքն, մինչ ես կենդանի եմ Տեառն Սարգսի, եւ յետ իմ վախճանին ինձ. եւ եթէ ոք առաջնորդ որ լինի խափանէ նզովեալ եղիցի ի Տ(եառնէ). կատարիչք գրոյդ աւրհնեալ եղիցին:

Արձանագիր Գրիգորի եպիսկոպոսին յայտ առնէ զի երկու վանք էին ՚ի տեղւոջս, մին ստորագրեալ Մարմաշէն՝ որ Մեծ կոչի առ միւսովքն. իսկ միւսն վերի վանք, զի կայ ՚ի Հ. Ե. մեծին սակաւուք հեռի ՚ի լանջակողման ձորոյն, փոքու վտակաւ անջրպետեալ ՚ի ստորնոյն, այլ աւերեալ է, և միայն որմն հիւսիսային կանգուն կայ. ատաձոր էր գերեզման Սոփիայ սիկնոյ: Ի հիւսիսոյ կուսէ վերին վանացս կայ քարայրն[2], յոր ապաստանին և արդ բնակիչք գեղջս: — Արձան թագուհւոյն Արաբեայ յայտնէ մեզ եկեղեցի մի յանուն Ս. Պետրոսի, Սեամ նկուղի վերաձայնեալ, թերևս մի յերկոցուն սրագմբէթ մատրանցն: — Միւս ևս նշանաւոր չէն և տեղի ՚ի նահապետ արձանագրի Ապուղամրենց՝ է դասատեղբատ նոցին Տիրաչէն, զոր ՚ի վերոյ հողոց կալուածոց վանացն չինեցին ՚ի բնակութիւն մարդկան, վասն որոյ և մարթ է յայս անուն կոչել զվերին Զանըճա գեօղ՝ որ ՚ի բարձու քարափան կայ, իբր 70 տանիք, առ քարահատիք. իսկ զՍողրենն՝ որ ՚ի գիւղի կայ յերդ Ախուրենայ՝ 40 տանիք Հայոց, համարել բուն Մարմաշէն:

37. Յիշատակելիքն յարձանագրին Վահրամայ վանահարք ուխտին, երեմիա և Սահակենէս աշակերտ նորա և յաջորդ, ծանօթք են և այլուստ և արժանիք յիշատակի: Զառաջնոյն՝ ասէ Զաքարիա Սարկաւագ Պատմիչ[3], ՚ի հին և ՚ի ընդարձակ ձեռագիր մատենի Սանահնի վանից ընթերցեալ այսպէս. «Եւ մեռաւ Հայրն Մարմաշենու[4], » և նստաւ ՚ի տեղի նորա Հայր գարմանալին և պանծալի » լուցործ այրն Աստուծոյ Երեմիա, այր պարկեշտ սուրբ » և գիտուն, զարդարեալ ամենայն առաքինութեամբ, » կրկին մարդով, ներքնով և արտաքնով. և առնէր հրաշս » ևս, զոր մի ՚ի բազմացն ճառեցից: Մերձ վանայն


1 Ոմանք միայն ՆԷ. ընթեռնուն, որ է ամի 1021:

2 Շահխաթունեանն (Բ. 275) զնայրենի+ բառ արձանագրին սխալմամբ այր ընթերցեալ, կարծէ զայս քարայր նշանակել, որպէս և զերկոսին գեօղսն յիշատակեալս յարձանին Վահրամայ զԱղպա և զԱրմանէ, մի անուն ընթեռնու Աղպաղսոմանէ, և նդին ասէ ընդ Աղպո գեղջ արձանին Գրիգորի եպիսկոպոսի. սակայն յերկոսին ևս արձանին՝ Աղպա գրի գեօղն և ոչ Աղպո: Անծանօթ ինձ տեղիք սոցին, այլ թէպէտ թէ Աղպաս մօտ էր ՚ի Մարմաշէն:

3 Ի կոնդակի Յովհաննավանից, Գլ. Ի:

4 Մարմաշենոյ գրէ Զաքարիա:

» գոյր ջրաժողով փոքրիկ ծովակ. և սուրբն գնացեալ
» առ սուին ծովակին աղօթէր. և եկեալ մի յաշակերտաց
» նորա ՚ի միւս կողմն ծովակին՝ ձայներ առ հայրն. և նա
» ոչ լսէր զձայն աշակերտին, վասն զի բազմաթիւն գոր-
» ուց աղաղակէին. իսկ աբանչելի այրն Աստուծոյ երե-
» միա առաւել գոռացն՝ ասէ, Լռեցէք. իսկոյն լռեցին
» գորաքն, և մինչև ցայսօր կան լուռ և ոչ խօսին: . . .
» Ի այն ժամանակս աբանչելին Երեմիա հայրն Մարմա-
» շինու, թողեալ զսուն իւր՝ ձեռնասուն աշակերտին
» իւրոյ՝ Սոսթենեայ, և ինքն գնաց ՚ի սուրբ և ՚ի հռչա-
» կաւոր մենաստանն յանապատն Ցուվհաննու վանից,
» առ զաբեմանալին Մխիթար՝ հայր անապատին. և անդ
» ճգնեալ և անդ վախճանեալ և անդ թաղեցաւ: Եւ ՚ի
» ժամ մահուն եկեալ Սոսթենէս աշակերտ նորա, ընդ
» նմա և Գրիգոր վարդապետ Առակայ որդին, և թա-
» ղեցին զնա հանդերձ հայր Մխիթարիւ. և դարձեալ
» եդին դալին ՚ի մէջ իւրեանց, զի սիրով լիցին առ մի-
» մեանս, և զլիճակեալ թեմին երկուց վանացն ՚ի միա-
» սին կայցին, և մի՛ հարստահարեսցին զմիմեանս. ՚ի
» գետոյն Քասաղու մինչև ցԴաւռն Կարուց և Ծաղկո-
» ցաց. և հայրն Ցովհաննու վանից իշխող լիցի Մար-
» մաշինու. և գրեցին կնդակ Ցովհաննու վանից, և
» եղին կնիք Սոսթենէս և Գրիգոր վարդապետաք, զոր
» գրեցաք, Վաղթանկ իշխան և ազատքն Աբուճայ և
» Թաղնայ, և այլք որք գտան անդ, և կանդնեցին խաչ և
» արձան գրեցին ՚ի վերայ գերեզմանին Երեմիայ. և
» գնացին յիւրաքանչիւր տեղիս: Եւ գիրն որ գրած էր
» ՚ի վերայ գերեզմանին՝ այս է. ՆՋՐ Թուին. Ես հայր
» Երեմիա առաջնորդ սուրբ ուխտին Մարմաշինու
» սիրեցի զվարս միայնութեան, աւանդեցի զվերա-
» կացութիւն ուխտին իմոյ անդրանկին իմում Սոս-
» թենէսի. Եւ ես եկեալ բնակեցայ յանապատի
» աստ, եւ ի տեղւոջս ընկալայ զփոխումն. Արդ
» աղաչեմ յիշեսջիք ի Քրիստոս »:



69. Մնացուած վիրին վանաց Մարմաշինու:

Թուականն մահուան Երեմիայի, 1033, ցուցանէ լեալ յետ չորից կամ հնգից ամաց աւարտման շինութեան Մարմաշինու և յանձնելոյ նմա զայն՝ վահրամայ. իսկ յաջորդ նորին Սոսթենէս՝ յիշեալն յարձանի դչխային Մարեմայ, ծանօթ է և ՚ի Թղթոյ Մագիստրոսի, տան կամ հնգետասան ամաք ևս յետոյ. յորոյ ՚ի միումն գովէ զարիութիւն նորա, « ըստ զօրութեանն Աստուծոյ, որ
» յայսպիսի հանդիսական և խռովութեան ժամանակի՝
» պատրաստեաց զքեզ իրրու ճակատամարտիկ իմն մար-
» մրա և անհանգիստ արիութեամբ զիմակացեալ ան-
» տանելի և անժուժելի խռովարարաց՝ ներքուստ և ար-
» տաքուստ », և այլն. ապա յաւելու. « Աւգ ՚ի ժամա-
» նակիս խռովութենէ և ՚ի ճանապարհիս աւերմանէ՝
» ոչինչ առաքեցի քեզ այժմ, բայց սակաւ մի ձիր ինչ,
» զորոց անուանս իմով ձեռամբ նկատեալ ընծերցիս,
» և այնքան պահանջեացես ՚ի բերողէդ, և ապօթս մեզ
» առնել ». և այլն: Յայնմ թղթի աւետ՝ ընդ իւ-
րում պատուհասկալութեանն և զայն, զի կայսրն՝ Կոս-
տանդին Մոնոմախ՝ առաքեաց ոսկի մատանի, « Ուխ-
տիդ սուրբ և մայրաքաղաքիդ Մարմաշինոյ, (և) քեզ
» սրբոյդ Սոսթենէսի արի և առաքինասէր առն՝ յոյժ
» զօրաւոր բանս, հանդերձ կնքովն ոսկեղինաւ, ՚ի հրա-
» մանէն աստուածեղէն զօրութեան ». և խրատէ ևս,
թէ, « յորժամ հասցէ նամակդ՝ արա սէր սրբոց և ժամ
» երանելեացդ, և գրեա զայս ընդ ամենայն մայրաքա-
» զաք սրբոց. և զվիր իմ առաքեա առ ամենեսեան. և
» արձակեա եղբարս, կամ եկեսցես դու և տարեցես զոսկի
» մատանիս. զի ես մինչև ցութօրէս կատարեմ՝ ոչ կա-
» միմ յառաջել »: Եւ զի ունէր Մագիստրոս սերտ ըն-
տանակցութիւն ընդ վանաց Մարմաշինու՝ իրրև հայրե-

նական դաստակերտի՝ յայտ է և ՚ի Թղթոյն առ Սանա-
հնեցիս, առ որս կամելով աւանդել ինչ, ասէ. « Ի սրբոց
» խաչէն ՚ի մեզ մարդ եկեսցէ, և մեք զվնի նորա մինչև
» ՚ի Մարմաշէն առաքեմք »:


Բայ յերկուց աստի առաջնորդաց՝ ոչ յիշին այլք, զի չկան և արձանագիրք, ոչ ՚ի միոյ երկերիցն ասացն՝ ցնո-
րոգութիւն տեղւոյն, և ոչ զվնի այնր, թերևս զի յետ
սակաւուց յաստատակէն թաթարաց ամայացաւ: Այլ
քան զարձանս և քան զբնաւս արժան է անմոռաց ունել
զյիշատակ չնորհն և հանգուցելոյն ընդ հովանեաւ
Նորին. այն է Վահրամ Պահլաւունի. արդարև մի յար-
ժանապէս մեծ կոչելոց անձանց ՚ի Հայս. որ աստուած-
պաշտութեամբ, չնութեամբք և արիութեամբ՝ քան զյո-
լով գերազանցեաց. և զոր արձանագրէրն զանձնէ՝ ոչ
միայն ճշմարիտ էր, այլ նոյնպէս եցոյց և յետոյ պաշտ-
պանութեամբ Դագկայ Բէ և քաղաքին Անւոյ, առաքի-
նասքան պատերազմաւ և խրատու. նոյնպէս և կնքեաց
զկեանն արեամբն ՚ի մարտի, առ զրան քաղաքին Դբւ-
նայ, անցեալ գոլով զութսամեամնիւք (յամի 1043–4).
զոր և արժանապէս ողբովք և ներբողիւք յեղյեղէ ՚ի
Թուղթս իւր իմաստասէրն Գրիգոր Մագիստրոս՝ եղբօր-
որդին իւր, տալով ծանօթս ինչ և զկերպարանսդ վեհ-
ապինն. « ամենայարմար հասակաւ, գեղեցկապարանոց
» և չքնաղադէմ տեսլեամբ, որպէս Աբեսա մեր և Աչու-
» շաննն ». և ապա յիշէ « զզեղչիտակ դաստակ եր-
կայնաձիգ մատանցդ ». և ՚ի վերայ բաղմապատիկ լա-
ւութեանցն, « Ջեռն յօրինիչ և կերտացօղ և առատա-
» ձիր ՚ի գանձուց բաշխումն. յոգնաբուն վկայից կաղ-
» մեաց խոտան, և աստուածային խորհրդոյն կանգնեալ
» սեղան և վանձանց բնակութիւն, և կենդանի վկայից
» և խաչակրօն դասուց և անմարմնոցն համեմատեալ մեծ
» զինաբար առացեալ վարս: . . (Բնակութիւն Նորա) կար-
» ծեցեալ էր ամենեցուն ապատան, որ և ոչ իակ հար-
» ցեալք՝ որպէս պատրաստէին՝ այնպէս պատրաստէր. և այս
» ոչ միայն մերոյն սեռի և համազանց, այլ և Իվերիա-
» ցւոց և Պարսից... Այսպէս սիրեալ բարեացդ քոց
» համառաւ ընդ սիեզերս տարածէր. որ և որք ոչ են ժա-
» մանեալ տեսութեան քո՝ ՚ի հրեշտակաց քոց հարցեալք
» պատուէին զնոսա, իրրու տեսութեան քո արժանա-
» ցեալք՝ զմիմեամբք ելանէին, և զզիր գեղեցիկ տատի
» քո՝ մարգարէական մատենից համեմատեալ՝ համբու-
» րէին, և հայցէին այնմ արժանանալ միայն. և այս
» յատկարհին Քաղդէացւոց և Մարաց և Պարթևաց, և
» պարզևաք պատուէին զքեզ. որ և Ցունաց իակ ինքնա-
» կալացն պատուեալ մեծագոյն իշխանութեամբ, և այն
» ՚ի քում իակ բնակութենդ առաքեալ... Եւ Իվերիա-
» ցւոցն հզօրաց և արիական զօրաց նոցա՝ բազում ան-
» գամ մարտակցութեամբ, և արեամբ և վանաձամբ
» որդեացդ և քոյդ ազգի՝ գնեալ զաչխարհդ. և երբեմն
» ՚ի նոսա արի երևեալ և հրաչից հիացման արժանի և ՚ի
» վեր քան զմտածութիւն, որ և նոցա իակ զքոյդ հան-
» դիսի մրցութիւն՝ տաղս և առինչս յօրինեալ՝ անպատ-
» կառաբար ազատագունդն պարէին, և ՚ի հրապարակս
» գահերից և քաղաքաց իրրու զղիւցազանցն երգէին. իակ
» անմահանձոտք և առաքինասէրքն՝ մինչ տաճարն էիր
» կենդանի՝ մատենագրել ոչ զանդաղէին ». և այլն:
Եւ յետ յիշելոյ զնահատակութեն կատարումն ՚ի մարտի,
յաւելու. « Եւ ՚ի վերայ չիրմի քո լոյս եօթնօրեայ արժա-
» նապէս և առանց յերկուանալոյ ճշմարտեալ արդեօք և
» աստուածազգեաց միանձանցն՝ որք յայնմ վանս ճըշ-
» գրտատեսիլ և հրեշտակակրօն դասուն »: Եւ ՚ի թըղ-
թին առ Սանահնեցիս՝ այսպէս բովանդակէ գյարգ «Ծայ-
» րագոյն ծերունւոյն, և աստուածային և ամենայն բո-
» լոր բարեաց պարտաւեալ օթևանին. կամ եթէ՝ ան-
» նման իակ մարդկային այժմու սեռի, զանազան և աս-
» տուածապարգև շնորհօք սրբութեամբև մաքրութեամբ,
» և հասակաւ գեղայարմար, և չքնաղ տեսլեամբ, հե-
» զութեամբ և հանդարտութեամբ, առատութեամբ և
» լրջմտութեամբ, խոնարհութեամբ, քաղցրութեամբ,
» արդարատաւութեամբ և իրաւամբք, կրօնաւորասի-
» րութեամբ և աստուածասիրութեամբ, ողջախոհու-
» թեամբ և արդարութեամբ, աղքատասիրութեամբ և ա-
» ռատաձիր բաշխմամբ: Եւ զինչ զքո գնորայն կարասցէ
» պատմել բանիւ կամ գրով՝ զօտարսիրութիւնն, զհիւր-
» ընկալութիւնն, զերկրագործութիւնն, զմարտիցն յաղ-
» թութիւն, զպատուասիրին ՚ի բազմաց, զաղօթիցն ըզ-
» գաստութիւնս, զսնոմախմբութեանն զհանգէս, զեկե-
» ղեցւոց զյարդարումն և զկերտութիւն. և զդրնկաց՝
» սրահիցն և ամրապատ պարսպօք և աչտարակօք յարա-
» մանեալ. որ ՚ի սահարձանաց զք այժմ եթէ հայեցցի՝ ոչ
» ՚ի բնաւ բնակութեան արամեան գտցէ զք այսպիսի. և
» զբազմութիւն անապատականաց և մայրաքաղաքաց
» յօրինեալ. և եթէ այլ ուրեք՝ ոչ առանց ընծայաբե-
» րութեան և պատարագաց ՚ի նմանէ ինացեալ այսպիսի
» աստուածայնոց և ողջախոհի առն. յիրաւի այնպիսի
» հանդիպեալ բախտի, որ և զվնի ուխտուն ամաց մար-
» տիրոսականն հանդիպեալ և արժանացեալ պսակի. որ
» և ՚ի վերայ չիրմի իւրոյ լոյս յայտնապէս ամենեցուն
» երևեալ »:

Ցիշատակեալն ՚ի յետին բանս Մագիստրոսի Դղեակ ամրապատ և աչտարակազարդ՝ Թուի յաւէտ ամրացն որոյ մեծամեծ քարինք կոփածոյք և անկոփք թշնամւոյն քա-
կեալք երևին՝ ՚ի սարահարթ բլրի, յերի Վերին գեղջն, և Վահրամաչէն անուանի: — Աւ երի աւերակին ՚ի Հր. Մ. կողմանէ ՚ի վիմի՝ երիք չափ բարձու յայտնեցաւ բևե-
ռաքանդակ արձանագիր մի հնգատող [1]: Այս ամենայն յիշատակք Մարմաշինու, մանաւանդ մեծ մենաստանն և հանգուստարանք Պահլաւունեաց, վաւագելի առնեն զմեր խուզարկութիւն չարք վայրացն, ուր հաստելի է թէ և բնակարանք և ապարանք եղեալ իցեն մեծոգի իշ-
խանացն. և աւերակատ պարիսպքն և դղեակք և աչտարակք յիշեալք ՚ի Մագիստրոսէ, խնդրելի են առ երի յետին կայից նոցին: — Թուին արդարացուցանել զայս և բանք այլազգի հին պատմչաց, որք ՚ի գործս Աւլփ-արսլանայ

1 Ցորում ոմն ՚ի մեծագղի բանասիրաց ընծեռնու զանուանս Մխեռաս, Երան, Իսկիւռ, Շապուհ: — Աւ հիմանքք միոյ յեկե-
ղեցեաց Մարմաշինու համարի Հակոբոյն Աղէքսանդր Երէցեան՝ գոեալ տաճար հեթանոսական: — Փորձ, ե. Ս. 87:

յիչեն, յառաջ քան զառումն Ա֊նոյ՝ առաքել Նոբա զորվի իւր Մէլիք֊շահ՝ ի վերայ վանաց միոյ, զոր Մհրիմ֊Ղհա֊
չին نشان میرم կոչեն, և Թարգմանեն բնակութիւն Մարիամայ. որ ոչ միայն քալ ամրապատ էր պարսպօք, այլ և շրջապատեալ ջրովք որպէս ի լճի. վասն որոյ նա֊
ւակս բերեալ՝ մատեան ի նոսին առնդոքք և մեքենա֊
յիւք. բայց ոչ ինչ կարելով առնուել, նաև ի վտանգ ըմ֊
բռնման անկեալ Մէլիք֊Շահի կամէր ձեռնթափ յետս
դառնալ. այլ դէպ եղև յայնժամ մրրիկ մեծ և ահեղ ի
պակուցումն երկոցուն կողմանց, և յետ այնր սասա֊
նութիւն երկրի սաստիկ յոյժ, յորմէ անկաւ մասն մի
պարսպացն, և այնպէս մատնեցաւ տեղին յատեր և ի
կոտորած ընակչացն, ուր այնքան բազմութիւն էր, տաճն,
միանձանց, քահանայից և իշխանաց, որպէս թէ ոչինչ
պակաս ի քաղաքէ [1]:

Ի սկիզբն դարուս (1801) ի ժամանակս պատերազմին



70. Քեհեբրանդակ արձանագիր մեռոնէ ի Մարանդին. (տես յէջ 153):

Պարսից և Ռուսաց՝ Հայք զաղթեալք յԱյրարատայ՝ դա֊
դարեցին առ Մարմաշինիս աւուրս լինչ, ուր ցամքանէս
վ. Ոսկերչեան գաղափարեաց զարձանս մեծի եկեղե֊
ցւոյն, ընդ որում յիշէ և չորս այլ վոքրունս և աւերս:

Սակաւ ամաք յառաջ (1870) Մկրտիչ Ջալալեան ի
բնակչաց մերձակայ քաղաքին՝ եւս քան կարի նորագիւ
գմանն ինչ հնոց մենաստանիս Մարմաշինոյ, և հաստա֊
տեաց ի նմա գպրոց, որ յետոյ փոխեցաւ ի բնակութիւն
ուխտաւորաց և քահանայից:

38. Ա.ԼԵՔՍԱՆԴՐՊՈԼ. — Հինգ կամ վեց մղոնաւ ի
հարաւոյ Մարմաշինոյ, մղոնաւ և կիսով հեռի յափանց
Ա.րմայ, յեզերս վտակին որ ընդ Ֆէյթի և Օրթագիլիսէ
իջեալ գայ, կայր հին գեօղն Կումայրի, ի 1548 Ք. բար֊
ձու. ուր յամի 771 Ա.բտաւազդ Մամիկոնեան՝ նեղեալ
ի հարատահարութենէ Ա.բարացւոց, միաբանեալ ընդ
իւր զամնս ի նախարարաց Հայոց, « սպանանէր զերա֊
» մանատար հարկին, և որ ինչ գտանէր ի ձեռին նոցա
» առեալ, համբառնայր ամենայն տամբ իւրով, գնայր ի
» կողմանս Վ.րաց ապաստին [2] »: Մինչև ի մերս դար՝
կայր անդ ամրոց մի հին [3], նշանակ կարևորութեան
տեզւոյն, որ յայլազգեաց Կիւմրի կամ Գիւմրիւ կոչիւր,
իբրև 70 տամբք, զոր վասն դիւր և գիպան գրկին և ա֊
ռատութեան ջրոյ՝ գաղթականք Հայոց ի կողմանց Կա֊
րուց և տակաւ ի Կարնոյ և ի Կոզովտ, յամս 1828–30
ընարեցին ի բնակութիւն իւրեանց, ի սպառատածոյ գա֊
րավայրի գետաձորոյն առ եզերք գաշտին ցամք ահման,
ըստ օրինի քաղաքաց ձևակով փողոցս և թաղս, թևար֊
կութեամբ պետութեան Ռուսաց, որով ընկալաւ պատիւ
քաղաքի. և առաւել ևս բարգաւաճեաց ամենայն մա֊
տամբք, յորժամ յամի 1834 հիմն արկաւ մեծի և հզոր
բերդի ընդ մէջ քաղաքին և գետոյն, հակառակորդ կող


Կարուց և դիմահար զօրութեան Օսմանեանց. և երկո֊
քին միանգամայն կուսեցան յանուն կայսրուհւոյն Ա.նք֊
սանդրապոլիս: Փայտք ի Սօղանլը լերանց և քարինք սեռ
և կարմիր ի լերանցն նախայիշեցելոց և յատերակաց հնոց՝
օժանդակեցին ի կառուցումն Բերդին, զորով պատէ և
խրամ խոր. և ամրութեամբն և հարատարուն յօրի֊
նուածովք՝ մի ի կարի նշանաւոր զինուորական չինուա֊
ծոց գարուս եղև, նոյնպէս և ընդարձակութեամբն. զի
են ի նմա մթերանոցք զինուց, և ամբարանոցք և բնա֊
կարանք ի պէտս իբրև 16,000 արանց, թէպէտ և 4 կամ
5000 բնակին ի նմա. բայց մեծ, հիւանդանոց առան֊
ձին, բաղում կամարակապ և գետնափոր տեղիք. ապա֊
րանք բերդապահ զօրավարին, եկեղեցի Ռուսաց խա֊
չաձև և կապարապատ, լայնանիստ գմբեթաւ. և սքան֊
չակ մի կարմիր անուանեալ ի հիւսիսոյ կողմանէ. և
ամենայն որ ինչ վայել է մեծի զօրանիստ քաղաքի և
պատուարի պետութեան. որ թերևս արդ յետ նուաճ֊
ման Կարուց՝ հակառակորդին իւրոյ՝ ոչ այնքան պիտա֊
նացու լինի որպէս երբեմն: Քաղաքն անպարիսպ տարա֊
ծեալ է ի դաշտակոմին. իսկ յարևմտից երկայնաձիգ
ծառապողոց յարակից ի բերդն, որ և տեղի զբօսարան
է բնակչաց քաղաքին. և նշանաւոր է ի նմին չուկայն եր֊
կարաձիգ կամարակապ՝ երկուաւեք կրպակօք, և հրա֊
պարակ ի միջակի. են և երկարաձիգ ջրանցք կամարա֊
կապք: — Թիւ բնակչաց Ա.լեքսանդրապոլի համարի սրգ
25,000, յորս Հայք աւելի քան 3000 տուն. որոց են
չորք եկեղեցիք, երիւք հին և երիւս նոր. մին ի կո֊
ստնոյս, Ա.ստուածածնի, համաձև կաթողիկէին Աղուց կեր֊
տեցւոյ (յամս 1859–1873). միւս՝ Ս. Ա.ստուածածնի, ո֊
րում մերձ է Ա.զատնորդարանն. և մին փոքր՝ կոչի Ս.
Գէորգ. չորրորդն է Ս. Նշան, չնևնալ ծախիւք Ա.րու֊

1 Հերոդ. ի բառն Ա.սի֊արաբն, և Սէն Մարդէն, ե. 26:
2 Ղևոնդ Պատմիչ:
3 Ի միում ի մատենից նորին գտաւ արաբագիր տապանա֊
քար Պաղատեանի ուրումն որդւոյ Պէքիրայ, անտոյդ Թուտխանաւ:

թեան իշխանաղին: Ունին և Հռոմէական Հայք, (ոգիք
իբր 320), եկեղեցի մեծ յանուն Ս. Աստուածածնի, շի֊
նեալ Յակինթ Ա.նանիկեանց Ազիքսանդր վարդապետի
Ա.րարատով, և օծեալ յամի 1855: Ունին և Ցոյնք՝ որ
են թուով իբր 100 տուն և հայերէն խօսին, յատուկ ե֊
կեղեցի: Ռուք են իբրև 100 տուն, և սակաւ Մարիա֊
կան ազանդաւորք. այլ և վ.իրք, և Թուրքք և Պարսիկք
իբր 100 տուն: Եկեղեցին Ս. Աստուածածնի նշանաւոր
ուխտատեղի համարեալ է վանս Երօքն֊խոցից անուա֊
նեալ պատկերին, զոր համարին նկարեալ ի Ղուկայ ա֊
ւետարանչէ և բերեալ ի Հայս ի Գրիգորէ Մագիստրո֊
սէ. նուէրք ուխտաւորացն կարդեալ են ի հասոյթ հո֊
գևոր ուսումնարանին. զսա յայսմանէ են դպրոցք Հայոց
աւելի քան զսասն, յորս գլխաւոր՝ Ա.րշաւեանն, և
Սահակեանաւչեան՝ վասն օրիորդաց, և մեծ վարժարան
դաւառական՝ յատումն յոյն, լատին, հայ և ռուս լե֊

զուաց: — Ա.րուեստաւորք գոն ըստ չափու քաղաքին,
այլ առևտուր վաճառականութեան ոչ է բարգաւաճեալ,
զի տակաւին Երևան հին կենդրոն՝ ձգէ յինքն գշահա֊
վաճառ կողմանցս. բայց ի բերս երկրի առատ են ար֊
մրիքն, և պատուական պտուղք, թէ և սակաւ, վասն
բարձրութեան երկրին, յոր սակս և ոչ բազմազան ծառք,
այլ բարակք և ուռենիք. բայց պատուականագոյն քան
զինուս է արգասաւորութիւն հողոյն, և յատկութիւն
օդոյ և ջրոյ հանդերձ առատութեամբ սոցին, որ երբեմն
և ըստ չափ անցեալ ի յորդութենէ անձրևաց՝ զեան մեծ
գործեն քաղաքին՝ որպէս յամն 1862, (23 յուլ.) և 1878:

Կնաժամուս հեռի է ի քաղաքէն, առ Ա.խուրեան գե֊
տով, և իբր երրորդ մասն նորին համարեալ Ա.ջարառուելն
(գարանլիկ) և մաքառատն և սուրհանդակատոմ ի վերոյ
արքունի ճանապարհի, որ զառ ի թաւ լճանէ ի հարաւ
կոյս: — Վտակ փոքրիկ լինէալ ի հիւսիսոյ կողմանէ և



71. Ա.լեքսանդրապոլ *:

անցեալ ընդ մէջ բերդին և քաղաքին ընդ հարաւ կոյս
և գարձեալ յարևմուտս՝ խառնի ի գետն. ձորակ նորին
կոչի Չէրքէզի֊ձոր, յորոյ ափունս անկեալ է Ռուսաց
ծառս և պարէզս. և ի պեղելն զնորանին՝ յայտնեցաւ
եկեղեցեակ մի աւեր չորիւք փոքրիկ մատրամբք յան֊
կիւնս, և գերեզմանք առ նովաս. ի միում ի մա֊
տրանցն կամ ատենադատանց գոյր հայ թուական « ՈՎ.
ՄԵ » (736). և ի միում տապանաքարի սակաւ բառք.

Ի պետութեան ..... Քվիտոս, հասարակաց ողորմես .....

39. Իբր վաթսունս բացագոյն ի հարաւոյ կուսէ մա֊
քրատանն կայ միւս ևս պահակատուն և ամրոց Ռուսաց,
վանիցօտա?. կոչի և յանուն Ա.րծիւ գետոյ, յոր խառնի
անդ գետակ մի, անծանօթ անուամբ, եկեալ ի լերանց
արևելեան սահմանի վիճակիս, (Թէրգիգըլագ, Թէրիճ֊
գայա, և այլն), ի բազում առուոյց յօրացեալ, այլ ոչ

* Քէզդերի Գերմանացւոյ է հանեալ զվարկպարագի պատկերս այս Ա.լեքսանդրապոլի, տարաբակ անակօքն, յամի 1855:

բաւական և յոռոգումն ամարանի։ — Այս աղբերաք վտա-
կացն ՚ի լեռնային կողմանն կան գեօղք Խանվիկի և Զը-
րահիւռ ՚ի Հր. Թէլենգայա լերին. իսկ յարևմտից նորա
երկաքին Քեփենիկ գեօղք, Մեծն ՚ի Հր., Փոքրն ՚ի Հ։ Ի
նոյն սահմանս են հանդրուանն Թէրզի-գըղլագ՝ համ-
անուն լերինն, և ՚ի Մ. սորա Տիրեկիր գեօղ, առ որով
ամի գոլ և վանատեղի։ Փարախաւ հեռի ՚ի Հր. Մ.
սորա, և նոյնքան յԵ. կուսէ քաղաքին՝ Տիւզքհնա գեօղ
մեծ հայաբնակ, որ գոլով ՚ի գիւր վայրի՝ ճահապէս ունի
զանունն։ — Ի Հր. սորա երկու մղոնաւ ՚ի ստոլև և ոչ
հեռի ՚ի գետակէն Թէփէտաշլիկ կամ Թէփէտաղիկ գեօղ,
բնակեալ ՚ի հռոմէական Հայոց գաղթելոց ՚ի կողմանց
Բասենոյ և Աղջկերտի յամն 1829-30. եկեղեցի նոցա
քարաշէն Ս. Գրիգոր կանգնեալ է յամի 1862։ — Կիսով
փարախաւ ՚ի Հր. Թէփէտաշլիկի է Իլիսի-ապի գիւղ.
յորոյ արևելից կուսէ նշանակին ամայացեալ գիւղք կամ
հանդրուանք Լապան-տօղոռլան?, Զաղպուր, և փօր-
առիսու։ Իբր չորիք կամ հինգ մղոնաք ՚ի Մ. Հր. Թէ-
փէտաշլիկի, և նոյնքան հեռի ՚ի Հր. քաղաքին՝ յանկեան
գետակին և միւսոյ ևս որ ՚ի հարաւոյ կուսէ խառնի ՚ի
նա, և իբր վարսախաւ հեռի յԱլթայէ, ՚ի 1500 Զ. բար-
ձու կայ գեօղատունն հայաբնակ փոքր կամ Իլրի-Գաբա-
գիխան 250 և աւելի տամբք, յորս և կաթոլիկ Հայք. մեծ
և գմբեթաւոր է եկեղեցի ատանին. իսկ կաթոլիկսկն
փոքր և անշուք, չինեալ յանուն Ս. Աստուածածնի յա-
մին 1852։ Ըստ գրչին և յաւերակ վանացն որ առ երի
նմին նշանաւոր իմն վիճակայր լեալ ՚ի հնումն վկայի։ —
Կայ մերձագոյն ևս ՚ի գետն միւս Գարագիխան Իլի կո-
չեցեալ. որպէս և այլ Նոր Գարագիխան ՚ի հիւսիսակողմն
վիճակին։



72. Աշերակ եկեղեցի մերձ ՚ի Կոտայրի։

60. Գետակն զոր յիշեցաք՝ հանգոյն զուգակցին ՚ի
բազում վտակաց իջելոց յոտոց Արագած լերին՝ յորա-
նոց և յորմէ. ՚ի վերին կողմանն Գարանկա կոչի և ՚ի
Հայոց Կարկաչ։ Ի Գարագիլիսեայ՝ ընդ գետակս այս ՚ի
վեր գնալով, իբր երկու մղոնաւ յԵ. Հր. նորին կայ
Ճլօփհան կամ Ճալալհան գիւղ. և ՚ի սմանէ նոյնքան
հեռի և ըստ նոյն ղրից (յԵ. Հր.) Թալիչ-օղլի, և մղոնաւ
հեռի ՚ի սմանէ՝ յԵ. Իմիրխանլը։ Այս սոյնս սկսանի
լեռնաստհման ոտոց Արագածու, առ որ ուղղելով ընդ
ել. ըստ ընթացից Կարկաչ գետակի, կիսաժամաւ հեռի
յԻմիրխանէ յԵ. կայ Գուրդու-Գըղլագ կամ Ղուրլի գեօղ.
յԵ. Հ. ունելով զՄղգուղ հանգրուան, և ՚ի Հր. իբր
մղոնաւ տարանջատ՝ Հոռոմ մեծ գիւղ հայաբնակ և հին
կիսաւեր եկեղեցեաւ յանուն Ս. Հռիփսիմեայ. և հուսկ
յԵ. կուսէ բերդ համանուն։ — Սակաւուք հեռի յԵ.
սոցա խառնուրդք են երկուց վտակաց, Կարկաչայ որ
՚ի Հ. Ե. և Ջրոյն Հաւճայի հուսկ ՚ի խառնուրդն կայ
Թօմարդաշ գիւղ. յորոյ հիւսիսոյ Գազանճի. իսկ յԵ.

իբր երկու մղոնաւ հեռի ՚ի միմի երկուց վտակաց Քնաք-
թարդու գիւղ հռոմէական Հայոց գաղթելոց յԱլաշկեր-
տէ. որոց գլխաւոր՝ տուն Ղահապետեան, որ և տա-
ճարատէր, և հիմնարկու եկեղեցւոյն Ս. Աս-
տուածածնի՝ Տէր Պետրոս, զոր յաջորդեաց եղբօրորդին՝
Պօղոս վարդապետ փոխանան ՚ի բարգաւաճանս տե-
ղւոյն, յոր սակս և ձեռն արկեալ է հաստատել դպրոց, ՚ի
պէտս սյլոց ևս գիւղից։ — Իբր երկու մղոնաւ հեռի յԵ.
սորա Ղուշիձան կամ Գուշիձան, և ՚ի սմանէ սուղ ինչ ևս
բացագոյն յարևելս ՚ի Հ. Մ. սոսրոտս Աբրագաձու՝ Նորա-
չին։ Ի Մ. Հ. սորա և յԵ. Հ. Ղալիճանայ՝ Ղօղլար [1] կամ
Ճանկա որ և Ճանկի թէփէ վաքրիկ գիւղ. յորոց սակա-
ւուք հեռի յարևմուտս կայս աւերակք Զրահիւռ և Գարա-
գաչկա? գիւղից։ — Ի Հր. Նորաշէնի և մերձ նմին Ալրխա-
վիի Մեծ, և Ալրխավիի Փոքր ՚ի Մ. առաջնոյն. երկաքին
ևս հայաբնակք, և իբրաքանչիւր Ս. Աստուածածին եկե-
ղեցեաք։ Բնակիչք սոցին գաղթականք են եկեալք ՚ի Զէ-
վիրմէ գեղջէ խնուսի (25 տունք). յորս յայտնեցաւ ա-
զգանդ նման իմն Թոնդրակեանց, յամի 1837, յայցելու-
թեան Կարապետ եպիսկոպոսի Բագրատունւոյ, և կար-
ծի սմանց տակաւին ՚ի գաղտ ունել զաղանդն [2]։ Ի մոլոց
սոցա և ՚ի Հր. Ղալիճանայ իբր կիսով փարախաւ հեռի՝
Ղաատէ-Ալի գիւղ. և մղոնաւ ՚ի Հր. Մ. սորա Պիկիքնու,
և ըստ Հայոց Պարնի գիւղ, այսինքն Պարանի։




73. Սահմանափակ մերձ ՚ի Կոտայրի։

61. Ի Հր. կուսէ յետին յիշեցելոց գիւղից և ՚ի Հ. Մ.
ոստոց Աբրագաձու, հովիտ վտակին խառնելոյ ընդ Կար-
կաչայ՝ հանգոյն Աբրագաձոյն որ յարևելից Շիրակայ,
երևի չինեալ և սրբակերտ եղեալ ՚ի հնումն, և վկայս
ունի ցարդ զվանս Հաւճայ և զայլ աւերակ վանորայս
և եկեղեցիս։ Ի գլուխ վտակին և հովտին կայ Պաշքիւռ,
որ է ասել առաջին գիւղ վիճակին յայնմ կողմանէ. յոր-
մէ իբր քառորդաւ ևեթ ժամու ՚ի բացեայ կայ ՚ի Հր.
խաչագիտիւ փոքր գիւղ, Ս. Գէորգ եկեղեցեաւ Հայոց.
և նոյնքան հեռի ՚ի սմանէ ՚ի Հր. առ վտակաւն Ղըրլաղ
գիւղ, որ է հինն Հաւիճա, հռչակաւոր մենաստանաւն
յանուն Ս. Աստուածածնի։ Գիւղն ՚ի բարձրաւանդակի
կայ, ձորակս յոլոթիս ունելով յարևելից, ՚ի հարաւոյ և
յարևմտից, առատղաստն օդովք և զուարճալի տես-
լեամբք. վանն որոյ և այժմեան կաթողիկոս Էջմիածնի
(Տէր Գէորգ Դ) ընտրէ իւր երբեմն զայս յամարանոց,

1 Գէղէմբ ըստ Աբարատ Օրագրի (թՒ. 402)։
2 Երկար գրե զայսմանէ Ադ. Երիցով ՚ի Փորձ օրագրի, (Դ. տ., թիւ ծ, 91-150) վաւերական թղթովք, և վկայութեամբք մերձա-
կան գրոց նոր հերձակի նոցին Յովհաննու ուրուն քահանայի, (յետոյ տաճկացելոյ) դարու յառաջ, շարադրեալ (յամի 1782) և կո-
չեցեալ Բառնալ ճշմարտութեան։

պատրաստեալ սենեակս ինչ ’ի վանեն, որ կայ յարևմտից հարաւոյ գեղջն և յարակից նմին. և է ըստ չինուածեանն և բնակութեան՝ այժմ դիւաւոր ամենայն վանօրէից արևելեան Շիրակայ: Սկիզբն հաստատութեան ուխտին թուի յառաջին դարս քրիստոնէութեան Հայոց, հանգոյն մեծամեծ վանորէիցն որ յայնկոյս լերինն Արագածու. այլ ոչ վանքն և ոչ գեօղն յիշին առ հին պատմիչս, և ոչ ընդ վանորայս յիշեալս ’ի Ժ. դարս ’ի կրօնաւորաց հալածելոց յերկրէն Յունաց. բայց հնագոյն քան զնոսա թուի հին եկեղեցեակ մի տակաւին կանգուն Ս. Գրիգոր կոչեցեալ և կից ’ի մեծ եկեղեցին, որ չինեալ է ’ի սկիզբն ԺԳ. դարու ’ի Զաքարիայէ Սպասալարէ: Շինող այնր եկեղեցւոյ այսպէս արձանագրէ յարևմտեան ճակատին.

Ես Սարգիս ձոն չինեցի զեկեղեցիս, եւ ի քրտանց իմոց եառու այլ ընծայ ի սուրբ ուխտս. Եւ Հայր Համազասպ սահմանեաց որ ի Սարգսի եւ ի Բագրատ տաւնի ը աւր պատարագեն զՔրիստոս յիմ անուն.



74. Հաբիայ վանք:

Թէպէտ չիք թուական արձանիս և բանքն չեան հաւաստիս չատ հնութեան, այլ փոքրութիւն և խրճնութիւն իսկ չինուածոյն առաւել յայն ձգնի. և մարթ է թէ չինողն Սարգիս ձոն էր, նոյն զոր Վարդան պատմագիր յիշէ զոյգ ընդ Բարսղի ձոնի, ’ի դարս[1]: Եկեղեցիս այս հին՝ անպին է և բոլորչի, այլ խաչաձև կարճ կիսաբոլոր թևաք, ունելով մի մի լուսամուտս ’ի նոսին. բայ ’ի սեղանոյն ունի և երկուս աւանդատունս կամ մասրունս փոքրիկունս ’ի հարաւակողմն ատի և անտի. ’ի ներքուստ ամբողջ է եկեղեցին, այլ արտաքին զտակ զմբեթին վերին կիսոլիս անկեալ է, և փոխանորին՝ Վահրաման ումն Պարսիկ՝ ’ի պարզևի ընկալեալ զկողմանեաքս յանցեալ դարու, չինեալ է աւսարակ գիտանոց: Ի հարաւոյ կուսէ եկեղեցւոյն կայ և ժամատուն, որպ մեծ մասն անկեալ քայքայեալ է, և մասն մի հիւսիսային որմոյն հանդերձ կամարօք և երկու սիւնք ’ի միաստանի կարմիր քարէ կանգուն կան. այլ արձանագիր ոչ գտանի ’ի միացորդս անդ. բայց ’ի վերայ եկեղեցւոյն գոն յարևելեան որմին արձանք 1192 և 1196 թուականաւք, գրեալք ’ի հայրութեան Պետրոսի, յորոց մին է Տաւէորդւոյն.

Ի ՈԽ թուականիս ես Գրիգոր վարդապետս որդի Տաւոյ եառու զսուրբ նչանս լուսոյ կրկին պահարանով երիս մասն զգրաւականս հոգւոյ իմոյ ի սուրբ Աստուածածինս Հաւիճայու. պարտական են ինձ զմիաբանութ-

1 Աբել Վարդապետ երկար ստորագրող վանացս Հաւիճայ առանձին տպագրով, համարի չինող տեղւոյս զԱրգիս առաջնորդ Հոռոմոսի վանաց, որ վախճանեալ է յամի իբր 979, ’ի վկայութիւն ածեալ զարձանագրութիւն Գոլղոլիչեան որ յայսկոյս Ախուրեանոյ, Սարգիս ձոն կոչելով. սակայն չիք ոչ յարձանի անդ և ոչ ’ի յիշատակս վանացն Հոռոմոսի ձոն անուն, այլ միայն Հայր Սարգիս: — ի սմանէ գաղափարեցան արձանագրութիւնք վանացս, զորս և ստորագրոյ կարօտ համարիմ: իսկ զզուակերս այս (Թիւ 74) լուսատպութեամբ ընծայեալ՝ ոչ գիտեմ որոյ ճարտարի հանեալ իցէ:

թեան գ. քառատունս եւ զատկի ճրագալուցին ա ժամարար? որչափ ուխտս ի հաստատութեան է. եւ որ հանէ զսա ի սուրբ ուխտէս վինչ եւ իցէ պատճառանաւք նզոված է յԱստուծոյ եւ յամենայն սրբոց. Տուաւ ի ձեռն Հայր Պետրոսի. որք ընակէք ի սուրբ տեղիս եւ կարդայք զգիրս Պետրոսի եւ հոգոյ եւ մարմնոյ ծնողաց իւրոց եւ եղբարց Թողութիւն մեզաց խնդրեցէք ի Քրիստոսէ. աղաչեմք.

Հնագոյն քան զսա և զայսն է արձան յիշատակի նորա- գողի վանացն՝ Հօր Գրիգորի, յամի 1185. և է այսպէս.

Ես Գրիգոր առաջնորդ սուրբ ուխտիս Հաւիճայի չինեցի զտեղի անդեան իմոյ ի հարիւրամեայ կործանմանէն եւ կարգեցի արս ընտրեալս եւ խրատեալս աւրինաւքն Աստուծոյ եւ հաստատեցի կամակցութեամբ եղբարց. եթէ որ յառաջնորդաց ի յընծայից եկեղեցւոյս խորէ եւ զվաստակս բազմաց եւ տուրս հոգւոյ իւրն համարի որչափ Աստուած աւրհնած է՝ այնչափ նզոված է որ կաշառուիլ հայի (?) կրկին նզոված է[1]:

Զհարիւր ամն ’ի բաց գնալով ’ի նորոգութենէն՝ կործանումն առաջին չինուածոյն երանէ ’ի ժամանակս արշաւանաց Ալփարսլանայ: — ի ժամանակի յորում յիշեալ յարձանս Պետրոս առաջնորդ ուխտին՝ հաստատէր զկիզտակս նաւերատուաց և զնախորդին իւրոյ Գրիգորի նորոգողի տեղւոյն, հմայնմս յօդնութիւն մեծ աշխարհալինն և աշխարհակալ Զաքարիա Սպասալար, և կանգնեաց եկեղեցի կաթողիկէ յանուն Ս. Աստուածածնի, յարևելից կուսէ հնոյ և փոքու Ս. Գրիգոր եկեղեցւոյ, քառակուսի ձևով հաւասար ընդ երկայնն և ընդ լայն, առանց սեան գմբեթաւորեալ ’ի վերայ կամարաց չորից սրմանանց, որոց խոյակք և խարիսխք հնգախորշք, երկուք ’ի կողմանց խորանին և երկուք դրանն յարևմտից. առ որով են մատուռք կամ ագօթատեղիք կրկնայարկք առտի և անտի, երկու երկու փոքր միաստանի սեամբք, և գեղեցկագործ կամարօք, ոլորտապատոյտ քարեղէն սանդղօք վերելից, ունելով և պատուհանս բոլորչիս ’ի միջավայրն. մի մի պատուհանք նեղք և երկայնք են ’ի չորեսին կողմանս եկեղեցւոյն, և երկուք ’ի Հ. և ’ի Հր. կողմանս՝ բոլորչիք, լայնք ’ի ներքուստ և անձուկք արտաքուստ: Քաջմ և յահեկէ խորանին՝ որպէս և յարևմտակողմն են կրկնայարկ մատուռք կամ խորանք. ’ի ճակատ բեմին քարաշար քանդակագործ ծաղկաձև զրուագք են քառակուսի հաստուածովք: Մի դուռն միայն է յարևմտից, կողմն երբեակ կամարօք և սեամբք. յառաջնում միջոցի կամարայն գրեալ է հակիրճ.

Շնորհիւն Աստուծոյ ես Զաքարէ Ամիր Սպասալար չինեցի զվանդ ուիկէս:

Ի ներքնում կիսաբոլորին է արձանագիր Հօր Պետրոսի և միաբանից յամին 1214, սահմանելով պատարագս վանն հարց և եղբարց ուխտին, հանգոյն սահմանելոցն և յայլ վանորայս Շիրակայ, որպէս տեսաք ’ի կարգին.

1 Են այլ ևս արձանագիրք ’ի նմին կողմանն եկեղեցւոյն, յորոց առաջինն յամի 1192 հաստատէ պատարագս վանն Գրիգորի նորոգողի տեղւոյն.

Կամաւն Աստուծոյ մեք Հաւիճեցիքս Հայր Պետրոս եւ այլ եղբարքս սահմանեցաք ի տաւնի Տապանակի ի մի մատուռն պատարագել զՔրիստոս յանուն Գրիգորոյ փոխանակ արդեամց իւրոց. որք կատարեն աւրինեալ եղիցին եւ որք ոչ նզովս ժառանգեսցեն ի Քրիստոսէ. ի թու. ՈԽԱ.


Ի թվիս ՈԽԵ. եւ յառաջնորդութեան հաւր Պետրոսի կամաւն Աստուծոյ ես Աստուածատուր եառ զիմ հայրենի այգիս որ յԱրուճ ի վերին ի Թաղխաչկանց այգին եւ զընձանն եառ ի սուրբ ուխտս Հաւիճեայի ի սուրբ Գրիգորս եւ Սուրբ Աստուածածնիս. եւ առաջնորդք սուրբ ուխտիս խոստացան ինձ ի տարւոջն ը աւր ժամ զմէկ աւրն իմ հաւրն Շիկին եւ ա իմ մաւրն Նվարթին. եթէ ոք զանայ եւ չառնեն ի տաւնի սրբոյն Սարգսի նզովեսցին յԱստուծոյ եւ որք կատարեն աւրինեն յԱստուծոյ:

ի վերոյ սոցին կայ այս արձանագիր անհետևական.

Ես Շատաղէկ միաբանեցայ սուրբ ուխտիս եւ հայր Համազասպ եւ այլ եղբարք հաստատեցին որ ի մաւրու իմ զիմ միաբանութիւնն առնեն անպատճառ ով լինի:

Ի թուին ՈԿԳ. Կամաւն Աստուծոյ մեք Հաւրենեցիք Հայր Պետրոս եւ այլ միաբան եղբարքս հաստատեցաք յաւիտենից կտակ անջնջելի մինչ ի գալուստն Քրիստոսի եւ եդաք սահման անխափան եթէ հայր ոք փոխի առ Քրիստոս գիշերապաշտաւն եւ ¯գ քառասունք. եւ թէ երեց կամ կուսակրաւն աբեղա ¯գ քառասունք. ապաշխարողի ¯ը քառասունք ի մարդն? մէկ աւր ժամ հաւր եւ ամէն եղբարց. որք հաստատ պահեն աւրհնին ի Քրիստոսէ. որք հակառակին դատին ի յԱստուծոյ:

Գիքէթն արտաքուստ լայնանիստ է և պատ՚այր հատ՚ քեալ, խաչ արծաթազօծ ունելով ՚ի գագաթանն, նուրբ սեամիք և պանկիւն կամարաք բաժանեալ ՚ի բաղում կողմանս, ունի չորս պատուհանս և չորս ևս փոքրիկ բո՚ լորի լուսանցոյցս: Ցարևելեան ճակատն ընդ մէջ քան՚ դակազարդ չքնաղիկ պատուհանին և քուոյ տանեացն կայ խաչքանդակ և աղանի թևատարած ՚ի վերայն, և երկուսեակ տանտաճև զարդք քանդակաց բոլորեալ՝ հա՚ սանեն ՚ի գլուխ լուսամտից մատրանցն և գառնան ձգիլ ՚ի Հ. և ՚ի Հր. որմունս. իսկ ՚ի վերոյ խաչին՝ յեռանկիւ՚ նաձևն միջոցի ՚ի սևորակ վիմի քանդակեալ են պատկերք Զաքարիայ և եղբօր նորա Իաննէի, մեծահասակք և փա՚



75. Զաքարիա և Իւաննէ:

ռադէմք՝ կանգնուն կալով, և մօրուեղք [1], խոյրս երկայնս ունելով ՚ի գլուխ, և պատմուճան երկայն ՚ի վայր քան զծունկս վարիւաց, այլ գօտեաւ զսպեալ. յորոց վերայ ունի մին զոչ իւր և միւս զհեաւր, իսկ միւսով ձեռամբքն յիրար կոյս ձգելովք՝ ունէին զքաբեղէն պատկեր Տիրա՚ մօրն կամ զեկեղեցւոյն դաստակերտի իւրեանց. այլ փո՚ խանակ նորին եդեալ են այժմ խողովակ հոսանուտ ան՚ ձրևոյ, զի պատկերն անկեալ է. ՚ի թիկանց միոյն՝ որ համարի Զաքարիա, կայ քանդակ թագակրեալ թևաւոր առիւծու, թերևս նշանակ Թամարայ թագուհւոյ՝ որոյ պաշտօնեայք էին. և յետուստ նորին ՚ի ծաղկաքանդակ չքնաղիկ ծաղկազիր տառիւք գրեալ.

Աչխատասիրաց եկեղեցւոյս Աստուած ողորմեսցի. ամէն:

Խոշանդակ քարինք չինուածոյն են կարմիր գորշագոյն և սևակապոյտ, քաջ յեռեալք յիրար և յղկեալք, միապա՚ղաղ երևմամբ. և համօրէն չինուածոյն նման է տաճարի Գեղարդեայ վանից՝ որ նորին Զաքարիայի հրամանաւ է չինեալ, և համարի միոյ ճարտարապետի գործ. զոր և կարծեն թաղեալ ՚ի մատռանաձև փոքու դարանի կամ տապանի՝ ՚ի գլուխս սիւնաձև տուար վիմի միոյ յարևմը՚ տից հարաւոյ տաճարին, բացագոյն ՚ի ձորամիջի անդ:

1 Ի խոշորագիծ պատկերիդ (որ ըստ Պրոսեայ) ոչ մօրուք երևին և ոչ այլ նշանք՝ ըստ նախագրեալ ծանօթութեան այլոյ չինողի:

— Արձան յիշատակի Զաքարիայի գրեալ է ՚ի հիւսի՚ սային որմն տաճարին պատաքուստ, յամի 1201, ընծայե՚ ցին և զիւրոց նոր չինութեանց.

Շնորհիւ եւ ողորմութեամբ մարդասիրին Աստուծոյ ես Զաքարէ Մանդատորիա խուցէս Ամիր սպասալար Հայոց եւ Վրաց որդի մեծին Սարգսի, գանձագին արարի զհոչակաւոր սուրբ ուխտս Հաւրենցայի յիւր բնական հայրենատէրացն յաղագս կենդանութեան տեառն իմոյ բարեպաշտ Թամար թագուհւոյ եւ փրկութեան հնձ եւ հարազատ եղբաւր իմոյ Իւանէի եւ զաւակաց մերոց Շահնշահի եւ Աւագին եւ ծնողաց մերոց. չինեցի ի սմա սմրոց եւ զկաթողիկէս բազում ծախիւք եւ զարդարեցի ամենայն սպասիւք եւ սրբութեամբ. եւ զիմ գեղս որ էր մերձ ի սուրբ ուխտս զՄոկորիան ընծայեցի սուրբ Աստուածածնիս բոլոր ամէն հողահատուածք սարուքն եւ ջրուքն զոր բնակ՚ան լեալ է. եւ ետու Ջաղաց մի ի Գետիկ որ Գիւաղաց կոչի. Ջաղաց մի յԱնի Գիմաորին եւ պարտէզ մի ի Ծաղկաճորին, այգի մի յԵրեւան եւ այգի մի ի Թալին. Եւ զառաջին սահմանքն որ բուն լեալ էր հաստատեցի ի Սահմանակաչէ ի Հաւրճա գետն կոյս մարդով, գքերոմն, Յամնաքճորով, Ձինարին հարով, Գոմեց ձորոմն, Արենաղբերով, Հին Հաւրճաւով. եւ եղի սահման զայս որ յաւագ խորանն պատարագել զՔրիստոս յիմ անուն հանապազ. Արդ որք հաստատ պահեն զյիշատակս մեր աւրհնին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց. իսկ որք հակառակին եւ հանել չանան փոքր ինչ կամ մեծ զանէծս Կայէնի եւ զՅուդայի ժառանգեսցեն եւ կրկին նզովեսցին յԱստուծոյ. թէ որ բռնութեամբ եւ ուժով տանի ՅԺԸ հայրապետացն եւ յամենայն սրբոց եղիցի նզովեալ. նա եւ գրեցաւ հաստատ ի թուին ՈՆ.

Դժուարին է արդ ստուգիւ գտանել զնշանակեալ սահմանադ, այլ մեզ կարեւորագոյն է նշանակել զգետն Հաւռիձայ որ է անչուշտ ջուրն առ որով կայ վանքս, և զՀին Հաւռիձա՝ որ թուի յարևմտակողմն այժմու գեղջս լինել:
— Այլ և արձանքն են ՚ի վերայ արևմտեան որմոյն որ հայի ՚ի ժամատունն, և են նուիրատուաց, վաչէի և կնոջ նորա Մամախաթունի յամի 1221 [1], Ցուտիպ՝ առ հայրութեամբ Յովհաննու, որ թուի հայր կամ եղբայր Գրիգորի (Ցուէորգուց) [2], Աբլանի ուրումն որ չինէ զմա՚ բաց վանացն [3]. և յետ գարու միոյ՝ Նօվեմբրի կամ Խնկոմբրի ուրումն, որոյ և ընտանեացն անուանք՝ յայտ առնեն զի Թաթարք են ազգաւ, նաև կրօնիւ կիսագրիստոնեայք, զի գՓաղամբարն (Մահմետ) յիշեն, թէպէտև նուիրագործք լինին առ Ս. Աստուածածին, անչուշտ առ երախտեայ լինչ. նշանելի է և թուական գրութեանն 1304, այնու զի յետին ամ է ինքնակալութեան Ղազան Ղանի, որում անգիտակ գոլով ընդօրինակողին՝ գՁԾԳ թիւն՝ ընթերցեալ է ՉՉԳ.

1 Ի ՈՀ. Ես վաչէ որդի Սարգսի եւ ամուսին իմ Մամախաթուն տուաք ը այգի սուրբ Աստուածածնիս ի փարպի եւ ի Տաճատագեղ մեծ յուսով եւ միջնորդութեամբ Գրիգոր վարդապետի եւ սուրբ եղբարց հաստատեցին կամաւն Աստուծոյ. ընկալաք եւ զայլ արդիւնսն. եւ սահմանեցաք զծառազարդարսն վաչէի եւ զՉազարու տաւնն Մամախաթունին ամէն եկեղեցիքս յիմ անուն պատարագել զՔրիստոս. ով խափանէ իմ մեղացն տէր է. կատարիչք աւրհնեալ եղիցին. ամէն:

2 կամաւն Աստուծոյ ես Ցուտիկս մեծ յուսով միաբանեցայ ի սուրբ ուխտս եւ ըստ իմ կարողութեանս ետու ընծայք սրբոյ Աստուածածնիս. Հայր Յովհաննէս եւ միաբանքս հաստատեցին վկայութեամբ տէր Համազասպ ի տաւնի վարդաւաւին զամենայն եկեղեցիքս յիմ անուն պատարագել Քրիստոս. ով խափանէ իմ մեղացն տէր է. կատարիչք աւրհնեալ եղիցին. ամէն:

3 Ձանուն Աստուծոյ ես Աբլանս միաբանեցայ սուրբ Աստուածածնիս, եւ շինեցի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց զմարագն:

Կամաւն Աստուծոյ եւ յաչխարհակալութեան Եղբունայ Ղան Ղազանին ես Իչխութլու? որդի Ջաղանին եւ իմ որդի Աբաչէս եւ իմ խաթունս Թոդ-լու միաբանեցաք ի սուրբ Աստուածածինս, եւ զմեր բաժին զանճով չինած ձիթահանքն տուաք եկեղեցուս լոյս լուսով ընկի? ոչ իմ որդու ոչ իմ եղ-բաւր ոչ իմ ազգի մարդոյ դաւի չկայ. ով դաւի անէ յԱստուծոյ եւ ի փե-ղամբարայ նալաթ է. կատարիչք աւրհնին յԱստուծոյ. ի թուին ՋԾԳ:

Միւս եւս արձանագիր առանց թուականի կայ ի վերայ դրան աջակողմեան մատրանն, այսպէս.

Ես Աբռեւան ծառայ Քրիստոսի եւ ամուսին իմ Նուրսէթի մեծ յուսով ստացաք? զվարագոյրս ընծայ սուրբ եկեղեցւոյս. եւ սպասաւորք սուրբ ուխ-տիս սահմանեցին մեզ յամենայն ամի չորս աւր պատարագ. ը աւր ինձ եւ երկու Նուրսէթին.. կատարիչք աւրհնին յԱստուծոյ:

— Ժամատուն կաթողիկէիս՝ յոր մուծանէ դուռն սորա որ յարեւմտից, ըստ ձեւոյ նորին քառակուսի է, այլ կրկին մեծ քան զայն, ամբարձեալ ի վերայ չորից մա-սանի բոլորի սեանց, յորոց երկուքն արեւելեանք՝ ի սեաւ քարանց են կարմիր խարխոջ, իսկ արեւմտեայքն ի կար-միր քարանց սեաւ խարխոջ. ի սոցանէ և յանկեանցն կամարք ձգեալք ի խորչս խորչս տրոհեն զձեղունն, և ի գագաթանն գործեն բոլորակ լուսանցոյց փոխանակ գըմ-բեթի. են և պատուհանք երկու յարեւմտեան կողման, մի մի ի Հ. և ի Հր. բայց յետինս փակ է, քանզի կից է հին եկեղեցւոյն Ս. Գրիգորի. և մի դուռն յարեւմտից կուսէ. իսկ խորանն կայ ի հարաւոյ կողմանէ, և ի մէջ արեւելեան սրմոյն սանդուղք ելից ի վերնատունն. ձե-զունն ողորկեալ և գունագոյն քարամբք իբրև յախճա-պակ փայլատակ յետեալ է, ի միջոցս անդ կամարազօ-տեանն, որով պահուճապետ յոյժ երեւի, հակառակ ար-տաքնոյ պարսպ և անսեթևեթ տեսլեանն: Թէպէտ պա-կասէ Թուականն չինութեան ժամատանն՝ այլ յայտ է ոչ յետ բազում ամաց կաթողիկէին չինեալ. դիւրագոյն յայտ-նէ արձանագրութիւնս յորմն արեւելեան՝ ի ներքուստ.

Աստուածասէր եւ արդիւնաւոր Պատրոնն Հիմուբ Վահրամ չինեաց ըզ-վայելուչ ժամատունս եւ երեք զմիւս չուրս յիշատակ հոգւոց իւրոց եւ զաւա-կաց իւրոց եւ ամուսնոյ իւրոյ Թամարին. Եւ տէր Համազասպ եւ Հայր Յով-հաննէս միաբանաւքս ի խնդրոյ դստերն իւրոյ խաթունին հաստատեցին ի տաւնի Թէոթոս թագաւորին զամենայն եկեղեցիքս յանուն Թամարին պա-տարագել զՔրիստոս անխափան. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ. Թվ...

են և յերկոսին կողմանս որմոյն՝ ի հիւսիսի և ի հա-րաւ՝ այլ արձանագիրք նուիրատուաց [1]:

Յարեւելակողմն վանացս՝ ի բարձրաւանդակ տեղւոջ կայ հին մատուռն Սուրբ Յարութիւն կոչեցեալ, անգիր և

1 Ի հարաւային կողման.

Կամաւն Աստուծոյ ես Մխիթար գնեցի յԵրեւան զԵւագրի որդոյն այգին յարդեանց իմոց եւ եղու Հաւիճայ ուխտիս. եւ տէր Յովհաննէս եւ միա-բանքս սահմանեցին ի տարին գ աւր պատարագ. ա... եւ բ աւր ինձ առնեն անխափան. կատա-րիչքն աւրհնին յԱստուծոյ որք խափանեն դատին ի Քրիստոսէ. խաչգիւտի շաբաթ աւրն առնեն ըզ-ժամն. ի Թվ. ՈՀԳ. (1224):

Ես Գրիգոր մնուցած մեծին Սարգսի դստերն Ներջիսին տուի աւետարան զուգաւք ի սուրբ եկե-ղեցիս ողորմութեամբ... իմոյ եւ հաստատեցին ի տարին գ աւր պատարագ. բ աւրն ինձ եւ ա աւրն Բանուհուշին? ի Թուիս ՈՂԳ. (1234):

Ես Աբսէն մնուցած Պարոն Ներջիսին ընծայեցի արդիւնս ի սուրբ ուխտս. բ աւր պատարագ ինձ եւ ա խուշուշին կատարեն գյիշատակս մեր:

անթուական, և չուրջ գնալու գերեզմանք միաբանից. յորոց մին է Գրիգոր՝ երկրորդ չինող տեղւոյս, վախճա-նեալ յամի 1185, որպէս գրի՝ ի վերայ տապանին, և թուի գործակից կամ վերակացու չինութեանց Զաքարիայ.

Ա.յս է հանգիստ երջանիկ ծերունւոյն սուրբ հաւր Գրիգորի առաջնորդի երկրորդ չինութեան սուրբ ուխտիս որ էր ուսուցիչ եւ աւրինակ բարի ա-մենեցուն. աղաչեմք որք երկրպագէք սրբոյ խաչիս ասացէք. Աստուած յի-շեսցէ զՀայր Գրիգոր յողորմութեան իւրում եւ զգրիչս. եւ դուք յիշեալ լինիք ի Քրիստոսէ. ամէն. Ի Թուին Հայոց ՈԼԴ:

Բայց հնագոյն եւս գերեզմանս՝ ի Զ գարէ սակն լինել անդ՝ Սարգիս Զալալեան և Աբէլ վարդապետ, եթէ չիցէ վրիպեալ յատեց նոցա հարիւրանիշն Թուական. և է մին ի Թուական Հայոց, որ է 572 ամ Քրիստոսի, ճգնա-ւորի միոյ, և միւս եւս հնագոյն ՃԼ Թուականաւ, որ է ամն 568, այսու բանիւ.

Թուին ՃԼ. Ա.յս է չիրիմ հանգիստ եւ բնակարան Երեմիայ երաժշտի:

Ա.յս յիշատակարանք (համաբերելով ստոյգ գիւտականին) և միւս եւս բան պատմչաց՝ եթէ Քոթենետորն Թէոդո-րոս, վարդապետ Օձնեցւոյն Յովհաննու, սատ ուսուցա-նէր յԵլս Ի գարու [1], յայտ առնեն զնախանձախնամել հնութիւն հաստատութեան վանացս տեղւոյս: Բայց որ-պէս ասացաք, ոչ գոյք ուրեք առ պատմիչս զանուն տեղւոյս կամ զառաջնորդաց նմա քան զԺԲ գար. բայց եթէ Սարգիսն ձոն չինող եկեղեցւոյ Ս. Գրիգորի՝ էր յ՚Ի գարս կամ՝ ի Ժ [2], նմին ժամանակակից է և Հայր Համազասպ. այլ տուգագոյն ժամանակաւ և առաջին վանահայր՝ ի նորոգութեան տեղւոյն է

Գրիգոր	ց՚1185
Պետրոս	1185 — 1220
Գրիգոր Բ	1221
Յովհաննէս	1224
Համազասպ (Բ)	1234–5

Զկնի սորա ոչ գոյ յիչի, քանզի և Թուականք արձանա-գրացն ժամանեն ցամն 1235, որ է նախընթաց ամ յար-ձակման Թաթարաց, առման Անւոյ և աւերման Շիրա-կայ. յետ որոյ գրեաթէ ցմերս դար անչիշատակ և անաց-ցելոյ մնայ տեղիս մեծանչան. բայց միայն դի վերջին Հերակլ Թագաւոր վ.րաց յ՚անցեալ դարս առեալ էր զգյն Սուլթան Ղահրիմանայ ումեմն Պարակի հզօրի, որ նաեէր յԱ.ղուիկ, զեկեղեցի նորա և զՀաւէյնայ յամրոց և յաչարակ փոխելով. այլ Մահմատ Խան Երեւանայ ա-ւերեաց զամրութիւնն, ընդ նմին և զվ. Յարութիւն փոքրիկ եկեղեցի հանգստարանացն [3]: Ջետ այնր ասի Սարգսի ուրուք երիցս բնակեալ առ և չնչեալ զնոսա մի արձանագրութեանցն, և դարձեալ ամայի մնացեալ մինչև ի գալ դաղթականին Կարուց (1829–36). որոց առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոս Խաժակն՝ ի Հռոմ մոխ վանաց՝ այսր փոխադրեաց զմիաբանան և նորոգեաց զտեղիս. ուր եկն և Պօղոս Ջալալեան առաջնորդն վա-նից Բասենոյ, բերեալ ընդ իւր զհրաշագործ պատկերն Աստուածածնի, որով ուխտատեղի եղև Հաւէյա. և ինքն յաջորդեաց Ստեփանոսի՝ ի մեկնել նորա այսր, նոյն-պէս և Գրիգորի վարդապետի Ջամկոչեան, որ առ ժա-մանակ մի կարգեցաւ վանահայր. և կեայր ծերունին

Ես Տրիտուր մեղուցեալ ծառա Քրիստոսի ի քըր-տանց իմոց գնեցի զխուպասարենց այգոյն չորիցն մին եւ եղու ի սուրբ ուխտս. եւ Հայր Համազասպ սահմանեաց որ ի տաւնի Ա.նդրէի առաքելոյն ը աւր պատարագ առնեն. ով խափանէ դատի ի Քրիս-տոսէ:

Ես Սիմէոնս արդիւնք եղու ի սուրբ Աստուածա-ծինս, եւ Հայր Յովհաննէս եւ միաբանքս տուաք բ աւր պատարագ ի տաւնի սուրբ Ա.նտոնի ա Սի-մէոնի, ա Գրիգորոյ. կատարիչքն աւրհնեալ եղի-ցին. ամէն:

1 Ջայս յիշէ Շահխաթ. (բ. 270), և Թուի առեալ՝ ի Ներքո-ղինէ Վարդանայ Հռոմեցւոյ, Ստեփանոս կոչեալ Զքոթենետորն:

2 Որպէս համարի Աբէլ վարդապետ:

3 Ա.յսոքիկ ըստ Աբէլ վարդապետի:

Ջալալեան 'ի վանահայրութեան և յամին 1856. առ որով յամի 1850 եօթն ազգաւեր բնակիչք Ալեքսանդրապոլի ընկերացան վերանորոգել զվանն և բարեկարգել, առաջնորդութեամբ Տեառն Յովսեփայ Կաստանեանց. և յայնմհետէ սկսաւ առաւել վայելչանալ, մանաւանդ առատութեամբ և իրախուսանաւք այժմեան Կաթողիկոսին, յօթևանեին անդ յամարանի:

62. Ի հարաւակողմն վանացս 'ի փոքու ձորակի 'ի սեպացեալ քարաժեռի ուրեմն՝ որ 'ի սահմանագլխին իմիք երևի անջատեալ 'ի մերձակայեցն, կայ մատուռն փոքրիկ անգմխէթ, զոր ն 'ի հիւսիսոյ կոսկ ունելով, յորոյ վերոյ երևի սահն և արձանագիր, այլ զի անմատչելի է տեղին՝ անծանօթ մնայ և չհնաւածն: — Անծանօթ մնան և տեղիք լինչ յիշատակեալք յարձանին Զաքարիայ, և ասիրացն, որ թերևս քաղաքացին իսկ մնացասանին էր. իսկ սեփականն գիւղ իւր Մոկորիս՝ այժմ կոչի Մնձ Գարնի (Պարոնի) գիւղ, և մերձ է 'ի Հաւիճա, 200 հայազգական տամբք. զի կայ վերագոյն 'ի հիւսիսոյ Աբղիկայ և փոքր Գարնի գիւղ, Ս. Գէորգ եկեղեցեաւ, Գիւրիճոն կոչեցեալ յայլ ազգեաց: — Ա. գետակաւ և ձորով Հաւիճայ երկու մղոնաւ 'ի Հ. Մ. վանացն կայ Աբդիկ գիւղ Հայոց իբր 200 տանց գաղթելոց 'ի Կարնոյ և 'ի Կարսոյ: Քնի և սա հնաշէն եկեղեցիս գեղեցիկ երկու. մին մեծ Ս. Գրիգոր խաչաձև կիսաքարոյր թիւք [1], անսիւն, կամարաք բարձեալ զեղունն, որոյ գմբէթ անկեալ է. միւսն փոքրագոյն, յանուն Ս. Աստուածածնին, նմանապես անսիւն է. որոյ չինողացն անուանք անծանօթք մնացին առ 'ի չգոյէ արձանագրութեան 'ի տորին կողմանն, և ոչ կարելոյ քննողին ընթեռնուլ զրաքերայինս:

Յարևմտից հարաւոյ Աբղիկայ գեղջ կայ ահաբակ մեծ նահանջ Լիմբատայ, որ հաւանաբար առեալ է զանունն 'ի գեղջէ այժմ անբնակ և անյայտ եղելոյ. երևին միայն ցորդք ինչ բնակութեան վանականացն, կոփածոյ քարամբք, և եկեղեցին փոքր յանուն Ս. Աստիսանոսի, խաչաձև 'ի ներքուստ և արտաքուստ [2]: Ոչ ժամանակ չինութեանն է յայտ և ոչ այլ դէպք տեղւոյս, բայց արչաւ է ընթեռնուլ յարձանան, որ յերս ԹՒ և 'ի սկիզբն ԺԴ դարուց. յորոց միակ թուական որ 'ի տորև գմբեթին, յամի 1191, յայտնէ զանայնանուն յառաջ քան զայն, վասն որոյ և հնագոյն զոլ չինութեամբ.

Ոխ. Կամաւն Աստուծոյ ես տէր Բարսեղ որ գնեցի զվանքս յանտերից եւ եառ զՅիսքն վանիցս եւ զԼուրն որ իւրեան էր ի հնոց եղեալ յիշատակ լինձ եւ բարեխաւս առ Քրիստոս. եթէ որ զյիշատակս մեր խափանեսցէ նզովի յԱստուծոյ եւ յամենայն սրբոց:

Ի հակառակ սեղանոյն արձանագրեալ է Մեծին Զաքարիայ, որ ապաստարան հաստատելով զվերոգրեալ տուրս տեղւոյն.

Կամաւ բարերարին Աստուծոյ ես Զաքարէ Ամիր Սալասալար Շահնշահ եւ Մանգատորթա խուցէս եառ զՅիսքն իւր հողովն (եւ) ջրովն լեռնականաւ եւ դաշտականաւ ի Ս. Ստեփաննոս եկեղեցիս յիշատակ ինձ եւ եղբարն իմոյ Իվանէի եւ ծնողաց մերոց... կատարեսցեն Արգասին. զվնի կենաց իմոյ լինձ. ի հայրութեան....

Կարևոր են և արձանք Գրիգորի արքեպիսկոպոսի Աչեաց, որոյ և տոհմի նորա սեփական ժառանգութիւնն էր տեղին, և այլոցն ևս նահապատուց. բայց ընթերցուածք արձանացն ստուգութեան և լրման կարօտին, ևս առաւել ներքոյ գրեալքն [3]: Յարևելեան սրմն գրեալ են երկոքին արձանքս.

1 Ջալալեանն 30 կանգուն առ գերկայնն, 44 զլայն: Միւսոյն 26 երկայն, 22 լայն:

2 Ըստ Ջալալենի՝ 13 կանգուն ընդ երկայնն, 10 ընդ լայն:

3 Շնորհիւն Աստուծոյ ես Սիմէաւն Ծուպուլիս որդիս որ ետու զիմ այգին Մաւխանինցն է զիմ բաժինն (ի) Լիմբատայ սուրբ Ստեփանոս եւ բարեխաւս ինձ առ Քրիստոս. արդ թէ ոք հակառակ կայ այսմ բանիս Քրիստոս Աստուած նզովէ զիւր մանն եւ զիւր կեանքն. եթէ ոք հակառակաբար ջնջել ջանայ՝ ջնջեսցի անուն նորա յաւիտենից:

Շնորհիւն Աստուծոյ ես Գրիգոր եւ իմ եղբարքս տալաք զմեր հայրենիս... ի սուրբ Ստեփաննոս ի հայրութեան Մաւսէսի իւր սիրելի եղբարց Աւագքէլի եւ Վարդանայ յիշատակ մեր ծնողաց եւ մեզ. սոքա սահմանեցին ի սուրբ խաչի շաբաթ աւրն (ի) մատուռն պատարագել ա աւրն Մխիթարայ.....

Ի հիւսիսային որմն.

Կամաւն Աստուծոյ ես կարապետս եկի ի սուրբ Ստեփաննոսի դուռն եւ տեսայ որ ջուր ոչ կայր ի

Կամաւն Աստուծոյ ես Տէր Գրիգոր որդի Ապուղամրի Աչուոյ եպիսկոպոս տուի զարդք եւ զԲռնրևնոց երիցութիւն Լմբատա իմ հայրենեաց եւ նոքա տարին ա պատարագ լինձ տուին հաստատ պահաւղք աւրհնին յԱստուծոյ. եթէ որ հանել չնայ կամ առնուցու բռնութեամբ զկայէնի եւ զՈւղայի (անէծս) առցէ. յԺը հայրապետաց նզովեալ եղիցի եւ մեր մեղացն պարտական եղիցի:

Կամաւք բարերարին Աստուծոյ այս մեր արձան անջնջելի եւ յիշատակ մշանջենաւոր Տեառն Գրիգորոյ արհիեպիսկոպոսի մայրաքաղաքին Աչուոյ եւ նահանգին Շիրակայ Ժառանգորդ եւ սեփական մերոյ աթոռոյս որ եառուզն? որ էր հաւրեղբայր աստուածապատիւ Տեառն Բարսղի, հալալ արդեամբք ստացեալ ի սուրբ ուխտս Լմբատա զնորին գանձագին գեղն մերձ ի յԱբղիկ, որ կոչի յանուն Հայրենեաց թաղք ընծայեցի զսա սուրբ Ստեփաննոսի հայրենիք մինչ ի կատարած յաւիտենից յաղագս յիշատակի մերոյ (եւ յ) արեւշատութիւն եղբաւր իմոյ Գարփէին եւ հայր Գրիգորի եւ Բարսղի սատոյղի սոցա եւ ծնողաց մերոց. եւ եղի լուծ սպասաւորաց սոցա ի տարին (ՁԼ) պատարագս փոխարէն հատուցանելոյ ի տանի Ղազարոս. զերկուսն Տէր Բարսղի եւ զերկուսն իմ հաւր զերկուսն իմ մաւր Մահմլքին. կատարիչքն աւրհնին ի դալստեան Քրիստոսի. մի ոք իշխեսցէ հակառակել եւ զյիշատակս (մեր խափանել). եթէ ոք յանդգնի եւ զգեղս յայս վանից հանել կամեսցէ հանցէ զնա Աստուած ի կենացն անվախճանից հոգւով եւ մարմնով. իսկ որք հաստատուն պահեն զգրեալս մեր աւրհնութիւն Աստուծոյ եղիցի ի հոգիս եւ ի մարմինս նոցա. ամէն: — Զերջանիկ հայր զԱբաքեանն եւ զտանուտէր զարդիւնարար տանս զՈւռբէն յիշեցէք ի Քրիստոս:

Անծանօթք են, այլ մերձ Լմբատայ գաւշակին՝ տեղիքն յիշեալք յարձանաց, ՃԿՂ և Հայրենեաց թաղք գիւղ, որ և յայտնապէս ասի մերձ լինել յԱբղիկ, և երկայելին Քռնրևնոց:

63. Իբրև փարախաւ 'ի Մ. Հ. Աբղիկայ և երկու մղոնաւ 'ի Մ. Հր. Քեաֆթարլուի և մերձագոյն ևս 'ի Հաւիճ, առ եղերք Հաւիճայ վտակին և 'ի լեռնոտին՝ կայ Մէյտուի (մզկիթաւոր) գիւղ, յորում հին եկեղեցի յաղորց փոխեալ, որպէս Հաւիճայն և Աբղիկայն, այլ գիւղն ոչ է ինձ յայտ:

Ի սմին ձորակի Հաւիճայ գետոյ և կիսաժամու ևւթ հեռի 'ի վանացն, յորմէհոյ Հր. նշանակի աւերակ Սաղիս (կամ Ղօլուզ) – սրուագ գեղջ, թերևս և ապրիսա նուանի: — Նոյնպէս հեռի 'ի սմանէ և ըստ նմին գրից 'ի Մ. Հր. կայ Մահմուտճուղ գետղ, յորում եկեղեցի հին. և իբր մղոնաւ 'ի բացէ 'ի Հր. Մ. նորին յատ մի Աբրագածու հին և աւերակ վանք Մարաբաց որ և կարծիր քեմս: Մի և սա 'ի հին վանորէից երևի 'ի մեծագոյ սահմանացն, զի բնակարանքն քարքարեալ են, եկեղեցին փոքր և վայելչակերտ գմբեթաւ կանգնուն կայ [1], եւ իմ սրտի յաւժարութեամբն զիմ ընծանն ծախեցի Լմբատայ սուրբ Ստեփաննոսի ի փուր? (հաւր?) թաչատրոն որ ծախեցի զվճար առի ոչ ուսմ տալոյ [2] չկայ հետ սուրբ Ստեփաննոսի ոչ իմոց եւ ոչ աւատարաց. Ես Մայր? Անեցի. ես վայեցի Գէորգս գրեցի զհրամանս իշխանի:

1 Աս 19 քայլ ընդ երկայնն, 12 ընդ լայն:

2 Ջալալեանն ընթեռնու կամ գրէ ապլ:

երկաքսումք մատրամք յաջմէ և յահեկէ բեմին. իսկ ժամատունն նոյնպէս փոքր՝ կործանեալ է, հիւսիսակող-

Ի ՆԾ թուականութեան Հայոց ի հայրապետութեան Տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսի եւ ի թագաւորութեան Գագկայ Շահանշահի ես Սահակ հայրապետ . . .

— Յորմն արեւելեան արտաքուստ գրեալ է, սակաւ մի խանգարեալ և անթուական արձանս այս.

Կամաւն Աստուծոյ ես հայր Վարդան եղէ . . . . (պատճառ վերանորոգութեան) հին չինութեան սուրբ ուխտիս եւ բազում աշխատութեամբ չինեցի զվանքս . աղաչեմ զընակիչդ զիս եւ զծնողս (իմ) յիշեցէք ի Տէր:

— Եւ ի ճակատ դրանն միւս այլ արձան նոյնպէս ան- թուական, յորում և յիշի Աղին զիւղ.

Կամաւն Աստուծոյ ես Եղբայր անուն եառու զիմ հայրենի այգին զԴանիէլեանց հողն որ յԱղին տան ի սուրբ Սիսաւն Մակարավանիկ յառաջնորդութեան Վարդանայ եւ տէրութեան տեղւոյս Յովհաննէս միաբեցի . եւ սպասաւորք սուրբ ուխտիս սահմանեցին յամէն տարի պատարագել զ- սուր նոր կիւրակէին չաթթ սուրն գ- ինձ եւ Աղաղուանն (?) սուր գ- . եթէ որ ի մեծ կամ ի յաւետեաց խափանէ պատժին յԱստուծոյ . կատարիչքն սուրհնին ի Քրիստոսէ :

— Ի հարաւոյ վանացս իբր մղոնաւ և կիսով 'ի բացեայ 'ի ստորոտս Զկարէթ լերին (իբր 10,000′ բարձու) որ մի է յոստոց Ա.րագածու, կայ Շիրխանձոգ գիւղ, և 'ի սմա հին մենաստան աւերեալ, այլ որպիսութիւնն ոչ է ինձ յայտ:

64. Հասիկայ գեան անդր գան զՄէչխալի՝ զարձեալ յարեւմուտս և ընկալեալ գետակ մի ուղղակի 'ի հարաւոյ եկեալ, 'ի սահմանակցութեան Թաղնայ Ա.րագածոտան, ուռզէ զարևելեան հարաւային մասն Ա.րևելեանս Շիրակայ, յորում 'ի գլուխ գետակին և ոչ հեռի յԱչէուման և Մաստարայ գեօղից Թաղնայ, նշանակի փոքր տեղի մի աւերակ Պռոշոյրոյ անուն. 'ի Հ. սորա իբր փարախաս, և նոյնպան 'ի հարաւոյ Շիրվանձոգ գեղջ Ահօկիւղիի գիւղ (Ուռենուա), Ս. Յակոբ եկեղեցեաւ 'ի ստորոտս ոստոյ Ա.րագածու և առ ձորակի միոյ, կարի ընդարձակ խոտատարգաք. 'ի վերոյ գեղն 'ի լեռնաբերի կայ քարայր մեծ կարմիր վիմաք, յորոյ խոխոջանաք իջանէ աղբիւր ականակիտ 'ի գիւղն և 'ի ձորակն, զոր հանդերձ այբիւն անուանեն Ս. Լուսաւորիչ, իբրու թէ նշմարին 'ի քարինն անձեռագործ ձևք խաչից, և և մէջ այրին կանգնեալ է վէմ սիւնաձև բոլորի վից թզաչափ, յորոյ վերայ վառեն մոմեղէնս և խունկ ածեն, համարեալ անդ ձգնեալ զԼուսաւորչին, և խաչ կանգնեալ է 'ի գլուխ սիւնակին և 'ի ներքոյ գրեալ Սուրբ Գրիգոր:

Իբրև քառորդաւ ժամու 'ի Մ. Հ. գեղջն նշանակի փոքր չէն Կիւռէքճիսի ? չգիտեմ որպիսի. և նոյնքան կամ աւելի հեռի 'ի սմանէ նովին գրիւք Մ. Հ. Գրիգիրը գիւղ ըստ այլազգեաց, փոքրիկ չէն, առ ձորևերբն. և առ նովին աւերակ Հոգևվանք կոչեցեալ, որոյ կանգուն կայ հոյակապ եկեղեցին գմբեթաւոր, անսիւն, ամբարձեալ 'ի վերոյ կրկնակ կամարաց չորից որմնասեանց. 'ի ներքուստ անթերի և անազարտ է դուռ գմբեթին, արտաքուստ սակաւ մի խախտեալ, կամարերանգ վիմաք սալարկեալ, և 'ի խորշս խորշս ձևակերպեալ, 'ի ստորին եզերան միայն ունելով քանդակս սեաւ քարաշարիւ . յաջմէ և յահեկէ սեղանոյն են մատռունք կամ խորանք, և յամենայն կողմանց մի մի լուսամուտք, լայնք 'ի ներքուստ, նեղք և երկայնք արտաքուստ. և յարտաքին որմանեան յամենայն կողմանս երկու երկու դատարկք կամ դռնք, որպէս կաթողիկէին Աչուց և այլոց ամանց եկեղեցեաց. անկեալ է երես հարաւային որմոյն արտաքուստ, այլ ներքինն ամբողջ կայ. երկու են դրունք 'ի Մ. և 'ի Հ. այլ գերբիզք խցեալ կիսով չափ, որպէս և մէջ եկեղեցւոյն, այնպէս զի ծնգոլիք հարկ է մտանել 'ի մատռունսն. յորոց ճակատս 'ի կիսաբոլորի սեմոյն կան երկար արձանագիրք, նոյնպէս և յայլ կողմանս ուրեք, այլ մեծաւ մասամբ եղծեալ և քանդեալ թշնամութեամբ և ոչ հնութեամբ, թէպէտ և հնութիւն տեղւոյն յայտնի


'ի ձևոյն, և թուականսն 'ի վերայ հիւսիսային մասրանն, Թ. ՅԴ. որ է 604 ամ Քրիստոսի եթէ չիցէ վրիպեալ կընդօրինակողէն հարիւրաւոր թուանշանն: Յարձանագրի արևմտեան դրանն ընթերցան բանքս,

Ի Հոգևվանքս . . . . յառաջնորդութեան հաւր Գէորգայ տարին գ- պատարագ . . .

Յայլում արձանագրի վերծանի Վարդան անուն[1]:

65. Երիւք մղոնաք 'ի վերոյ, 'ի Մ. Շիրվանձոգի կայ Պօղազ-քիւեի գեօղ Հայոց իբր 40 տանց, ուր ապաւ երբեմն Թիլ զրապետ կայսեր Ռուսաց (յ'8 հոկտ. 1856). ունի նորաշէն եկեղեցի վայելուչ յանուն Ս. Աստուածածնին: Յորմէ կիսաժամաւ հեռի 'ի Հ.Մ. Մօղա-կեօկչի. իսկ 'ի սմանէ երիւք մղոնաք վերագոյն 'ի Հ. Միմրիսպաշ (կամ Սարիպաշ). իբր քառորդաւ ժամու 'ի Հ. յեանոյն Առնիկուղոյ առ գետակաւն. և իբր երկու մղոնաք յարևելս կայս երկոցուն յեանոց գիւղիցս կայ աւերակ գեղջ միոյ Աշտարակ կոչեցեալ. յորոյ Հր. և իբր երիւք մղոնաք յարևմտից Ա.ղուիկայ՝ Ա.ղթուղու (Տանձուտ) գիւղ, և Աշաղջ աւերակ, յընդարձակ միջոցի երկոցուն գետակացն, որք սակաւուք 'ի ստորև Սունկուրլեայ 'ի հիւսիսոյ կուսէ միակցին. և խառնուրդն խաղացեալ ընդ արևմտս հիւսիսահան՝ անկանի յԱրփա ըստ վերոյգրեալ տեղւոյս: Մերձ 'ի բերան անդր 'ի հարաւոյ կուսէ հոսգոյն և յԱրփա կայ Դահարդը գեօղ, ուր և պահակատուն Ռուսաց, երկու մղոնաւ յարևմտից Գարագիլիսէի:

Խաղալով արդ ըստ ընթացից գետոյս Ա.րփայ և Ա.խուրենոյ 'ի վայր, ընդ հարաւ արևմտեաւսն, առաջին գիւղ և պահակատուն յետ Դահարլեայ է Պայանտուր, որ կիսաժամաւ ևեթ հեռի կայ 'ի Շիրակաւանէ կամ յեբաղգաւորաց յայնկոյս գետոյն, ուրանօր 'ի սկիզբն պատերազմին ընդ Օսմանեանս յամի 1877 յամեան ապրիլիւ, Ռուսք արկեալ կամուրջ անցին յարևմտեան Շիրակ, առաջնորդութեամբ Լոռիս Մելիքով զօրապետի: Ի Հր. սորա և սակաւ մի հեռի 'ի գետոյն՝ Քէշալի, յորոյ Մ. Հ. կայ միւս ևս պահակատուն Ռուսաց. իսկ յարևելից կողմանէ մղոնաւ հեռի՝ Գաֆուղու: Երկու մղոնաւ 'ի Հր. Քէլալեայ առ գետեզերին՝ Թաւշան-ղըչախ, ուր իբր 100 տունք Հայոց: — Երկու մղոնաք ևս 'ի Հր. սորա՝ Ղազարապատ, ուր գարձեալ պահակատուն: Յարևելից կուսէ երկոցուն սոցա, միայն ընդ Հր. և միւսոյն ընդ Հ. իբր փարախաս հեռի 'ի նոցանէ 'ի ստորոտս լերին միոյ՝ Առիթանվիդոտի գիւղ, կամ Աղսանվիդոտի. յորոյ Մ. Հր. ամբառնայ Գգոյ տաղ լեռն 5350′: — Մերձ 'ի Ղազարապատ յե. Հր. իբր կիսաժամաւ ևեթ



76. Կամուրջ առ Ջրսիրդու գիւղիս:


հեռի կայ ամայացեալ գիւղն Գարապուղագ (Սեաւ աղբիւր). և 'ի սորա Հր. երկու մղոնաւ հեռի Պապուղրոյ գիւղ հայաբնակ, Ս. Աստուածածնին եկեղեցեաւ. նոյնքան և'ս 'ի Հր. Պապուրլեայ 'ի ձորամիջի լերանց Իրրխ կամ Ղօրաղ գիւղ, յոր անուն կոչի և ջուրջ սահմանն ամայի, յորում ամբառնան լեռնակք և բլուրք, և մին 'ի Հ. Մ. Խըրբխայ՝ կոչի Գըրդ կամ Իրրխ բեխ: Մղոնաւ հեռի 'ի լեռնակէս 'ի Հր. Մ. կուսէ և մերձ յԱխուրեան՝ Աղին գիւղ յիշեալն յարձանագրի Մակարայ վանից, ուր Դանիէլեանց այգիքն էին. այժմեան եկեղեցին Հայոց կոչի Ս. Յակոբ: — Ի սմանէ մղոնաւ և կիսով հեռի հանդիպ խառնուրդոյ Մաւրիկայ գետոյն յԱխուրեան՝ կայ Ղէղաճ գիւղ. նոյնքան և'ս 'ի սմանէ հեռի առ գետեզերբն Ջրսիրդու մեծ գիւղ Հայոց, Ս. Սարգիս եկեղեցեաւ, և պահակատուն. առ որով կայ կիսաքանդ կամուրջ հնուչէն միակամար 32 Զ. լայն բացուածով[2], 'ի վերոյ բարձրաբերձ գետափանց Ա.խուրենոյ, յանդըգնօրէն արկեալ, ոչ ինչ ընդհատ յերասխայնոյն՝ անհա-

1 Ըստ տեղագրողին (Ա.բարատ, Գ. 46) « Ի Տէրութեան . . . Տէր վարդան . . . Տէր եՅ »:

2 Սարգիս Ջալալեան՝ որ զՍ. Հաւոր Ճանապարհորդութեանն տպագրեալ է յամի 1841, սակաւին իբր կանգուն ստորագրէ զկամուրջս զայս, զոր այլք կործանեալ, ասեն, խաթուն Օղլի տերանց կողմանցս:

տասալոյն Վ. Իրդլևեայ. կայ առ նովին և հին և ընդարձակ քարաչէն լվնանատուն, զորոյ մասն մի յեկեղեցի յարդարեալ է Հայոց. իսկ ի վերայ կամրջին գործեալ էր և հուն անցի ջրոյ կամ ագուցայս, որոյ երեքն և ի պատերիդ պատուարք ամարձիկք աւելի քան զ'125 Ձ. երկայն, յարևմտեան ծայր կամրջիկն, յորոյ և յերկոսին գլուխն սենեակք էին պահապանաց։ — Յարևելից գեղջս ասկառաք հեռի ամառնոյ Զարդիվ լեռնարլուր. և յԱել. նորա և'ի Մ. Հր. Խրլայ՝ Պօզոօղան գիւղ, յորմէ նշանակի եկեղեցի հին։ Եւ բացագոյն յարևելս առ սահմանաք Թալնոյ վիճակին Ա.բագածոտան՝ Դաշգարէ գիւղ. և ևս'ի հարաւոյ առ նովին սահմանակցս թեամբ Պազարիաճէ, առ որով և լճակ մի փոքրիկ։

66. Յարևելեան հարաւային սահմանաց աստի մինչէ'ի գետն Ա.խուրեան և մինչև'ի հարաւային ծայրս Արևելեան Շիրակոյ, յընդարձակ միջոցի իրրև 100 մղոն տարածութեան չկը բնաւ գիւղ չէն, այլ աւերակք և ամայիք և երկիր խոպան, յոր յարեալ և որ յայն կողմն Ա.խուրենոյ համանման երկիրն՝ որ ընդ միջ Բագնայրի և Ա.լամանոյ, ի միջակին ունելով զվենանիան Անի, ահա կերպարանի տրտմահաղորդ դաշտն այն կամ Ագարակ Հռոմոյ (Campagna di Roma), յոր'ի դէպ է առաւոտել խորհրդածութեամբ՝ մինչև իցէ հետախուզութեան յայտնեալ զվաղնջուն յիշատակարանս։ Ընդ այս սահմանս անցանելով յամի 1691 (23 փետր.) Հայր Վիլլոտ Ցիստեան'ի գալն Ս.ինձմիածնէ, և առ Գրիզդ գեղջ վտակ ջրոյ եկեալ'ի Մաստարայ Ա.բագածոտան, և կոչէր յանուն Ս. Նահապետի, վասն մատրան միոյ'ի բլրի'ի սահմանակցութեան երկոցուն վիճակացս։ Իսկ'ի գեղջն կիսականգնած կայ եկեղեցի փոքրիկ խաչաձև, անսիւն, գմբեթաւորեալ'ի վերայ կամարաց, որոց մնան մի անկեալ է. վեց լուսամուտս ունի, երիս երիս'ի Հ. և'ի Հր. և մի մի յարևելս և յարևմուտս. յամէն սեղանոյն կայ մատուռն կրկնայարկ, երիս են զրունքն'ի Մ. և'ի Հր։ Վայելուչ է յոյժ կերտուածն արտաքուստ և թևքն խա-



77. Գղղ գիւղ։

չանք, որոց մէն մի պատուհանք են, զատ'ի կողմնակաց նայն. գմբէթն ութանկիւնի կամ ութսեան տրտհեալ, սիւնակս ընդ մէջ ունելով մանուածոյս։ Բալանդակ շի-

նածն կարմիր կոփած-գլիք է, և'ի քարինն երևին տառք Մ. Ս. Գ. Ո. իսկ արձանագիր ոչ ծանուցաս ցարդ, բայց այս դոյզն ինչ'ի հիւսիսային թև եկեղեցւոյն.

Ես Թամար ծառայ Աստուծոյ որ ապա . . . . . յաղաւթս յիշեցէք։

Յարևմտից Էր. Զարընճէայ՝ 'ի սահմանակցութեան Թալնոյ վիճակին՝ կայ ամայի գիւղն Ցէրէքիճա (Զարագիւղ). իսկ 'ի Մ. Հ. իբր երիւք մղոնաք յԱել. Ա.խուրենոյ առ Հռոմոյի վանաք՝ կիւլիւրտպա գիւղ ամայի. յորոյ Մ. կուսէ մերձագոյն և'ի գետն ամառնոյ Գիւրտ-բիւրէ լեռնարլուր. յորմէ իբր մղոնաւ և կիսով հեռի 'ի Հ. նոյնքան և 'ի Հռոմոյին վանայ՝ առ գետեզերբն կայ Գրիգիրիակ, ըստ Հայոց Կարմիր վանք [1], պահակատուն և գիւղ մեծ Հայոց 100 տանց՝ գաղթելոց 'ի Խոշավանից. յորոց Մարգար Տէր Պետրոսեան հաստատեաց բազում ջրաղացս յերդեր Ա.խուրենի։ Նշանաւոր է Ս. Գրիգոր հին եկեղեցին՝ կարմրաքար, յորմէ գիւղն առնու զանունն, և տակաւին կանգուն կայ հոյակապ գմբեթաուն, ամարձեալ 'ի վերայ չորից սեանց, գեղանկար պատկերօք 'ի ձեղուանն. չինեալ է, որպէս արձանագրին հաւաստիացման որմոյն յուցանէ, յամի 985, 'ի վանահարց Հռոմոյ՝ 'ի Արգաէ և 'ի Սողոմոնէ, 'ի ձեռն Սամուհանի արեղայ հարտարապետի[2].

Յանուն Աստուծոյ եւ ի թագաւորութեան Ամբատայ Բագրատունոյ Շահնշահի կանգնեցաւ . . . ս այս անուս անուանադրութեամբ Ս . . ի զոր հիմնադրեաց այրն Աստուծոյ հայր սորա. իսկ (յետ) ելից նորա հայր Սողոմոն հարազատ եւ ժառանգ սուրբ ուխտիս աւարտեց . . . Արգիս Հռոմոսի վանաց առաջնորդ . . իա փոխի յաշխարհէ նախ քան զաւարտումն. Շնորհիւն Աստուծոյ ղկնի : ե : ամի (փոխ)ման ծնողի իմոյ . ի ՅՆԶՉ (վենելը)թեան աշխարհի . . . գալստեանն Քրիստոսի, ՈՉԴ լուսաւորու(թեան) Հայոց ՆԼԴ. Սուրբ Երրորդութեանն որք մնանէք ընդ դրունս . . փառս Քրիստոսի Աստուծոյ խոստ . . Եւ զաշխատողս սորա. եւ Տէր Քրիստոս հատարակաց ողորմ . ի ձեռն Սամէհանի ճարտարապետի արեղայի . յիշեսջիք ի Տէրն մեր Յիսուս Քրիստոս . որում փառք յաւիտեան։

Ցամէ և յահեկէ խորանին են փոքրիկ աւանդատունք. 'ի վերայ դրանն՝ որ յարևմտակողմանն՝ բոլորաձև խաչ մեծ, նոյնպէս և աստի և անտի լուսամուտն՝ որ 'ի վերոյ նորին՝ խաչվէմք երեք։ — Յերի հին արձանագրին գոյ և հակիրճ յիշատակ տրից աշխարհալէն առն՝ Մեծին Զաքարեայի Սպասալարի.

Շնորհիւն Աստուծոյ ես Ամիր Սպասալար Զաքարիա եւտու զԿարմիր մուրգին ը դանկն Սուրբ Ուխտիս։

1 Բնեցհոլտ. Petzhold, Der Kaukasus, ecc. I. 278.

2 Ուրեք ուրեք խանգարեալ է արձանդ, զորոյ նմանագիր օրինակ Գևրմանացի Ճարտարին՝ ընկալեալ'ի Շնմարանէ Պետրսբուրգի՝ եդաք'ի կարգին. Զալալեանն (Ա, 222-23) յայժ պլպլալէ զգրատագիր, յայտնի վերակօք և զեղչմամբ. այլ յարմարէ'ի դիւրին իմացուած, այսպէս. «Յամն աստուածպաշտութեան և թագաւորութեան Աբասեանց և Թագաւորութեան Բագրատունեաց Շահնշահիս կանգնեցաւ վէմս » այս անուանադրութեամբ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. զոր » հիմնադրեաց այրն Աստուծոյ Արգիս Հռոմոսի վանից առաջնորդ. իսկ յետ ամի միոյ փոխի յաշխարհէ նախ քան զաւարտումն. Շնորհիւն Աստուծոյ ղկնի : ե : ամի (փոխ)ման ծնողի իմոյ. ի ՅՆԶՉ (վենելը)թեան աշխարհի... գալստեանն Քրիստոսի, ՈՉԴ լուսաւորու(թեան) Հայոց ՆԼԴ. Սուրբ Երրորդութեանն որք մնանէք ընդ դրունս.. փառս Քրիստոսի Աստուծոյ խոստ.. Եւ զաշխատողս սորա. եւ Տէր Քրիստոս հատարակաց ողորմի... 'ի ձեռն Սամէհանի ճարտարապետի արեղայի. յիշեսջիք 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս. որում փառք յաւիտեանս. ամէն »։

Ա.ինքան պլպլալութիւն է յերկոսին ընթերցուածսդ՝ զի մարթէր համարել երկիցս արձանագրեալ յայլ և այլ կողմանս տաճարին։ Եղեմամբ վիմին ընկեալ է թագաւորն Քրիստոսի, այլ մերքին պլպլոց աներկբայ հաւաստի լինել 985-6 ամի, յորում թագաւորեր Ամբատ միջին դառոյն։ Այրն Աստուծոյ՝ անշուշտ է հայր սորա Աշոտ ոյզորդեան հիմնադիր եկեղեցւոյս, և որոշակի տեսանին անեղէք բառգր նոտառագրեալք, որոց փոխան Ջալալեանն ընթերցուել Հայր Սարգիս. և ըստ այմ թուականի հետգին է շինուած եկեղեցւոյս քան զԱԻ.ղ եկեղեցեաց, և դասաւակերս սիրելագոյն թագաւորի։ Բայց անկ է և լուսագրութեամբ ճշդրտել զընթերցուած կարևոր արձանիդ։


1 On ne voit sur cette route que des ruines de villages, de villes et des églises anciennes; et tous ces restes font voir quelle a été autrefois la puissance et la religion des Arméniens du temps de leurs rois. — Voyage d'un Missionaire (Villotte). 493.

Մարթ է համարել զեղիդ զայդ լինել սոյն իակ գեղջս և անուանել կարմիր մարգ։ Գոյ և յարևելեան որմն եկե-

ղեցւոյն արձանագիր մի Քարիմատեանն Ովհաննայ, ոչ քաջ ստոյգ ընթերցուածով, յամի 1271. և է այսպէս.

Ի թվին ՉԻ. Շնորհիւն Աստուծոյ Ես Ովքան Քարիմատինս եւ եղբայր իմ Պապքան Վախրատինս որդիք Սարգսի Թոռն[1] **. . . . հոգեւոր (?) ամենայն սահմանաւքս հողով եւ ջրով եւ չինեցեալք ի կորդոյ եւ զարդարեցեալք սպասիւք եւ գրենաւք եւ ընծայեցեալք եկեղեցւոյս զմեր գանձագին հայրենիքն զԹանանապին գանկն որ միջաւրէն էր Շահապին, զվերեւն եւ զներքեւն եւ զհարաւ կողմանն կուղպականովն եւ այգի մի ի Բագրան զԱյգեհարն եւ զԱքսաին? կապն եւ զԹաչխոռոյ ¯գ գանկն եւ զՋաղացս։ Հայր Սարգիս եւ այլ եղբարքս փոխարէն հատուցին յամենայն չաբաթն աւր ¯գ խոռանն մեր հաւրն Սարգսի. եւս եթէ եւ մեր չէ?. պատարագն. եւ ¯գ աւր Սարգիս արքաւունին. Ողբ հակառակ կան ընծայիցս գասին ի Քրիստոսէ. ամէն։**

Մխիթար գրիչ.



78. Երերոյք (Գղզղ գուղ)։

— Կայ և Նոր Գղզղ-Գիւղակ գիւղ Հայոց, Սուրբ Աստուածածին եկեղեցեաւ։ — Մերձ է ’ի Կարմիր վանս Հաղպատեցւոց գիւղ փոքր։

67. Երիւք մղոնաւք ’ի Հր. հին գեղջն հանդէպ աւերակաց Աշուց հաստատեալ էր Ռուսաց պահակատուն յաՆոյն քաղաքին. յորմէ երկու մղոնաւ ’ի ստորև առ գետեղերբն կայ աւերակ հին եկեղեցւոյ, այլ ոչ գիտեմ որպիսի և որոյ գեղջ։ Այսր ևս իբր երիւք մղոնաւք ’ի խոնարհ առ գետեղերն՝ հանդրուան մի Թաւրիզ կամ Թաւրիճի անուն, և պահակատուն յանուն Գղզղ-գուղի հանդրուանի, որ կայ ’ի ստորև բացագոյն. և կոչին սոքա այսպէս (Կարմիր բուրգն) ըստ գունոյ կոփածոյ քարանց և ձևոյ գմբեթի հոյակապ եկեղեցւոյ միոյ՝ որ ’ի հիւսիսոյ կողմանէ պահակատանն, իբր մղոնաւ հեռագոյն կայ ’ի սարահարթի ուրեք բարձու, քառակուսի, 23 Ձ. երկայն 14 լայն [2]. ուՆեղով ’ի չորեսին ևս անկիւնսն մատուռնս կամ սենեակս փոքունս, և բաց յարեւելից յայլ կողմանս գաւիթս իմն սիւնաքարձս, որոց ձեղունք կործանեալ անկեալ են. և երևի անտի որպացեալ եղեալ տաճարին, ունելով գիէս լայնութեան բոլոր եկեղեցւոյն. խորանն և որ առ նմաւատմատրունքն կանգուն կան. երևին և պատուհանք տասն


1 Յիշեն երկոքին եղբարքդ յարձանագրի միում Նշխարատան Հոռոմոսի վանաց, յամի 1274, որպէս տեսցի ’ի մեծոյ՝ ՀՀԳրաբարմնան ’ի տեզագրութիւնքս, էջ 173։

2 Շահխաթունեան, բ. 43, տես 36 և 22 գազ պարսիկ։

’ի հարաւոյ և յարևմտից. յայսմ կողմանէ աւագ դուռնն, և այլ երկու դրունք ’ի հարաւոյ կուսէ։ Ի կողմանէ մեծ ’ի հարաւային դրանցս արտաքուստ արձանագրեալ կայ կարեւոր վիշտակս, յամի 1038 [1]։ Պիտանի քան զամենայն յարձանագրեաս՝ է երերուաց կամ Երերոյք կոչումն գեղջս, յոր անուն գտանին և այլք յայլ գաւառս. արձանագրող Թագուհին կին Ջալհան-Սմբատայ՝ յայնմ

'ի ստորև կայ վերջին պահակատուն կողմանս արևելեան Շերակայ, Քեղխանահայ, Կարաւանատուն կոչեցեալ յառկապէս, զի էր իսկ այնպէս, և կարի ընդարձակ,

այլ այժմ քայքայեալ. որպէս և սակաւուք 'ի բացեայ այլ աւերակք բնակարանաց և գերեզմանք հանդերձ խաչ-վիմօք. բայց զկիր յիշատակի ցարդ ոչ յայտնեցաւ անդ:



80. Ագեքսանդրապոլ:

68. Յառաջ քան զելս մեր 'ի յաւերժայիշատակ գաւառէս Շերակայ, մի մոռացօք և քանի ինչ տեղիս յանդիմանէ ասանդելոյս 'ի նախնեաց, որք արդ անծանօթ ինան. որպիսի մարթ էր ասել զդիւրն Ըշտէ կամ Ըշտեայ, զոր Ռուսպէհանն ասէ 'ի Շիրակ գոլ, և անդ չարամահ լինել ուրացողին Գրիգորենէ. և արդարև ոչ կարի հեռի 'ի Շերակայ, 'ի կողմանս Ջաւախայ՝ այժմեանս Ախալ-քեղեքի, յայսմանէ է այս անուն գիւղ. սակայն Վազար Փարպեցի՝ որ նախ զայս պատմէ, Շտեայ կամ Շտեղ գիւղ կոչելով, երևեցուցանէ յարևմտակողմանս աշխարհս հիս Հայոց՝ ՅԱրշամունեաց գաւառի լինել, զի բնակչօք երիցագոյնք այնր գաւառի՝ մարտեաւ ընդ Պարթից, և 'ի նոյն կողմանս եղև մահ կամ մահարեր խոցումն Գրիգորիսի. և յետ մարտին՝ զօրավարն Պարթից մեկնեցաւ 'ի Բասեն, որ մերձակից է Արշամունեաց քան Շերակայ:

Գիւղ մի եւս Որնաւի կամ Որնաւ անուն, և ըստ այլ և այլ գրչութեանց՝ Որնեի, յիչէ Յովհաննէս կաթողիկոս Պասխիչն 'ի սկիզբն ժ դարու, ուր եկեալ Աշոտ Բ Երկաթն 'ի սկզբան թագաւորութեանն, և հանդիպեալ եղբօր իւրում Աբասայ՝ իշխանաց իշխանի և աներոյ նոքա Գաբրիէլի վաչաց իշխանի, « մեծապատիւ » զնոսա առնէ ըստ օրինի թագաւորաց բազմապարգև » բարութեամբք » . մինչ նոքա դաւաճանել իմն զնա

խորհէին, և « ոչ լինէր յաջողեալ նոցա յայնմ տեղւոջ » բանալ զդուռն կորստեան. ըստ երկնային այցելու-» թեանն յուղարկի 'ի նոցանէն . . . յերազատուրս » : Ըստ ձայնին մերձաւոր գտանի արդ ծանօթ գիւղ Որթնու-գրեալ : — Իսկ յիշեալն յԱղգիկ Բեռնաւս գիւղ Շի-րակայ, մարթի լինել Բեռնաս գիւղ Վանանդայ:

Զկնի վանք, յիչի յեղս կայս Բ դարու, յորում ժամա-նակի Սողոմն Հայր հարանց Մաքենոցաց վանիչ՝ զոր աւերէր Բասեն բռնաւոր Պարսից, խոյս տուեալ, մնասմբ միով միաբանիցն եկն այսր, ընդ որս և միւս Սողոմն (կա-թողիկոս) Գառնեցին. որ « և անդ 'ի միայնակեաց կարգ » եղեալ լինէր 'ի խրթխթի, բազում ձգանց և աշխատու-» թեանց զանձն տուեալ: Եւ մինչդեռ 'ի խրթխթ անտի » արտաքս հանեալ՝ չուեալ ածէին յամեռս հայրապե-» տութեան, հարցան ապա յանկնոյ ազատից, թէ՝ վասն » զի ծեր ես և յանհնարին ճգնական վարուց յոյժ ան-» ազդեալ, ընդէր յօժարեալ երթայս 'ի հայրապետու-» թիւն. առ որ պատասխանեալ նոքա՝ ասէր. Երթամ, » զի գեղապաճոյճ նկարազարդ սեւել զիս ընդ այլ հայրա-» պետաւ՝ տաճ, յորմէ եկեղեցւոյն: Եւ ըստ սմին այսմիկ » գործն կատարէր. զի ոչ աւելի քան զմի ամ կեցեալ՝ » փոխի յաշխարհէ ասի (յամի 788–89), և դնի ընդ » հարս իւր. և կենդանագրի 'ի քաւարանի սրբում [2] »:

1 Յօրինակս ինչ գրոց Յովհաննու կաթողիկոսի գրի Շեւոյ:

2 Յովհաննէս կաթողիկոս:

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆ

Լչ 23. Ի Նչխարատան Հոռոմոսի վանայց են այլ և երեք արձանագիրք՝ ոչ նշանակեալք 'ի կարգի տեղա-գրութեանս, յորոց երկուցն բազում ուրեք խանգարեալ կամ ջնջեալ են տառք. մին գրեալ է յամի 1274.

✠ Շնորհիւն Քրիստոսի ես Ուքան Քարիմա-տին... եւ Պապքան վարխատինս որդի Սարգսի Թոռն.....յն եւ ամուսին իմ Դապտա Խաթունս Սարգ... ին գնեցաք Հոռոմի վանացս կէսն ի սահ-ման ովէ..... նեն ի մեր հալալ ընչից եւ տվաք նվերք ի Սուրբ Յովանէս... այգին ի Թալին բոլոր ազատ յամենայն հարկէ եւ շինական մի... ազ... ը սկի աթծաթի եւ ի խանապարին ներքի դեհն : ը : հուճրա. Եւ սպաս(աւորքս հա)տուցին մեզ զՀոգոյն գալստեան ժամն յամենայն եկեղեց(իքս. Որ) հաս-տատ պահէ ՏՀոյ ստուծոյ:

Յիշին երկրորդն եղբարքդ Ուքան Քարիմատին և Պա-պաք Փախրադին կամ Վախրադին և յարձանս Կարմիր վանից Աբելեանն Շերակայ (յԼ 170). պահասէ և անդ անուն հատուն իւրեանց: — Երկրորդ արձանն գրեալ է յամի դրանն յամի 1286.

Շնորհիւն Քրիստոսի նահա..... աի.... եւս յիշա-տակիս եղբաւրն Գրիգոր որ միջաւրեա ի Քրիստոս փոխեցայ իմ հա.... (ի)աչվառ ու նասիճ շուրջառ եւ տուն կա...փ.. պո հողն զՀմակին հողն որ ի Ն... զինչ խա(ր)ճ լինի ես առնեմ հետ այնոր սուրբ ցո...ախն ի... Սպասաւորքս փոխարէն հատուցին յամէն ամի ձ պատարագ ի տաճնի Սուրբ Գրիգո-րին յանուն Գրիգորո առնել. Կատարիչք գրոյս աւրինին ի Քրիստոսէ...շինեցի զուլէն զանկակա-տուն....

Վերջընթեր բառն թերևս ընթեռնի է դուռ, որ է թուրքարէն աշտարակ (զանգակատուն):

Երրորդ արձանագիրն չընդապատէ զկամար պատե-հանի երկրորդ սենեկի նչխարատանն. անթերի է, այլ անթուական.

Կամաւն Աստուծոյ ես վարդան եւ ամուսին իմ Աղբրացս միաբանեցաք սուրբ ուխտիս եւ տվաք: ը : կով: ը: եզն. եւ ետուն մեզ գերեզմանի տեղ զա (?) եւ ի տարին: ը: աւր պատարագ. ը : ինձ: ը: Աղբրացին. որչափ կենդանի ենք մեր ծնողացն ար-նեն յետեւ մաճու մեզ.

Ի ամին սենեկի նչխարատանն առ խորանին 'ի ներքոյ խաչվիմաց երից գրեալ է.

Այս խաչերս Բախտիարենց է.

Լչ 25. Աբշարէրն Աշտակեցի, թուի լինել Աշնակեցի կամ Աշտարակեցի:

Լչ 28. Յետ ամենայն առաջնորդաց և վանահարց Հո-ռոմոսի յիչի Նիկողայոս եպիսկոպոս Տէր Մարտիրոսեանց, յամի 1837:

Լչ 56. Յարձանագրի միում Բագնայրի, թէպէտ և թերատ, յիչի Մզիխի մի, յամի 1209, և թուի մզկիթն այն Աշտոյ յիշեալ յԼչ 117:

